

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Կ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Կ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՂՆԱՐԿ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ա. Զ. Սարգսյանի խմբագրությանք)

ԵՐԵՎԱՆ
«ՏՆՏԵՍԱԳԵՏ»
2005

ՀՏԴ 330 (07)

Յրատարակվում է ԵՊՏԻ

գիտական

ԳՄԴ 65 ց73

խորհրդի

որոշմամբ

Ս 259

Գրախոսներ՝ տ.գ.դ., պրոֆ. Ա. Գ.
ճուղուրյան

տ.գ.թ., դոց. Լ. Յ. Գրիգորյան

Սարգսյան Ա. Զ., Առաքելյան Կ. Ա.

Ս 259 Տնտեսական գործունեության վերլուծություն:

Ուսումնական ձեռնարկ տնտեսագիտական մասնագիտությունների բակալավրիատի ուսանողների համար (տ.գ.դ., պրոֆ. Ա.Զ. Սարգսյանի խմբագրությամբ).- Եր.: Տնտեսագետ, 2005.- 446 էջ:

Ուսումնական ձեռնարկը շարադրված է ըստ «Տնտեսական գործունեության վերլուծություն» դասընթացի նոր ծրագրի. Այս կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների, եկամուտների ու ծախսների և ֆինանսական դրության վերլուծության հիմնահարցերը, ինչպես նաև համապատասխան տեստեր ու հիմնական բանաձևեր:

Նախատեսված է տնտեսագիտական մասնագիտությունների բակալավրիատի ուսանողների, նաև ասպիրանտների, դասախոսների, հաշվապահների, ֆինանսական կառավարիչների, առողջապահների և տնտեսական գործունեության վերլուծության հարցերով հետաքրքրվողների համար:

U 0601000000
719(01) – 2005

ԳՄԴ 65 ց 73

ISBN 99941 –51-02 –9
հրատ., 2005

© «Տնտեսագետ»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 9

ԳԼՈՒԽ I.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ	12
1.1.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒ- ԾՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 12	
1.2.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒ- ԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱԶԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ 16	
1.3.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒ- ԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 19	
1.4.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒ- ԾՈՒԹՅԱՆ ԿԱԶԱԿԵՐՊՈՒՄԸ 23	
1.5.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒ- ԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՅՈՎԿԱԾՈՒ- ԹՅՈՒՆԸ 25	
1.6.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒ- ԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ 28	
ԳԼՈՒԽ II.	ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 32	
2.1.	ՅԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՆԵՐԸ 32	
2.2.	ՅԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՅՈՎԿԱԾՈՒ- ԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 35	
2.3.	ՅԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴ- ՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 43	

ԳԼՈՒԽ III.	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ	
	ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	56
3.1.	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՀԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	56
3.2.	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	58
3.3.	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	62
ԳԼՈՒԽ IV.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
		67
4.1.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՀԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	67
4.2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	68
4.3.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	72
ԳԼՈՒԽ V.	ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
		78
5.1.	ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՀԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	78
5.2.	ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐՈՎ ԱՊԱՅՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	80
5.3.	ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	88

ԳԼՈՒԽ VI.	ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
	 101
6.1.	ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՀԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆՆԵՐԸ	101
6.2.	ՄԱՐԶԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	102
6.3.	ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆՈՒ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	107
6.4.	ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	112
6.5.	ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՓՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	123
6.6.	ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	125
ԳԼՈՒԽ VII.	ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՖԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
	 149
7.1.	ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՖԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՀԱՆԱ- ԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆՆԵՐԸ	149
7.2.	ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՖԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	150
7.3.	ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՖԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	157
ԳԼՈՒԽ VIII.	ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
	 162
8.1.	ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՀԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆՆԵՐԸ	162
8.2.	ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՇԱՔԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	164
8.3.	ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆ- ՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	174

ԳԼՈՒԽ IX.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	184
9.1.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵ- ԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	184
9.2.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	185
9.3.	ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	194
9.4.	ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒ- ԹՅՈՒՆԸ	202
9.5.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒ- ԾՈՒԹՅՈՒՆԸ	227
ԳԼՈՒԽ X.	ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	240
10.1.ԿԱ ՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵ-ԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	240
10.2.ԿԱ ՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱՆԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	242
10.3.ԿԱ ՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	244
ԳԼՈՒԽ XI.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	253
11.1.ՖԻ	

11.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒ-ԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆՆԵՐԸ	253
11.3. ԱՐՏԱՐԱՍՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՇԱՀՈՒՅԹԻ ԳՈՐԾՈ- ՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	260
11.4. «ԾԱԽՍԵՐ – ԾԱՎԱԼ – ՇԱՀՈՒՅԹ» ՀԱՐԱԲԵՐԱԿ- ՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	264
11.5. ՐԾԱՌՈՒԱԿԱՆ ԱՅԼ ԵՎ ՈՉ ԳՈՐԾԱՌՈՒԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ-ՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	271
11.6. ՅՈՒՅԹԻ ԲԱՇԽԱՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	277
ԳԼՈՒԽ XII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	286
12.1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐ- ՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆՆԵՐԸ	286
12.2. ՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒ- ԹՅՈՒՆԸ	288
12.3. ՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	293

ԳԼՈՒԽ XIII.	Եղիտօրական ՊԱՐՏՔԵՐԻ	
	ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	300
13.1.	ԿՐ
	Եղիտօրական ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵ-ԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ	300
13.2.	ԿՐ
	Եղիտօրական ՊԱՐՏՔԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	301
13.3.	ԿՐ
	Եղիտօրական ՊԱՐՏՔԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒ- ԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	306
ԳԼՈՒԽ XIV.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	
	312
14.1.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ	312
14.2.	ՀԱՇՎԱՊԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵԿԸՆԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	317
14.3.	ՀԱՇՎԱՊԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵԿԸՆԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒ-ԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	344
14.4.	ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	347
14.5.	ԾԱՐՈՒԹԱՐԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	354

14.6. ՇՐՋԱՆԱՌԵԼԻՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....	362
14.7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 368	
14.8. ԱՆՎԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	
Առավելագույն պահանջման ժամանակաշրջանը	380
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԵՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒ- ԾՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԿԱՆ ԲԱՆԱՉԵՎԵՐԸ	404
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒ - ԹՅՈՒՆՆԵՐ	414
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԿԱՌՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒ – ԹՅՈՒՆՆԵՐ	424
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	441

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դայաստանի Դանրապետությունում շուկայական հարաբերությունների զարգացումը հաշվապահական հաշվառման ոլորտում արմատական բարեփոխումների իրականացման պահանջներ առաջադրեց: Այսպես, ընդունվեցին «Դաշվապահական հաշվառման մասին» օրենքը, հաշվապահական հաշվառման ստանդարտները, հաշվային պլանը, ֆինանսական հաշվետվությունների փաթեթը և այլն: Դաշվապահական բարեփոխումների նպատակը կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունքների և ֆինանսական դրության՝ ակտիվների, սեփական կապիտալի ու պարտավորությունների, եկամուտների ու ծախսերի, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ շուկայի մասնակիցներին անկողմնակալ տեղեկատվության տրամադրումն է:

Ֆինանսական տեղեկատվության առանձնահատկությունների բացահայտման գործում հսկայական դեր ունի տնտեսական գործունեության վերլուծությունը, որը միաժամանակ, կազմակերպությունների կառավարման կարևորագույն գործառույթներից է:

Տնտեսական գործունեության վերլուծության միջոցով մշակվում է կազմակերպությունների զարգացման ռազմավարությունը և որոշվում մարտավարությունը, գնահատվում բիզնես-ծրագրի կատարման աստիճանը, բացահայտվում արտադրության արդյունավետության բարձրացման ներքին հնարավորությունները, իսկ վերլուծական հետազոտությունների արդյունքները կառավարիչների համար հիմք են համդիսանում ընդունելու արդյունավետ կառավարչական որոշումներ:

Տնտեսական գործունեության վերլուծությունը կազմակերպության կառավարման և ներքին վերահսկողական համակարգի հստակ գործունեության

կազմակերպման համար կառավարչական լծակի առանցքային դեր ունի: Դրա հետ միասին, յուրաքանչյուր կազմակերպության տնտեսական գործունեությունը ուշագրավ տեղեկատվություն է պարունակում շուկայի բոլոր մասնակիցների համար: Կազմակերպության հուսալիությունը և գործարար ակտիվությունը բնութագրվում է ֆինանսական դրությամբ, որը շուկայի մասնակիցների շահերի իրագործման երաշխիքն է:

Շուկայական տնտեսության պայմաններում որակավորված հաշվապահը, առողջտորը կամ ֆինանսական կառավարիչը պետք է տիրապետի տնտեսական հետազոտությունների մեթոդներին և պատրաստ լինի համալիր վերլուծության ենթարկելու կազմակերպության տնտեսական գործունեությունը: Տվյալ դասընթացի հիմնական խնդիրը կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծության տեսական հիմունքների ուսումնասիրությունն է և գործնական հմտությունների ձեռքբերումը: Վերլուծություն իրականացնելիս պետք է խորապես ներթափանցել ուսումնասիրվող երևույթի երթյան մեջ, որոշել կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների փոփոխության վրա տարբեր գործուների ազդեցությունը և կանխատեսել նրա հետագա զարգացման հեռանկարները:

ՀՅ բուհական համակարգի համար կրթական բարեփոխումներին համահունչ տնտեսական գործունեության վերլուծության համակարգված ձեռնարկ առայժմ չկա: ԵՊՏԻ «Հաշվապահական հաշվառում և առողջիտ» ամբիոնը, հիմնվելով ուսումնական գործընթացի կազմակերպման միջազգային փորձի վրա, կիրառում է ուսուցման արդիական մեթոդներ և դրանց համապատասխան պատրաստել է ուսումնական նյութեր: Դրանք արժանացել են երկրի առաջատար մասնագետների հավանությանը: Այդ ուսումնական նյութերն ել հիմք են հանդիսացել տնտեսական

գործունեության վերլուծության ձեռնարկի պատրաստման համար:

«Տնտեսական գործունեության վերլուծություն» ուսումնական ձեռնարկը շարադրված է ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված՝ 06.05 «Հաշվապահական հաշվառում և առւղիտ» մասնագիտության պետական կրթական ստանդարտի պահանջներին և ԵՊՏԻ տնտեսագիտական մասնագիտությունների բակալավրիատի ուսանողների համար նախատեսված «Տնտեսական գործունեության վերլուծություն» դասընթացի ծրագրին համապատասխան: Այդ ստանդարտի համաձայն, մասնագիտական առարկաների ցանկում նախատեսված են «Տնտեսական գործունեության վերլուծության տեսություն» և «Տնտեսական գործունեության վերլուծություն» դասընթացները: «Տնտեսական գործունեության վերլուծություն» ուսումնական ձեռնարկը իր տեսակի մեջ առաջին փորձն է, իսկ դրա հրատարակումը՝ առաջընթաց քայլ կրթական բարեփոխումների գործընթացում:

Ուսումնական ձեռնարկը շարադրելիս հեղինակները հաշվի են առել այն, որ տվյալ առարկան ուսումնասիրողները արդեն քաջածանոթ են հարակից գիտություններին, ուստի կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծական հետազոտությունները, հավելվածում ներկայացված պայմանական տվյալներով, իրականացվել են ֆինանսական և կառավարչական վերլուծությունների գուգորդմանը:

Ձեռնարկում նախ տրվել է տնտեսական գործունեության վերլուծության ընդհանուր բնութագիրը, ապա քննարկվել են ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների վերլուծության հետ կապված հարցերը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ֆինանսական դրության վերլուծության հիմնահարցերին:

Յուրաքանչյուր գլխի վերջում, քննարկված հարցերի վերաբերյալ տրված են համապատասխան տեստեր, որոնց

լուծման համար ձեռնարկի հավելվածում ներկայացված են տնտեսական գործունեության վերլուծության հիմնական բանաձևերը:

Ուսումնական ձեռնարկի հեղինակներ՝

պրոֆ. Ա. Զ. Սարգսյան (ներածություն, գլուխ 1, 2, 3, 4, 5),

դոց. Կ. Ա. Առաքելյան (գլուխ 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, տեստեր, հավելված):

Դեղինակները խորին շնորհակալությամբ կընդունեն ուսումնական ձեռնարկի բարելավմանն ուղղված յուրաքանչյուր կարծիք և առաջարկություն (Երևան 25, Նալբանդյան 128, ԵՊՏԸ հաշվապահական հաշվառման և առւղիտի ամբիոն):

ԳԼՈՒԽ I

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ

1.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

Մարդուն շրջապատող աշխարհում տեղի ունեցող երևոյթ-ների ուսումնասիրությունը անհնարին է առանց վերլուծության: «Վերլուծություն» հասկացությունը հունարեն «*análisis*» բառի հայերեն թարգմանությունն է, որը նշանակում է դիտարկվող երևոյթ տրոհել ըստ առանձին բաղադրատարրերի: Այս հնարավորությունը է ընձեռում լիովին ներթափանցել ուսումնասիրվող երևոյթի խորքային շերտերը, բացահայտել նրա ներքին էությունը և գնահատել յուրաքանչյուր բաղադրատարրի դերը ու նշանակությունը:

Երևոյթների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար, վերլուծության հետ մեկտեղ, դրանց ուսումնասիրությունը իրականացվում է նաև ընդհանրացման օգնությամբ: Այն իրենից ներկայացնում է մի որևէ երևոյթի արդեն տրոհված բաղադրատարրերի կապակցումը մեկ միասնական ամբողջության մեջ: Վերլուծությունն ու ընդհանրացումը, որպես երևոյթ-ների ուսումնասիրման գիտական եղանակներ, հանդես են գալիս օրգանական միասնության մեջ և ապահովում բազմակողմանի հետազոտությունների անցկացումը:

Վերլուծությունը մարդկային մտածողության արգասիքն է: Մարդու վերլուծական ունակությունները ծագել են մարդկային հասարակության զարգացման վաղնջական շրջանում: Մարդկային մտածողությունը կրում է ստեղծագործական բնույթ: Երևոյթները գնահատվում են մակածման (մասնակից դեպի ընդհանուրը) և արտածման (ընդհանուրից դեպի մասնակին) եղանակներով: Վերլուծական հետազոտությունների ընթացքում կարևորվում է այդ եղանակների միասնության ապահովումը:

Մարդու վերլուծական ունակությունները, իր գործունեության մշտական գնահատման պահանջի հետ կապված, աստիճանաբար զարգանալով, դարձել են քաղաքակիրթ հասարակության հրատապ կենսական անհրաժեշտությունը: Մարդու գիտակից գործունեությունը անհնարին է պատկերացնել առանց վերլուծության:

Մարդկային հասարակության զարգացումը պայմաններ ստեղծեց տարբեր երևույթների (այդ թվում՝ տնտեսական) վերլուծական հետագոտությունների անցկացման համար: Տնտեսական վերլուծությունն ունի հազարամյակների պատմություն: Պատմական աղյուրներից հայտնի է, որ այն ծագել է Հին Արևելքում՝ հաշվառման հետ միաժամանակ, համայնքների գործնական կարիքների բավարարման նպատակով: Համայնքների կենսունակության ապահովումը պայմանավորված էր իրենց գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններով, որոնք արձանագրվում էին այն ժամանակ գործող «հաշվառման համակարգերի»՝ մագաղաթների, կավե և մեղրամոմե աղյուսակների վրա: Հաշվային աշխատանքները կատարվում էին կետերի ու գծիկների միջոցով: «Հաշվային գրանցումներ» էին կատարվում նաև բրոնզե իրերի և կավե սալիկների վրա:

Տնտեսական տվյալների նյութական կրողների առանձնահատկությունները պայմանավորել են ինչպես մատյանների կազմն ու կառուցվածքը, այնպես էլ գրանցումների կատարման կազմակերպումը: Հետագայում դրանց օգտագործումը նպաստեց «ազատ թերթերի», «քարտերի» և «գրքերի» միջոցով հաշվառման իրականացմանը: Հաշվառման և վերլուծական աշխատանքները կատարվում էին հաշվառիչները, որոնք պատրաստվում էին հատուկ հաստատություններում՝ ընդունակ և բանիմաց մարդկանցից: Ուրարտական արձանագրություններում հիշատակվում են հաշվառմամբ և վերլուծությամբ զբաղվող՝ «հաշվի մարդիկ» և «դրամի մարդիկ» մասնագետներ:

Մարդկանց տնտեսական գործունեության փաստերի ընթացիկ արձանագրումը ուներ տարրական հաշվառման բնույթ: Հաշվառման օբյեկտը մարդկանց տրամադրության տակ եղած ամբողջ ունեցվածքն էր: Հետագայում հաշվառիչներն ունեցվածքը սկսեցին տարբերակել ըստ անհատական և համայնքային հատկանիշի: Վերջինս աստիճանաբար սկսեց ներկայաց-

վել միասնական խմբավորված մեծությամբ: Գուշքային խմբավորված հաշվառումը պայմաններ ստեղծեց չափման պայմանական միավորների հանդես գալուն, որն էլ նպաստեց բնեղեն հաշվառումից «հաշիվների համակարգին» անցմանը: Այնուհետև, Ք. ա. VII դարում, դրամի երևան գալու և բնական թվերի կիրառման հետևանքով հաշվառիչները սկսեցին օգտագործել միասնական դրամական չափիչը, որը հանդես էր գալիս որպես տնտեսական երևությունների ընդհանրացման միջոց: Դրանք նպաստեցին պարզ հաշվառման և վերլուծության միասնական համակարգի ձևավորմանը, որը հնարավորություն էր ընձեռում վերահսկողություն սահմանել համայնքների տրամադրության տակ եղած բոլոր միջոցների և նրանց կողմից իրականացվող հաշվարկների վրա:

Հաշվառումը և վերլուծությունը հատկապես մեծ զարգացում ստացան երկրորդ հազարամյակի կեսերին՝ երկակի հաշվապահության ձևավորման արդյունքում, որը պայմանավորված էր արտադրության զարգացման և առևտիր ընդդաշնման անհրաժեշտությամբ: Տնտեսության կառավարման մեթոդներին զուգընթաց անընդհատ կատարելագործվելով՝ սկսեցին ձևավորվել հաշվառման և վերլուծության գիտական հիմքերը: Աստիճանաբար ստեղծվեցին հաշվառման և վերլուծության չորս ազգային դպրոցներ՝ իտալական, ֆրանսիական, գերմանական և անգլո-ամերիկյան: Հայաստանում վերջին 200 տարվա ընթացքում կիրառվել են իտալական հաշվավերլուծական դպրոցի հնքնուրուցն բաղկացուցիչը կազմող ոռոսական տարբերակի սկզբունքները:

Ոուս տնտեսագետ Պ. Խուզակովը իր «Հաշվեկշոփ վերլուծություն» աշխատության մեջ (1920թ.) առաջին անգամ ներկայացրեց հաշվապահական հաշվեկշոփ վերլուծության մեթոդները և ապացուցեց, որ վերլուծությունը հաշվառման ավելի բարձր փուլն է: Նա վերլուծությունն անվանեց «հաշվետարության փիլիսոփայություն»: Հայտնի ոուս տնտեսագետ Ն. Վելցմանի «Հաշվային վերլուծություն» գրքում (1924թ.) ներկայացված վերլուծության հիմնարար դրույթները հետագայում ստացան իրենց շարունակական զարգացումը: Մեկ այլ ոուս գիտնական Ա. Ռևաչովը «Հաշվեկշոփ տնտեսական վերլուծություն» աշխատությունում (1926թ.) շարադրել է արդյունաբերական արտադրության վերլուծության հիմնահարցերը: Այստեղ առաջին

ոանձնացնելու որպես գիտելիքների ինքնուրուցն բնագավառ, քանի որ նշված գիտությունները այլևս չեն կարող ապահովել առաջադրված նոր հիմնահարցերի արդյունավետ լուծումը:

Տնտեսական գործունեության վերլուծությունը սկսեց լայնորեն կիրառվել կազմակերպությունների տնտեսական գործունեության գնահատման համար: Առաջատար մի շարք գիտնականների կողմից մշակվեցին վերլուծության նոր եղանակներ, որոնք նպաստեցին մեթոդական գինանոցի հարստացմանը: Աստիճանաբար տնտեսական գործունեության վերլուծությունը դարձավ կիրառական գիտություն: Ծովայական տնտեսության պայմաններում, կազմակերպությունների տնտեսական գործունեության կառավարման համակարգում վերլուծությունը առաջնային նշանակություն է ձեռք բերել:

1.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԽԵՌԻԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԽՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԹ


Ծովայական տնտեսության պայմաններում, տնտեսական գործունեության վերլուծությունը համարվում է կազմակերպությունների կառավարման հզոր միջոց: Հայտնի է, որ կառավարումը նպատակառուղղված ներգործությունների համակարգ է, որի միջոցով կառավարող սուբյեկտը կարգավորիչ ազդեցություն է ունենում կառավարվող օբյեկտի վրա:

Կառավարման գործընթացը ներառում է կառավարման սուբյեկտը (կառավարող համակարգ) և կառավարման օբյեկտը (կառավարվող համակարգ), որոնք միավորված են ուղիղ և հակադարձ տեղեկատվական հոսքերով: Կառավարման համակարգը կառավարվող համակարգի վրա ներգործում է իր գործառությունների միջոցով: Կառավարող համակարգին բնորոշ են հետևյալ գործառությունները՝ ծրագրավորում, հաշվապահական հաշվառում, տնտեսական գործունեության վերլուծություն և կառավարչական որոշումների ընդունում: Տնտեսական գործունեության վերլուծության դերը կառավարման համակարգում կարելի է պատկերել գծապատկերով (գծ 1.1):

Կազմակերպությունների տնտեսական գործունեության կառավարման համակարգում կարևոր գործառուցքներից մեկը ծրագրավորումն է: Դրա միջոցով նախանշվում են կազմակերպության տնտեսական գործունեության առաջիկա զարգացման հիմնական ուղղությունները: Ծրագրավորումը սկսվում և ավարտվում է վերլուծական հետազոտություններով:

Տնտեսական գործունեության վերլուծության դերը կառավարման համակարգում

Գծապատկեր 1.1



Կազմակերպությունների կառավարման գործընթացում առաջին հերթին անհրաժեշտ է ամբողջական և հավաստի տեղեկատվություն ունենալ նրա տնտեսական գործունեության գործառնական, ներդրումային և ֆինանսական ոլորտների վերաբերյալ: Դա ապահովվում է հաշվապահական հաշվառման համակարգի միջոցով, որը կազմակերպության կառավարման կարևորագույն գործառուցքներից մեկն է: Այդ համակարգը իր ֆինանսական ու կառավարչական հաշվառման ենթահամակարգերով հիմնարարություն է տալիս կազմակերպության տնտեսական գործունեության վերաբերյալ հավաքագրել անհրաժեշտ

տեղեկատվական հոսքեր, դրանք մշակել և օգտագործել ըստ նպատակայնության:

Կազմակերպության գործունեության կառավարման համար տնտեսական տեղեկատվությունը անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է գնահատել կազմակերպության տնտեսական գործունեության զարգացման միտումները, համամասնությունները և օրինաչափությունները, ինչպես նաև բացահայտել կարևորագույն արդյունքային ցուցանիշների վրա տարրեր գործուների ազդեցությունը, հայտնաբերել չօգտագործված հնարավորությունները և կանխատեսել զարգացման հեռանկարները: Այդ ամենը իրականացվում է կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծության միջոցով: Դա կառավարման համակարգի գործառությաների կարևորագույն տարրն է, առանց որի հնարավոր չէ մյուս գործառույթների իրականացումը, մասնավորապես՝ կառավարչական որոշումների ընդունումը: Տնտեսական գործունեության վերլուծության դերը կառավարման համակարգում պայմանավորված է ինչպես կառավարման բոլոր մակարդակներում վերլուծական հետազոտությունների անցկացմամբ, այնպես էլ արտադրության արդյունավետության մակարդակի մշտական բարձրացման անհրաժեշտությամբ:

Կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծության միջոցով ոչ միայն հիմնավորվում է բիզնես-ծրագրը, այլև վերահսկողություն սահմանվում դրա արդյունավետ իրագործման վրա՝ բացահայտելով արտադրության արդյունավետության բարձրացման հնարավորությունները: Վերլուծական հետազոտությունները նպաստում են կառավարման արդյունավետ կազմակերպմանը, պաշարների խնայողաբար օգտագործմանը, ֆինանսական արդյունքների ապահովմանը և ֆինանսական դրության բարելավմանը:

Ծովայական տնտեսության պայմաններում կազմակերպությունների կառավարիչների կողմից ընդունվող կառավարչական որոշումները պետք է հիմնավորվեն խորը և բազմակողմանի տնտեսական վերլուծությամբ: Ոչ մի կառավարչական որոշում չպետք է ընդունվի, եթե չի հիմնավորված դրա տնտեսական նպատակահարմարությունը և ֆինանսական արդյունքները:

Տնտեսական գործունեության վերլուծությունը համարվում է կառավարչական գործունեության տեսակ, որը նախորդում է կառավարչական որոշումների ընդունմանը: Վերլուծության արդյունքները ունեն բացառիկ տեղեկատվության բնույթ, որոնց հիման վրա կազմակերպության կառավարիչները հնարավորություն են ունենում տարբեր հիմնահարցերի լուծման նպատակով՝ մշակել, հիմնավորել և ընդունել կառավարչական անհրաժեշտ որոշումներ:

1.3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Կազմակերպությունների տնտեսական գործունեության վերլուծությունը հանդես է գալիս գիտելիքների ամբողջական համակարգի տեսքով, որն ունի իր հետազոտության առարկան: Այն իրենից ներկայացնում է կազմակերպությունների տնտեսական գործունեությունը, որա տնտեսական արդյունավետությունը և ֆինանսական արդյունքները: Կազմակերպությունները իրենց տնտեսական գործունեությունը կարող են իրականացնել հետևյալ ոլորտներում՝

- գործառնական,
- ներդրումային,
- ֆինանսական:

Կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ոլորտը գործառնականն է, որտեղ տեղի են ունենում մի շարք տնտեսական գործընթացներ՝

- մատակարարման,
- արտադրական,
- իրացման:

Այդ տնտեսական գործընթացների ուսումնասիրությունը իրականացվում է փոխկապվածության և փոխպայմանավորվածության մեջ՝ պատճառահետևանքային կապերի բացահայտման միջոցով:

Կազմակերպություններն իրենց տնտեսական գործունեությունը ծավալելու նպատակով տիրապետում են համապատասխան ակտիվների, որոնք ձևավորվում են ինչպես սեփական

կապիտալի, այնպես էլ պարտավորությունների հաշվին: Դրանք անհրաժեշտ են կազմակերպությունների կողմից ընդունված բիզնես-ծրագրերի կատարման համար: Ծովայական մրցակցությունը կազմակերպություններից պահանջում է, որ իրենց տնտեսական գործունեությունը վարեն բարձր արդյունավետությամբ և մշտական արձանագրեն կայուն ֆինանսական արդյունքներ: Կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետությունը և ֆինանսական արդյունքները, որոնց վրա ներգործում են տարարանությունը գործուները, բնութագրվում են ցուցանիշների համակարգով:

Կազմակերպությունների տնտեսական գործունեության վրա ազդում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթի գործուները: Արտաքին գործուները կազմակերությունների տնտեսական գործունեությունից չեն կախված և պայմանավորված են շուկայի մասնակիցների վարած բաղաքականությամբ: Տնտեսական գործունեության վերլուծության ընթացքում հաճախ առնչվում են գնային գործոնի հետ, որի ազդեցությունը կարելի է չեղոքացնել ինդեքսային վերահաշվարկումների միջոցով: Ներքին բնույթի գործուներն ամբողջովին պայմանավորված են կազմակերպությունների տնտեսական գործունեությամբ, հատկապես կառավարիչների ունակության աստիճանով և արհեստավարժության մակարդակով: Վերլուծական գործընթացում համապատասխան եղանակների գործադրմամբ բացահայտվում է կազմակերպությունների տնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշների վրա տարբեր գործուների ազդեցությունը և տրվում լիարժեք գնահատական:

Կազմակերպությունների տնտեսական գործունեության վերլուծությունը իրականացվում է տնտեսական տեղեկատվական համակարգի միջոցով: Համակարգը կազմակերպությունների տնտեսական գործունեության վերաբերյալ բազմաբնույթ տեղեկությունների մի ամբողջություն է, ըստ որի հնարավորությունը է ընձեռվում որոշել կազմակերպությունների տնտեսական զարգացման միտումները և համամասնությունները, ինչպես նաև բացահայտել ներտնտեսական չօգտագործված հնարավորությունները:

Տնտեսական գործունեության համալիր վերլուծության ընթացքում ծեռք բերված արդյունքները կազմակերպությունների կառավարիչներին հնարավորություն են տալիս համապատաս-

իսան հարցերի լուծման ուղղությամբ ընդունելու արդյունավետ կառավարչական որոշումներ:

Ծովայի պայմաններում յուրաքանչյուր կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծության առջև դրված են բազմաթիվ խնդիրներ: Դրանք պայմանավորված են կազմակերպության կառավարման համակարգում տնտեսական գործունեության վերլուծության ունեցած դերով ու նշանակությամբ:

Տնտեսական գործունեության վերլուծության կարևոր խնդիրներից մեկը կազմակերպության մարտավարական և ռազմավարական ծրագրերի գիտական հիմնավորումն է: Այդ ծրագրերի մշակումը և կառավարչական որոշումների արդյունավետ տարրերակների ընտրությունը անհնար է իրականացնել առանց կազմակերպության տնտեսական գործունեության վերջին տարիների խորքային վերլուծության, հեռանկարյային կանխատեսումների և տնտեսական զարգացման օրինաշափությունների գնահատման:

Տնտեսական գործունեության վերլուծության առանցքային խնդիրներից է նաև կազմակերպության բիզնես-ծրագրի կատարման գնահատումը, որտեղ սահմանված են նրա առաջիկա զարգացման կարևորագույն ցուցանիշների նորմատիվային արժեքները: Հենվելով հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների մեջ ներկայացված տվյալների վրա, վերլուծական գործընթացում որոշվում է բիզնես-ծրագրի առանձին ցուցանիշների փոփոխությունը և բացահայտվում դրա վրա տարրեր գործուների ազդեցությունը:

Տնտեսական գործունեության վերլուծության խնդիրներից է կազմակերպության տրամադրության տակ գտնվող ֆինանսական, նյութական և աշխատանքային պաշարների օգտագործման արդյունավետության որոշումը:

Տնտեսական գործունեության վերլուծության հիմնական խնդիրներից մեկը կազմակերպության տնտեսական գործունեությունից ստացված ֆինանսական արդյունքների գնահատումն է: Ֆինանսական արդյունքների վրա ազդում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործուները: Արտաքին գործուների չեզոքացումը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ կերպով գնահատելու կազմակերպության տնտեսական գործունեության արդյունքները:

Տնտեսական գործունեության վերլուծության խնդիրներից է կազմակերպության ներտնտեսական չօգտագործված հնարավորությունների բացահայտումը: Վերլուծական հետազոտությունները կարող են արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե մանրագնին բացահայտվել են կազմակերպության տնտեսական գործունեության հետագա բարելավման պահուստները և մշակվել դրանց իրացման միջոցառումները:

Խիստ կարևոր է կառավարչական որոշումների արդյունավետության գնահատման խնդիրը: Կազմակերպության տնտեսական գործունեության արդյունքները անմիջականորեն պայմանավորված են նաև ընդունված կառավարչական որոշումների արդյունավետության աստիճանով: Միայն տնտեսական գործունեության խորը վերլուծության միջոցով կարելի է ընդունել ճշգրիտ կառավարչական որոշումներ և գնահատել դրանց արդյունավետության մակարդակը:

Կազմակերպությունների տնտեսական գործունեության վերլուծության ընթացքում կարևոր է մի շարք սկզբունքների պահպանումը՝

- համարի սկզբունքը, երբ վերլուծության ժամանակ պահնջվում է կազմակերպության տնտեսական գործունեության բոլոր բաղադրիչների ընդգրկումը և դրանց բազմակողմանի ուսումնասիրությունը,
- համակարգային սկզբունքը, երբ վերլուծվող երևույթը դիտարկվում է որպես բազմաթիվ տարրերից բաղկացած մի համակարգ, որի բաղադրիչները ուսումնասիրվում են փոխկապվածության և փոխազմանավորվածության մեջ՝ պատճառահետևանքային կապերի բացահայտման միջոցով,
- օբյեկտիվության սկզբունքը, երբ վերլուծական հետազոտությունը իրականացվում է արժանահավատ տեղեկատվական տվյալներով, իսկ եզրահանգումները՝ հիմնավորվում ճշգրիտ հաշվարկներով,
- գիտական սկզբունքը, երբ վերլուծական գործընթացն իրականացվում է գիտականորեն հիմնավորված արդի մեթոդներով,
- ծրագրային սկզբունքը, երբ վերլուծական հետազոտությունը իրականացվում է նախապես կազմված ծրագրին համապատասխան,

- օպերատիվության սկզբունքը, երբ վերլուծության միջոցով կարելի է անմիջապես հերգործել կազմակերպության տնտեսական գործունեության վրա և ընդունել արդյունավետ կառավարչական որոշումներ,
- արդյունավետության սկզբունքը, երբ վերլուծական հետազոտությունների վրա կատարված ծախսերը ապահովում են բազմակի արդյունք:

Նշված սկզբունքները պետք է պահպանվեն ցանկացած մակարդակում վերլուծական աշխատանքների կատարման ժամանակ:

1.4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԽԵՌԻԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ծովայի պայմաններում կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է վերլուծական հետազոտությունների անցկացումով: Վերլուծական գործընթացը պատշաճ մակարդակով իրականացնելու համար կարենոր է նրա հստակ կազմակերպումը: Այն պայմանավորված է վերլուծության նպատակներով, խնդիրներով և կառավարչական որոշումների ընդունման անհրաժեշտությամբ:

Կազմակերպությունների տնտեսական գործունեության վերլուծական գործընթացի հաջորդականության փուլերն են՝

- վերլուծական աշխատանքների կազմակերպչական ձևի ընտրությունը,
- վերլուծական ծրագրի կազմումը,
- տեղեկատվական ապահովվածությունը,
- տեղեկատվական տվյալների վերլուծական մշակումը,
- վերլուծության արդյունքների ամփոփումը:

Վերլուծական աշխատանքների կազմակերպչական ձևի ընտրությունը պայմանավորված է կազմակերպության տնտեսական գործունեության կառավարման համակարգի առանձնահատկություններով: Խոշոր կազմակերպություններում վերլուծական հետազոտություններն իրականացնում է հատուկ այդ նպատակների համար կազմավորված վերլուծական ծառայությունը:

Փոքր ու միջին կազմակերպություններում վերլուծական աշխատանքները կատարում է հաշվային ծառայությունը՝ գլխավոր հաշվապահի անմիջական դեկավարությամբ: Առանձին հիմնահարցերի վերլուծությամբ գրաղվում են նաև կազմակերպությունների ինչպես տնտեսագիտական, այնպես էլ տեխնիկական ծառայությունները: Ծովայի մասնակիցները նույնպես կատարում են կազմակերպությունների տնտեսական գործունեության վերաբերյալ վերլուծական հետազոտություններ, հատկապես նրանց ֆինանսական դրությունը բնութագրող ցուցանիշներով՝ շահութաբերություն, վճարունակություն, գործարար ակտիվություն, ֆինանսական կայունություն և այլն:

Վերլուծական աշխատանքների արդյունավետության գրավականներից մեկը դրանց անընդհատության ապահովումն է: Այդ պատճառով կազմակերություններում նպատակահարմար է կազմել համալիր և թեմատիկ բնույթի վերլուծական ծրագրեր: Համալիր ծրագիրը կազմում է հաշվային կամ վերլուծական ծառայությունը՝ հաշվետու ժամանակաշրջանի համար: Ծրագրերն իրենց ներկայացնում է կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծական հետազոտությունների օրացուցային պլանը: Համալիր ծրագրում նշվում են՝ վերլուծության նպատակը, խնդիրները, ժամկետները, տեղեկատվական ապահովածությունը, վերլուծական փաստաթյուրի կազմումը և այլն: Կազմվում է նաև թեմատիկ ծրագիր, որը նախատեսում է առանձին հիմնախնդիրների լուծման համար վերլուծական հետազոտությունների անցկացում:

Վերլուծական գործընթացի կազմակերպման հաջորդ փուլում հավաքագրված տեղեկատվական տվյալները ենթարկվում են վերլուծական մշակման: Ամբողջ տեղեկատվությունը պետք է նախապատրաստել և բերել վերլուծական տեսքի: Այդ նպատակով ստուգվում է տեղեկատվության արժանահավատությունը՝ կատարելով ինչպես հաշվային, այնպես էլ ըստ էռության ստուգում: Առաջին դեպքում ստուգվում է տվյալների ամբողջականությունը, թվաբանական ճշտությունը և տարբեր հաշվետվություններում ներկայացված ցուցանիշների փոխկապակցվածությունը: Երկրորդ դեպքում որոշվում է ցուցանիշների՝ իրականությանը համապատասխանության աստիճանը: Դրանց հետո տեղեկատվությունը բերվում է համադրելի տեսքի, քանի որ վերլուծական գործընթացում անհրաժեշտ է օգտա-

գործել որակական միասեռ մեծություններ: Այնուհետև կատարվում է տեղեկատվության պարզեցում, ինչը հնարավորություն է տալիս դուրիհն դարձնել վերլուծական հետազոտությունները: Տեղեկատվական տվյալները նախապատրաստելուց հետո ենթարկվում են համապատասխան մեթոդներով վերլուծական մշակման՝ բացահայտելով կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող կարևոր ցուցանիշների վրա տարբեր գործուների ազդեցությունը:

Վերլուծական գործընթացի կազմակերպման եզրափակիչ փուլում, կատարված հետազոտությունների արդյունքները ենթարկվում են փաստաթթային ձևակերպման՝ բացատրագրերի, տեղեկանքների և այլուսակների տեսքով: Բացատրագրերի մեջ ձևակերպվում են կազմակերպության տնտեսական գործունեության համային ծրագրով կատարված վերլուծության արդյունքները՝ համապատասխան եզրակացություններով և առաջարկություններով: Տեղեկանքների մեջ ներառվում են առանձին հիմնահարցերի՝ թեմատիկ ծրագրով իրականացված վերլուծության արդյունքները: Որոշ դեպքերում դրանք ներկայացվում են վերլուծական այլուսակների տեսքով՝ առանց տեքստային բացատրության: Վերլուծական հետազոտությունների արդյունքներով կազմակերպության կառավարիչները ընդունում են կառավարչական անհրաժեշտ որոշումներ:

1.5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԽԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԽՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒԽԵԸ

Կազմակերպությունների տնտեսական գործունեության վերլուծական հետազոտությունները իրականացվում են տեղեկատվական համակարգի տվյալներով: Տեղեկատվական ապահովածության կազմակերպումը վերլուծական գործընթացի կարևոր փուլերից մեկն է: Տեղեկատվական տվյալները պետք է ապահովեն.

- տեղեկատվական պահանջարկի գնահատումը, երբ անհրաժեշտ է կառավարչական որոշումների ընդունման

նպատակով կատարվող համալիր վերլուծության համար ապահովել տեղեկատվական բավարար հոսքեր,

- տեղեկատվության արժանահավատությունը, երբ բոլոր տնտեսական գործընթացները հաշվառման համակարգում արտացոլվում են հավաստի տվյալներով,
- տեղեկատվության օպերատիվությունը, երբ հնարավոր է հատկապես համակարգիչների միջոցով արագորեն ստանալ համապատասխան տվյալներ, դրանք մշակել և կարձամանակում արձագանքել այս կամ այն հրատապ հիմնախնդրին,
- տեղեկատվական համակարգի արդյունավետ կազմակերպումը, երբ հավաքագրված տվյալների այտահանության աստիճանի բարձրացման միջոցով հնարավոր է կատարելագործել տեղեկատվական հոսքերը:

Այսպիսով՝ կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծության տեղեկատվական համակարգը անհրաժեշտ է կարգավորել այդ պահանջներին համապատասխան: Դա հնարավորություն կտա շեշտակիորեն բարձրացանել վերլուծական աշխատանքների արդյունավետության մակարդակը:

Տեղեկատվական համակարգը բաղկացած է երկու ենթահամակարգից՝ ներքին և արտաքին: Ներքին ենթահամակարգը ներառում է կազմակերպության ներտնտեսական տեղեկատվական հոսքերը և սնուցվում ինչպես ծրագրային (բիզնես-ծրագիր), այնպես էլ հաշվային տեղեկատվությունից:

Հաշվային տեղեկատվությունը հիմնականում ձևավորվում է հաշվապահական հաշվառման և հաշվետվության (ֆինանսական և կառավարչական) տվյալներով: Այստեղ իր ֆունկցիոնալ նշանակությամբ առանձնանում են ֆինանսական հաշվետվությունները, որոնք կազմակերպության վրա ազդող իրադարձությունների և կատարված գործառնությունների համակարգման ներկայացումն են: Դրանց նպատակը կազմակերպության ֆինանսական դրության և գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն է, որը օգտակար է այն օգտագործողների լայն շրջանակների կողմից կառավարչական որոշումներ ընդունելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝

- ձև N1. «Հաշվապահական հաշվեկշիռ», որը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանի դրույթամբ կազմակերպության ֆինանսական վիճակը,
- ձև N2. «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն», որը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքները,
- ձև N3. «Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն», որը բնութագրում է կազմակերպության սեփական կապիտալի հոդվածների մնացորդը և շարժը հաշվետու ժամանակաշրջանում,
- ձև N4. «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն», որը բնութագրում է դրամական միջոցների մնացորդը և շարժը հաշվետու ժամանակաշրջանում,
- ձև N5. «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ», որը բացահայտում է կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ներկայացնում լրացուցիչ ֆինանսական տեղեկատվություն:

Կառավարչական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվական տվյալները բազմաբնույթ են և համարվում են առևտորային գաղտնիք: Դրանք նախատեսված են կազմակերպության տնտեսական գործունեության կառավարման և վերահսկողության համար:

Արտաքին տեղեկատվական ենթահամակարգը ձևավորվում է կազմակերպության սահմաններից դուրս՝ ինչպես մարկետինգային, այնպես էլ այլ արտահաշվային տեղեկատվության հաշվին: Մարկետինգային տեղեկատվությունը հավաքագրվում է շուկայի ուսումնասիրման, շուկայական իրադրության գնահատման և սպառողական պահանջարկի որոշման նպատակով: Այլ արտահաշվային տվյալները տարաբնույթ են՝ նորմատիվային ակտեր, հրահանգական նկութեր, առողջապահության հաշվետվություններ, հարկային, մաքսային, ֆինանսական և բանկային տվյալներ, տեխնիկական և տեխնոլոգիական փաստաթղթեր, մասնագիտական գրականություն և այլն:

1.6. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԽԵՌԻԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԽՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կազմակերպությունների տնտեսական գործունեության վերլուծությունը իր ֆունկցիոնալ նշանակությամբ ստորաբաժանվում է երկու հիմնական տեսակների՝ ֆինանսական և կառավարչական։ Դա պայմանավորված է հաշվապահական հաշվառման համակարգը ֆինանսական և կառավարչական տեսակների բաժանումով։

Ֆինանսական վերլուծությունն ունի արտաքին բնույթ, քանի որ իրականացվում է կազմակերպության սահմաններից դուրս գտնվող շուկայի մասնակիցների կողմից՝ ֆինանսական հաշվետվություններով։ Շուկայի պայմաններում բավականին մեծ է մասնակիցների հետաքրքրությունը կազմակերպությունների տնտեսական գործունեության նկատմամբ, հատկապես նրանց ֆինանսական դրության վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ձեռք բերելու հարցում։ Շուկայի անորոշության և ոփսկայնության պայմաններում նրա մասնակիցները ցանկանում են գտնել հոսալի գործընկերներ և գնահատել նրանց վճարունակությունն ու ֆինանսական կայունությունը։

Կառավարչական վերլուծությունն ունի ներտնտեսական բնույթ և իրականացվում է կազմակերպության համապատասխան ծառայությունների կողմից՝ ամբողջ տեղեկատվական տվյալների ընդգրկմամբ։ Այս դեպքում կազմակերպությունը գնահատում է սեփական հնարավորությունները ակտիվների օգտագործման արդյունավետության, պարտավորությունների մարման, գրաւ շահույթի նպատակահարմար օգտագործման և այլ հարցերում։

Ֆինանսական և կառավարչական վերլուծություններն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք ներկայացված են գծապատկեր 1.2-ում։

Ֆինանսական վերլուծության իրականացումը պայմանավորված է շուկայի մասնակիցների կողմից կազմակերպության ֆինանսական դրության գնահատման և, դրա հիման վրա, արդյունավետ կառավարչական որոշումների հիմնավորման նպատակահարմարությամբ։ Վերլուծության հիմնական խնդիրներն են՝ հաշվապահական հաշվեկշոփի կազմի ու կառուցվածքի և

իրացվելիության գնահատումը, շահութաբերության, վճարունակության, շրջանառելիության և ֆինանսական կայունության վերուժությունը, դրամական միջոցների հոսքերի կանխատեսումը, ինչպես նաև ֆինանսական դրության բարելավման չօգտագործված հնարավորությունների բացահայտումը:

Ֆինանսական վերլուծության բովանդակությունը որոշվում է կազմակերպության տնտեսական գործունեության ֆինանսական տեղեկատվության սպառողների տարբեր շահերով:

1. Սեփականատերեր

- 1.1. Ֆինանսական արդյունքների վերլուծություն
- 1.2. Ֆինանսական դրության վերլուծություն

2. Հարկային տեսչություն

- 2.1. Հարկվող շահությի հավաստիության գնահատում
- 2.2. Բյուջե հարկային հատկացումների ճշտության գնահատում

3. Բանկեր և կրեդիտորներ

- 3.1. Հաշվապահական հաշվեկշռի կազմի ու կառուցվածքի վերլուծություն
- 3.2. Ֆինանսական կայունության վերլուծություն

4. Մատակարարներ և գնորդներ

- 4.1. Ընթացիկ ակտիվների և պարտավորությունների գնահատում
- 4.2. Վճարունակության և ֆինանսական կայունության գնահատում

5. Ներդրողներ

- 5.1. Ֆինանսական դրության վերլուծություն
- 5.2. Ակտիվների օգտագործման արդյունավետության վերլուծություն

6. Անձնակազմ

- 6.1. Արտադրության արդյունավետության վերլուծություն
- 6.2. Աշխատավարձի վերլուծություն

**Ֆինանսական և կառավարչական վերլուծության
առանձնահատկությունները**

Գծապատկեր 1.2

Հատկանիշները	Ֆինանսական վերլուծություն	Կառավարչական վերլուծություն
1. Վերլուծության նպատակը	Ֆինանսական դրության ցուցանիշների գնահատում	Տնտեսական արդյունավետության գնահատում
2. Վերլուծության օբյեկտը	Ֆինանսական դրություն	Տնտեսական գործունեություն
3. Վերլուծության սուբյեկտը	Ծովայի մասնակիցներ	Ֆուզցիոնալ ծառավություններ
4. Վերլուծության ուղղվածությունը	Սուրբեկուների տարրեր շահերը և նպատակները	Կազմակերպության շահերը և նպատակները
5. Վերլուծության ժամկետները	Ըստ ֆինանսական հաշվետվությունների կազմման	Ըստ անհրաժեշտության
6. Տեղեկատվական տվյալները	Ֆինանսական հաշվետվություններ	Ֆինանսական և կառավարչական հաշվետվություններ
7. Վերլուծության եղանակները	Հորիզոնական, ուղղահայաց, գործոնային, գործակցային	Ավանդական և տնտեսամարթեմատիկական
8. Վերլուծության մեթոդիկան	Կանոնակարգված մեթոդիկա	Զկանոնակարգված մեթոդիկա
9. Հավաստիության մակարդակը	Ցածր	Բարձր
10. Վերլուծության ընթացքը	Արտաքին, թեմատիկ	Ներքին, համալիր
11. Արդյունքների ամփոփումը	Վերլուծական աղյուսակներ	Բացատրագրեր, տեղեկանքներ և աղյուսակներ
12. Կառավարման գործառություն	Ֆինանսական վերլուծություն	Հաշվառման, վերլուծության և որոշումների ինտեգրում

Կառավարչական վերլուծության բովանդակությունը պայմանավորված է կազմակերպության տնտեսական գործունեության իրականացման վրա վերահսկողության և կառավարման ապահովմամբ: Վերլուծության հիմնական խնդիրներն են՝ արտադրական ծրագրի կատարման գնահատումը, պաշարների օգտագործման արդյունավետության որոշումը, եկամուտների ու ծախսերի, ինչպես նաև ֆինանսական արդյունքների վերլուծությունը:

Ֆինանսական և կառավարչական վերլուծության տեսակները զուգահեռաբար գործում են միևնույն վերլուծական համակարգում, փոխկապված են և կազմում են միասնական ամբողջություն:

ԳԼՈՒԽ II

ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի (26.12.2002թ.) համաձայն՝ ակտիվը կազմակերպության կողմից վերահսկվող միջոց է՝ որպես կատարված գործառնությունների արդյունք, որից ակնկալվում է ապագա տնտեսական օգուտների ներհոսք կազմակերպություն։ Ոչ ընթացիկ նյութական ակտիվները կազմակերպության երկարաժամկետ օգտագործման տևողություն ունեցող ակտիվներից են։ Դրանց կազմի մեջ ընդգրկված են՝ հիմնական միջոցները, հողամասերը, բնական ռեսուրսները, ներդրումային գույքը և անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվները։ Ոչ ընթացիկ նյութական ակտիվների գերակշիռ մասը կազմում են հիմնական միջոցները։

Ծովան ենթադրում է տարբեր կազմակերպությունների միջև ուժեղ մրցակցություն, որտեղ կարող են հաղթել նրանք, ովքեր առավել արդյունավետ են օգտագործում իրենց տրամադրության տակ եղած տարբեր ռեսուրսները։ Այդ պատճառով շատ կազմակերպություններ մեծ ջանքեր են գործադրում բոլոր արտադրական գործոնների, մասնավորապես հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ։

ՀՀՀՀՍ 16՝ «Հիմնական միջոցներ» ստանդարտի դրույթների համաձայն՝ հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք առկա են կազմակերպությունում արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման, վարձակալության տալու

կամ վարչական նպատակներով օգտագործելու համար և նախատեսվում են օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով:

Հիմնական միջոցների միավորը ճանաչվում է որպես ակտիվ, եթե ակնկալվում է, որ դրա հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն և դրա արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Հիմնական միջոցները (բացի հողամասերից) ունեն օգտակար ծառալության որոշակի ժամկետ: Օգտակար ծառալությունը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում կազմակերպությունը ակնկալում է ակտիվը օգտագործել, կամ արտադրանքի այն քանակն է, որն ակնկալվում է ստանալ նրա օգտագործման միջոցով:

Հիմնական միջոցները գնահատվում են սկզբնական (պատմական), իրական, վերագնահատման, մնացորդային և հաշվեկշռային արժեքներով:

Սկզբնական (պատմական) արժեքը ակտիվի ձեռքբերման կամ կառուցման ժամանակ վճարված կամ կողմերի համաձայնությամբ որոշված վճարվելիք դրամական միջոցների գումարն է, իսկ այլ ձևով հատուցելու դեպքում՝ հատուցման իրական արժեքը կամ նույն արժեքը ակտիվի ձեռք բերման պահին:

Իրական արժեքը այն գումարն է, որով ակտիվը առևտրական գործարքի ընթացքում կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև:

Վերագնահատման արժեքը ակտիվի այն արժեքն է, որը որոշվում է դրա վերագնահատման արդյունքում:

Մնացորդային արժեքը այն գուտ գումարն է կամ պիտանի նյութերի իրական արժեքը, որը կազմակերպությունը ակնկալում է ստանալ ակտիվից՝ դրա օգտագործման ծառալության վերջում, դուրսգրման սպասվող ծախսերը հանելուց հետո:

Հաշվեկշռային արժեքը այն գումարն է, որով ակտիվը ճանաչվում է և ներառվում հաշվեկշռի մեջ՝ կուտակված մաշվածությունը և արժեգրկումից կուտակված կորուստները հանելուց հետո:

Հիմնական միջոցները շահագործման ընթացքում աստիճանաբար մաշվում են՝ իրենց արժեքը մաս-մաս փոխանցելով նոր ստեղծվող արդյունքին: Հիմնական միջոցների մաշվածության գումարը պարբերաբար պետք է բաշխվի ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Այդ գումարը ակտիվի սկզբնական և մնացորդային արժեքների տարբերությունն է: Արժեզրկումից կորուստը այն գումարն է, որի չափով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Հիմնական միջոցները կազմակերպության արտադրական գործընթացի կարևորագույն տարրերից են: Դրա հետ միասին, հիմնական միջոցները կազմում են յուրաքանչյուր արտադրական գործընթացի իրեղեն հիմքը: Դրանց կազմն ու կառուցվածքը և օգտագործման արդյունավետության աստիճանը զգալի ազնեցություն են ունենում կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող բոլոր ցուցանիշների վրա: Նման պայմաններում յուրաքանչյուր կազմակերպության համար կարևոր նշանակություն են ստանում հիմնական միջոցների վերլուծության հիմնահարցերը:

Կազմակերպությունների վերլուծական ծառայությունների առջև դրված են հետևյալ խնդիրները՝

- գնահատել կազմակերպության ապահովածությունը հիմնական միջոցներով,
- որոշել հիմնական միջոցների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների վրա տարբեր գործուների ազնեցությունը:

Հիմնական միջոցների վերլուծական գործընթացում օգտագործվում են հետևյալ տեղեկատվական աղբյուրները՝

- կազմակերպության բիզնես-ծրագիրը,
- ձև N1. «Հաշվապահական հաշվեկշիռը»,
- ձև N2. «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը»,
- ձև N5. «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները»,
- հիմնական միջոցների մասին հաշվետվությունը,

- արտադրանքի մասին հաշվետվությունը,
- սկզբնական հաշվառման տվյալները,
- տեխնիկական փաստաթղթերը և այլն:

2.2. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԻԶՈՑԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծական գործընթացը նպատակահարմար է սկսել հիմնական միջոցների կազմի ու կառուցվածքի մեջ տեղի ունեցած փոփոխությունների գնահատմամբ: Այն պայմանավորված է հիմնական միջոցների օպտիմալացման միջոցով դրանց օգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ:

Հիմնական միջոցների կազմում առանձնացվում են երկու կարևոր խմբեր՝

- շահագործման մեջ գտնվող՝ մաշվող հիմնական միջոցներ,
- շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ:

Այդ խմբերից յուրաքանչյուրը ներառում է հիմնական միջոցների տարբեր տեսակներ: Շահագործման մեջ գտնվող՝ մաշվող հիմնական միջոցների կազմում ներառվում են՝

- շենքերը,
- կառուցվածքները,
- փոխանցող հարմարանքները,
- մեքենաները և սարքավորումները,
- տրանսպորտային միջոցները,
- արտադրական գույքը, տնտեսական գույքը և գործիքները,
- բազմամյա տնկարկները,
- բանող և մթերատու անասունները,
- այլ հիմնական միջոցները:

Ծահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցները շահագործման շիճանձնված, ժամանակավորապես շահագործումից հանված, շահագործումից հանված և օտարման նպատակով պահվող հիմնական միջոցներն են:

Վերլուծական գործընթացում պետք է գնահատել հիմնական միջոցներով և դրանց առանձին տեսակներով կազմակերպության և նրա կառուցվածքային ստորաբաժանումների ապահովածության աստիճանը: Այն որոշվում է դրանց փաստացի մեծությունները համեմատելով նախատեսված այն պահանջարկի հետ, որն անհրաժեշտ է արտադրական ծրագրի կատարման համար: Այդ ընթացքում գնահատվում է հիմնական միջոցներով կազմակերպության ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ապահովածություն՝ վերջինիս դեպքում հաշվի առնելով նաև նրա գործարար ակտիվության մակարդակը:

Պայմանական կազմակերպության տվյալներով որոշենք մեքենասարքավորումներով նրա ապահովածության աստիճանը (աղյուսակ 2.1).

Մեքենասարքավորումներով ապահովածության վերլուծությունը

Աղյուսակ 2.1

Ցուցանիշները	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Աճի տեմպը, %	Ապահովածությունը	
				Բացարձակ	Հարաբերական
1. Արտադրանքի իրաւումից հասուլթը, հազ. դ	15000	15700	104.67	-	-
2. Մեքենասարքավորումների քանակը, միավոր, այդ թվում՝	430	440	100.92	+10	-10
«Ա» խումբ	79	80	101.27	+1	-3
«Բ» խումբ	60	60	100.00	-	-3
«Գ» խումբ	192	200	104.17	+2	-1
«Դ» խումբ	99	100	101.01	+1	-4

Աղյուսակից երևում է, որ վերլուծվող կազմակերպությունը, բացարձակ առումով, 10 միավորով ավելի ապահովված է մեքենասարքավորումներով: Այլ իրավիճակ է հարաբերական գնահատման դեպքում: Տվյալ կազմակերպությունը, հարաբերական տեսակետից, նույն չափով մեքենասարքավորումներով ապահովված չէ [440 – 430 + (430 x 4.67 : 100)]: Նույնը կարելի է ասել նաև առանձին մեքենասարքավորումների վերաբերյալ:

Հիմնական միջոցներով կազմակերպության ապահովվածության աստիճանը բնութագրող ամփոփ ցուցանիշներից են՝ աշխատանքի գինվածությունը ($\Omega_{\text{ա}}$) և տեխնիկական գինվածությունը ($\Omega_{\text{ա}}$): Այդ ցուցանիշները որոշվում են հետևյալ կերպ՝

$$\Omega_{\text{ա}} = \frac{\text{Հիմնական միջոցների տարեկան արժեք}}{\text{Ամենամեծ հերթափոխում աշխատող բանվորների միջին ցուցակային թիվ}}$$

$$\Omega_{\text{ա}} = \frac{\text{Մեքենասարքավորումների միջին տարեկան արժեք}}{\text{Ամենամեծ հերթափոխում աշխատող բանվորների միջին ցուցակային թիվ}}$$

2.2 աղյուսակի տվյալներով որոշենք աշխատանքի և տեխնիկական գինվածության ցուցանիշները:

Աղյուսակ 2.2-ի տվյալներից նկատելի է, որ հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ աշխատանքի և տեխնիկական գինվածության ցուցանիշների մակարդակը բարձրացել է:

Վերլուծական գործընթացում այդ ցուցանիշների և աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը համադրվում են իրար հետ: Կազմակերպության համար նպաստավոր է, որ աշխատանքի արտադրողականության աճի տեմպը գերազանցի նշված ցուցանիշների աճի տեմպերը, որն էլ կվկայի հիմնական միջոցների հատուցի մակարդակի աճի մասին:

Վերլուծվող կազմակերպությունում աշխատանքի արտադրողականության աճի տեմպը ($713.6 \times 100 : 625 = 114.2 - 100 = +14.2\%$) գիշում է աշխատանքի և տեխնիկական գինվածության աճի տեմպերին (համապատասխանաբար 14.9% և 18.8%):

**Աշխատանքի և տեխնիկական գինվածության
ցուցանիշների վերլուծությունը**

Աղյուսակ 2.2

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Հիմնական միջոցների միջին տարեկան արժեքը, հազ. դ.	6120	6450	+330
2. Մեքենասարքավորումների միջին տարեկան արժեքը, հազ. դ.	3070	3350	+280
3. Բանվորների միջին ցուցակային թիվը, մարդ	24	22	-2
4. Աշխատանքի գինվածությունը	255	293	+38
5. Տեխնիկական գինվածությունը	128	152	+24

Հիմնական միջոցների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը իրականացվում է հորիզոնական և ուղղահայաց եղանակներով: Չահագործման մեջ գտնվող՝ մաշվող հիմնական միջոցների մեջ անհրաժեշտ է առանձնացնել դրանց ակտիվ և պասիվ մասերը: Ակտիվ բնույթի հիմնական միջոցները անմիջականորեն են մասնակցում արտադրական գործընթացին (մեքենասարքավորումներ): Պասիվ բնույթի հիմնական միջոցները միայն սպասարկում կամ օժանդակում են այդ գործընթացի իրականացմանը (մնացած տեսակները): Ցուրաքանչյուր կազմակերպություն մեծ ջանքեր պետք է գործադրի իր հիմնական միջոցների կազմում ու կառուցվածքում ակտիվ ու պասիվ մասերի միջև օպտիմալ հարաբերակցություն ապահովելու համար:

Կազմակերպության հիմնական միջոցների կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների գնահատումը իրականացնենք աղյուսակ 2.3-ի տվյալներով:

**Հիմնական միջոցների կազմի ու կառուցվածքի
փոփոխությունները**

Աղյուսակ 2.3

Հիմնական միջոցների կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Շենքեր	1500	24.39	1440	22.33	-60	-2.06
2. Կառուցվածքներ	300	4.88	290	4.50	-10	-0.38
3. Փոխանցող հարմարանքներ	200	3.25	200	3.10	-	-0.15
4. Մերենաներ և սարքավորումներ	3100	50.41	3400	52.71	+300	+2.30
5. Տրանսպորտային միջոցներ	700	11.38	750	11.63	+50	+0.25
6. Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	150	2.44	170	2.64	+20	+0.20
7. Բազմամյա տնկարկներ	50	0.81	50	0.77	-	-0.04
8. Բանող և մթերա- տու անասուններ	30	0.49	40	0.62	+10	+0.13
9. Այլ հիմնական միջոցներ	120	1.95	110	1.70	-10	-0.25
Ընդամենը, այդ թվում՝	6150	100.00	6450	100.00	+300	-
ակտիվ մաս	3100	50.41	3400	52.71	+300	+2.30
պասիվ մաս	3050	49.59	3050	47.29	-	-2.30

Կազմակերպության հիմնական միջոցների գումարը հաշ-
վետու տարում, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 300
հազ. դրամով: Այն տեղի է ունեցել հիմնական միջոցների միայն

ակտիվ մասի հաշվին: Որոշակի փոփոխություններ են արձանագրվել հիմնական միջոցների առանձին խմբերի գծով: Եթե մեքենասարքավորումների, տրանսպորտային միջոցների, արտադրական, տնտեսական գույքի, գործիքների և բանող ու մթերատու անասունների գումարը բացարձակ առումով ավելացել է, ապա շենքերի, կառուցվածքների և այլ հիմնական միջոցներին՝ նվազել: Իսկ փոխանցող հարմարանքների և բազմամյա տնկարկների գծով տարվա ընթացքում փոփոխություններ չեն գրանցվել:

Հիմնական միջոցների մեջ տեղի են ունեցել կառուցվածքին տեղաշարժեր: Ակտիվ բնույթի հիմնական միջոցների տեսակարար նշիող ընդհանուրի մեջ աճել է 2.30%-ով: Որոշակի աճ է արձանագրվել նաև տրանսպորտային միջոցների, արտադրական, տնտեսական գույքի, գործիքների և բանող ու մթերատու անասունների գծով: Հիմնական միջոցների մնացած խմբերի բաժինը նվազել է:

Վերլուծության գործընթացում անհրաժեշտ է հանգամանալի ուսումնասիրել հիմնական միջոցների ակտիվ մասի օգտագործման աստիճանը: Մեքենասարքավորումների օգտագործման վերլուծությունը կատարվում է դրանց քանակը, աշխատաժամանակը և հզորությունը բնութագրող ցուցանիշներով:

Մեքենասարքավորումները լինում են առկա, տեղակայված, գործող և պահուստային: Ցանկալի է, որ առկա, տեղակայված և գործող մեքենասարքավորումների թվաքանակի տարբերությունները մեծ չլինեն: Անհրաժեշտ է որոշել մեքենասարքավորումների օգտագործման հետևյալ գործակիցները.

- առկա մեքենասարքավորումների օգտագործման գործակից (Φ_w)՝

$$\Phi_w = \frac{\text{Օգտագործվող մեքենասարքավորումն երի քանակ}}{\text{Առկա մեքենասարքավորումն երի քանակ}}$$

- տեղակայված մեքենասարքավորումների օգտագործման գործակից (Φ_u)՝

$$\Phi_{\omega} = \frac{\text{Օգտագործվող մեքենասարքավորումների քանակ}}{\text{Տեղակայված մեքենասարքավորումների քանակ}}$$

Առկա և տեղակայված մեքենասարքավորումների քանակի տարբերությունը բազմապատկելով դրանց միավորի նախատեսված արտադրողականությամբ, կստանանք արտադրանքի արտադրության ծավալի աճի պաշարը ի հաշիվ գործող մեքենասարքավորումների քանակի ավելացման:

Այնուհետև ուսումնասիրվում է մեքենասարքավորումների աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման արդյունավետության աստիճանը: Տարբերում են աշխատաժամանակի ֆոնդի հետևյալ բաղկացուցիչները՝

- օրացուցային ֆոնդ (Φ_0) - տարվա օրացուցային օրերի թիվ x օրվա ամբողջ տևողություն x տեղակայված մեքենասարքավորումների քանակ,
- ուժիմային ֆոնդ (Φ_n) - տարվա աշխատանքային օրերի թիվ x օրվա տևողություն x տեղակայված մեքենասարքավորումների քանակ,
- պլանային ֆոնդ (Φ_{ω}) - մեքենասարքավորումների պլանային աշխատաժամանակը նախորդից տարբերվում է պլանային նորոգումների ժամանակով,
- փաստացի ֆոնդ (Φ_{ϕ}) - փաստացի աշխատած ժամանակը:

Մեքենասարքավորումների աշխատաժամանակի օգտագործումը բնութագրվում է հետևյալ գործակիցներով՝

- օրացուցային ֆոնդի օգտագործման գործակից՝ ($\Phi_0 : \Phi_0$),
- ուժիմային ֆոնդի օգտագործման գործակից՝ ($\Phi_n : \Phi_n$),
- պլանային ֆոնդի օգտագործման գործակից՝ ($\Phi_{\omega} : \Phi_{\omega}$):

Մեքենասարքավորումների արդյունավետ օգտագործման աստիճանը բնութագրվում է միջին ժամանակ արտադրողա-

կանությամբ՝ դրա փաստացի մեծությունը հարաբերելով նախատեսվածին:

Մեքենասարքավորումների առանձին խմբերի համար կարելի է նաև բացահայտել արտադրանքի արտադրության ծավալի փոփոխության վրա դրանց քանակի, աշխատած օրերի, հերթափոխության գործակցի, հերթափոխի միջին տևողության և միջին ժամային արտադրողականության գործոնների ազդեցությունը:

Վերլուծության գործընթացում կարևոր նշանակություն ունի հիմնական միջոցների տեխնիկական մակարդակի գնահատումը: Հաշվետու տարվա ընթացքում վերլուծվող կազմակերպությունում մուտքագրվել են 1400 հազ. դ. և ելքագրվել՝ 1100 հազ. դ. հիմնական միջոցներ: Ընդ որում, հիմնական միջոցների կուտակված մաշվածությունը կազմել է 2590 հազ. դ.: Հիմնական միջոցների տեխնիկական մակարդակի գնահատումը կատարվում է հետևյալ գործակիցների միջոցով.

- **Առրացման գործակից (Φ_a)՝**

$$\Phi_a = \frac{\text{Մուտքագրված հիմնական միջոցների արժեք}}{\text{Հիմնական միջոցների տարեվերջի արժեք}} = \frac{1400}{6450} = 0.22$$

- **մաշվածության գործակից (Φ_m)՝**

$$\Phi_m = \frac{\text{Կուտակված մաշվածություն}}{\text{Հիմնական միջոցների սկզբնական արժեք}} = \frac{2590}{6450} = 0.40$$

- **դուրս գրման գործակից (Φ_d)՝**

$$\Phi_d = \frac{\text{Դուրս գրված հիմնական միջոցների արժեք}}{\text{Հիմնական միջոցների տարեսկզբի արժեք}} = \frac{1100}{6150} = 0.18$$

- **Բավելաճի գործակից (Φ_b)՝**

$$q_{\text{Բ}} = \frac{\text{Հիմնական միջոցների հավելած}}{\text{Հիմնական միջոցների տարեսկզբի արժեք}} = \frac{1400 - 1100}{6150} = 0.05$$

- պիտանիության գործակից ($q_{\text{ա}}$)՝

$$q_{\text{ա}} = \frac{\text{Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեք}}{\text{Հիմնական միջոցների սկզբնական արժեք}} = \frac{6450 - 2590}{6450} = 0.60$$

- տարիքային կազմ ($S_{\text{տ}}$)՝

$$S_{\text{տ}} = \frac{\sum (\text{միջին տարիք տեսակարար կշիռ})}{100}$$

Հիմնական միջոցների տարիքային կազմի գնահատման համար նախ պետք է դրանք խմբավորել ըստ շահագործման տարիների (մինչև 5, 5 - 10, 10 - 20 և այլն), այնուհետև առանձին խմբերի միջին տարիքները բազմապատկել ընդհանուր քանակի մեջ համապատասխան տեսակարար կշիռներով և բաժանել 100%-ի:

Հիմնական միջոցների տեխնիկական մակարդակը գգալի ազդեցություն ունի դրանց օգտագործման արդյունավետության վրա:

2.3. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով.

- շահութաբերություն ($C_{\text{Բ}}$)՝

$$C_{\text{Բ}} = \frac{\text{Զուտ շահույթ}}{\text{Հիմնական միջոցների միջին տարեկան արժեք}}$$

- ჩათოւეց ($\zeta_{\text{რა}}$)՝

$$\zeta_{\text{რა}} = \frac{\text{Իրացումից ჩაսույթ}}{\text{Հիմնական միջոցների միջին տարեկան արժեք}}$$


- ակտիվ մասի ჩათուց ($\zeta_{\text{բա}}$)՝

$$\zeta_{\text{բա}} = \frac{\text{Իրացումից ჩասույթ}}{\text{Ակտիվ մասի միջին տարեկան արժեք}}$$

Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների փոփոխության վրա ազդում են բազմաթիվ գործոններ (գծ. 2.1):

**Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության
ցուցանիշների գործոնային վերլուծությունը**

Գծապատկեր 2.1



Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակի առավել ընդհանարացնող ցուցանիշը շահութաբերությունն է, որը ցուց է տալիս միավոր հիմնական միջոցին բաժին ընկնող գույտ շահույթի չափը: Հիմնական միջոցների

շահութաբերության մակարդակի փոփոխությունը պայմանավորված է ինչպես դրանց հատուցի, այնպես էլ իրացման շահութաբերության ազդեցությամբ՝

$$\bar{C}_{\text{ԲԱ}} = \frac{\bar{C}_q}{\zeta_q} = \frac{\zeta}{\zeta_q} \times \frac{\bar{C}_q}{\zeta} = \zeta_{\text{ԲԱ}} \times h_2$$

որտեղ՝ \bar{C}_q - գուտ շահությի գումարն է,

ζ - հիմնական միջոցների միջին տարեկան արժեքն է,

ζ_q - իրացումից հասուցյի գումարն է,

h_2 - իրացման շահութաբերության մակարդակն է:

Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության վերլուծության ընթացքում օգտագործվում են շղթայական տեղադրումների և տարբերությունների եղանակները։ Այդ եղանակներից որևէ մեկով կարելի է որոշել նշված գործոնների ազդեցությունը հիմնական միջոցների շահութաբերության փոփոխության վրա (աղյուսակ 2.4):

Հիմնական միջոցների շահութաբերության վերլուծությունը Աղյուսակ 2.4

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	Հաշվարկը
1. Զուտ շահություն, հազ. դ.	640	900	+260	-
2. Հիմնական միջոցների միջին տարեկան արժեքը, հազ. դ.	6120	6450	+330	-
3. Իրացումից հասուցյուն, հազ. դ.	15000	15700	+700	-
4. Հիմնական միջոցների շահութաբերությունը	10.46	13.93	+3.47	-
5. Իրացման շահութաբերությունը	4.27	5.73	+1.46	+1.46 x 2.45 = = +3.58
6. Հիմնական միջոցների հատուցը	2.45	2.43	-0.02	- 0.02 x 5.73 = = - 0.11

Հաշվարկները կատարենք բացարձակ մեծությունների տարրերության եղանակով.

$$\Delta \bar{C}_{\text{ԲԱ}} = \bar{C}_{\text{ԲԱ1}} - \bar{C}_{\text{ԲԱ0}} = +3.47 ,$$

1) գործոն՝ հատուցի ազդեցությունը՝

$$\Delta \bar{C}_{\text{ԲԱ}} \times \bar{h}_1 = +1.46 \times 2.45 = +3.58 ,$$

2) գործոն՝ իրացման շահութաբերության ազդեցությունը՝

$$\Delta \bar{h}_2 \times \bar{z}_{\text{ԲԱ}} = -0.02 \times 5.73 = -0.11 :$$

Երկու գործոնների հանրագումարը՝

$$\Delta \bar{C}_{\text{ԲԱ}} = +3.58 + (-0.11) = +3.47 :$$

Հիմնական միջոցների հատուցը ցուց է տալիս դրանց միավորին բաժին ընկնող արտադրանքի ծավալը: Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության վերլուծության գծապատկերից երևում է, որ հատուցի փոփոխության վրա ազդում են տարրեր գործոններ, որոնք կարելի է խմբավորել մի քանի մակարդակներով (աղյուսակ 2.5):

Հիմնական միջոցների հատուցի վերլուծությունը

Աղյուսակ 2.5

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Ծեռումը	Հաշվարկը
1. Իրացումից հասություն, հազ. դ.	15000	15700	+700	-
2. Հիմնական միջոցների միջին տարեկան արժեքը, հազ. դ.	6120	6450	+330	-
3. Ակտիվ մասի միջին տարեկան արժեքը, հազ. դ.	3070	3350	+280	-
4. Հիմնական միջոցների հատուցը	2.45	2.43	-0.02	-
5. Ակտիվ մասի տեսակարար կշիռը հիմնական միջոցների արժեքի մեջ, %	50.16	51.94	+1.78	+1.78 x 4.89 : : 100 = +0.09
6. Ակտիվ մասի հատուցը	4.89	4.69	-0.20	-0.20 x 51.94 : : 100 = - 0.11

Հիմնական միջոցների հատուցի մեծության շեղման վրա ազդող առաջին կարգի գործոններից են՝ ակտիվ մասի տեսակարար կշռի ($U_{\text{ռոլ}}$) և դրա հատուցի ($\zeta_{\text{հմա}}$) փոփոխությունները.

$$\zeta_{\text{հմ}} = U_{\text{ռոլ}} \times \zeta_{\text{հմա}},$$

$$\Delta \zeta_{\text{հմ}} = \Delta \zeta_{\text{հմ1}} - \Delta \zeta_{\text{հմ0}} = -0.02,$$

1) գործոն՝ ակտիվ մասի տեսակարար կշռի ազդեցությունը՝

$$\Delta U_{\text{ռոլ}} \times \zeta_{\text{հմա0}} = +0.09,$$

2) գործոն՝ ակտիվ մասի հատուցի ազդեցությունը՝

$$\Delta \zeta_{\text{հմա}} \times U_{\text{ռոլ1}} = -0.11:$$

Երկու գործոնների ազդեցությունը միասին կկազմի՝

$$\Delta \zeta_{\text{հմ}} = +0.09 + (-0.11) = -0.02:$$

Այնուհետև անցում է կատարվում հիմնական միջոցների հատուցի վրա ազդող երկրորդ կարգի գործոնների վերլուծությանը (այլուսակ 2.6):

Հիմնական միջոցների ակտիվ մասի հատուցի մեծությունը ($\zeta_{\text{հմա}}$) պայմանավորված է մեքենասարքավորումների քանակի (Φ), աշխատաժամանակի (U_d) և արտադրողականության (σ_w) ազդեցությամբ՝

$$\zeta_{\text{հմա}} = \frac{\Phi \times U_d \times \sigma_w}{\zeta_{\text{հմ}}}$$

որտեղ՝ $\zeta_{\text{հմ}} -$ հիմնական միջոցների ակտիվ մասի միջին տարեկան արժեքն է:

Ակտիվ մասի հատուցի վերլուծությունը

Այլուսակ 2.6

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Մեքենասարքավորումների քանակը, միավոր	430	440	+10
2. Միավոր մեքենասարքավորման միջին գինը, հազ. դ.	7.140	7.614	+0.474
3. Աշխատած օրերի թիվը, օր	250	248	-2
4. Հերթափոխության գործակիցը	1.5	1.45	-0.05

5. Հերթափոխի միջին տևողությունը, ժամ	8.0	7.9	-0.1
6. Միջին ժամային արտադրողականությունը, հազ. դ.	11.628	12.560	+0.932

Քանի որ հիմնական միջոցների ակտիվ մասի միավորի աշխատաժամանակը կարելի է ներկայացնել որպես աշխատած օրերի թվի (O), հերթափոխության գործակցի (Φ_Բ) և հերթափոխի միջին տևողության ($\zeta_{\text{ու}}$), իսկ միջին տարեկան արժեքը՝ դրանց քանակի (Փ) և միավորի միջին գնի (Π) արտադրյալ, ապա ակտիվ մասի հատուցի բանաձևը կունենա հետևյալ տեսքը՝

$$\zeta_{\text{հմա}} = \frac{\Phi \times O \times \Phi_B \times \zeta_{\text{ու}} \times \Phi_w}{\Phi \times \Phi} = \frac{O \times \Phi_B \times \zeta_{\text{ու}} \times \Phi_w}{\Phi}$$

Ըլլայական տեղադրումների եղանակի սկզբունքներին համապատասխան կարելի է բացահայտել ակտիվ մասի հատուցի փոփոխության վրա այդ գործոնների ազդեցությունը։ Դրա համար պետք է կատարել հետևյալ հաշվարկները և տեղադրումները.

1) հաշվարկ՝

$$\zeta_{\text{հմա}0} = \frac{O_0 \times \Phi_{B0} \times \zeta_{\text{ու}0} \times \Phi_{w0}}{\Phi_0} = 4.89$$

2) հաշվարկ, 1) տեղադրում՝

$$\zeta_{\text{հմա}1} = \frac{O_0 \times \Phi_{B0} \times \zeta_{\text{ու}0} \times \Phi_{w0}}{\Phi_1} = 4.58$$

3) հաշվարկ, 2) տեղադրում՝

$$\zeta_{\text{հմա}2} = \frac{O_1 \times \Phi_{B1} \times \zeta_{\text{ու}0} \times \Phi_{w0}}{\Phi_1} = 4.55$$

4) հաշվարկ, 3) տեղադրում՝

$$\zeta_{\text{հմա}3} = \frac{O_1 \times \Phi_{B1} \times \zeta_{\text{ու}1} \times \Phi_{w0}}{\Phi_1} = 4.39$$

5) հաշվարկ, 4) տեղադրում՝

$$\zeta_{\text{հմա}4} = \frac{O_1 \times \Phi_{B1} \times \zeta_{\text{ու}1} \times \Phi_{w0}}{\Phi_1} = 4.34$$

6) հաշվարկ, 5) տեղադրում՝

$$\zeta_{\text{հմա 1}} = \frac{\Omega_1 \times \Phi_{\text{Բ1}} \times \zeta_{\omega 1} \times \phi_{\omega 1}}{\Phi_1} = 4.69$$

Տարբեր գործոնների ազդեցությունը կազմել է՝

- միավոր մեքենասարքավորման միջին գնի՝ $\zeta_{\text{հմա}}^I - \zeta_{\text{հմա0}} = -0.31$,
- օրերի թվի՝ $\zeta_{\text{հմա}}^{II} - \zeta_{\text{հմա}}^I = -0.03$,
- հերթափոխային գործակցի՝ $\zeta_{\text{հմա}}^{III} - \zeta_{\text{հմա}}^{II} = -0.16$,
- հերթափոխի միջին տևողության՝ $\zeta_{\text{հմա}} - \zeta_{\text{հմա}}^{III} = -0.05$,
- միջին ժամանակին արտադրողականության՝ $\zeta_{\text{հմա1}} - \zeta_{\text{հմա}} = +0.35$:

Այդ գործոնների հանրահաշվական գումարը կկազմի՝

$$\Delta \zeta_{\text{հմա}} = \zeta_{\text{հմա1}} - \zeta_{\text{հմա0}} = -0.2:$$

Նշված գործոնների ազդեցությունը հատուցի վրա որոշելու համար անհրաժեշտ է ստացված գումարը բազմապատկել ակտիվ մասի փաստացի տեսակարար կշռով:

Կարելի է որոշել արտադրանքի իրացումից ստացված հասուցի փոփոխության վրա հիմնական միջոցների միջին տարեկան արժեքի և հատուցի փոփոխության ազդեցությունը:

Վերլուծական գործընթացում հաշվարկվում է նաև հատուցի փոփոխության գործոնների ազդեցությունը հիմնական միջոցների շահութաբերության վրա: Դրա համար այդ գործոնների գումարը պետք է բազմապատկել իրացման շահութաբերության նախատեսված մակարդակով:

Դիտարկված ցուցանիշների և աշխատանքի արտադրողականության (U_w) միջև գոյություն ունի ֆունկցիոնալ կախվածություն՝

$$C_{\text{Բ1}} = \frac{C_g}{\zeta_u} = \frac{C}{\zeta} \times \frac{\zeta}{\zeta_u} = \frac{C_g}{\zeta} \times \frac{\zeta}{\beta} : \frac{\zeta_u}{\beta} = h_2 \times U_w : Q_{uu}$$

որտեղ՝ Բ - ամենամեծ հերթափոխում աշխատող բանվորների միջին ցուցակային թիվն է:

Այսպիսով՝ հիմնական միջոցների շահութաբերությունը մի կողմից՝ իրացման շահութաբերության, մյուս կողմից՝ աշխատանքի արտադրողականության ու աշխատանքի գինվածության հարաբերակցության արտադրյալն է: Դա նշանակում է, որ հիմնական միջոցների շահութաբերությունն ուղիղ համեմատական է իրացման շահութաբերությանն ու աշխատանքի արտադրողականությանը և հակադարձ համեմատական՝ աշխատանքի գինվածությանը: Հետևաբար հիմնական միջոցների շահութաբերության մակարդակի բարձրացման համար ցանկալի է, որ իրացման շահութաբերության և աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը գերազանցեն աշխատանքի գինվածության աճի տեմպը: Վերլուծվող կազմակերպությունում իրացման շահութաբերություն աճի տեմպը (+34.5%) գերազանցում է, իսկ աշխատանքի արտադրողականության աճի տեմպը (+14.2%), ինչպես նշվել է, զիջում է աշխատանքի գինվածության աճի տեմպին:

Վերլուծական հետազոտությունների արդյունքներով նպատակահարմար է բացահայտել հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացման պաշարները:

S E U S E R

1. Հիմնական միջոցները դասակարգել ըստ ակտիվ (1) և պասիվ (2) խմբերի.

- ա) շենքեր
- բ) կառուցվածքներ
- գ) փոխանցող հարմարանքներ
- դ) մեքենաներ և սարքավորումներ
- ե) տրանսպորտային միջոցներ
- զ) արտադրատնտեսական գույք և գործիքներ
- է) բազմամյա տնկարկներ
- ը) բանող և մթերատու անասուններ:

2. Ո՞ր գործակիցներն են բնութագրում հիմնական միջոցների տեխնիկական մակարդակը.

- ա) նորացման, պիտանիության, մաշվածության, կապիտալահատուցից
- բ) նորացման, մաշվածության, պիտանիության, տեխնիկական գինվածության
- գ) նորացման, հերթափոխության, մաշվածության, կապիտալագինվածության
- դ) նորացման, մաշվածության, դուրս գրման, տարիքային կազմի:

3. Ո՞ր բանաձևով է որոշվում հիմնական միջոցների նորացման գործակիցը.

- ա) մուտքագրված հիմնական միջոցների արժեք / հիմնական միջոցների տարեվերջի արժեք
- բ) հիմնական միջոցների հավելաճի արժեք / հիմնական միջոցների տարեվերջի արժեք
- գ) հիմնական միջոցների հավելաճի արժեք / հիմնական միջոցների տարեսկզբի արժեք
- դ) մուտքագրված հիմնական միջոցների արժեք / հիմնական միջոցների հավելաճի արժեք:

4. Ո՞ր բանաձևով է որոշվում հիմնական միջոցների դուրս գրման գործակիցը.

- ա) հիմնական միջոցների միջին արժեք / դուրս գրված հիմնական միջոցների արժեք
- բ) հիմնական միջոցների արժեք / դուրս գրված հիմնական միջոցների արժեք
- գ) դուրս գրված հիմնական միջոցների արժեք / հիմնական միջոցների տարեսկզբի արժեք
- դ) դուրս գրված հիմնական միջոցների արժեք / հիմնական միջոցների տարեվերջի արժեք:

5. Ո՞ր բանաձևով է որոշվում հիմնական միջոցների հավելածի գործակիցը.

- ա) հիմնական միջոցների տարեվերջի արժեք / հիմնական միջոցների հավելածի արժեք
- բ) հիմնական միջոցների հաշվեկշռային արժեք / հիմնական միջոցների հավելածի արժեք
- գ) հիմնական միջոցների հավելածի արժեք / դուրս գրված հիմնական միջոցների արժեք
- դ) հիմնական միջոցների հավելածի արժեք / հիմնական միջոցների տարեսկզբի արժեք:

6. Ո՞ր բանաձևով է որոշվում հիմնական միջոցների մաշվածության գործակիցը.

- ա) մաշվածության գումար / հիմնական միջոցների տարեսկզբի արժեք
- բ) մաշվածության գումար / հիմնական միջոցների սկզբնական արժեք
- գ) հիմնական միջոցների հավելածի արժեք / մաշվածության գումար
- դ) դուրս գրված հիմնական միջոցների արժեք / մաշվածության գումար:

7. Ո՞ր բանաձևով է որոշվում հիմնական միջոցների պիտանիության գործակիցը.

- ա) հիմնական միջոցների հաշվեկշռային արժեք / հիմնական միջոցների սկզբնական արժեք
- բ) հիմնական միջոցների տարեվերջի արժեք / հիմնական միջոցների հաշվեկշռային արժեք
- գ) հիմնական միջոցների հաշվեկշռային արժեք / հիմնական միջոցների տարեսկզբի արժեք
- դ) հիմնական միջոցների տարեսկզբի արժեք / հիմնական միջոցների հաշվեկշռային արժեք:

8. Որո՞նք են հիմնական միջոցների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները.

- ա) շրջանառելիություն, հատուց, աշխատանքի գինվածություն
- բ) շահութաբերություն, հատուց, ակտիվ մասի հատուց
- գ) շրջանառելիություն, տարիքային կազմ, մաշվածություն
- դ) շահութաբերություն, շրջանառելիություն, նյութահատուց:

9. Ինչպե՞ս է որոշվում հիմնական միջոցների շահութաբերության ցուցանիշը.

- ա) հիմնական միջոցների միջին տարեկան արժեք / իրացումից հասուլք
- բ) իրացումից հասուլք / հիմնական միջոցների միջին տարեկան արժեք
- գ) գուտ շահութ / հիմնական միջոցների միջին տարեկան արժեք
- դ) հիմնական միջոցների միջին տարեկան արժեք / իրացումից շահութ:

10. Հիմնական միջոցների շահութաբերությունը ներկայացվում է որպես հետևյալ ցուցանիշների արտադրյալ.

- ա) հատուց x իրացման շահութաբերություն
- բ) աշխատանքի գինվածություն x իրացման շահութաբերություն
- գ) հատուց x իրացումից շահուց
- դ) աշխատանքի գինվածություն x իրացումից շահուց:

11. Ընդհանուր հատուցը հաշվարկվում է որպես.

- ա) իրացումից հասուց / ակտիվների միջին տարեկան արժեք
- բ) իրացումից շահուց / ակտիվների միջին տարեկան արժեք
- գ) ակտիվների միջին տարեկան արժեք / զուտ շահուց
- դ) ակտիվների միջին տարեկան արժեք / իրացումից հասուց:

12. Ինչպե՞ս է որոշվում հիմնական միջոցների հատուցի ցուցանիշը.

- ա) իրացումից հասուց / հիմնական միջոցների մաշվածության գումար
- բ) հիմնական միջոցների միջին տարեկան արժեք / իրացումից հասուց
- գ) հիմնական միջոցների միջին տարեկան արժեք / բանվորների միջին ցուցակային թիվ
- դ) իրացումից հասուց / հիմնական միջոցների միջին տարեկան արժեք:

13. Հիմնական միջոցների հատուցը կախված է այս ցուցանիշների փոփոխությունից.

- ա) հիմնական միջոցների ակտիվ մասի տեսակարար կշիռ x ակտիվ մասի հատուց
- բ) հիմնական միջոցների միջին տարեկան արժեք / իրացումից հասուց

- գ) իրացումից շահութ / հիմնական միջոցների միջին տարեկան արժեք
- դ) իրացումից հասութ / հիմնական միջոցների միջին տարեկան արժեք:

14. Գործողների ո՞ր խումբն է ազդում հիմնական միջոցների հատուցի փոփոխության վրա.

- ա) պարապուրդներ, նորացման գործակից, նյութատարություն, հերթափոխության գործակից
- բ) հերթափոխության գործակից, մաշվածության գործակից, մեկ բանվորի ժամային արտադրողականություն, ինքնարժեք
- գ) սարքավորումների կառուցվածք, պարապուրդներ, հերթափոխության գործակից, միջին ժամային արտադրողականություն
- դ) միջին ժամային արտադրողականություն, հերթափոխության գործակից, պարապուրդներ, նյութահատուց:

ՈՉ ՆՑՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

Կազմակերպությունների ոչ ընթացիկ ակտիվների մեջ գտալի տեղ ունեն ոչ նյութական ակտիվները: ՀՀՀՀՍ 38՝ «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտի համաձայն՝ ոչ նյութական ակտիվները ֆիզիկական սուբստանցիալից գործիք որոշելի ոչ դրամային ակտիվներ են, որոնք պահպում են արտադրությունում օգտագործելու, ապրանքներ (արտադրանք) մատակարարելու կամ ծառայություններ մատուցելու, այլ անձանց վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու հիմար: Ոչ նյութական ակտիվների սահմանումը պահանջում է, որ դրանք բավարարեն որոշելիության, միջոցների նկատմամբ վերահսկողության և ապագա տնտեսական օգուտների առկայության պայմանները:

Ոչ նյութական ակտիվները գնահատվում են սկզբնական, մնացորդային, իրական և հաշվեկշռային արժեքներով:

Սկզբնական արժեքը ակտիվի ձեռքբերման կամ արտադրության ժամանակ վճարված կամ վճարվելիք դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարն է, կամ այլ հատուցման իրական արժեքը:

Մնացորդային արժեքը այն գուտ գումարն է, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ ակտիվից՝ նրա օգտակար ծառայության վերջում՝ օտարման ակնկալվող ծախսերը հանելուց հետո:

Իրական արժեքը այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև՝ «պարզած ձեռքի հեռավորության» գործարքում:

Հաշվեկշռային արժեքը այն գումարն է, որով ակտիվը ճանաչվում է հաշվեկշռում՝ կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները հանելուց հետո:

Փաստորեն ոչ նյութական ակտիվները ֆիզիկական հատկանիշներ չունեցող երկարաժամկետ օգտագործման ակտիվներ են: Դրա հետ միասին, այդ ակտիվները կազմակերպությանը երկարատև ժամանակամիջոցում կարող են ապահովել շահուց ստանալու լայն հնարավորություն: Ոչ նյութական ակտիվների մեջ կազմակերպության կատարած ներդրումները փոխհատուցվում են ինչպես որոշ ժամանակ անցնելուց հետո լրացուցիչ շահուցիքի, այնպես էլ ամորտիզացիոն հատկացումների հաշվին:

Ծովայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, կազմակերպությունների ակտիվների մեջ անընդհատ աճում է ոչ նյութական ակտիվների տեսակարար կշիռը: Դրա հետ մեկտեղ, կազմակերպությունների կողմից զգալի շահագրգություն է նկատվում մտավոր գործունեության արդյունքների բացառիկ իրավունքով օգտագործման հաշվին բարձրացնել իրենց շահութաբերության մակարդակը: Այսպիսով՝ ոչ նյութական ակտիվների օգտագործման արդյունավետության վերլուծությունը յուրաքանչյուր կազմակերպության համար ունի կարևոր նշանակություն:

Ոչ նյութական ակտիվների վերլուծության խնդիրներն են՝

- ուսումնասիրել ոչ նյութական ակտիվների կազմն ու կառուցվածքը,
- որոշել ոչ նյութական ակտիվների օգտագործման արդյունավետության աստիճանը:

Ոչ նյութական ակտիվների վերլուծության համար օգտվում են հետևյալ տեղեկատվական տվյալներից՝

- ձև N 1. «Հաշվապահական հաշվեկշիռ»,
- ձև N 2. «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն»,
- ձև N 5. «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ» և այլն:

3.2. ՈՉ ՆՑՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ոչ նյութական ակտիվների կազմի ու կառուցվածքի վերուժությունը կատարվում է հրոբրոնական և ուղարկաց եղանակներով: Այդ ակտիվների կազմի մեջ են մտնում հետևյալ խմբերը՝

- ոչ նյութական ակտիվներ,
- անավարտ ոչ նյութական ակտիվներ,
- գուղվիլ:

Բուն ոչ նյութական ակտիվների խմբում ներկայացված են դրանց հետևյալ տեսակները՝

- ֆիրմային անուններ,
- հրապարակումների անուններ,
- համակարգչային ծրագրեր,
- լիցենզիաներ և վստահագրեր,
- հեղինակային իրավունքներ,
- արտոնագրեր,
- ծառայությունների մատուցման և շահագործման իրավունքներ,
- բանաձևեր, մոդելներ, նախագծեր, բաղադրատոմսեր և փորձանմուշներ,
- այլ ոչ նյութական ակտիվներ:

Ոչ նյութական ակտիվները՝ ըստ կազմի, օգտագործման բնույթի, ֆինանսական ցուցանիշների վրա ունեցող ազդեցության, միասեռ չեն: Այդ պատճառով անհրաժեշտ է ոչ նյութական ակտիվները գնահատել տարբերակված մոտեցմամբ՝ դրանք նախապես խմբավորելով ըստ տեսակների, մուտքագրման աղբյուրների և ելքագրման ուղղությունների, իրավական պաշտպանվածության, արդյունավետ օգտագործման ժամկետների, հեղինակության աստիճանի, իրացվելիության մակարդակի, կազմակերպությունում ստեղծված ակտիվների և այլն:

Ոչ նյութական ակտիվների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը կատարվում է ըստ տեսակների (այլուսակ 3.1):

**Ոչ նյութական ակտիվների կազմի ու կառուցվածքի
փոփոխությունները**

Այլուսակ 3.1

Ոչ նյութական ակտիվների կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ծեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Ֆիրմային անուններ	100	25.00	130	23.63	+30	-1.37
2. Հրապարակումների անուններ	10	2.50	10	1.82	-	-0.68
3. Համակարգչային ծրագրեր	20	5.00	20	3.64	-	-1.36
4. Լիցենզիաներ և վստահագրեր	150	37.50	160	29.09	+10	-8.41
5. Հեղինակային իրավունքներ	50	12.50	70	12.73	+20	+0.23
6. Արտոնագրեր	10	2.50	10	1.82	-	-0.68
7. Ծառայությունների մատուցման և շահա- գործման իրավունքներ	40	10.00	70	12.73	+30	+2.73
8. Բանաձևեր, մոդելներ, նախագծեր, բաղադր- րատոմսեր և փորձա- նմուշներ	-	-	-	-	-	-
9. Այլ ակտիվներ	20	5.00	80	14.54	+60	+9.54
Ընդամենը	400	100.00	550	100.00	+150	-

Այլուսակից երևում է, որ ոչ նյութական ակտիվների ինչպես կազմում, այնպես էլ կառուցվածքում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ: Այսպես. ոչ նյութական ակտիվների գումարը հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 150 հազ. դ. չափով, այդ թվում ֆիրմային անունների գծով՝ 30, լիցենզիաների և վստահագրերի գծով՝ 10, հեղինակային իրա- վունքների գծով՝ 20, ծառայությունների մատուցման և շահա- գործման իրավունքների գծով՝ 30 և այլ ակտիվների գծով՝ 60 հազ. դ.: Հրապարակումների անունների, համակարգչային ծրա- գրերի, արտոնագրերի ու բանաձևերի, մոդելների, նախագծերի,

բաղադրատոմսերի և փորձանմուշների բացարձակ գումարները այդ ընթացքում չեն փոփոխվել:

Միաժամանակ, ոչ նյութական ակտիվների կազմում տեղի են ունեցել կառուցվածքային տեղաշարժեր: Եթե ֆիրմային և հրապարակումների անունների, համակարգչային ծրագրերի, լիցենզիաների ու վստահագրերի և արտոնագրերի տեսակարար կշիռները նախորդ տարվա համեմատ նվազել են, ապա հեղինակային և ծառայությունների մատուցման ու շահագործման իրավունքների, ինչպես նաև բանաձևների, մոդելների, նախագծերի, բաղադրատոմսերի և փորձանմուշների բաժինները, ընդհակառակը՝ աճել են:

Այնուհետև ուսումնասիրվում են դրանց մուտքագրման աղյուրները՝ մասնակիցներից ներդրում, կազմակերպությունում ներստեղծված, մատակարարաններից ձեռք բերված, անհատուց կամ փոխանակման կարգով ստացված, ինչպես նաև ելքագրման ուղղությունները՝ վաճառք, անհատուց տրամադրում, դուրսգրում և այլն:

Ըստ իրավական պաշտպանվածության աստիճանի՝ պետք է առանձնացնել ոչ նյութական ակտիվների հետևյալ խմբերը՝ արտոնագրեր, լիցենզիաներ, հեղինակային իրավունքներ և այլն: Իսկ ըստ արդյունավետ օգտագործման ժամկետների՝ այդ ակտիվները դասակարգվում են ըստ տարիների՝ իրենց տեսակարար կշիռներով:

Ոչ նյութական ակտիվների հեղինակության աստիճանը գնահատվում է փորձագետների միջոցով: Կան որոշ գործոններ, որոնք արգելակում են այդ ակտիվների առանձնահատուկ հատկանիշների դրսնորմանը՝ նորամուծությունների տեղին չկինելը, արտակարգ բացառիկությունը, սպառողների սահմանափակ շրջանակը և այլն: Այդ պատճառով փորձագետները օգտվում են միջազգային, համազգային և նյուղային մակարդակներում դրանց առավել արդյունավետ օգտագործման չափանիշներից:

Ոչ նյութական ակտիվները, ըստ իրացվելիության մակարդակի, գնահատվում են որպես դժվար իրացվելի ակտիվներ, քանի որ դրանց վերածումը դրամական միջոցների՝ ընթացիկ

ակտիվների համեմատ, ավելի բարդ է: Ոչ նյութական ակտիվների անհիմն աճը հանգեցնում է հաշվապահական հաշվեկշի կառուցվածքի վատթարացման: Արդյունքում նվազում է սեփական ընթացիկ ակտիվների գումարը, իշնում ակտիվների իրացվելիության աստիճանը և դանդաղում շրջանառելիության մակարդակը:

Վերլուծական գործընթացում անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնել նաև ներստեղծված ոչ նյութական ակտիվներին: Դրանք հետազոտության և մշակման ծախսումներն են, որ հնարավոր են դարձնում ապագա տնտեսական օգուտների ստացումը և որոնք հնարավոր է առանձնացնել: Հետազոտությունը նոր գիտական կամ տեխնիկական գիտելիքներ և իմացություն ձեռք բերելու ակնկալիքով կատարվող սկզբնական և պլանավորված ուսումնասիրություն է: Մշակումը հետազոտության արդյունքների կամ այլ գիտելիքների կիրառումն է նոր կամ էականորեն բարելավված նյութերի, սարքավորումների, արտադրատեսակների, գործընթացների, համակարգերի կամ ծառայությունների արտադրությունը (մատուցումը) պլանավորելու և հախագծելու համար՝ մինչև դրանց առևտրային արտադրության կամ օգտագործման սկիզբը:

Ոչ նյութական ակտիվների վերլուծական գործընթացում որոշվում են դրանց դինամիկան, աճի տեմպերը, կառուցվածքային տեղաշարժերը, բացահայտվում տարբեր գործոնների ազդեցությունը և գնահատվում դրանց հնարավոր հետևանքները կազմակերպության գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա:

3.3. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ


Ոչ նյութական ակտիվների օգտագործման արդյունավետության աստիճանը բնութագրվում է դրանց շահութաբերության (Ո₂) մակարդակով: Այն կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի տեսքով՝

$$\Pi_2 = \frac{\text{Ոչ նյութական ակտիվների օգտագործումից շահությութ} (\mathcal{C}_n)}{\text{Ոչ նյութական ակտիվների միջին տարեկան արժեք} (\bar{\Pi})}$$

Ոչ նյութական ակտիվների շահութաբերության մակարդակի փոփոխության վրա ազդում են մի շարք գործոններ (գծ. 3.1):

**Ոչ նյութական ակտիվների շահութաբերության
վերլուծությունը**

Գծապատկեր 3.1



Ոչ նյութական ակտիվների շահութաբերության մակարդակի փոփոխությունը պայմանավորված է դրանց ամորտիզացիայի շահութաբերության (\mathcal{C}_n/U_n) և շրջանառելիության ($U_n/\bar{\Pi}$) գործոններով՝

$$\Pi_2 = \frac{\overline{C}_n}{\overline{\Pi}} = \frac{\overline{C}_n}{\overline{U}_d} \times \frac{\overline{U}_d}{\overline{\Pi}}$$

որտեղ՝ U_d - ոչ նյութական ակտիվների տարեկան ամորտիգացիայի գումարն է:

Նշված գործոնների ազդեցությունը ոչ նյութական ակտիվների շահութաբերության մակարդակի փոփոխության վրա կարելի է որոշել շղթայական տեղադրումների կամ տարբերությունների եղանակով (աղյուսակ 3.2):

Ոչ նյութական ակտիվների շահութաբերության վերլուծությունը

Աղյուսակ 3.2

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Ծեռումը	Հաշվարկը
1. Ոչ նյութական ակտիվներից ստացված շահույթը, հազ. դ.	18	20	+2	-
2. Ոչ նյութական ակտիվների արժեքը, հազ. դ.	395	475	+80	-
3. Ոչ նյութական ակտիվների ամորտիգացիան, հազ. դ.	200	250	+50	-
4. Շահութաբերությունը, %	4.56	4.21	-0.35	-
5. Ամորտիզացիայի շահութաբերությունը, %	9.0	8.0	-1.0	$-1.0 \times 0.51 = -0.51$
6. Ծրչանառելիությունը	0.51	0.53	+0.02	$+0.02 \times 8 = +0.16$

Վերլուծական հետազոտության ընթացքում շատ հնարավոր է, որ ոչ նյութական ակտիվների օգտագործումից ստացված շահույթի մասին տվյալները բացակայեն: Այս դեպքում դրանց շահութաբերության մակարդակը կարելի է հաշվարկել մեկ այլ տարբերակով.

$$\Pi_2 = \frac{\overline{C}_q}{\overline{\Pi}} = \frac{\overline{C}_q}{\zeta} \times \frac{\zeta}{\overline{\Pi}}$$

որտեղ՝ \bar{C}_q - գուտ շահուցի գումարն է,
 ζ - իրացումից հասուցի գումարն է,
 \bar{C}_q/ζ - իրացման շահութաբերության մակարդակն է,
 ζ/P - ոչ նյութական ակտիվների հատուցն է:

Ոչ նյութական ակտիվների շահութաբերության մակարդակի փոփոխության վրա ազդում են իրացման շահութաբերության և դրանց հատուցի գործոնները, դրանց ազդեցությունը հաշվարկվում է վերը նշված եղանակներով (աղյուսակ 3.3):

**Ոչ նյութական ակտիվների շահութաբերության վերլուծությունը
գուտ շահուցի ցուցանիշով**

Աղյուսակ 3.3

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	Հաշվարկ
1. Զուտ շահուցը, հազ. դ.	640	900	+260	-
2. Ոչ նյութական ակտիվների միջին տարեկան արժեքը, հազ. դ.	395	475	+80	-
3. Իրացումից հասուցը, հազ. դ.	15000	15700	+700	-
4. Ծահութաբերությունը	1.62	1.90	+0.28	-
5. Իրացման շահութաբերությունը	0.043	0.058	+0.015	$+0.015 \times 37.97 = +0.57$
6. Ոչ նյութական ակտիվների շրջանառելիությունը	37.97	33.05	-4.92	$-4.92 \times 0.058 = -0.29$

Ոչ նյութական ակտիվների օգտագործման արդյունավետության աճը կարող է ապահովվել միայն այն դեպքում, եթե գուտ շահուցի ու իրացումից հասուցի աճի տեմպերը գերազանցեն դրանց աճի տեմպերը: Վերլուծվող կազմակերպությունում գուտ շահուցի աճի տեմպը երկու անգամ գերազանցում, իսկ իրացումից ստացված հասուցի աճի տեմպը չորսից ավելի անգամ զիշում է ոչ նյութական ակտիվների աճի տեմպին:

ԳԼՈՒԽ IV

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

4.1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

Ֆինանսական ակտիվները կազմակերպության ժամանակավորապես ազատ միջոցների արդյունավետ օգտագործման գործուն ձևերից են: ՀՀՀՀՍ 39՝ «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտի համաձայն՝ ֆինանսական ակտիվները կարող են լինել դրամական միջոցները, մեկ այլ կազմակերպությունից դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ ստանալու պայմանագրային իրավունքը, մեկ այլ կազմակերպության հետ պոտենցիալ նպաստավոր պայմաններով ֆինանսական գործիքների փոխանակման պայմանագրային իրավունքը, կամ այլ կազմակերպության սեփական կապիտալի գործիքը:

Ֆինանսական գործիքը ցանկացած պայմանագիր է, որը միաժամանակ մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ սեփական կապիտալի գործիք: Վերջինս կոչվում է նաև բաժնեմասնակցության գործիք: Այն ցանկացած պայմանագիր է, որը, բոլոր պարտավորությունները հանելուց հետո, հավաստում է մնացորդային ակտիվների բաժնի նկատմամբ կազմակերպության իրավունքը:

Ֆինանսական ակտիվները, կախված ներդրման ժամկետից, ստորաբաժանվում են՝ ոչ ընթացիկ և ընթացիկ բաժնեների: Եթե ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվները համարվում են մեկ տարուց ավելի իրացվելիության ժամկետ ունեցող ակտիվներ, ապա ընթացիկ ֆինանսական ակտիվների իրացվելիության

ժամկետը մինչև մեկ տարի է: Կազմակերպությունները այդ ֆինանսական ներդրումներից ակնկալում են ստանալ կայուն ֆինանսական արդյունքներ: Հետևաբար՝ ֆինանսական ակտիվների արդյունավետության վերլուծությունը կարենոր է յուրաքանչյուր կազմակերպության համար:

Ֆինանսական ակտիվների վերլուծության ընթացքում պետք է լուծել հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել ֆինանսական ակտիվների կազմն ու կառուցվածքը,

- բացահայտել ֆինանսական ակտիվների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների վրա տարբեր գործուների ազդեցությունը:

Ֆինանսական ակտիվների վերլուծությունը կարելի է կատարել հետևյալ տեղեկատվական տվյալներով՝

- ձև N 1. «Հաշվապահական հաշվեկշիռ»,
- ձև N 2. «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն»,
- ձև N 5. «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ» և այլն:

4.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական ակտիվների կազմի ու կառուցվածքի վերլուծության ժամանակ օգտագործվում են հորիզոնական և ուղղահայաց եղանակները: Վերլուծական գործընթացում այդ ակտիվների ուսումնասիրությունը տարվում է հետևյալ ուղղություններով՝ ըստ խմբերի, տեսակների, մուտքագրման աղբյուրների ու ելքագրման ուղղությունների և այլն:

Ըստ ՀՀՀՀՀ 39՝ «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտի ֆինանսական ակտիվները խմբավորվում են հետևյալ կերպ՝

- առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ, որոնք ձեռք են բերվել կամ առաջացել են հիմնականում գների կամ դիլերային հավելագների կարճաժամկետ տատանումներից շահուց ստանալու նպատակով,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, որոնք ենթադրում են հաստատագրված կամ որոշելի վճարումներ, ունեն հաստատագրված մարման ժամկետ, կազմակերպությունը կարող է դրանք պահել մինչև մարման ժամկետը լրանալը և կազմակերպության կողմից տրամադրված փոխառություններ կամ դերիտորական պարտքեր չեն,
- կազմակերպության կողմից տրամադրված փոխառություններ և դերիտորական պարտքեր, որոնք առաջանում են կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին (դերիտորին) դրամ, ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով, բացառությամբ նրանց, որոնք տրամադրվում են անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառելու մտադրությամբ,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնք մնացած բոլոր ֆինանսական ակտիվներն են:

Ֆինանսական ակտիվների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը տարվում է նաև ըստ տեսակների՝ բաժնետոմսեր, պարտատոմսեր և փոխառություններ:

Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների վերլուծությունը իրականացվում է բաժնեմասնակցության մեթոդով, ըստ սկզբանական արժեքի և իրական արժեքի հաշվառվող ներդրումների:

Բաժնեմասնակցության մեթոդի դեպքում կատարված ներդրումը գրանցվում է ինքնարժեքով, իսկ հետո ճշգրտվում՝ ձեռքբերումից հետո ներդրման օբյեկտի գույն ակտիվներում ներդրողի բաժնեմասի փոփոխության չափով:

Սկզբանական արժեքի դեպքում ներդրումը գրանցվում է ինքնարժեքով: Ներդրողը եկամուտը ճանաչում է այն չափով, որը ստացվել է ներդրման օբյեկտի՝ ձեռքբերմանը հաջորդող ժամանակաշրջանում կուտակված գույն շահուցիքի բաշխումից:

Իրական արժեքը որոշվում է արժեթղթերի շուկայի և գների տիրուցի դեպքում, եթե իրացման ներկա արժեքը հիմք է

հանդիսանում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սահմանելու համար: Իրական արժեքը այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև՝ «պարզած ձեռքի հեռավորության» գործարքի ընթացքում:

Ընթացիկ ֆինանսական ներդրումների կազմը հետևյալն է՝ առևտրական նպատակներով պահվող, վաճառքի համար մատչելի, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, տրամադրված կարճաժամկետ փոխառությունները, ինչպես նաև երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասը:

Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների կազմի ու կառուցվածքի փոփոխությունները

Աղյուսակ 4.1

Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Բաժնեմասնակցության մերժողով հաշվառվող ներդրումներ, այդ թվում՝	230	76.67	330	76.74	+100	+0.07
դրամատր ընկերություններում՝	80	26.67	100	23.25	+20	-3.42
ասոցիացված կազմակերպություններում՝	50	16.67	70	16.28	+20	-0.39
համատեղ վերահրակվող միավորումներում՝	100	33.33	160	37.21	+60	+3.88
2. Ներդրումներ՝ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում	60	20.00	80	18.61	+20	-1.39
3. Այլ ակտիվներ	10	3.33	20	4.65	+10	+1.32
Ընդամենը	300	100.00	430	100.00	+130	-

Վերլուծվող կազմակերպության տվյալներով գնահատենք ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները (այսուսակ 4.1):

Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների գումարը հաշվետու տարում աճել է 130 հազ. դ. չափով, մասնավորապես բաժնեմասնակցության մերոդով հաշվառվող ներդրումների գծով՝ 100, կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում կատարված ներդրումների գծով՝ 20, իսկ այլ ակտիվների գծով՝ 10 հազ. դ.: Այդ ընթացքում նկատվել է բաժնեմասնակցության մերոդով հաշվառվող ներդրումների առանձին տեսակների գծով աճ:

Բաժնեմասնակցության մերոդով հաշվառվող ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ աճել է 0.07%-ով: Եթե դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում հաշվետու տարվա ընթացքում կատարված ներդրումների բաժինը նախորդ տարվա համեմատ նվազել են, ապա համատեղ վերահսկվող միավորումներում՝ աճել: Այդ նույն ժամանակամիջոցում նվազել են կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում կատարված ներդրումները: Այլ ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռն աճել է:

Այնուհետև ֆինանսական ակտիվների վերլուծությունը շարունակվում է ըստ մուտքագրման և ելքագրման աղբյուրների՝ մասնակիցներից ներդրում, ձեռքբերում, փոխանակման կարգով ստացված, վաճառք և այլն:

Ֆինանսական ակտիվների վերլուծական գործընթացում որոշվում են դրանց դինամիկան, աճի տեմպերը, կառուցվածքային տեղաշարժերը, տարբեր գործոնների ազդեցությունը և գնահատվում կազմակերպության գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա դրանց հնարավոր հետևանքները:

4.3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ


Ֆինանսական ակտիվների արդյունավետության գնահատումը իրականացվում է դրանց շահութաբերության (Φ_2) ցուցանիշով: Ֆինանսական ակտիվների շահութաբերության մակարդակը որոշվում է հետևյալ բանաձևով:

$$\Phi_2 = \frac{\text{Ֆինանսական ակտիվներից ստացված շահույթ} (\Phi_3)}{\text{Ֆինանսական ակտիվների միջին տարեկան արժեք} (\bar{\Phi})}$$

Ֆինանսական ակտիվների շահութաբերության մակարդակի շեղման վրա ազդում են մի շարք գործոններ (գծ. 4.1):

**Ֆինանսական ակտիվների շահութաբերության
վերլուծությունը**

Գծապատկեր 4.1



Այժմ բացահայտենք ֆինանսական ակտիվների շահութաբերության մակարդակի շեղման վրա դրանց կառուցվածքի (Φ_3) և առանձին ակտիվների շահութաբերության (Φ_{2w}) ազդեցությունը (աղյուսակ 4.2):

**Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների շահութաբերության
վերլուծությունը**

Աղյուսակ 4.2

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների գումարը, հազ. դ., այդ թվում՝	300	430	+130
բաժնետոմսերի	230	330	+100
բաժն փոխառությունների	70	100	+30
2. Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներից ստացված շահույթը, հազ. դ., այդ թվում՝	20	25	+5
բաժնետոմսերից, (80%)	17	21	+4
փոխառություններից, (20%)	3	4	+1
3. Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների կառուցվածքը, %	100.00	100.00	-
բաժնետոմսերի	76.67	76.74	+0.07
փոխառությունների	23.33	23.26	-0.07
4. Ֆինանսական ակտիվների շահութաբերությունը, %, այդ թվում՝	6.67	5.81	-0.86
բաժնետոմսերի	7.39	6.36	-1.03
փոխառությունների	4.29	4.00	-0.29

$$\Delta \Phi_2 = \Phi_{21} - \Phi_{20} = -0.86:$$

Նշված գործողների ազդեցությունը կարելի է բացահայտել վերլուծության տարբերությունների եղանակի միջոցով՝

1) գործոն՝ առանձին ֆինանսական ակտիվների (բաժնետոմսեր, փոխառություններ) տեսակարար կշռի ազդեցությունը՝

$$\Delta \Phi_4 \times \Phi_{2w0} = [(+0.07) \times 7.39 + (-0.07) \times 4.29] : 100 = +0.002,$$

2) գործոն՝ առանձին ֆինանսական ակտիվների շահութաբերության ազդեցությունը՝

$$\Delta \Phi_{2w} \times \Phi_{21} = [(-1.03) \times 76.74 + (-0.29) \times 23.26] : 100 = -0.862 :$$

Երկու գործոնների հանրագումարը հավասար է՝

$$\Delta \Phi_2 = +0.002 + (-0.862) = -0.86:$$

Վերլուծական գործընթացում բացահայտվում է նաև ֆինանսական ակտիվների շահութաբերության մակարդակի շեղման վրա իրացման շահութաբերության և ֆինանսական ակտիվների հատուցի փոփոխության ազդեցությունը (աղյուսակ 4.3).

$$\Delta \Phi_2 = \frac{\underline{C_q}}{\underline{\Phi}} = \frac{\underline{C_q}}{\underline{\zeta}} \times \frac{\underline{\zeta}}{\underline{\Phi}}$$

որտեղ՝ $\underline{C_q}$ - զուտ շահուցի գումարն է,

$\underline{\zeta}$ - իրացումից հասուցի գումարն է,

$\underline{C_q}/\underline{\zeta}$ - իրացման շահութաբերության մակարդակն է,

$\underline{\zeta}/\underline{\Phi}$ - ֆինանսական ակտիվների հատուցն է:

Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների շահութաբերության
վերլուծությունը զուտ շահուցի ցուցանիշով

Աղյուսակ 4.3

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	Հաշվարկը
1. Զուտ շահուցի, հազ. դ.	640	900	+260	-
2. Ֆինանսական ակտիվները, հազ. դ.	300	430	+130	-
3. Իրացումից հասուցի, հազ. դ.	15000	15700	+700	-
4. Շահութաբերությունը	2.13	2.09	-0.04	-
5. Իրացման շահութաբերությունը	0.043	0.058	+0.015	+0.015 x 50.0= =+0.75
6. Ֆինանսական ակտիվների հատուցը	50.0	36.5	-13.5	-13.5 x 0.058 = =-0.79

Ֆինանսական ակտիվների արդյունավետության մակարդակը կաճի այն դեպքում, երբ զուտ շահուցի և իրացումից

հասույթի աճի տեմպերը, դրանց աճի տեմպերի համեմատ, ունենան առաջանցիկ բնույթ: Վերլուծվող կազմակերպությունում ֆինանսական ակտիվների աճի տեմպերը զիշում են զուտ շահույթի և իրացումից հասույթի աճի տեմպերին:

Ֆինանսական ակտիվների շահութաբերությունը անհրաժեշտ է համեմատել այլնտրանքային մակարդակների՝ բանկային տոկոսադրույթի կամ գանձապետական պարտավորությունների տոկոսի հետ: Համեմատության արդյունքներով ընտրվում է ֆինանսական ներդրումների կատարման առավել արդյունավետ տարրերակը:

S E U S E R

1. Ներկայացված հաշվային հոդվածներից որո՞նք են ընդգրկվում ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների մեջ.

- ա) «բաժնեմասնակցության» մեթոդով հաշվառվող ներդրումներ
- բ) վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ
- գ) ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր
- դ) առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ
- ե) տրամադրված երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր
- զ) տրված ընթացիկ կանխավճարներ
- է) հետաձգված հարկային ակտիվներ
- ը) ներդրումներ՝ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում:

2. Ինչպե՞ս է որոշվում ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների շահութաբերության մակարդակը.

- ա) ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներից շահույթ / ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներից հասույթ
- բ) ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներից շահույթ / ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների միջին տարեկան արժեք
- գ) ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներից հասույթ / ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներից շահույթ
- դ) ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների միջին տարեկան արժեք / ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներից շահույթ:

3. Ի՞նչ գործոններ են ազդում ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների շահութաբերության մակարդակի փոփոխության վրա.

- ա) ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների կառուցվածք և առանձին ֆինանսական ակտիվների շահութաբերություն
- բ) առանձին ֆինանսական ակտիվների շահութաբերություն և ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեք
- գ) ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեք և ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների կառուցվածք
- դ) զուտ շահուլյթ և ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեք:

4. Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների շահութաբերության գործակիցը կարելի է ներկայացնել որպես հետևյալ ցուցանիշների արտադրյալ.

- ա) իրացման շահութաբերություն և ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների հատուց
- բ) ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների հատուց և իրացումից շահուլյթ
- գ) ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների միջին տարեկան արժեք և իրացումից շահուլյթ
- դ) իրացման շահութաբերություն և ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների միջին տարեկան արժեք:

ԳԼՈՒԽ V

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

5.1. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

Կազմակերպության ընթացիկ ակտիվների կազմում կարևոր տեղ ունեն պաշարները, որոնք ստորաբաժանվում են նյութական և ապրանքային պաշարների:

Պաշարների կազմում գգալի բաժին ունեն նյութական պաշարները: Ի տարբերություն ոչ ընթացիկ նյութական ակտիվների՝ նյութական պաշարները ամբողջությամբ սպառվում են արտադրական մեկ շրջափուլի ընթացքում՝ իրենց արժեքը վերագրելով նոր ստեղծվող արդյունքին:

ՀՀՀՀՍ 2՝ «Պաշարներ» ստանդարտի համաձայն՝ պաշարները այն ակտիվներն են, որոնք՝

- պահվում են սովորական գործունեության ընթացքում վճառքի համար,
- արտադրության ընթացքում են՝ այդպիսի վաճառքի համար,
- արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործման համար:

Նյութական պաշարները հաշվառման մեջ արտացոլվում են փաստացի ինքնարժեքով: Դրանք չափվում են ինքնարժեքից և իրացման գույք արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը չափվում է ստանդարտ ծախսումների մեթոդով, որի համաձայն սահմանվում է նյութական պաշարների նորմատիվային մակարդակը: Նյութական պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» ԱՄԱԵ (ՖԻՖՈ),

«Վերջինը մուտք՝ առաջինը ելք» ՎՄԱԵ (ԼԻՖՈ) կամ միջին կշռված արժեքի բանաձևերով:

Ըստ ԱՄԱԵ բանաձևի՝ առաջինը գնված կամ արտադրված պաշարների միավորները ելքագրվում են առաջինը, հետևաբար հաշվետու ժամանակաշրջանի վերջում մնում են վերջինը գնված կամ արտադրված միավորները:

Ըստ ՎՄԱԵ բանաձևի՝ վերջինը գնված կամ արտադրված պաշարների միավորները ելքագրվում են առաջինը, հետևաբար հաշվետու ժամանակաշրջանի վերջում մնում են առաջինը գնված կամ արտադրված միավորները:

Ըստ միջին կշռված արժեքի բանաձևի՝ յուրաքանչյուր միավորի արժեքը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբին և ընթացքում գնված կամ արտադրված միատիպ միավորների միջին կշռված արժեքով:

Պաշարների արժեքը չի կարող փոխհատուցվել, եթե դրանք օգտագործելի չեն, կամ գինը նվազել է, կամ համալրման և վաճառքի կազմակերպման համար անհրաժեշտ ծախսումները աճել են: Պաշարների ինքնարժեքը սովորաբար իշեցվում է մինչև իրացման զուտ արժեքը, որը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ համաձայն համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Կազմակերպության արտադրական ծրագրի իրականացման անհրաժեշտ պայմաններից մեկը նյութական պաշարներով ապահովածությունն է: Նյութական պաշարների նկատմամբ կազմակերպության պահանջարկը կարող է բավարարվել տարբեր եղանակներով: Եթե ավելանում է միավոր արտադրանքին բաժին ընկնող նյութական ծախսումների մակարդակը, ապա արտադրանքի ինքնարժեքը կարող է նվազել կազմակերպության գործարար ակտիվության աճի և հաստատուն ծախսերի տեսակարար կշռի փոքրացման հաշվին: Իսկ եթե նվազում է միավոր արտադրանքին բաժին ընկնող նյութական ծախսումների մակարդակը, ապա առաջանակը, ապա տնտեսվում է նրա ինքնարժեքը, բարձրանում շահութաբերության աստիճանը և ապահովում ֆինանսական կայուն իրադրություն: Հետևաբար, յուրաքանչյուր կազմակեր-

պութան համար կարևորվում են նյութական պաշարների վերլուծության համար:

Նյութական պաշարների վերլուծության խնդիրներն են՝

• գնահատել կազմակերպության ապահովածությունը նյութական պաշարներով,

• որոշել նյութական պաշարների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների փոփոխության վրա տարրեր գործոնների ազդեցությունը:

Նյութական պաշարների վերլուծության համար օգտագործվում են մի շարք տեղեկատվական աղյուրներ՝

- կազմակերպության բիզնես-ծրագիրը,
- նյութական պաշարների մատակարարման ծրագիրը,
- մատակարարումների պայմանագրերը,
- նյութական պաշարների առկայության և օգտագործման մասին հաշվետվությունը,
- ծախսերի մասին հաշվետվությունը,
- սինթետիկ և անալիտիկ հաշվառման տվյալները և այլն:

5.2. ՆՑՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Նյութական պաշարների վերլուծական գործընթացի առաջին փուլում ստուգվում է դրանց առանձին տեսակներով կազմակերպության ապահովածության աստիճանը: Այդ ընթացքում նյութական պաշարների առանձին տեսակների փաստացի քանակները համեմատվում են նախատեսված պահանջարկի հետ՝ ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական կտրվածքով: Վերջին դեպքում պետք է հաշվի առնվի կազմակերպության գործարար ակտիվության մակարդակը:

Վերլուծության գործընթացում գնահատվում է մատակարարման ծրագրի որակը. ուսումնասիրվում է կազմակերպության նյութական պաշարների պահանջարկի հաշվարկման համար

Կիրառված նորմատիվների հիմնավորվածությունը և այդ արդյունքներով ստուգվում նյութական պաշարների ձևավորման ու մատակարարությունների ծրագրի համապատասխանության աստիճանը:

Արտադրական գործընթացի կազմակերպման հիմնական պայմաններից մեկը նյութական պաշարների պահանջարկի ապահովվածությունն է ներքին և արտաքին աղբյուրներով։ Ներքին աղբյուրներից են՝ արտադրական թափոնների կրճատումը, սեփական նյութերի և կիսապատրաստուկների արտադրությունը, նյութերի տնտեսումը, գույքագրմամբ հայտաբերված ավելցուկները, հիմնական միջոցների լուծարումից ստացված նյութերը և այլն։

Արտաքին աղբյուրներից են հիմնականում՝ հիմադրներից որպես ներդրում, անհատուց և փոխանակման կարգով կամ մատակարարությունների պայմանագրերի համապատասխան ստացված նյութական պաշարները։

Այնուհետև գնահատվում է կազմակերպության նյութական պաշարներով ապահովվածության աստիճանը՝ ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական կտրվածքով (աղյուսակ 5.1):

Աղյուսակից երևում է, որ վերլուծվող կազմակերպությունը, բացարձակ առումով, 500 կգ-ով չի ապահովված նյութական պաշարներով։ Այդ վերաբերում է բոլոր պաշարներին՝ բացառությամբ «Գ» նյութատեսակի։ Տվյալ կազմակերպությունը հարաբերական տեսակետից նույնպես նյութական պաշարներով չի ապահովված՝ $41200 - 41700 + (41700 \times 3.42 : 100) = -1926$ ։ Նովնը կարելի է ասել նաև «Ա», «Բ» և «Դ» նյութատեսակների համար։

Դրանից հետո ուսումնասիրվում է ստացված առանձին նյութական պաշարների որակական մակարդակը, ISO-9000 սերիայի ստանդարտներին և պայմանագրի պայմաններին դրանց համապատասխանության աստիճանը, և դրանց խախտման դեպքում մատակարարներին ներկայացվում են բոլորքարկումներ։ Կարևոր նշանակություն է տրվում նաև նյութական պաշարների մատակարարման համաշափության հարցին։ Մա-

տակարարման ժամկետների խախտումները կազմալուծում են կազմակերպության ինչպես արտադրական, այնպես էլ վաճառահանման գործընթացը:

Նյութական պաշարներով ապահովածության վերլուծությունը

Աղյուսակ 5.1

Ցուցանիշներ	Նախա- տես ված	Փաս- տացի	Աճի տեմ- պը, %	Ապահովա- ծությունը	
				բացար- ձակ	Բարա- բերա- կան
1. Արտադրանքի արտադրության ծավալը, հազ. դ.	15200	15720	103.42	-	-
2. Նյութական պաշար- ների առկայությունը, կգ. ալդ.թվում՝	41700	41200	98.80	-500	-1926
«Ա» նյութատեսակ	18000	17800	98.89	-200	-816
«Բ» նյութատեսակ	15000	14700	98.00	-300	-813
«Գ» նյութատեսակ	1500	1600	106.67	+100	+49
«Դ» նյութատեսակ	7200	7100	98.61	-100	-146

Մատակարարման համաշափության գնահատման նպա-
տակով վերլուծության մեջ կիրառվում են համաշափության $\Phi_{\text{Բ1}}$ և
 $\Phi_{\text{Բ2}}$ գործակիցները.

$$\Phi_{\text{Բ1}} = \frac{\sum \Phi'}{\Phi_0}, \quad \Phi_{\text{Բ2}} = \sqrt{\frac{\sum (X - 100)^2 f}{\sum f}}$$

որտեղ՝ $\Sigma \Phi'$ - նյութական պաշարների փաստացի գումարն է
նախատեսվածի սահմաններում,
 $\Sigma \Phi_0$ - նյութական պաշարների նախատեսված
գումարն է,

$(X-100)^2$ - մատակարարումների շեղման քառակուսին է,

f - միջին կշռված մեծությունն է:

Մատակարարման համաչափության առաջին գործակիցը կազմել է՝

$$q_{f1} = \frac{\Sigma \eta'}{\Sigma \eta_0} = \frac{6300 - 40}{6300} = 0.99$$

Նյութական պաշարների մատակարարման համաչափությունը խախտվել է, որը կազմակերպության տնտեսական գործունեության իրականացման վրա կունենա բացասական ազդեցություն:

Մատակարարման համաչափության գործակիցը կարելի է որոշել նաև միջին քառակուսային շեղման մեթոդով: Այդ հաշվարկները կատարենք ստորև ներկայացված այլուսակ 5.2-ի տվյալներով:

Նյութական պաշարների մատակարարման համաչափության վերլուծությունը

Այլուսակ 5.2

Տասնօրյակները	Նախատեսված	Փաստացի	Աճի տեմպը	Շեղումը	Հաշվարկը
I տասնօրյակ	2100	2070	98.57	-1.43	$(-1.43)^2 \times 21 = 42.9$
II տասնօրյակ	2100	2090	99.52	-0.48	$(-0.48)^2 \times 21 = 4.8$
III տասնօրյակ	2100	2160	102.86	+2.86	$(+2.86)^2 \times 21 = 171.8$
Ընդամենը	6300	6320	100.32	+0.32	219.5

Նյութական պաշարների մատակարարման համաչափության գործակիցը հավասար է.

$$q_{\text{f2}} = \sqrt{\frac{\sum (X - 100)^2 f}{\sum f}} = 1.87\%$$

Նյութական պաշարների մատակարարման փաստացի ծավալը, նախատեսվածի համեմատ, միջին հաշվով շեղվել է ±1.87%-ով:

Վերլուծական գործընթացում առանձնահատուկ ուշադրույթուն է դարձվում նյութերի պահեստային պաշարների առկայության և շարժի վրա: Կազմակերպության տնտեսական գործունեության առավել պատասխանատու օբյեկտներից մեկը նյութական պաշարների արդյունավետ կառավարումն է: Կազմակերպության տնտեսական գործունեության վերջնական արդյունքները պայմանավորված են պաշարների օպտիմալացման մակարդակով: Պաշարների արդյունավետ կառավարումը հնարավորություն է տալիս արագացնել ակտիվների շրջանառելիությունը, բարձրացնել դրա շահութաբերության մակարդակը և շրջանառությունից ազատել որոշակի չափով ակտիվներ՝ դրանք ուղղելով այլ ոլորտներ: Հետևաբար՝ կազմակերպության ինչպես արտադրական, այնպես էլ իրացման գործընթացի հատակ իրականացման նպատակով պետք է ունենալ օպտիմալ պաշարներ:

Նյութական պաշարների վերլուծական գործընթացում անհրաժեշտ է օպտիմալացնել պաշարների կազմն ու կառուցվածքը, նվազեցնել սպասարկման ծախսերը և ապահովել արդյունավետ վերահսկողություն դրանց շարժի նկատմամբ:

Ընթացիկ պաշարների օպտիմալացման համար կիրառվում են մի շարք մեթոդներ, որոնցից ամենալայն տարածում ունի տնտեսապես հիմնավորված պատվերի մեթոդը (EOG): Այն հիմնված է պաշարների ինչպես փոխադրական, այնպես էլ պահեստային ծախսերի նվազեցման վրա:

Որքան մեծ է պատվերի խմբաքանակը և ուշ է կազմակերպում դրա տեղափոխումը, այնքան փոքր է փոխադրական ծախսերի գումարը (Σ_q), որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\sigma_{\phi} = \frac{S_{\omega}}{\bar{U}} \times \bar{\Psi}_{\omega}$$

որտեղ՝ S_{ω} - պաշարի տարեկան պահանջարկն է,

\bar{U} - խմբաքանակի միջին չափն է,

$\bar{\Psi}_{\omega}$ - պատվերի միջին արժեքն է:

S_{ω} և $\bar{\Psi}_{\omega}$ ցուցանիշների արժեքը չփոփոխվելու դեպքում \bar{U} աճը կնպաստի ծախսերի գումարի նվազմանը, և ընդհակառակը: Հետևաբար, կազմակերպության համար շահավետ է մեծ խմբաքանակներով պաշարների փոխադրումը: Սակայն մեծ խմբաքանակի դեպքում ավելանում է պահեստային ծախսերի գումարը, քանի որ մեծանում է օրական պաշարի չափը: Հաշվի առնելով այդ կախվածությունը՝ պահեստային ծախսերի գումարը կարելի է որոշել հետևյալ կերպ.

$$\sigma_{\omega} = \frac{\bar{U}}{2} \times U_{\omega}$$

որտեղ՝ σ_{ω} - պահեստային ծախսերի գումարն է,

U_{ω} - միավոր պաշարի պահեստային ծախսերն են:

Այստեղից նկատելի է, որ U_{ω} արժեքը չփոփոխվելու և խմբաքանակի միջին չափերի նվազեցման դեպքում պահեստային ծախսերի գումարը հասնում է նվազագույնի:

Տնտեսապես հիմնավորված պատվերի մեթոդը հնարավորություն է տալիս օպտիմալացնել երկու խումբ ծախսերի միջև եղած համամասնությունները այնպես, որ ծախսերի ընդհանուր գումարը լինի նվազագույն չափի: Այդ մեթոդը ($U_{տհայ}$) հերկայացվում է հետևյալ բանաձևի տեսքով.

$$U_{տհայ} = \sqrt{\frac{2 \times S_{\omega} \times \bar{\Psi}_{\omega}}{U_{\omega}}}$$

Այստեղից՝ պաշարի օպտիմալ չափը ($\bar{\Psi}_{օպ}$) որոշվում է հետևյալ կերպ՝

$$\bar{\Psi}_{օպ} = U_{տհայ} : 2$$

Պաշարների շարժի նկատմամբ վերահսկողության համակարգերից է ABC մեթոդը: Այն կարևոր միջոց է, որը կազմակերպությունում օգտագործվում է կառավարչական խնդիրների ոլորտում սկզբունքային հիմնախնդիրների որոշման համար: Պաշարների շարժի նկատմամբ վերահսկողական համակարգում բոլոր պաշարները, ելնելով իրենց արժեքից, ծախսման ծավալից և հաճախականությունից, բաժանվում են երեք խմբերի:

Ա խմբի մեջ են մտցվում պատվերի տևական պարբերաշրջանով առավել թանկարժեք պաշարները: Դրանք միշտ պահանջում են մշտական վերահսկողություն, քանի որ դրանց բացակայության դեպքում լուրջ ֆինանսական դժվարություններ կառաջանան: Այստեղ անհրաժեշտ է դրանց շարժի նկատմամբ ամենօրյա վերահսկողության իրականացում:

Բ խմբում ներառվում են այն պաշարները, որոնք քիչ նշանակություն ունեն կազմակերպության տնտեսական գործունեության անընդհատության ապահովման և վերջնական ֆինանսական արդյունքների ձևավորման գործում: Այդ պաշարները վերահսկվում են ամսվա մեջ մեկ անգամ:

Ը խմբում ընդգրկվում են մնացած այն պաշարները, որոնք որոշիչ դեր չունեն ֆինանսական արդյունքների ձևավորման հարցում: Դրանց շարժը վերահսկվում է եռամյակը մեկ:

ABC մեթոդով ուշադրությունը կենտրոնացվում է պաշարների առավել առաջնային խմբերի շարժի վրա:

Պաշարների շարժի նկատմամբ վերահսկողական համակարգերից է նաև XYZ մեթոդը: Այս դեպքում պաշարները բաշխվում են դրանց սպառման կառուցվածքին համապատասխան: X խմբին են վերաբերում այն պաշարները, որոնց սպառումը կրում է մշտական բնույթ, Y խմբի մեջ՝ սեզոնային, Z խմբի մեջ՝ ոչ մշտական բնույթ:

Նշված մեթոդները թույլ են տալիս նյութական պաշարների մատակարարման ժամանակ բարձրացնել ընդունված կառավարչական որոշումների արդյունավետության աստիճանը:

Վերլուծական գործընթացում դիտարկվում են նյութերի ընթացիկ, սեղոնային և ապահովագրական պաշարները: Նյութերի ընթացիկ պաշարի (Ψ_{μ}) մեծությունը պայմանավորված է մատակարարման պարբերականությամբ (\mathcal{U}_{μ}) և նյութերի միջին օրական ծախսով (O_{δ})՝

$$\Psi_{\mu} = \mathcal{U}_{\mu} \times O_{\delta}$$

Այնուհետև գնահատվում է կարևորագույն նյութատեսակների փաստացի պաշարների համապատասխանությունը նորմատիվային մեծությանը, միաժամանակ բացահայտելով ավելորդ և ոչ պիտանի նյութերի գումարը: Դա կարելի է կատարել միայն նյութերի անալիտիկ հաշվառման քարտերի տվյալներով:

Նյութական պաշարների արժեքային մեծությունը ($\mathbf{\Sigma}_{\mu}$) կարող է փոփոխության ենթարկվել ինչպես քանակական (Φ), այնպես էլ գնային (Φ) գործոնների ազդեցությամբ.

$$\Delta \mathbf{\Sigma}_{\mu} = \mathbf{\Sigma}_{\mu 1} - \mathbf{\Sigma}_{\mu 0},$$

1) քանակական գործոնի ազդեցությունը՝

$$\Delta \Phi \propto \Phi_0$$

2) գնային գործոնի ազդեցությունը՝

$$\Delta \Phi \propto \Phi_1$$

Այնուհետև որոշվում է նյութական պաշարների շրջանառության տևողությունը, որը կազմում է պահեստում նյութերի մուտքագրման և ելքագրման ժամանակահատվածը: Որքան փոքր է այդ ժամանակաշրջանը, այնքան կարճ է արտադրական շրջափուլի տևողությունը: Շրջանառության տևողությունը օրերով (S_2) հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$S_2 = \frac{\text{Նյութական պաշարների միջին մնացորդ} \times 360}{\text{Ծախսված պաշարների գումար}} = \\ = \frac{935 \times 360}{6290} = 54 \text{օր}$$

Նախորդ տարվա համեմատ, նյութական պաշարների շրջանառության տևողությունը կրճատվել է 2 օրով (54 – 56):

Նյութական պաշարների վերլուծական հետազոտությունները նպատակահարմար է շարունակել ըստ պաշարների առանձին խմբերի և ենթախմբերի:

5.3. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱԾԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Նյութական պաշարների օգտագործման արդյունավետությունը բնութագրելու համար կիրառվում են մի շարք ցուցանիշներ՝ միավոր նյութերի շահութաբերությունը, նյութատրությունը և նյութահատուցը:

Նյութերի շահութաբերությունը կամ միավոր նյութական ծախսներին բաժին ընկնող շահութը (η_2) համարվում է նյութական պաշարների օգտագործման արդյունավետությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից մեկը: Այն որոշվում է արտադրանքի իրացումից ստացված շահութի (C_h) և նյութական ծախսումների (η_d) հարաբերակցությամբ.

$$\eta_2 = \frac{C_h}{\eta_d}$$

Արտադրանքի նյութատարությունը (η_m) ցուց է տալիս, թե միավոր արտադրանքի արտադրության համար որքան նյութական ծախսումներ են անհրաժեշտ: Դա որոշվում է նյութական ծախսումների գումարը (η_d) հարաբերելով արտադրանքի արտադրության ծավալին (M):

$$\eta_m = \frac{\eta_d}{M}$$

Եթե նշված բանաձևի համարիչում ընդունում ենք ամբողջ նյութական ծախսումների գումարը, ապա կստանանք ընդհանուր նյութատարության ցուցանիշը: Բացի այդ ցուցանիշից գոյություն ունեն նաև նյութատարության այլ ցուցանիշներ՝ մասնակի և տեսակարար:

Մասնակի նյութատարության ցուցանիշները կիրառվում են առանձին նյութական ծախսումների օգտագործման արդյունավետությունը բնութագրելու համար: Այդ ցուցանիշներից են՝ հումքատարությունը (հումքի ծախսը հարաբերած արտադրանքի ծավալին), մետաղատարությունը (մետաղի ծախսը հարաբերած արտադրանքի ծավալին), վառելիքատարությունը (վառելիքի

ծախսը հարաբերած արտադրանքի ծավալին), Էներգատարությունը (Էներգիայի ծախսը հարաբերած արտադրանքի ծավալին) և այլն: Մասնակի նյութատարության ցուցանիշները կարող են օգտագործվել նաև առանձին արտադրատեսակների նյութատարության մակարդակների բնութագրման համար:

Տեսակարար նյութատարության ցուցանիշը հաշվարկվում է միավոր արտադրանքի հաշվով ծախսված նյութերի գումարը բաժանելով նրա զմի վրա: Այն կարելի է որոշել նաև բնեղեն արտահայտությամբ՝ ծախսված նյութերի քանակը հարաբերելով արտադրված արտադրանքի քանակին:

Հաջորդ ցուցանիշը, որը բնութագրում է նյութական պաշտոների օգտագործման արդյունավետության աստիճանը, նյութահատուցն է: Այն նյութատարության հակադարձ մեծությունն է: Նյութահատուցը ցուց է տալիս, թե միավոր նյութական ծախսումներով որքան արտադրանք է արտադրվել: Այդ ցուցանիշը (Ն_Բ) որոշվում է արտադրանքի ծավալի (Ա) և նյութական ծախսումների (Ն_Ծ) հարաբերակցությամբ.

$$\mathbf{N}_{\text{Բ}} = \frac{\mathbf{Ա}}{\mathbf{Ն}_{\text{Ծ}}}$$

Վերլուծական գործընթացում բացահայտվում է նշված ցուցանիշների փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցությունը (գծ. 5.1):

Նյութերի շահութաբերության մակարդակի աճը կազմակերպության տնտեսական գործունեությունը գնահատում է դրական կերպով: Վերլուծական գործընթացում ուսումնասիրվում է միավոր նյութերի շահութաբերության դինամիկան և բացահայտում դրա փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցությունը (աղյուսակ 5.3): Այդ մակարդակի փոփոխությունը պայմանավորված է արտադրանքի շահութաբերության և նյութահատուցի ազդեցությամբ.

$$\mathbf{N}_{\text{Ծ}} = \frac{\mathbf{\bar{G}}_{\text{Բ}}}{\mathbf{Ն}_{\text{Ծ}}} = \frac{\mathbf{\bar{G}}_{\text{Բ}}}{\mathbf{Ա}} \times \frac{\mathbf{Ա}}{\mathbf{Ն}_{\text{Ծ}}} = \frac{\mathbf{\bar{G}}_{\text{Բ}}}{\mathbf{Ա}} : \frac{\mathbf{Ն}_{\text{Ծ}}}{\mathbf{Ա}}$$

որտեղ՝ $\mathbf{\bar{G}}_{\text{Բ}}/\mathbf{Ա}$ - արտադրանքի շահութաբերությունն է,


Ա/Ն_Ծ - արտադրանքի նյութահատուցն է,

Ն_Ծ/Ա - արտադրանքի նյութատարությունն է:

Նշված գործոնների ազդեցությունը նյութերի շահութաբերության փոփոխության վրա կարելի է բացահայտել տնտեսական վերլուծության տարբերությունների եղանակի կիրառման միջոցով:

Նյութական պաշարների օգտագործման արդյունավետության ցուցանիշների գործոնային վերլուծությունը

Գծապատկեր 5.1



Վերլուծվող կազմակերպության տեղեկատվական տվյալներով որոշենք միավոր նյութական ծախսերին բաժին ընկնող շահուցի փոփոխության վրա արտադրանքի շահութաբերության և նյութահատուցի ազդեցությունը:

Նյութերի շահութաբերության վերլուծությունը

Աղյուսակ 5.3

Ցուցանիշներ	Նախա- տեսված	Փաս- տացի	Շեղումը	Գումարը
1. Արտադրանքի արտադրության ծավալը, հազ. դ.	15200	15720	+520	-
2. Նյութական ծախսումները, հազ. դ.	6250	6290	+40	-
3. Իրացումից շահութը, հազ. դ.	1100	1300	+200	-
4. Նյութերի շահութաբե- րությունը	0.1760	0.2067	+0.0307	-
5. Արտադրանքի շահութաբերությունը	0.0724	0.0827	+0.0103	+0.0251
6. Նյութահատուցը	2.4320	2.4992	+0.0672	+0.0056

Նյութերի շահութաբերության փոփոխությունը կազմել է՝

$$\Delta \mathbf{U}_2 = \mathbf{U}_{21} - \mathbf{U}_{20} = +0.0307,$$

1) գործոն՝ արտադրանքի շահութաբերության ազդեցու-
թյունը՝

$$\Delta \mathbf{U}_2 \times \mathbf{U}_{20} = +0.0103 \times 2.4320 = +0.0251,$$

2) գործոն՝ նյութահատուցի ազդեցությունը՝

$$\Delta \mathbf{U}_2 \times \mathbf{U}_{21} = +0.0672 \times 0.0827 = +0.0056 :$$

Երկու գործոնների հանրահաշվական գումարը կկազմի՝
 $\Delta \mathbf{U}_2 = +0.0307$:

Վերլուծական գործընթացում այնուհետև պետք է որոշել
արտադրանքի նյութատարության և նյութահատուցի ցուցանիշ-
ները (աղյուսակ 5.4):

Աղյուսակի տվյալներից երևում է, որ արտադրանքի ընդ-
հանուր նյութատարության մակարդակը նվազել է, որը տվյալ
կազմակերպության համար դրական է գնահատվում: Նույնը
վերաբերում է նաև մասնակի նյութատարության ցուցանիշներին:
Ի տարբերություն արտադրանքի նյութատարության՝ նյութահա-
տուցի մեծությունը աճել է:

**Արտադրանքի նյութատարության և նյութահատուցի
ցուցանիշների որոշումը**

Աղյուսակ 5.4

Ցուցանիշներ	Նախա- տեսված	Փաս- տացի	Ծերումը
1. Արտադրանքի արտադրության ծավալը, հազ. դ.	15200	15720	+520
2. Նյութական ծախսումները, հազ. դ.՝, այդ թվում՝	6250	6290	+40
հումքի	1920	1931	+11
վառելիքի	2210	2227	+17
էներգիայի	2120	2132	+12
3. Ընդհանուր նյութատարությունը, այդ թվում՝	41.12	40.01	-1.11
հումքատարություն	12.63	12.28	-0.35
վառելիքատարություն	14.54	14.17	-0.37
էներգատարություն	13.95	13.56	-0.39
4. Նյութահատուցը	2.432	2.499	+0.067

Իր հերթին՝ արտադրանքի նյութատարության, ինչպես նաև նյութահատուցի վրա ազդում են մի շարք գործոններ՝ արտադրանքի արտադրության ծավալը և նյութական ծախսումների գումարը: Արտադրանքի արտադրության ծավալը կարող է փոփոխված ենթարկվել արտադրանքի տեսականու, կառուցվածքի և գների ազդեցության միջոցով: Նյութական ծախսումների գումարը նույնական կարող է փոխվել արտադրանքի տեսականու, կառուցվածքի և միավոր արտադրանքի վրա ծախսված նյութերի ազդեցությամբ: Այսպիսով՝ ընդհանուր նյութատարությունը կախված է արտադրանքի տեսականուց և կառուցվածքից (Ա_ս), նյութերի ծախսի նորմայից (Ծ_ս), նյութերի գներից (Ն_գ) և արտադրանքի գներից (Ա_գ): Այն կարելի է արտահայտել հետևյալ բանաձևի միջոցով:

$$\mathbf{U}_{\text{un}} = \frac{\mathbf{U}_d}{\mathbf{U}} = \frac{\sum (\mathbf{U}_{\text{un}} \times \mathbf{\sigma}_g \times \mathbf{U}_g)}{\sum (\mathbf{U}_{\text{un}} \times \mathbf{U}_q)}$$

Արտադրանքի նյութատարության փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցությունը դիտարկենք աղյուսակ 5.5-ի տվյալներով:

**Տվյալներ արտադրանքի նյութատարության գործոնային
վերլուծության համար**

Աղյուսակ 5.5

(Բազ. դ.)

Ցուցանիշներ	Նյութական ծախսումներ	Արտադրանքի ծավալ
1. Նախատեսված	6250	15200
2. Փաստացի տեսականիով	6260	15690
3. Փաստացին՝ նախատեսվածով	6280	15720
4. Փաստացի	6290	15750

Նյութական ծախսումների և արտադրանքի ծավալի ցուցանիշներով և շղթայական տեղադրումների մեթոդով բացահայտենք նշված գործոնների ազդեցությունը արտադրանքի նյութատարության փոփոխության (ΔU_{un}) վրա: Դրա համար կատարենք հետևյալ հաշվարկները և տեղադրումները:

1) հաշվարկ՝

$$U_{\text{un}0} = \frac{\sum (\mathbf{U}_{\text{un}0} \times \mathbf{\sigma}_{g0} \times \mathbf{U}_{g0})}{\sum (\mathbf{U}_{\text{un}0} \times \mathbf{U}_{q0})} = \frac{6250}{15200} = 0.4112$$

2) հաշվարկ՝ 1) տեղադրում՝

$$U'_{\text{un}} = \frac{\sum (\mathbf{U}_{\text{un}1} \times \mathbf{\sigma}_{g0} \times \mathbf{U}_{g0})}{\sum (\mathbf{U}_{\text{un}1} \times \mathbf{U}_{q0})} = \frac{6260}{15690} = 0.3990$$

3) հաշվարկ, 2) տեղադրում՝

$$U''_{\text{un}} = \frac{\sum (\mathbf{U}_{\text{un}1} \times \mathbf{\sigma}_{g1} \times \mathbf{U}_{g0})}{\sum (\mathbf{U}_{\text{un}1} \times \mathbf{U}_{q0})} = \frac{6280}{15720} = 0.3995$$

4) հաշվարկ, 3) տեղադրում՝

$$\mathbf{U}_{\text{un}}''' = \frac{\sum (\mathbf{U}_{\text{un}1} \times \mathbf{\sigma}_{\text{g}1} \times \mathbf{U}_{\text{q}1})}{\sum (\mathbf{U}_{\text{un}1} \times \mathbf{U}_{\text{q}0})} = \frac{6290}{15720} = 0.4001$$

5) հաշվարկ, 4) տեղադրում՝

$$\mathbf{U}_{\text{un}1} = \frac{\sum (\mathbf{U}_{\text{un}1} \times \mathbf{\sigma}_{\text{g}1} \times \mathbf{U}_{\text{q}1})}{\sum (\mathbf{U}_{\text{un}1} \times \mathbf{U}_{\text{q}1})} = \frac{6290}{15750} = 0.3994$$

Արտադրանքի նյութատարության փոփոխությունը կատարվում է ի հաշիվ՝

- արտադրանքի տեսականու՝ $\mathbf{U}'_{\text{un}} - \mathbf{U}_{\text{un}0} = -0.0122$,
- նյութերի ծախսի նորմայի՝ $\mathbf{U}''_{\text{un}} - \mathbf{U}'_{\text{un}} = +0.0005$,
- նյութերի գների՝ $\mathbf{U}'''_{\text{un}} - \mathbf{U}''_{\text{un}} = +0.0006$,
- արտադրանքի գների՝ $\mathbf{U}_{\text{un}1} - \mathbf{U}'''_{\text{un}} = -0.0007$:

Բոլոր գործոնների հանրագումարը հավասար է՝

$$\Delta \mathbf{U}_{\text{un}} = \mathbf{U}_{\text{un}1} - \mathbf{U}_{\text{un}0} = 0.3994 - 0.4112 = -0.0118 :$$

Այնուհետև կատարվում է մասնակի նյութատարության ցուցանիշների վերլուծություն: Հումքատարությունը, մետաղատարությունը, վառելիքատարությունը և էներգատարությունը համարվում են ընդհանուր նյութատարության բաղադրատարրերը:

Դրանից հետո գնահատվում են նաև առանձին արտադրատեսակների նյութատարության ցուցանիշները և բացահայտվում դրանց փոփոխության վրա նյութերի ծախսի նորմայի, գների և արտադրանքի գների ազդեցության չափերը: Հաշվարկները այս դեպքում նույնական իրականացվում են շղթայական տեղադրումների եղանակի օգնությամբ.

1) հաշվարկ՝

$$\mathbf{U}_{\text{un}0} = \frac{\sum (\mathbf{\sigma}_{\text{g}0} \times \mathbf{U}_{\text{q}0})}{\mathbf{U}_{\text{q}0}}$$

2) հաշվարկ, 1) տեղադրում՝

$$\mathbf{U}'_{\text{un}} = \frac{\sum (\mathbf{\sigma}_{\text{g}1} \times \mathbf{U}_{\text{q}0})}{\mathbf{U}_{\text{q}0}}$$

3) հաշվարկ, 2) տեղադրում՝

$$\mathbf{U}_{\text{in}}'' = \frac{\sum (\sigma_{q1} \times \mathbf{U}_{q1})}{U_{q0}}$$

4) հաշվարկ, 3) տեղադրում՝

$$\mathbf{U}_{in1} = \frac{\sum (\sigma_{q1} \times \mathbf{U}_{q1})}{U_{q1}}$$

Առանձին գործոնների ազդեցությունը կազմել է՝

- Այութերի ծախսի նորմայի՝ \mathbf{U}'_{in} - \mathbf{U}_{in0} ,
- Այութերի գների՝ \mathbf{U}''_{in} - \mathbf{U}'_{in} ,
- արտադրանքի գների՝ \mathbf{U}_{in1} - \mathbf{U}''_{in} :

Նշված գործոնների ընդհանուր գումարը հավասար է՝

$$\Delta \mathbf{U}_{in} = \mathbf{U}_{in1} - \mathbf{U}_{in0}:$$

Հերլուծական գործողությունները նպատակահարմար է շարունակել Այութերի ծախսի նորմայի և գների փոփոխության պատճառների բացահայտմամբ: Միավոր արտադրանքի վրա ծախսված Այութերի քանակական մեծության վրա ազդում են մի շարք գործոններ՝ Այութերի որակը, արտադրության տեխնիկան և տեխնոլոգիան, մատակարարման կազմակերպման աստիճանը, բանվորների որակավորման մակարդակը, խոտանված արտադրանքը, արտադրական թափոնները և այլն: Իսկ Այութերի գների փոփոխությունը կարող է պայմանավորված լինել դրանց որակից, ներխմբային կառուցվածքից, հումքի շուկաներից, տրանսպորտային ծախսերից և այլն:

Վերլուծական գործընթացում անհրաժեշտ է նաև որոշել Այութատարության ազդեցությունը արտադրանքի ինքնարժեքի և ծավալի վրա: Արտադրանքի Այութատարության մակարդակի նվազեցումը հանգեցնում է Այութական պաշարների տնտեսման, հնարավորություն է տալիս արտադրել լրացուցիչ արտադրանք, և ընդհակառակը: Նյութատարության մակարդակի նվազեցումը հանգեցնում է կայուն ֆինանսական արդյունքների ապահովմանը: Նյութատարության ազդեցությունը արտադրանքի ինքնարժեքի (Ա_q) վրա որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$\Delta U_{\phi} = \Delta U_{in} \times U_l = -1.11 \times 15720 = -17450 :$$

Արտադրանքի ծավալի վրա (U) նյութատարության ազդեցությունը որոշելու համար պետք է նախորդ հաշվարկի արդյունքը հարաբերել նյութատարության նախատեսված մեծությանը՝

$$\Delta U = \Delta U_{\phi} : U_{in0} = 17450 : 41.12 = 424 \text{ հազ. դ.:$$

Վերլուծական հետազոտությունների արդյունքներով հայտնաբերվում են պահուստներ նյութական պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

S E U S E R

1. Ի՞՞ց ուղղություններով է տարվում Այութական պաշտպանի մատակարարումների վերլուծությունը.

- ա) ըստ ծավալի, համաշափության, պայմանագրերի, օգտագործման
- բ) ըստ ծավալի, տեսականու, որակի, համաշափության
- գ) ըստ պայմանագրերի, որակի, ժամկետների, պահեստների
- դ) ըստ ժամկետների, որակի, ծավալի, օգտագործման:

2. Տարբերում են Այութական պաշտպանի հետևյալ տեսակները.

- ա) ընթացիկ, հեռանկարային, ուզերվային, առավելագույն
- բ) ուզերվային, սեզոնային, ապահովագրական, նվազագույն
- գ) ընթացիկ, սեզոնային, ապահովագրական, ուզերվային
- դ) ապահովագրական, առավելագույն, նվազագույն, ուզերվային:

3. Որո՞նք են Այութական պաշտպանի օգտագործման արդյունավետության ցուցանիշները.

- ա) Այութատարություն, Այութահատուց, Այութական ծախսումների տեսակարար կշիռը արտադրանքի ինքնարժեքի մեջ, Այութերի տարեկերչի մնացորդ
- բ) Այութատարություն, Այութահատուց, ինքնարժեք, իրացումից հասուլք
- գ) Այութատարություն, Այութահատուց, Այութերի օգտագործման գործակից, միավոր Այութական ծախսումներին բաժին ընկնող շահույթ
- դ) Այութերի՝ տարեսկզբի մնացորդ, Այութական ծախսումներ, Այութատարություն, Այութահատուց:

4. Արտադրանքի նյութատարության հ՞նչ ցուցանիշներ կան.

- ա) ընդհանուր, մասնակի, գործոնային
- բ) ընդհանուր, տեսակարար, գործոնային
- գ) ընդհանուր, մասնակի, տեսակարար
- դ) ընդհանուր, միջանկյալ, մասնակի:

5. Ինչպե՞ս է որոշվում արտադրանքի ընդհանուր նյութատարությունը.

- ա) նյութական ծախսումներ / զուտ շահույթ
- բ) արտադրանքի ծավալ / նյութական ծախսումներ
- գ) զուտ շահույթ / նյութական ծախսումներ
- դ) նյութական ծախսումներ / արտադրանքի ծավալ:

6. Ինչպե՞ս է որոշվում արտադրանքի նյութահատուցը.

- ա) արտադրանքի ծավալ / նյութական ծախսումներ
- բ) նյութական ծախսումներ / արտադրանքի ինքնարժեք
- գ) նյութական ծախսումներ / արտադրանքի ծավալ
- դ) արտադրանքի ինքնարժեք / նյութական ծախսումներ:

7. Ի՞նչ գործոններ են ազդում արտադրանքի նյութատարության փոփոխության վրա.

- ա) արտադրանքի տեսականի և կառուցվածք, հումքի տեսակարար ծախս, նյութերի գին, արտադրանքի գին
- բ) արտադրանքի տեսականի և կառուցվածք, շահույթ, ինքնարժեք, իրացումից հասույթ
- գ) շահույթ, ինքնարժեք, նյութատարություն, նյութահատուց
- դ) ինքնարժեք, նյութատարություն, աշխատանքի արտադրողականություն, նյութահատուց:

8. Որո՞նք են արտադրանքի նյութատարության մասնակի ցուցանիշները.

- ա) աշխատատարություն, վառելիքատարություն, հումքատարություն, էներգատարություն

- թ) կապիտալատարություն, վառելիքատարություն, հումքատարություն, Էներգատարություն
- գ) աշխատատարություն, կապիտալատարություն, հումքատարություն, Էներգատարություն
- դ) վառելիքատարություն, Էներգատարություն, մետաղատարություն, հումքատարություն:

9. Ի՞նչ գործոններ են ազդում առանձին արտադրատեսակների նյութատարության փոփոխության վրա.

- ա) հումքի գին, նյութական ծախսումներ, ծախսի նորմա
- բ) հումքի տեսակարար ծախս, հումքի գին, արտադրանքի գին
- գ) նյութերի ծախսի նորմա, հումքի գին, արտադրանքի ինքնարժեք
- դ) հումքի գին, ծախսի նորմա, արտադրանքի ինքնարժեք:

10. Ինչպես որոշել նյութատարության ազդցությունը արտադրանքի ինքնարժեքի վրա.

- ա) նյութատարության շեղում x արտադրանքի ծավալ
- բ) նյութական ծախսումներ x արտադրանքի ինքարժեք
- գ) արտադրանքի ծավալ_0 x նյութատարության շեղում
- դ) արտադրանքի ինքարժեք_0 x նյութական ծախսումներ:

11. Ինչպես որոշել նյութատարության ազդցությունը արտադրանքի ծավալի վրա.

- ա) ինքնարժեքի վրա ազդցության գումար x նյութատարություն₁
- բ) ինքնարժեքի վրա ազդցության գումար / նյութատարություն₀
- գ) նյութատարության շեղում x արտադրանքի ծավալ
- դ) նյութատարության շեղում / արտադրանքի ինքնարժեք:

12. Ի՞՞ց գործոնները են ազդում միավոր նյութական ժախսումներին բաժին ընկնող շահութի փոփոխության վրա.

- ա) իրացման շահութաբերություն, նյութատարություն, գուտ շահութ
- բ) իրացումից հասութի տեսակարար կշիռը արտադրված արտադրանքի ծավալի մեջ, իրացման շահութաբերություն, նյութահատուց
- գ) նյութահատուց, նյութատարություն, գուտ շահութ
- դ) իրացումից շահութ, իրացումից հասութ, նյութատարություն:

13. Նյութական պաշարների մեծությունը իրենից ներկայացնում է երկու գործոնների արտադրյալ.

- ա) նյութերի զանգված x միավորի գին
- բ) նյութերի զանգված x նյութերի ծախսի նորմա
- գ) նյութերի ծախսի նորմա x միավորի գին
- դ) նյութերի ծախսի նորմա x նյութերի զանգված:

14. Ո՞ր բանաձևով որոշել նյութական պաշարների շրջանառելիությունը օրերով.

- ա) պաշարների միջին մնացորդ x 360 / պաշարների ծախսի գումար
- բ) պաշարների միջին մնացորդ x պաշարների ծախսի գումար / 360
- գ) պաշարների ծախսի գումար x 360 / պաշարների միջին մնացորդ
- դ) պաշարների ծախսի գումար / պաշարների միջին մնացորդ:

ԳԼՈՒԽ VI

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

6.1. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

Ապրանքային պաշարները կազմակերպության ընթացիկ ակտիվների կարևորագույն բաղկացուցիչներից են: Դրանց կազմում ներկայացված են արտադրանքը և ապրանքները: Արտադրական կազմակերպությունների ապրանքային պաշարների մեջ հիմնական բաժինը պատկանում է արտադրանքին:

Ծովայի պայմաններում յուրաքանչյուր կազմակերպություն ինքն է ծրագրում և իրականացնում իր տնտեսական գործունեությունը: Այդ ընթացքում նա հենվում է մատակարարների և գնորդների հետ նախապես կնքված պայմանագրերի վրա, և իր զարգացման հեռանկարները որոշում՝ ելնելով արտադրանքի սպառողական պահանջարկից: Ծովայի կազմակերպությունների գործունեության նկատմամբ ներկայացնում է մի շարք սկզբունքային պահանջներ՝ հետազոտել կառավարչական որոշումների այլընտրանքային տարբերակները, կատարել դրանց համեմատական գնահատումը, ընտրել առավել արդյունավետ տարրերակը և որոշել դրա իրագործման ֆինանսական արդյունքները:

Վերլուծական հետազոտության օբյեկտ է հանդիսանում ոչ թե պարզապես արտադրական գործընթացը, այլ արտադրվող արտադրանքի դիմաց պատվերի ստացումը և վճարումը՝ գնորդի հետ համաձայնեցված գներով: Այս դեպքում արտադրական գործընթացի վերլուծությունը և շուկայի ուսումնասիրումն ու գնահատումը հավասարապես ազդում են մեկը մյուսի վրա: Արտադրական ծրագրի ձևավորման գործում գգալի առավելություններ են ստանում այն կազմակերպությունները, որոնք

հաշվի առնելով շուկայական մրցակցության սկզբունքները, գգալի ջանքեր են գործադրում բարձրորակ արտադրանքի ծավալի ավելացման ուղղությամբ: Արտադրական քիչ հնարավորությունների և անսահմանափակ պահանջարկի դեպքում առաջնայինը արտադրանքի արտադրությունն է: Սակայն, շուկայի քանակական հագեցվածության բավարարման և մրցակցության ուժեղացմանը համընթաց, ոչ թե արտադրական, այլ իրացման գործընթացն է դառնում կազմակերպության նպատակը:

Արտադրական կազմակերպությունների համար արտադրանքի արտադրության վերլուծությունը կարևոր նշանակություն ունի: Վերլուծական գործընթացում առաջադրվում են հետևյալ խնդիրները՝

- իրականացնել մարքեթինգային վերլուծություն,
- վերլուծել արտադրանքի տեսականին, կառուցվածքը, որակը և համաշափությունը,
- որոշել արտադրանքի արտադրության ծավալի վրա տարբեր գործուների ազդեցությունը:

Վերլուծական հետազոտությունները իրականացվում են հետևյալ տեղեկատվական աղբյուրներով՝

- բիզնես-ծրագիրը,
- արտադրանքի մասին հաշվետվություն,
- հիմնական միջոցների մասին հաշվետվություն,
- նյութական պաշարների մասին հաշվետվություն,
- մարքեթինգային ծառայության տվյալներ,
- սկզբնական հաշվառման տվյալներ և այլն:

6.2. ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպության տնտեսական գործունեության բարենպաստ իրականացման գրավականներից է դեպի սպառողները ուղղվածու-

թունը և ճկուն հարմարվողականությունը շուկայական մրցակցության փոփոխություններին: Կազմակերպության բիզնես-ծրագիրը կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել սպառադաշտական պահանջարկը, վաճառքի շուկաները, մրցակիցներին ու գնորդներին, գների մեխանիզմը, պաշարների հասանելիությունը և այլն: Կազմակերպության ֆինանսական բոլոր ցուցանիշները պայմանավորվում են այդ հիմնախնդիրների հաջող լուծումից: Դրա համար անհրաժեշտ է իրականացնել մարքեթինգային վերլուծություն:

Վերլուծական գործընթացում ուսումնասիրվում է սպառադաշտական պահանջարկը, գնահատվում շուկայի կողմից պահանջարկ չվայելող արտադրանքի ռիսկի աստիճանը, արտադրանքի վաճառքի շուկաները, գնային քաղաքականությունը և մրցունակության մակարդակը:

Մարքեթինգի միջոցով կատարվում է նոր շուկաների, գնորդների, արտադրատեսակների մշտական որոնում՝ նպատակ ունենալով կազմակերպության համար ապահովել շահութաբերության բարձր մակարդակ: Մարքեթինգի միջոցով կարգավորվում են արտադրության և վաճառքի հիմնահարցերը, կազմակերպության տնտեսական գործունեությունը համապատասխանեցնելով շուկայական պահանջարկին:

Շուկայական պահանջարկը բնութագրում է ապրանքների այն ծավալը, որը սպառողը ցանկանում և ի վիճակի է տվալ շուկայում համապատասխան ժամանակաշրջանում ձեռք բերել որոշակի գնով: Պահանջարկի վրա ազդում են՝ ապրանքների գները, որակը, գնորդների եկամուտները, նախընտրությունները, հարակից ապրանքների գները, շուկայի հագեցվածությունը և այլն:

Վերլուծական գործընթացում որոշվում է գնային առաճականության գործակիցը (Φ_t)՝

$$\Phi_t = \frac{\text{Արտադրանքի պահանջարկի տոկոսային փոփոխություն}}{\text{Արտադրանքի գների տոկոսային փոփոխություն}}$$

Պահանջարկը առաձգական է, եթք այդ գործակիցը մեծ է մեկից:

Պահանջարկի ուսումնասիրությունը սերտորեն կապված է պահանջարկ չվայելող արտադրանքի ռիսկի գնահատման հետ: Դա որոշվում է կազմակերպության կրած ֆինանսական և բարոյական կորուստներով: Դրանից խուսափելու համար ուսումնասիրվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթի պատճառները:

Ներքին պատճառներից են՝ պահանջարկի սխալ կանխատեսումը, ոչ ճշգրիտ գնային քաղաքականությունը, արտադրանքի մրցունակության նվազեցումը, գովազդի անարդյունավետ կազմակերպումը և այլն:

Արտաքին պատճառներից կարող են լինել՝ գնորդների անվճարունակությունը, ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական, քաղաքական, ազգային գործոնները և այլն:

Պահանջարկ չվայելող արտադրանքի ռիսկը կարելի է հայտնաբերել մինչարտադրական, արտադրական և հետարտադրական փուլերում: Ցանկալի է, որ այդ ռիսկը հայտնաբերվի մինչարտադրական փուլում՝ մեծ ծախսերից խուսափելու համար: Նշված ռիսկի գնահատման նպատակով անհրաժեշտ է ստուգել արտադրանքի ապահովածությունը մատակարարաման պայմանագրերով և տարբեր արտադրատեսակների մնացորդների դիմամիկան: Կազմակերպության ֆինանսական կառուվարիչները յուրաքանչյուր փուլում ընդունում են դրան հատուկ կառուվարչական որոշումներ:

Արտադրանքի իրացման արագության բնութագրման համար օգտագործվում է դրա վաճառահանման տևողությունը: Այն որոշվում է պատրաստի արտադրանքի միջին մնացորդները հարաբերելով վաճառքի օրական ծավալին, որի աճը վկայում է իրացման դժվարությունների և բարձր ռիսկի մասին: Իրացման շուկաներից կախված են հասույթը, գների միջին մակարդակը և ստացված շահույթը: Անհրաժեշտ է ուսումնասիրել իրացման շուկաներում յուրաքանչյուր ապրանքատեսակի ծավալի, շահույթի և շահութաբերության ցուցանիշները վերջին մի քանի

տարվա ընթացքում: Դրա համար առանձնացվում են ապրանք-ների չորս խմբեր՝

- «Բիմնական արտադրատեսակներ», որոնք ապահովում են կազմակերպության շահուզի գերակշիռ մասը,
- «օժանդակ արտադրատեսակներ», որոնք գտնվում են հասունության ժամանակաշրջանում և ապահովում են որոշակի շահուզթ,
- «նոր արտադրատեսակներ», որոնք գովագրի և շուկայում առաջխաղացման կարիք են զգում, սակայն դեռ շահուզթ չեն ապահովում՝ չնայած ապագայում կարող են դառնալ «Բիմնական արտադրատեսակներ»:
- «Բին արտադրատեսակներ», որոնք արդեն կենսունակ չեն:

Արտադրանքը իր կենսատեսության ընթացքում կարող է գտնվել տարրեր փուլերում՝

- նոր արտադրատեսակի մշակման փուլ,
- շուկա դուրս բերման փուլ, երբ շահուզթի ակնկալվում,
- իրացման ժավալի աճի փուլ, երբ պահանջվում են զգալի գովագրային ծախսեր,
- հասունություն փուլ, երբ արտադրանքը գտնվում է ամենաշահութաբեր ժամանակաշրջանում,
- անկման փուլ, երբ վաճառքի ծավալը աստիճանաբար նվազում է:

Վերլուծության արդյունքներով կազմակերպության կառավարիչները շուկայական մրցակցության պահանջներին համապատասխան պետք է մշակեն արտադրանքի տեսականին:


Մարքեթինգային վերլուծության ընթացքում գնահատվում է կազմակերպության գնային քաղաքականությունը՝

- որքան են գները արտացոլում ծախսերի մակարդակը,
- պահանջարկի առանձգականությունը,
- օգտագործվում են արդյոք խթանիչ գներ,
- մրցակիցների գների հետ համեմատություն և այլն:

Այնուհետև վերլուծվում է արտադրանքի մրցունակության մակարդակը (գծ. 6.1):

Արտադրանքի մրցունակության վերլուծությունը

Գծապատկեր 6.1



Մրցունակությունը արտադրանքի այն բնութագիրն է, որը տարբերվում է մրցակցի նմանատիպ արտադրատեսակից ինչպես պահանջարկի, այնպես էլ ծախսերի համապատասխանության աստիճանով: Վերլուծական գործընթացում գնահատվում ու կանխատեսվում է արտադրանքի մրցունակությունը և բացահայտվում դրա մակարդակի փոփոխության վրա տարբեր գործողների ազդեցությունը:

Արտադրանքի մրցունակության գնահատման ժամանակ տվյալ կազմակերպության արտադրատեսակի տարբեր ցուցանիշներ համեմատվում են մրցակցի նույնանման արտադրատեսակի հետ: Դրանից բացի, որոշվում է շուկայի այն հատվածը, որը վերահսկվում է տվյալ կազմակերպության կողմից: Որքան այն մեծ է, այնքան բարձր է արտադրանքի մրցունակության մակարդակը: Այդ մակարդակի էլ ավելի բարձրացման համար անհրաժեշտ է կատարելագործել առևտորի կազմակերպումը, գնորդների ֆիրմային սպասարկումը և գովազդը:

6.3. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆՈՒ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արտադրանքի արտադրության ծավալը արտահայտվում է բնեղեն, պայմանական և արժեքային ցուցանիշներով: Բնեղեն ցուցանիշները օգտագործվում են միասեռ արտադրանքի առանձին տեսակների և խմբերի վերլուծության ժամանակ: Պայմանական ցուցանիշները վերլուծության մեջ կիրառվում են արտադրանքի արտադրության ծավալի ընդհանրական բնութագրման համար: Օրինակ, կոչիկի արդյունաբերության մեջ՝ պայմանական զուգ կոչիկ, որը վերահաշվարկվում է աշխատատարության գործակիցների հիման վրա:

Արտադրանքի արտադրության ծավալի ընդհանրական գնահատման համար կիրառվում են նաև արժեքային ցուցանիշներ, որոնք արտահայտվում են համարելի կամ ընթացիկ գներով: Արտադրանքի արտադրության ծավալը արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների ամբողջ արժեքն է: Վերլուծական գործընթացը սկսվում է արտադրանքի արտադրության ծավալի աճի տեմպի որոշմամբ: Արտադրանքի արտադրության միջին տարեկան աճի տեմպը (Ա) կարելի է հաշվարկել միշտն կշռված երկրաշափականով՝

$$Ա = \sqrt[n-1]{Ա1 Ա2 \dots}$$

Արտադրական ծրագրի կատարման աստիճանը որոշվում է արտադրանքի ծավալի փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերակցությամբ, ինչպես ամբողջական, այնպես էլ, ըստ առանձին արտադրատեսակների (այլուսակ 6.1):

Վերլուծվող կազմակերպության օրինակով որոշենք արտադրական ծրագրի կատարման աստիճանը:

Այլուսակի տվյալներից երևում է, որ կազմակերպությունը իր արտադրական ծրագրով կատարել է 103.42 %-ով՝ չնայած «Բ» արտադրատեսակի գծով արձանագրվել է թերացում:

Արտադրական ծրագրի կատարման վերլուծությունը
Աղյուսակ 6.1

Արտադրա-տեսակները	Միա-վորի գինը, հազ.դ	Թողարկման քանակը, հատ		Արտադրանքի ծավալը, հազ. դ.		Կատար-ման %-ը
		Հախա-տես-ված	փաս-տացի	Հախա-տես-ված	փաս-տացի	
«Ա» արտադրա-տեսակ	10.0	420	492	4200	4920	117.14
«Բ» արտադրա-տեսակ	20.0	250	240	5000	4800	96.00
«Գ» արտադրա-տեսակ	30.0	200	200	6000	6000	100.00
Ընդամենը	-	-	-	15200	15720	103.42

Կազմակերպության տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքների վիա մեծ ազդեցություն ունեն արտադրանքի արտադրության տեսականին ու կառուցվածքը: Ցուրաքանչյուր կազմակերպություն արտադրանքի տեսականու և կառուցվածքի գծով մշակում է համապատասխան քաղաքականություն: Այդ ընթացքում կազմակերպությունը պետք է հաշվի առնի ինչպես սպառողական պահանջարկը, այնպես էլ իր տրամադրության տակ եղած պաշարների առավել արդյունավետ օգտագործման հնարավորությունները:

Արտադրանքի տեսականու ձևավորման համակարգը ներառում է.

- գնորդների ընթացիկ և հեռանկարային պահանջների հաշվառումը,
- արտադրանքի մրցունակության մակարդակի գնահատումը,
- արտադրանքի կենսատևության ուսումնասիրումը և, դրա հիման վրա, նոր արտադրատեսակների ներդրումը և անարդյունավետ արտադրատեսակների հանումը արտադրական ծրագրից,

- արտադրանքի տեսականու մեջ կատարված փոփոխությունների տնտեսական արդյունավետության և ռիսկի աստիճանի գնահատումը:

Պետք է տարբերել արտադրանքի անվանացանկ և տեսականի հասկացությունները: Անվանացանկը կազմակերպության կողմից արտադրված արտադրատեսակների անվանումների թվարկումն է՝ ըստ արդյունաբերական արտադրանքի դասակարգչի ծածկագրերի: Տեսականին նույն արտադրատեսակների անվանումների թվարկումն է՝ ըստ թղթարկման քանակների: Արտադրանքի տեսականին լինում է լրիվ, խմբային և ներխումբային:

Արտադրանքի տեսականու մեջ կատարված փոփոխությունների ընդհանրական բնութագիրը տրվում է տեսականու գործակով ($\Phi_{\text{ա}}$), որի համաձայն՝ արտադրանքի փաստացի ծավալը նախատեսվածի սահմաններում (U') հարաբերվում է նախատեսված մեծությանը (U_0).

$$\Phi_{\text{ա}} = \frac{U'}{U_0}$$

Արտադրանքի տեսականու գործակիցը որոշենք ներկայացված աղյուսակի տվյալներով (աղյուսակ 6.2):

Արտադրանքի տեսականու վերլուծությունը

Աղյուսակ 6.2

Արտադրատեսակները	Արտադրանքի ծավալը, հազ. դ.		Նախատեսվածի սահմաններում	Կատարման %-ը
	Ըստավական	Փաստացի		
«Ա» արտադրատեսակ	4200	4920	4200	-
«Բ» արտադրատեսակ	5000	4800	4800	-
«Գ» արտադրատեսակ	6000	6000	6000	-
Ընդամենը	15200	15720	15000	98.68

Արտադրանքի տեսականին կատարվել է 98.68 %-ով, որը պայմանավորված է տարբեր խախտումներով: Տեսականու գծով խախտումները կարող են լինել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթի: Ներքին պատճառներից են՝ արտադրության կազմակերպման թերությունները, մեքենասարքավորումների թույլ տեխնիկական մակարդակը, արտադրության ցածր մշակույթը, կառավարման ու նյութական խրախուսման համակարգի թերությունները և այլն: Արտաքին պատճառներից են՝ սպառողական պահանջարկի և շուկայական մրցակցության փոփոխությունները, նյութատեխնիկական ապահովածության վիճակը և այլն:

Արտադրանքի արտադրության ծավալում կարող է փոփոխվել տարբեր արտադրատեսակների բաժինը, այսինքն՝ կատարվեն կառուցվածքային տեղաշարժեր: Արտադրանքի կառուցվածքը չխախտելու համար անհրաժեշտ է դրա փաստացի թղղարկման մեջ պահպանել առանձին արտադրատեսակների նախատեսված հարաբերակցությունը:

Արտադրանքի կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները մեծ ազդեցություն են գործում կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող բոլոր ցուցանիշների վրա: Եթե արտադրատեսակի կառուցվածքում մեծանում է ավելի թանկ արտադրատեսակների տեսակարար կշիռը, ապա արժեքային արտահայտությամբ ավելանում է նաև արտադրանքի ծավալը, և ընդհակառակը: Նույն գործընթացն է տեղի ունենում շահույթի հետ՝ տարբեր արտադրատեսակների շահութաբերության մակարդակի փոփոխության ազդեցության միջոցով:

Կառուցվածքային տեղաշարժերի ազդեցությունը արտադրանքի ծավալի կարևոր ցուցանիշների վրա կարելի է հաշվարկել շլթայական տեղադրումների մեթոդով: Դրա համար կիրառվում է հետևյալ մոդելը՝

$$U = \Sigma (U_n \times S_i \times \Phi),$$

որտեղ՝ U - արտադրանքի ծավալն է,

U_n - արտադրանքի տեսականին է,

S₄ - արտադրատեսակի տեսակարար կշիռն է արտադրանքի ծավալի մեջ,

Գ - միավոր արտադրատեսակների գներն են:

Արտադրանքի փաստացի ծավալը նախատեսված կառուցվածքով կարելի է վերահաշվարկել՝ արտադրանքի ծավալի հավելանի տեմպը բազմապատկելով նախատեսված ծավալով։ Այնուհետև արտադրանքի փաստացի ծավալը պետք է համադրել վերահաշվարկված մեծության հետ (աղյուսակ 6.3):

Արտադրանքի կառուցվածքի վերլուծությունը

Աղյուսակ 6.3

Արտադրա- տեսակները	Կառուցվածքը, %		Փաստացին նախատես- ված կառուց- վածքով	Կառուց- վածքի սահման- ներում	Կա- տար- ման %-ը
	Նախա- տեսված	փաս- տացի			
«Ա» արտադրա- տեսակ	27.63	31.30	4343	4343	-
«Բ» արտադրա- տեսակ	32.90	30.53	5172	4800	-
«Գ» արտադրա- տեսակ	39.47	38.17	6205	6000	-
Ընդամենը	100.00	100.00	15720	15143	96.33

Արտադրանքի կառուցվածքը խախտվել է 3.67%-ով, ինչը բացասաբար կանդրադառնա կազմակերպության տնտեսական գործունեության արդյունավետությունը բնութագրող բոլոր ցուցանիշների վրա։

Նույն հաշվարկները կարելի է կատարել նաև տոկոսների տարբերության մեթոդով՝ արտադրանքի ծավալի արժեքային և բնեղեն արտահայտությամբ հավելանի տեմպերի տարբերությունը բազմապատկելով արտադրանքի նախատեսված ծավալով։

6.4. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ծովայական տնտեսության պայմաններում կազմակերպությունների տնտեսական գործունեության առանցքային օլակներից մեկը արտադրանքի որակի բարելավումն է: Ծովայական բարձր պահանջներ է ներկայացնում արտադրանքի որակի նկատմամբ: Դրա հետ միասին, շատ կազմակերպություններ մեծ ջանքեր են գործադրում իրենց արտադրած արտադրանքի գծով առաջնորդի համբավ ձեռք բերելու համար:

Արտադրանքի որակի բարելավման հիմնահարցը դառնում է կազմակերպության գործարար ակտիվության ռազմավարության հիմքը և ֆինանսական կայունության գրավականը: Կազմակերպության շահութաբերությունը սկսում է պայմանավորվել արտադրանքի որակի կառավարման (ԱՊԿ) համակարգի առկայությամբ:

«Ստանդարտացման միջազգային կազմակերպության» (ISO) կողմից ընդունված ISO-9000 սերիայի ստանդարտներում որակը սահմանվում է որպես օբյեկտի բնութագրերի ամբողջություն, որը ցուց է տալիս, թե որքանով է այն բավարարում սահմանված կամ ենթադրվող պահանջմունքները: Խսկ Արտադրանքի վերահսկողության եվրոպական կազմակերպությունը որակը բնորոշում է որպես սպառողների պահանջմունքների բավարարման աստիճան: Որակ ասելով՝ այնոք է հասկանալ արտադրանքի սպառողական հատկությունների գուգակցված ամբողջություն, որը բավարարում է սպառողների պահանջմունքները:

Ծովայական տնտեսության պայմաններում արտադրանքի որակի բարելավման հիմնահարցը պետք է դիտարկել որպես կազմակերպության կողմից արտադրանքի թողարկման ու վաճառահանման ռազմավարական կարգավորման կարեռագույն գործուն, որի լուծումից է կախված նրա ֆինանսական հաջողությունը: Այն անոք է նպաստի նրա գործարար ակտիվության անշեղ զարգացմանը և մրցակցային պայքարի հաջող վարմանը՝ նպատակ ունենալով ապահովել ֆինանսական կայունություն:

ԱՊԿ համակարգի պայմաններում արտադրանքի որակը շոշափելի ազդեցություն է ունենում կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ռազմավարական հիմնական ոլորտների վրա:

ԱՊԿ համակարգի մշակման և ներդրման փորձը ամփոփվել է ISO կողմից: Այդ կազմակերպությունը մշակել է միջազգային ստանդարտների մի փաթեթ, որի մեջ են մտել ISO-9000 սերիայի ստանդարտները, որոնք արևմտյան շատ երկրներում ընդունված են որպես ազգային ստանդարտներ: Այդ երկրներում ISO-9000 սերիայի համապատասխան **ԱՊԿ** համակարգի ներդրումը վերջին տարիներին դարձել է պետական քաղաքականության տարր: Ներկայումս ամբողջ աշխարհում հավաստագրված է ավելի քան 300 հազ. ընկերություն: Արտասահմանյան երկրների փորձը վկայում է **ԱՊԿ** համակարգի բարձր արդյունավետության մասին՝ ֆիրմաների շահութաբերության մակարդակը բարձրացել է միշտն հաշվով 3-4 անգամ: 1997թ. սկսած՝ շրջանառության մեջ են դրված ISO-14000 սերիայի ստանդարտները, որոնք են ավելի են զարգացրել **ԱՊԿ** հիմնադրությունը: Վերջին ժամանակներում անցում է կատարվում արտադրանքի որակի համընդհանուր կառավարման (TQM) համակարգի ներդրմանը: Այդ համակարգի հիմնական սկզբունքներն են՝

- արտադրանքի որակի ապահովումը կազմակերպության ամբողջ անձնակազմի ջանքերով,
- կազմակերպության անձնակազմի որակավորման բարձրացման անընդհատությունը,
- համամարդկային արժեքների առաջնայնության հաշվառումը,
- որակի բնագավառում նորամուծությունների մշտական անհրաժեշտությունը,
- կառավարման համակարգը նախազգուշացնում, այլ ոչ թե հայտնաբերում է արտաները,
- կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական նպատակի՝ արտադրանքի որակի բարելավման խորը գիտակցումն է դեկավարության կողմից,

- **ԱՌԿ** ծախսումների հաշվառման և վերլուծության կազմակերպումը:

ԱՌԿ ISO և TQM համակարգերը ոչ թե բացառում, այլ լրացնում են մեկը մյուսին: Եթե ISO ստանդարտները մեծ ուշադրություն են դարձնում «մատակարար - գնորդ» փոխհարաբերությունների հիմնահարցին, ապա TQM-ն ուղղված է կազմակերպության ներքին խնդիրների լուծմանը:

Արտադրանքի որակի բարելավման գործում կարևորագույն նախապայման է համարվում տնտեսական վերլուծությունը, որը կառավարման առանցքային գործառույթներից է: Արտադրանքի որակի վերլուծության նպատակն է՝ որոշել նրա մակարդակը բնութագրող ցուցանիշների գծով աճի տեմպերը և զարգացման միտումները: Այն կարելի է իրականացնել արտադրանքն արտադրող տարբեր կազմակերպությունների և նրանց առանձին ստորաբաժանումների կտրվածքով: Արտադրանքի որակի վերլուծությունը իրականացվում է բազմաթիվ ցուցանիշներով (գծ. 6.2):

Արտադրանքի որակի վերլուծության արդյունավետությունը պայմանավորված է հետազոտության հաջորդականությունից:

1. Արտադրանքի որակը բնութագրող ցուցանիշների գնահատումը:

1.1. Արտադրանքի որակը բնութագրող տեխնիկատնտեսական ցուցանիշների գնահատումը:

1.2. Արտադրանքի որակը բնութագրող տնտեսական ցուցանիշների գնահատումը:

2. Տնտեսական ցուցանիշների վրա արտադրանքի և արտադրական գործընթացի որակի ազդեցության վերլուծությունը:

2.1. Նոր, նրբագեղ, արտահանված և հավաստագրված արտադրանքի վերլուծությունը:

2.2. Տեսակայնության գործակցի վերլուծությունը:


2.3. **ԱՌԿ** ծախսումների վերլուծությունը:

2.4. Խոտանից առաջացած կորուստների վերլուծությունը:

2.5. Բողոքարկված արտադրանքի վերլուծությունը:

3. Կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա արտադրանքի որակի ազդեցության վերլուծությունը:

Արտադրանքի որակի վերլուծությունը Գծապատկեր 6.2



Արտադրանքի որակի և դինամիկայի վերլուծության բովանդակությունը բացահայտվում է նրա առջև ծառացած հետևյալ խնդիրներով՝

- Նոր, նրբագեղ, արտահանվող և հավաստագրված արտադրանքի վերլուծությունը ըստ դինամիկայի,
- արտադրանքի որակի վերլուծությունը ըստ տեսակայ-նության,
- արտադրանքի որակի գործոնային վերլուծությունը:

Ծովայական տնտեսության պայմանները, արևմտյան երկրների արդյունաբերական ֆիրմաների կուտակած հարուստ փորձը, որակի վերահսկողության գծով միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված ստանդարտները նախատեսում են արտադրանքի որակի գերազանց, լավ, բավարար և անբավարար տեսակներ: Որակի գերազանց տեսակին է համապատասխանում այն արտադրանքը, որը իր տեխնիկա-տնտեսական ցուցանիշներով (արտադրին տեսքով, նորաձեռնությամբ, նրբագեղությամբ, արդի նյութերով, յուրահատուկ հարդարանքով, պատրաստման որակով, մակնիշավորմամբ և տեխնիկական լուծումներով) համապատասխանում է ժամանակակից գիտատեխնիկական լավագույն նվաճումներին և միջազգային կազմակերպությունների ստանդարտներին, բնութագրվում է սպառողական հատկությունների բարձր կայունությամբ և շուկայում իր մրցունակության պատշաճ մակարդակով ապահովում է սպառողների ամենախիստ պահանջները:

Որակի մնացած տեսակներին են վերաբերում այն արտադրատեսակները, որոնք իրենց տեխնիկատնտեսական ցուցանիշներով համապատասխանում են ընդունված ստանդարտներին ու տեխնիկական պայմաններին և սպառողների պահանջները բավարարում են մասնակիորեն: Դրանք կարող են ունենալ կենսատնության կարծ կամ բավարար մակարդակ և բնականաբար, սպատակահարմար է կրճատել դրանց տեսակարար կշիռը՝ համապատասխանաբար ավելացնելով գերազանց տեսակի բաժինը արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ:

Արտադրանքի որակի մակարդակը բնութագրվում է «Ն» (Նորույթ), «Մ» (Նրբագեղ), «Ա» (Արտահանված) և «Հ» (հավաստագրված) մակնիշով արտադրվող արտադրանքի տեսակարար կշիռներով:

Նոր արտադրանք է բարձր արդյունավետ և մրցունակ այն արտադրանքը, որն իր ցուցանիշներով համապատասխանում է համաշխարհային լավագույն նվաճումներին ու օժտված է սկզբունքորեն նոր սպառողական հատկանիշներով:

Սպառողական շուկայում բարձր պահանջարկ վայելող կոշիկը թողարկվում է «Մ» (Նրբագեղ) մակնիշով: Այն աչքի է ընկնում իր նրբագեղությամբ, արդի նորածնությամբ, յուրահատուկ հարդարանքով և նուրբ ճաշակով:

Արտաքին շուկայի համար նախատեսված արտադրանքը թողարկվում է «Ա» (Արտահանված) մակնիշով, որի տեսակարար կշիռը ցուց է տալիս արտադրատեսակի արտահանման հնարավորության աստիճանը, արտաքին շուկայում նրա գրաված դիրքերը և մրցունակության մակարդակը:

Շուկայական տնտեսության պայմաններում անց է կացվում արտադրանքի հավաստագրում, որի հետևանքով որոշակիորեն հաստատվում է արտադրանքի որակի համապատասխանությունը շուկայի և ամենախիստ սպառողների պահանջներին:

Տարբեր մակնիշներով թողարկվող արտադրանքի որակի վերլուծության ժամանակ անհրաժեշտ է արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ որոշել դրանց տեսակարար կշիռները ըստ դինամիկայի, բացահայտել շեղման հնարավոր պատճառները և միջոցներ ձեռնարկել՝ հետագա աճը ապահովելու համար:

Որոշենք «գերազանց» տեսակի արտադրանքի տեսակարար կշիռը թողարկման ընդհանուր ծավալի մեջ և գնահատենք աճի տեմպը (աղյուսակ 6.3):

Աղյուսակի տվյալները վկայում են արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ «գերազանց» տեսակի բացարձակ աճի մասին: Եթե «Բ» արտադրատեսակի գծով արձանագրվել է անկում, ապա «Գ» արտադրատեսակի գծով՝ աճ: «Գերազանց» տեսակի արտադրանքի աճի տեմպը կազմել է 100.57%:

**«Գերազանց» տեսակի արտադրանքի վերլուծությունը
Աղյուսակ 6.3**

Ցուցանիշներ	Նախա- տեսված	Փաս- տացի	Շեղումը	Աճի տեմպը, %
1. Արտադրանքի արտադրության ծավալը, հազ. դ.	15200	15720	+520	103.42
2. «Գերազանց» տեսակի արտադրանքի ծավալը, հազ. դ., այդ թվում՝	5250	5280	+30	100.57
«Բ» արտադրատեսակ	2100	2080	-20	99.05
«Գ» արտադրատեսակ	3150	3200	+50	101.59
3. «Գերազանց» տեսակի արտադրանքի տեսակարար կշիռը, %, այդ թվում՝	34.54	33.59	-0.95	97.25
«Բ» արտադրատեսակ	13.82	13.23	-0.59	95.73
«Գ» արտադրատեսակ	20.72	20.36	-0.36	98.26

«Գերազանց» տեսակի արտադրանքի տեսակարար կշիռը թղղարկման ընդհանուր ծավալի մեջ նախատեսվածի համեմատ նվազել է 0.95%-ով, իսկ աճի տեմպը կազմել է 97.25%:

Տնտեսական վերլուծության մեջ տեսակայնության գործակիցը որոշվում է որպես տարատեսակ ամբողջ արտադրանքի արժեքի և «Գերազանց» տեսակի գնով արտահայտված նրա մեծության հարաբերակցություն: Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$q_{un} = \frac{\sum (q \times q)}{q_q \times \sum q}$$

որտեղ՝ q - արտադրատեսակների քանակն է,

q - միավոր արտադրատեսակի գինն է,

q_q - «Գերազանց» տեսակի արտադրատեսակի գինն է:

Տնտեսակայնության գործակիցը կարելի է որոշել նաև այլ մեթոդով, օրինակ՝ բնեղեն արտահայտությամբ արտադրանքի

առանձին տեսակների թողարկման ծավալի բացարձակ մեծությամբ:

Արտադրանքի թողարկման ծավալի վրա տեսակայնության փոփոխության ազդեցությունը կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$\Delta U = (U_1 \times \Phi_q) \times \Delta \Phi_{in},$$

որտեղ՝ ΔU - արտադրանքի ծավալի հավելանն է,

$U_1 \times \Phi_q$ - փաստացի թողարկված արտադրանքի ծավալն է՝ «Գերազանց» տեսակի գնով,

$\Delta \Phi_{in}$ - տեսակայնության գործակցի փոփոխությունն է:

Տնտեսագիտական գրականության մեջ ավելի տարածված է արտադրանքի ծավալի վրա տեսակայնության գործակցի որոշման այն մեթոդը, երբ հաշվարկվում է, նախ՝ տեսակայնության գործակիցը, ապա դուրս է բերվում միջին գինը և վերջինիս շեղումը բազմապատկվում է փաստացի արտադրանքով (բնեղեն արտահայտությամբ):

«Բ» արտադրատեսակի տեսակայնության գործակցի որոշման համար ներկայացնենք 6.4 աղյուսակը:

«Բ» արտադրատեսակի տեսակայնության վերլուծությունը Աղյուսակ 6.4

Ցուցանիշներ	Նախատեսված	Փաստացի	Ծեղումը
1. Արտադրության քանակը, հատ	250	240	-10
2. «Գերազանց» տեսակի արտադրանքի միավորի գինը, հազ. դ.	22.0	23.0	+1.0
3. «Գերազանց» տեսակի արտադրանքի միավորի ինքնարժեքը, հազ. դ.	13.4	14.2	+0.8
4. Արտադրանքի ծավալը, հազ. դ.	5000	4800	-200
5. Տեսակայնության գործակիցը	0.91	0.87	-0.04
6. Միավոր արտադրանքի գինը, հազ. դ.	20.0	20.1	+0.1

«Բ» արտադրատեսակի տեսակայնության գործակցի փաստացի մեծությունը նախատեսվածի համեմատ նվազել է 0.04-ով, որը վկայում է նրա որակի մակարդակի նվազման մասին:

«Բ» արտադրատեսակի տեսակայնության գործակցի ազդեցությունը արտադրանքի ընդհանուր ծավալի վրա հավասար կլինի՝

$$+0.1 \times 240 = +24 \text{ հազ. դ.}:$$

Այս կունենա իր անդրադարձը նաև համախառն շահույթի վրա՝

$$(+1.0 - 0.8) \times 240 = +48 \text{ հազ. դ.}:$$

Արդյունաբերության որոշ ճյուղերում (օրինակ՝ կոշիկի) արտադրանքի որակը բնութագրվում է ըստ տեսակների, որը հնարավորություն է տալիս օգտագործել որակի ինդեքսը (Ω_h) և համեմատել արտադրանքի որակական մակարդակի փոփոխությունը ամսվա, եռամսյակի կամ տարվա կտրվածքով.

$$\Omega_h = \Sigma A_i x_i \beta_i$$

որտեղ՝ A_i - արտադրանքի որակի տարրեր տեսակների տեսակարար կշիռն է,

β_i - բալային գործակիցն է:

Այդ ինդեքսի հաշվարկման համար կարելի է ընդունել հետևյալ պայմանները (աղյուսակ 6.5):

ա) համեմատման բազան «գերազանց» տեսակի արտադրանքն է,

բ) «գերազանց» տեսակի արտադրանքի բալային գործակիցը 1.0 է,

գ) «լավ» տեսակի արտադրանքի բալային գործակիցը 0.7 է,

դ) «բավարար» տեսակի արտադրանքի բալային գործակիցը 0.4 է,

ե) «անբավարար» տեսակի արտադրանքի բալային գործակիցը 0.2 է:

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ «Բ» արտադրատեսակի որակի մակարդակը բալային գործակիցներով գնահատման արդյունքում նվազել է 68 հազ. դ. գումարով:

**«Բ» արտադրատեսակի որակի վերլուծությունը ըստ բալերի
Աղյուսակ 6.5**

Որակի մակար- դակը	Արտադրանքի ծավալը, հազ. դ.		Տեսակարար կշիռը, %		Բալը	Հաշվարկը		
	Ըախա- տես- ված	փաս- տացի	Ըախա- տես- ված	փաս- տացի		Ըախա- տես- ված	փաս- տացի	շե- ղումը
1.«Գերա- զանց»	2100	2080	42.00	43.33	1.0	2100	2080	-20
2.«Լավ»	1000	1020	20.00	21.25	0.7	700	714	+14
3.«Բավա- րար»	1100	990	22.00	20.63	0.4	440	396	-44
4.«Անրա- վարար»	800	710	16.00	14.79	0.2	160	142	-18
Ընդամենը	5000	4800	100.00	100.00	-	3400	3332	-68

Արտադրանքի որակի մակարդակի վերլուծության ընթացքում անհրաժեշտ է հետազոտել հետևյալ գործոնների՝ շուկայական իրադրության, ֆինանսական ռեսուրսների, արտադրության կազմակերպման, աշխատանքային պաշարների օգտագործման, նյութական խրախուսման համակարգի, նյութական պաշարների օգտագործման, արտադրության տեխնիկական մակարդակի, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և արտադրանքի որակի նկատմամբ առաջադրվող պահանջների ազդեցությունը:

Արտադրական կազմակերպություններում արտադրանքի որակի կառավարման գործընթացը ուղեկցվում է համապատասխան ծախսումների կատարմամբ: ԱՌԿ ծախսումների և արտադրանքի որակի միջև գոյություն ունի սերտ փոխկապվածություն:

ԱՌԿ ծախսումները, ըստ տնտեսական բավանդակության, կարելի է բաժանել՝ արտադրանքի որակի համալիր վերահսկողության և արատների վերացման ծախսումների: Համալիր վերահսկողության ծախսումներին են վերաբերում կանխար-

գելման և որակի գնահատման ծախսումները: Արատների հետ կապված ծախսումները, ըստ հայտնաբերման վայրի, բաժանվում են՝ ներքին, այսինքն կազմակերպության ներսում և արտաքին՝ նրա սահմաններից դուրս բացահայտված արատների վերացման ծախսումների: Այս դասակարգումը հնարավորություն է տալիս ԱՊԿ ծախսումները արտահայտել ավելի հավաքական կերպով, և հստակորեն իրականացնել դրանց ամենամսյա հաշվառումը ու վերլուծությունը:

Ըստ ISO-9000 սերիայի ստանդարտների՝ ԱՊԿ ծախսումները անհրաժեշտ է դասակարգել «կանխարգելում-գնահատում-արատներ» տարրերակով: ԱՊԿ ծախսումների տարրերն են՝ կանխարգելման, գնահատման, ներքին և արտաքին արատների վերացման ծախսումները: Եթե կանխարգելման և գնահատման ծախսումները համարվում են շահավետ ներդրումներ, ապա արատների հետ կապված ծախսումները՝ կորուստներ:

Արտադրանքի որակը բնութագրող անուղղակի ցուցանիշ է համարվում խոտանը: Այն բնութագրում է արտադրական գործընթացի որակը և, ըստ տնտեսական բովանդակության, իրենից ներկայացնում է արտադրական ռեսուրսների անարտադրողական ծախսումներ: Խոտանված արտադրանքը գոյանում է տարբեր արատների հետևանքով, որոնք իրենցից ներկայացնում են որակի վերահսկողության գծով միշազգային կազմակերպությունների կողմից սահմանված ստանդարտներին անհամապատասխանության դեպքերը:

Խոտանը դասակարգվում է ըստ մի քանի հատկանիշների՝ բացահայտված արատների բնույթի, հայտնաբերման վայրի, գոյացման պատճառների և մեղավորների: Ըստ բացահայտված արատների բնույթի՝ խոտանը լինում է ուղղելի և անուղղելի: Ուղղելի է այն խոտանը, որը պայմանավորող բոլոր արատներն ուղղելի են համարվում: Անուղղելի է այն խոտանը, որը պայմանավորող թեկուզ մեկ արատ անուղղելի է համարվում: Կազմակերպության ներսում հայտնաբերված խոտանը անվանում են ներքին, իսկ նրա սահմաններից դուրս հայտնաբերվածը՝ արտաքին խոտան: Խոտանը կարող է լինել բացահայտ (ակնա-

դիտական արդյունքներով) և թաքնված (փաստաթղթային տվյալների արդյունքներով) բնույթի:

Խոտանից առաջացած կորուստների վերլուծական հետազոտությունը տարվում է ըստ դինամիկայի՝ որոշելով դրանց տեսակարար կշիռն արտադրանքի ինքնարժեքի մեջ: Վերլուծության ընթացքում անհրաժեշտ է որոշել խոտանի ազդեցությունը արտադրանքի ինքնարժեքի և ծավալի վրա՝ համապատասխան կորուստների հաշվարկմամբ:

Այնուհետև ուսումնասիրվում են արտադրանքի որակի մակարդակի իշեցման ու խոտանի գոյացման պատճառները և մշակվում միջոցառումների ծրագիր՝ դրանց չեզոքացման ուղղությամբ:

6.5. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արտադրական կազմակերպության տնտեսական գործունեության ուսումնասիրության ժամանակ կարևոր նշանակություն ունի արտադրանքի արտադրության համաշափության վերլուծությունը: Համաշափությունը նախատեսված ժամանակացուցին համապատասխան տարրեր արտադրատեսակների համաշափ արտադրությունն է օրվա, շաբաթվա, տասնօրյակի կամ ամսվա ընթացքում: Այդ ժամանակահատվածը հիմնականում կախված է ժամանակացուցի կազմման հնարավորությունից, արտադրության տեսակից և արտադրական շրջափուլի տևողությունից:

Համաշափությունը արտադրանքի ժամանակին արտադրության և իրացման հիմնական պայմաններից մեկն է: Արտադրության համաշափության խախտումները բացասաբար են անդրադարձում կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող բոլոր ցուցանիշների վրա՝ մեծանում է անավարտ արտադրության և չիրացված արտադրանի ծավալը, ընկնում է

արտադրանքի որակի մակարդակը, նվազում ակտիվների շրջանառելիությունը, խախտվում պայմանագրային պարտավորությունները, աճում արտադրանքի ինքնարժեքը, իշնում շահութաբերության աստիճանը և վատանում ֆինանսական դրությունը:

Վերլուծական գործընթացում գնահատվում է համաչափության գործակիցը: Այն որոշվում է ամեն մի ժամանակաշրջանի համար նախատեսվածից ոչ ավելի արտադրանքի արտադրության փաստացի տեսակարար կշիռների հանրագումարների միջոցով (աղյուսակ 6.6):

Արտադրանքի արտադրության համաչափության վերլուծությունը

Աղյուսակ 6.6

Ցուցանիշներ	Արտադրանքի ծավալը ըստ եռամսյակների				Ընդամենը	Աճի տեմպը, %
	1-ին եռամ- սյակ	2-րդ եռամ- սյակ	3-րդ եռամ- սյակ	4-րդ եռամ- սյակ		
1. Նախատեսված						
գումարը, հազ. դ.	3800	3800	3800	3800	15200	-
կառուցվածքը, %	25.00	25.00	25.00	25.00	100.00	-
2. Փաստացի						
գումարը, հազ. դ.	3730	3740	4050	4200	15720	-
կառուցվածքը, %	23.73	23.79	25.76	26.72	100.00	97.52

Արտադրանքի արտադրության համաչափության աճի տեմպը կազմել է 97.52%: Այն խախտվել է 2.48%-ով, ինչի հետևանքով կազմակերպությունը կթերակատարի պայմանագրային պարտավորությունները:

Արտադրության համաչափությունը գնահատելիս հաշվարկվում է նաև անհամաշափության գործակիցը՝ հանրագումարի բերելով արտադրանքի արտադրության նախատեսված ծավալից ինչպես դրական, այնպես էլ բացասական շեղումները: Որքան ցածր է արտադրության համաչափության մակարդակը, այնքան բարձր է անհամաշափության աստիճանը:

Վերլուծական հետազոտությունը շարունակվում է արտադրության անհամաշափության պատճառների բացահայտմամբ։ Դրանք կարող են լինել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին բնույթի։

Անհամաշափության արտաքին պատճառներից են՝ մատակարարման գործընթացի խաթարումը, շուկայի իրադրության փոփոխությունը և այլն։ Ներքին պատճառներից են՝ արտադրության կազմակերպման, տեխնիկայի, տեխնոլոգիայի և կառավարման ցածր մակարդակը, անկայուն ֆինանսական դրությունը և այլն։

Բացահայտելով բոլոր այդ պատճառների առաջացման շարժադրմերը՝ կազմակերպության ֆինանսական կառավարիչները մշակում են արտադրության համաշափության հստակ ապահովման միջոցառումների ծրագիր։

6.6. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱՀԻ ՎՐԱ ԱԶԴՈՂՈ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԽՈՒԹՅՈՒՆԸ

Արտադրանքի արտադրության ծավալի վրա ազդում են բազմաթիվ գործոններ (գծ. 6.3):

Արտադրանքի արտադրության ծավալի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է երեք խումբ գործոններով՝


- գործոններ, որոնք պայմանավորված են հիմնական միջոցներով կազմակերպության ապահովածության և դրանց արդյունավետ օգտագործման հետ,

- գործոններ, որոնք պայմանավորված են նյութական պաշարներով կազմակերպության ապահովածության և դրանց արդյունավետ օգտագործման հետ,

- գործոններ, որոնք պայմանավորված են աշխատանքային պաշարներով կազմակերպության ապահովածության և դրանց արդյունավետ օգտագործման հետ։

Արտադրանքի արտադրության ծավալի գործոնային վերլուծությունը

Գծապատկեր 6.3



Արտադրանքի արտադրության ծավալի փոփոխության վրա առաջին երկու խումբ գործոնների ազդեցությանն արդեն անդրադարձել ենք գրքի նախորդ գույքներում (գույք 2 և 5): Այստեղ միայն դիտարկենք արտադրանքի արտադրության ծավալի փոփոխության վրա հիմնական միջոցների միջին տարեկան արժեքի և հատուցի, նյութական ծախսումների և նյութահատուցի, ինչպես նաև անձնակազմի միջին ցուցակային թվի և մեկ աշխատողի աշխատանքի արտադրողականության ազդեցությունը (այլուսակ 6.7):

Այլուսակի տվյալներից երևում է, որ արտադրանքի արտադրության ծավալի փոփոխության վրա դրական ազդեցություն են ունեցել ինչպես հիմնական միջոցների միջին տարեկան արժեքը և հատուցը, այնպես էլ նյութական ծախսումները և նյութահատուցը: Այլ իրավիճակ է աշխատանքային գործոն-

Եերի դեպքում: Եթե անձնակազմի միջին ցուցակային թվի կրճատման պատճառով արտադրանքի արտադրության ծավալը նվազել է, ապա մեկ աշխատողի աշխատանքի արտադրողականության աճի շնորհիվ այն ավելացել է:

Արտադրանքի արտադրության ծավալի վրա ազդող գործոնների վերլուծությունը

Աղյուսակ 6.7

Ցուցանիշներ	Նախատեսված	Փաստացի	Շեղումը	Հաշվարկ
1. Արտադրանքի արտադրության ծավալը, հազ. դ.	15200	15720	+520	-
2. Հիմնական միջոցների միջին տարեկան արժեքը, հազ. դ.	6400	6450	+50	+50 x 2.375 = =+120
3. Հիմնական միջոցների հատուցը	2.375	2.437	+0.062	+0.062 x 6450= =+400
4. Նյութական ծախսումները, հազ. դ.	6250	6290	+40	+40 x 2.432 = =+98
5. Նյութահատուցը	2.432	2.499	+0.067	+0.067 x 6290= =+422
6. Անձնակազմի միջին ցուցակային թիվը, մարդ.	30	29	-1	-1 x 506.67 = =-507
7. Մեկ աշխատողի աշխատանքի արտադրողականությունը, հազ. դ.	506.67	542.07	+35.40	+35.40 x 29 = =+1027

Այժմ հիմնական ուշադրությունը դարձնենք աշխատանքային գործոններին:

- Աշխատանքային գործոնների վերլուծության խնդիրներն են՝
- գնահատել աշխատանքային պաշարներով կազմակերպության ապահովվածությունը,
 - որոշել աշխատանքային պաշարների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները և բացահայտել դրանց վրա տարբեր գործոնների ազդեցությունը:

Վերլուծական հետազոտությունները հիմնականում կատարվում են «Աշխատանքի մասին հաշվետվության» տվյալներով: Դրանից բացի, օգտագործվում են նաև կազմակերպության բիզնես-ծրագիրը, կադրերի բաժնի, տարելային հաշվառման նյութերը, ինչպես նաև կառավարչական հաշվառման և հաշվետվության այլ տվյալներ:

Աշխատանքային պաշարներով կազմակերպության և նրա առանձին կառուցվածքային ստորաբաժանումների ապահովվածության գնահատման համար անձնակազմի, դրա առանձին խմբերի և տարբեր մասնագիտությունների գծով փաստացի տվյալները համեմատում են բիզնես-ծրագրով նախատեսված մեծությունների հետ՝ ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական կտրվածքով (աղյուսակ 6.8):

Աշխատուժով ապահովվածության վերլուծությունը Աղյուսակ 6.8

Ցուցանիշներ	Նախատեսված	Փաստացի	Աճի տեմպը, %	Ապահովվածությունը	
				բացարձակ	հարաբերական
1. Արտադրանքի արտադրության ծավալը, հազ. դ.	15200	15720	103.42	-	-
2. Անձնակազմի միջին ցուցակային թիվը, մարդ, այդ թվում՝	30	29	96.67	-1	-2
բանվորներ	24	22	91.67	-2	-3
ծառայողներ	6	7	116.67	+1	-

Աղյուսակից երևում է, որ կազմակերպությունը, բացարձակ իմաստով, ապահովված չէ աշխատուժով: Եթե հաշվետու տարում, նախատեսվածի համեմատ, բանվորների թիվը կրճատվել է 2 մարդով, ապա ծառայողների թիվը, ընդհակառակը, մեկով ավելացել է: Ըստ «Աշխատանքի մասին հաշվետվության»

տվյալների՝ դա տեղի է ունեցել ոչ թե մասնագետների, այլ դեկապարների թվի ավելացման հաշվին, որը այնքան էլ ցանկալի երևություն:

Այլ իրավիճակ է բանվորական աշխատուժով ապահովվածության հարաբերական գնահատման դեպքում: Տվյալ կազմակերպությունը, հարաբերական տեսակետից, նույնականացնելով՝ 3 մարդով [22 – 24 + (24 x 3.42 : 100)], որը բացասաբար է անդրադառնում արտադրական գործընթացի բնականոն իրականացման վրա:

Դրա հետ մեկտեղ, հատուկ ուշադրություն պետք է դարձնել անձնակազմի շարժի վերլուծության ըստ որակական աստիճանի, աշխատանքային ստաժի, կրթական մակարդակի և սեռատարիքային կազմի:

Անձնակազմի շարժը բնութագրվում է հետևյալ գործակիցներով.

- ընդունվածների գործակից (Φ_e)՝

$$\Phi_e = \frac{\text{Տարվա ընթացքում աշխատանքի ընդունվածների թիվ}}{\text{Անձնակազմի միջին ցուցակային թիվ}}$$

- ազատվածների գործակից (Φ_w)՝

$$\Phi_w = \frac{\text{Տարվա ընթացքում ազատվածների թիվ}}{\text{Անձնակազմի միջին ցուցակային թիվ}}$$

- ընդհանուր շրջանառության գործակից (Φ_2)՝

$$\Phi_2 = \frac{\text{Ընդունվածների և ազատվածների ընդհանուր թիվ}}{\text{Անձնակազմի միջին ցուցակային թիվ}}$$

- հոսունեռության գործակից ($\Phi_{\text{Բ}}$)՝

$$\Phi_{\text{Բ}} = \frac{\text{Սուբյեկտիվ պատճառներով աշխատանքից}}{\text{Անձնակազմի միջին ցուցակային թիվ}}$$

Նշված գործակիցները որոշենք վերլուծվող կազմակերպության տվյալներով (աղյուսակ 6.9):

**Բանվորական անձնակազմի շարժը բնութագրող
գործակիցների վերլուծությունը**

Աղյուսակ 6.9

Գործակիցներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Ընդունվածների գործակից	$8 : 24 = 0.33$	$6 : 22 = 0.27$	-0.06
2. Ազատվածների գործակից	$10 : 24 = 0.42$	$9 : 22 = 0.41$	-0.01
3. Ընդհանուր շրջանառության գործակից	$18 : 24 = 0.75$	$15 : 22 = 0.68$	-0.07
4. Հոսունեռության գործակից	$2 : 24 = 0.08$	$3 : 22 = 0.14$	+0.06

Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել հոսունեռության պատճառների բացահայտմանը և դրա հիման վրա մշակել անձնակազմի մշտականության մակարդակի բարձրացման միջոցառումների ծրագիր:

Այնուհետև անհրաժեշտ է ուսումնասիրել բանվորների աշխատաժամանակի ֆոնդի կազմը և կառուցվածքը (աղյուսակ 6.10):

Աղյուսակի տվյալներից երևում է, որ բանվորների աշխատաժամանակի ֆոնդի կազմը և կառուցվածքը այնքան էլ բարենպաստ չէ տվյալ կազմակերպության համար: Փաստորեն աշխատաժամանակի ֆոնդի միայն 65.75%-ն է արդյունավետ օգտագործվում:

**Աշխատաժամանակի ֆոնդի կազմի և կառուցվածքի
վերլուծությունը**

Աղյուսակ 6.10

Աշխատաժամանակի ֆոնդի կազմը	Մարդ/օրերի թիվը, մ/օ	Կառուց-վածքը, %
1. Աշխատած մարդ/ օրերի թիվը	5280	65.75
2. Ամբողջօրյա պարապուրդների թիվը, մ/օ	90	1.12
3. Զաշխատած մարդ/օրերի թիվը, մ/օ, այդ թվում՝ հերթական արձակուրդ	152	1.89
հերթական արձակուրդ	110	1.37
հիվանդություն	15	0.19
օրենքով թուլատրված	5	0.06
դեկավարության կողմից թուլատրված	10	0.12
գործալքումներ	12	0.15
4. Ոչ աշխատանքային մարդ/օրերի թիվը, մ/օ	2508	31.24
Ընդամենը	8030	100.00

Աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման արդյունավետությունը (Ա_Փ) պայմանավորված է բանվորների թվաքանակով (Բ), տարվա ընթացքում մեկ բանվորի աշխատած օրերի թվով (Օ) և աշխատանքային օրվա տևողությամբ (Ժ):

$$Ա_{Փ} = \frac{Բ}{Օ} \times Օ \times Ժ :$$

Տնտեսական վերլուծության տարբերությունների կամ շղթայական տեղադրումների եղանակի կիրառմամբ կարելի է որոշել այդ գործոնների ազդեցությունը աշխատաժամանակի ֆոնդի փոփոխության վրա: Դրանց հետո բացահայտվում են ինչպես ամբողջօրյա, այնպես էլ ներթափոխափական պարապուրդների պատճառները՝ հերթական արձակուրդի, հիվանդության, օրենքով թուլատրված, դեկավարության թուլտվությամբ, գործալքումների և այլն: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև աշխատանքի անարտադրողական ծախսումները՝ խոտանի ուղղման, աշխատանքի նորմալ պայմաններից շեղման ժամանակ և այլն:

Աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման արդյունավետությունը որոշվում է հետևյալ գործակիցներով.

- օրացուցային ֆոնդի օգտագործման գործակից ($\Phi_{օֆ}$)՝

$$\Phi_{օֆ} = \frac{\text{Բանվորների աշխատած մարդ/օրեր}}{\text{Օրացուցային ֆոնդ}}$$

- տարելային ֆոնդի օգտագործման գործակից ($\Phi_{տՓ}$)՝

$$\Phi_{տՓ} = \frac{\text{Բանվորների աշխատած մարդ/օրեր}}{\text{Օրացուցային ֆոնդ - ոչ աշխատանքային օրեր}}$$

- առավելագույն ֆոնդի օգտագործման գործակից ($\Phi_{աՓ}$)՝

$$\Phi_{աՓ} = \frac{\text{Բանվորների աշխատած մարդ/օրեր}}{\text{Օրացուցային ֆոնդ - հերթական արձակուրդի օրեր}}$$

Ստորև ներկայացված այլուսակի տվյալներով որոշենք աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման արդյունավետությունը (այլուսակ 6.11):

**Աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման
արդյունավետության վերլուծությունը**


Այլուսակ 6.11

Գործակիցներ	Հաշվարկ
1. Օրացուցային ֆոնդի գործակից	$5280 : 8030 = 0.66$
2. Տարելային ֆոնդի գործակից	$5280 : (8030 - 2508) = 0.96$
3. Առավելագույն ֆոնդի գործակից	$5280 : (8030 - 110) = 0.67$

Այլուսակում որոշված գործակիցները վկայում են բանվորների աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման արդյունավետության ցածր մակարդակի մասին:

Վերլուծական գործընթացում այնուհետև անցում է կատարվում աշխատանքային պաշարների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների ուսումնասիրությանը (աշխատանքի շահութաբերություն, մեկ աշխատողի ու մեկ բանվորի արտադրողականություն և արտադրանքի աշխատատարություն): Ներկայացնենք այդ ցուցանիշների գործոնային վերլուծության գծապատկերը (գծ. 6.4):

**Աշխատանքային պաշարների օգտագործման
արդյունավետության ցուցանիշների գործոնային վերլուծություն
Գծապատկեր 6.4**



Աշխատանքային պաշարների օգտագործման արդյունավետությունը բնութագրող առավել ընդհանրական ցուցանիշ է աշխատանքի շահութաբերությունը (Ա₂): Այն կախված է մի շարք

գործողակերից՝ արտադրանքի շահութաբերություն, մեկ աշխատողի արտադրողականություն և այլն, որոնց ազդեցությունը կարելի է որոշել տնտեսական վերլուծության որևէ եղանակով։ Իր հերթին կարելի է բացահայտել արտադրանքի արտադրության ծավալի փոփոխության վրա աշխատանքային ցուցանիշների ազդեցությունը։

Արտադրանքի արտադրության ծավալի վրա ազդում են հետևյալ աշխատանքային ցուցանիշները՝

- բանվորների միջին ցուցակային թիվը (β),
- տարվա ընթացքում մեկ բանվորի աշխատած օրերի միջին թիվը (O),
- աշխատանքային օրվա տևողությունը (δ),
- մեկ բանվորի միջին ժամային արտադրողականությունը (Φ_{ω}):

Արտադրանքի արտադրության ծավալը իրենից ներկայացնում է վերը նշված բոլոր աշխատանքային ցուցանիշների արտադրյալը՝

$$A = \beta \times O \times \delta \times \Phi_{\omega} :$$

Աշխատանքային ցուցանիշների հաշվարկը

Աղյուսակ 6.12

Ցուցանիշներ	Նախատեսված	Փաստացի	Շեղումը
1. Տարվա ընթացքում մեկ բանվորի աշխատած օրերի միջին թիվը, օր	260	240	-20
2. Աշխատանքային օրվա տևողությունը, ժամ	8.0	7.5	-0.5
3. Մեկ բանվորի տարեկան արտադրողականությունը, հազ. դ.	633.3	714.5	+81.2
4. Մեկ բանվորի ժամային արտադրողականությունը, հազ. դ.	0.3045	0.3970	+0.0925

Վերլուծվող կազմակերպության տվյալներով որոշենք հետևյալ աշխատանքային ցուցանիշները՝ տարվա ընթացքում մեկ բանվորի աշխատած օրերի միջին թիվը, աշխատանքային օրվա տևողությունը, մեկ բանվորի տարեկան և ժամային արտադրողականությունը (աղյուսակ 6.12):

Այդ աշխատանքային ցուցանիշները որոշելուց հետո նպատակահարմար է բացահայտել դրանց ազդեցությունը արտադրանքի արտադրության ծավալի փոփոխության վրա (աղյուսակ 6.13):

Աշխատանքային գործոնների ազդեցությունը արտադրանքի արտադրության ծավալի վրա

Աղյուսակ 6.13

Ցուցանիշներ	Նախատեսված	Փաստացի	Շեղումը	Հաշվարկը
1. Արտադրանքի արտադրության ծավալը, հազ. դ.	15200	15720	+520	-
2. Բանվորների միջին ցուցակային թիվը, մարդ	24	22	-2	$-2 \times 260 \times 8.0 \times 0.3045 = -1267$
3. Տարվա ընթացքում աշխատած օրերի միջին թիվը, օր	260	240	-20	$-20 \times 22 \times 8.0 \times 0.3045 = -1072$
4. Աշխատանքային օրվա տևողությունը, ժամ	8.0	7.5	-0.5	$-0.5 \times 22 \times 240 \times 0.3045 = -804$
5. Մեկ բանվորի ժամային արտադրողականությունը, հազ. դ.	0.3045	0.3970	+0.0925	$+0.0925 \times 22 \times 240 \times 7.5 = +3663$

Արտադրանքի արտադրության ծավալի վրա բանվորների միջին ցուցակային թվի կրճատումը և տարվա ընթացքում մեկ

բանվորի աշխատած օրերի միջին թվի ու աշխատանքային օրվա տևողության նվազումը բացասաբար է անդրադարձել :

Մեկ աշխատողի արտադրողականության ցուցանիշը (U_w) աշխատանքի արտադրողականության մակարդակի առավել ընդհանրական ցուցանիշ է: Այն կախված է ընդհանուր անձնակազմի մեջ բանվորների տեսակարար կշռից (F_w) և մեկ բանվորի տարեկան արտադրողականության մակարդակից (աղյուսակ 6.14):

Բացի նշված գործոններից, մեկ աշխատողի արտադրողականության ցուցանիշը կախված է նաև մեկ բանվորի աշխատած օրերի թվից (O), աշխատանքային օրվա տևողությունից (Φ) և միջին ժամային ժամանակականությունից (Δ_w)՝

$$U_w = F_w \times O \times \Phi \times \Delta_w :$$

**Մեկ աշխատողի արտադրողականության վրա ազդող
գործոնների վերլուծությունը**

Աղյուսակ 6.14

Ցուցանիշներ	Նսխա- տեսված	Փաս- տացի	Ծե- ղումը	Հաշվարկ
1. Արտադրանքի արտա- դրության ծավալը, հազ. դ.	15200	15720	+520	-
2. Անձնակազմի միջին ցուցակային թիվը, մարդ, այդ թվում՝	30	29	-1	-
բանվորների	24	22	-2	-
3. Մեկ աշխատողի ար- տադրողականությունը, հազ. դ.	506.67	542.07	+35.4	-
4. Բանվորների տեսակա- րար կշռը անձնակազմի ընդհանուր թվաքանակի մեջ, %	80.00	75.86	-4.14	-4.14 x 633.3 : :100 = -26.2
5. Մեկ բանվորի արտա- դրողականությունը, հազ. դ.	633.3	714.5	+81.2	+81.2 x 75.86 : :100 = +61.6

Այդ հաշվարկների համար կիրառենք վերլուծության բացարձակ մեծությունների տարբերության եղանակը.

1) գործոն՝ ընդհանուր անձնակազմի մեջ բանվորների տեսակարար կշռի ազդեցությունը՝

$$\Delta \beta_{\text{in}} \times O_0 \times \Phi_0 \times \Phi_{\omega 0},$$

2) գործոն՝ մեկ բանվորի աշխատած օրերի թվի ազդեցությունը՝

$$\beta_{\text{in}1} \times \Delta O \times \Phi_0 \times \Phi_{\omega 0},$$

3) գործոն՝ աշխատանքային օրվա տևողության ազդեցությունը՝

$$\beta_{\text{in}1} \times O_1 \times \Delta \Phi \times \Phi_{\omega 0},$$

4) գործոն՝ մեկ բանվորի միջին ժամային արտադրողականության ազդեցությունը՝

$$\beta_{\text{in}1} \times O_1 \times \Phi_1 \times \Delta \Phi_{\omega}:$$

Նույն կարգով վերլուծվում է նաև մեկ բանվորի միջին տարեկան արտադրողականության ցուցանիշը (Φ_{ω}), որի փոփոխության վրա ազդում են՝ բանվորների աշխատած օրերի թիվը, աշխատանքային օրվա տևողությունը և միջին ժամային արտադրողականությունը՝

$$\Phi_{\omega} = O \times \Phi \times \Phi_{\omega}:$$

Նշված գործոնների ազդեցությունը մեկ բանվորի միջին տարեկան արտադրողականության փոփոխության վրա հաշվարկվում է հետևյալ կերպ (աղյուսակ 6.15).

1) գործոն՝ մեկ բանվորի աշխատած օրերի թվի ազդեցությունը՝

$$\Delta O \times \Phi_0 \times \Phi_{\omega 0},$$

2) գործոն՝ աշխատանքային օրվա տևողության ազդեցությունը՝

$$O_1 \times \Delta \Phi \times \Phi_{\omega 0},$$

3) գործոն՝ մեկ բանվորի միջին ժամային արտադրողականության ազդեցությունը՝

$$O_1 \times \Phi_1 \times \Delta \Phi_{\omega}:$$

Այնուհետև մանրազնին բացահայտվում են նաև մեկ բանվորի միջին ժամային արտադրողականության վրա տարբեր

գործոնների ազդեցությունը՝ տեխնիկա, տեխնոլոգիա, արտադրության կազմակերպում, բանվորների որակավորման մակարդակ, սոցիալական գործոններ և այլն:

Մեկ բանվորի տարեկան արտադրողականության վերլուծությունը

Աղյուսակ 6.15

Ցուցանիշներ	Նախատեսված	Փաստացի	Շեղումը	Հաշվարկ
1. Մեկ բանվորի տարեկան արտադրողականությունը, հազ. դ.	633.3	714.5	+81.2	-
2. Տարվա ընթացքում աշխատած օրերի միջին թիվը, օր	260	240	-20	-20 x 8.0 x x0.3045 = -49
3. Աշխատանքային օրվա տևողությունը, ժամ	8.0	7.5	-0.5	-0.5 x 240 x x0.3045 = -37
4. Մեկ բանվորի ժամային արտադրողականությունը, հազ. դ.	0.3045	0.3970	+0.0935	+0.0935 x 240x x 7.5 = +167.2

Աշխատանքի արտադրողականության հակադարձ մեծությունը արտադրանքի աշխատատարությունն է: Այն որոշվում է ամբողջ աշխատաժամանակի և արտադրանքի ծավալի հարաբերակցությամբ: Արտադրանքի աշխատատարության մակարդակի նվազեցումը աշխատանքի արտադրողականության աստիճանի բարձրացման կարևորագույն պայման է: Աշխատատարության վերլուծության ժամանակ պետք է ուսումնասիրել դրա դինամիկան, որոշել աճի տեմպերը, բացահայտել դրա պատճառները և հաշվարկել ազդեցությունը աշխատանքի արտադրողականության վրա: Աշխատատարության ազդեցությունը աշխատանքի արտադրողականության վրա որոշվում է հետևյալ կերպ:

$$U_{\omega} = \frac{U_{\omega\omega} \times 100}{100 - U_{\omega\omega}}$$

որտեղ՝ U_w - աշխատանքի արտադրողականության աճի տեմպն է,

$U_{w\text{այ}}$ - արտադրանքի աշխատատարության մակարդակն է:

Ավել որոշենք արտադրանքի աշխատատարությունը և դրա ազդեցությունը աշխատանքի արտադրողականության վրա (այսուսակ 6.16):

Արտադրանքի աշխատատարության վերլուծությունը Այլուսակ 6.16

Ցուցանիշներ	Նախատեսված	Փաստացի	Աճի տեմպը, %
1. Արտադրանքի արտադրության ծավալը, հազ. դ.	15200	15720	103.42
2. Մարդ/ժամերի թիվը, մ/ժ	50000	39600	79.20
3. Մեկ բանվորի արտադրողականությունը, հազ. դ.	633.3	714.5	112.82
4. Աշխատատարությունը, մ/ժ	3.29	2.52	76.60

Այլուսակի տվյալներից երևում է, որ արտադրանքի աշխատատարության մակարդակի աճի տեմպը կազմել է 76.6%: Արտադրանքի աշխատատարության ազդեցությունը աշխատանքի արտադրողականության վրա հավասար կլիంգ՝

$$U_w = \frac{23.4 \times 100}{100 - 23.4} = 30.5\%$$

Վերլուծական հետազոտությունների արդյունքներով՝ այնուհետև պետք է որոշել աշխատանքային պաշարների օգտագործման բարելավման հնարավոր պահուստները:

Այսպիսով՝ ուսումնասիրեցինք արտադրանքի արտադրության ծավալի փոփոխության վրա երեք խումբ գործոնների ազդեցությունը:

Արտադրված արտադրանքի հետ մեկտեղ, արտադրական բոլոր փուլերով չանցած արտադրատեսակները մնում են անավարտ արտադրության մեջ: Անավարտ արտադրության մնացորդների աճը վկայում է արտադրական շրջափուլի տևողության ավելացման հաշվին ակտիվների շրջանառելիության դանդաղեցման մասին: Արտադրական շրջափուլի տևողությունը օրերով (S_2) հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$S_2 = \frac{\text{Անավարտ արտադրության}}{\text{միջին մնացորդ} \times 360} = \frac{370 \times 360}{12320} = 10.8 \text{օր}$$

Վերլուծվող կազմակերպությունում արտադրական շրջափուլի տևողությունը նախորդ տարվա համեմատ աճել է 0.1 օրով:

Արտադրական շրջափուլի տևողությունը պայմանավորված է մի շարք գործոնների ազդեցությամբ՝ արտադրության կազմակերպատեխնիկական մակարդակով, նյութատեխնիկական մատակարարման գործընթացով և այլն: Արտադրական շրջափուլի տևողության նվազումը վկայում է կազմակերպության գործարար ակտիվության մակարդակի աճի մասին:

Վերլուծական գործընթացի վերջում բացահայտվում են արտադրանքի արտադրության ծավալի ավելացման պահուստները: Այդ պահուստները ծեսավորվում են անավարտ արտադրության մնացորդների կրճատման և արտադրական երեք խումբ գործոնների աճի հաշվին:

Արտադրանքի արտադրության ծավալի ավելացման պահուստները պետք է հավասարակշռվեն վերը նշված բոլոր խմբերով, այլապես դրանք հնարավոր չեն յուրացնել ամբողջությամբ:

Բացահայտված պահուստների յուրացման նպատակով կազմակերպության կառավարիչների կողմից մշակվում է միջոցառումների ծրագիր և, միաժամանակ՝ վերահսկողություն սահմանվում դրա կենսագործման վրա:

S E U S E R

1. Արտադրանքի տեսականու ձևավորման համակարգը ներառում է.

- ա) սպառողական պահանջարկի որոշում, արտադրանքի մրցունակության գնահատում, արտադրանքի կենսատնության գնահատում
- բ) սպառողական պահանջարկի որոշում, արտադրանքի կենսատնության գնահատում, պայմանագրային պարատավորությունների կատարում
- գ) արտադրանքի մրցունակության գնահատում, պայմանագրային պարտավորությունների կատարում, արտադրանքի կենսատնության գնահատում
- դ) արտադրանքի կենսատնության գնահատում, արտադրանքի կառուցվածքի վերլուծություն, սպառողական պահանջարկի որոշում:

2. Արտադրանքի տեսականու խախտման ներքին պատճառներից են.

- ա) արտադրության անբավարար կազմակերպում, սարքավորումների թույլ տեխնիկական մակարդակ, նյութատեխնիկական մատակարարումների խախտումներ
- բ) Էներգառեսուլումների անբավարարություն, արտադրության ցածր մշակույթ, կառավարման համակարգի թերություններ
- գ) նյութական խրախուսման համակարգի թերություններ, սպառողական պահանջարկի փոփոխություն, սարքավորումների թույլ տեխնիկական մակարդակ
- դ) արտադրության անբավարար կազմակերպում, կառավարման համակարգի թերություններ, շուկայի իրադրության փոփոխություն:

3. Արտադրանքի տեսականու խախտման արտաքին պատճառներից են.

- ա) նյութատեխնիկական մատակարարումների խախտումներ, շուկայի իրադրության փոփոխություն, սարքավորումների պարապուրդներ
- բ) սպառողական պահանջարկի փոփոխություն, շուկայի իրադրության փոփոխություն, կառավարման համակարգի թերություններ
- գ) նյութատեխնիկական մատակարարումների խախտումներ, սպառողական պահանջարկի փոփոխություն, շուկայի իրադրության փոփոխություն
- դ) արտադրության կազմակերպման թերություններ, շուկայի իրադրության փոփոխություն, նյութական խրախուսման անկատար համակարգ:

4. Ի՞նչ է նշանակում չխախտել արտադրանքի նախատեսված կառուցվածքը.

- ա) արտադրանքի ծավալի մեջ պահպանել առանձին արտադրատեսակների փաստացի հարաբերակցությունը
- բ) արտադրանքի փաստացի թողարկման մեջ պահպանել նրա առանձին տեսակների փաստացի հարաբերակցությունը
- գ) արտադրանքի նախատեսված թողարկման մեջ պահպանել նրա առանձին տեսակների նախատեսված հարաբերակցությունը
- դ) արտադրանքի փաստացի թողարկման մեջ պահպանել նրա առանձին տեսակների նախատեսված հարաբերակցությունը:

5. Ինչպես որոշել արտադրանքի ծավալի փոփոխությունը՝ ի հաշիվ կառուցվածքի.

- ա) նախատեսված ծավալ - նախատեսվածը՝ փաստացի կառուցվածքով

- թ) նախատեսվածը՝ փաստացի կառուցվածքով - փաստացին՝ նախատեսված կառուցվածքով
- գ) փաստացի ծավալ - փաստացին՝ նախատեսված կառուցվածքով
- դ) փաստացի ծավալ - նախատեսված ծավալ:

6. Ինչպե՞ս որոշել արտադրանքի արտադրության ծավալի կատարումը՝ ըստ տեսականու.

- ա) (փաստացի ծավալ / նախատեսված ծավալ) x 100%
- թ) (փաստացին՝ նախատեսվածի սահմաններում / նախատեսված ծավալ) x 100 %
- զ) (փաստացին՝ նախատեսվածի սահմաններում / փաստացի ծավալ) x 100 %
- դ) (նախատեսված ծավալ / փաստացի ծավալ) x 100%:

7. Ի՞նչ է նշանակում արտադրանքի թողարկման համաշխատություն.

- ա) արտադրանքի արտադրություն՝ ըստ բիզնես-ծրագրում նախատեսված ծավալի և տեսականու
- թ) սահմանված գրաֆիկին համապատասխան արտադրանքի համաչափ արտադրություն՝ ըստ ծավալի և տեսականու
- զ) արտադրանքի արտադրություն՝ ըստ պայմանագրային պարտավորությունների
- դ) արտադրանքի արտադրություն՝ ըստ առկա արտադրական կարողությունների և պաշարների:

8. Արտադրանքի արտադրության համաշափության խախտման հետևանքներն են.

- ա) շահուցիքի ավելացում, ինքնարժեքի նվազում, արտադրողականության բարձրացում, նյութատարության աճ
- թ) ապրանքային պաշարների աճ, շահուցիքի նվազում, շահութաբերության անկում, նյութատարության նվազում

- գ) ֆինանսական դրության վատացում, արտադրանքի որակի մակարդակի իջեցում, ինքնարժեքի աճ, ակտիվների շրջանառելիության դանդաղեցում
- դ) շահուզթի նվազում, անավարտ արտադրության աճ, կապիտալատարության ավելացում, նյութատարության աճ:

9. Արտադրանքի որակի վերլուծությունը կատարվում է հետևյալ ցուցանիշներով.

- ա) նոր, նորագեղ, արտահանված արտադրանքի տեսակարար կշիռը թողարկման ընդհանուր ծավալի մեջ
- բ) արտադրանքի որակի կառավարման ծախսումներ, իրացումից շահուզթ, վաճառքի ծավալ
- գ) կորուստներ խոտանից, տեսակայնության գործակից, համաշափության գործակից
- դ) տեսակայնության գործակից, շահութաբերություն, արտադրողականություն:

10. Որո՞նք են արտադրանքի որակը բնութագրող մակարդակները.

- ա) գերազանց, բարձր, ցածր, բավարար
- բ) գերազանց, լավ, բավարար, անբավարար
- գ) առաջին, երկրորդ, բարձր, ցածր
- դ) բարձր, միջին, ցածր, անորակ:

11. Ինչպե՞ս որոշել արտադրանքի որակի տեսակայնության գործակիցը.

- ա) տարատեսակ ամբողջ արտադրանքի արժեքը բաժանելով «գերազանց» տեսակի գնով արտահայտված նրա մեծության վրա
- բ) տարատեսակ ամբողջ արտադրանքի արժեքը բազմապատկելով նրա «գերազանց» տեսակի գնով
- գ) տարատեսակ ամբողջ արտադրանքի արժեքը բաժանելով նրա «գերազանց» տեսակի գնի վրա

η) տարատեսակ ամբողջ արտադրանքի փաստացի արժեքը հարաբերելով նախատեսված մեծությանը:

12. Վերլուծական գործընթացում որոշվում է արտադրանքի որակի ազդեցությունը հետևյալ ցուցանիշների վրա.

- ա) շահութ, շահութաբերություն, նյութատարություն, իրացման ծավալ
- բ) շահութ, շահութաբերություն, իրացման ծավալ, ակտիվների շրջանառելիություն
- գ) իրացման ծավալ, ինքնարժեք, ակտիվների շրջանառելիություն, շահութ
- դ) շահութաբերություն, ինքնարժեք, ակտիվների շրջանառելիություն, հատուց:

13. Արտադրանքի արտադրության ծավալը պայմանավորված է հետևյալ խումբ գործոններով.

- ա) հիմնական միջոցներ, նյութական ռեսուրսներ, ֆինանսական ռեսուրսներ
- բ) հիմնական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, ֆինանսական ռեսուրսներ
- գ) նյութական ռեսուրսներ, աշխատանքային ռեսուրսներ, ֆինանսական ռեսուրսներ
- դ) հիմնական միջոցներ, նյութական ռեսուրսներ, ֆինանսական ռեսուրսներ:

14. Արտադրանքի արտադրության ծավալը ներկայացվում է որպես հետևյալ ցուցանիշների արտադրյալ.

- ա) հիմնական միջոցների միջին տարեկան արժեք x արտադրողականություն
- բ) հիմնական միջոցների միջին տարեկան արժեք x հատուց
- գ) հիմնական միջոցների միջին տարեկան արժեք / արտադրողականություն
- դ) հիմնական միջոցների միջին տարեկան արժեք / հատուց:

15. Արտադրանքի արտադրության ծավալը ներկայացվում է որպես հետևյալ ցուցանիշների արտադրյալ:

- ա) նյութական ծախսումներ x նյութատարություն
- բ) նյութական ծախսումներ x նյութահատուց
- գ) ծախսի նորմա x միավորի գին
- դ) նյութատարություն x արտադրության ինքնարժեք:

16. Արտադրանքի արտադրության ծավալը ներկայացվում է որպես հետևյալ ցուցանիշների արտադրյալ:

- ա) անձնակազմի միջին ցուցակային թիվ x աշխատատարություն
- բ) անձնակազմի միջին ցուցակային թիվ x մեկ աշխատողի արտադրողականություն
- գ) անձնակազմի միջին ցուցակային թիվ x մեկ բանվորի արտադրողականություն
- դ) անձնակազմի միջին ցուցակային թիվ x օրվա տևողություն:

17. Անձնակազմի շարժը բնութագրվում է հետևյալ գործակիցներով.

- ա) ընդունվածների, ազատվածների, հեռացվածների, հոսունության
- բ) ընդունվածների, ազատվածների, հոսունության, տեղափոխվածների
- գ) ընդունվածների, ազատվածների, ընդհանուր շրջանառության, հոսունության
- դ) ընդունվածների, ազատվածների, հեռացվածների, տեղափոխվածների:

18. Աշխատաժամանակի ֆոնդի բաղկացուցիչներն են.

- ա) փաստացի աշխատած + աշխատանքի չներկայացումներ + տոն և կիրակի օրեր
- բ) փաստացի աշխատած + աշխատանքի չներկայացումներ + հերթական արձակուրդի օրեր

- գ) փաստացի աշխատած + հերթական արձակուրդի + տոն և կիրակի օրեր
- դ) փաստացի աշխատած + հերթական արձակուրդի օրեր + պարապուրդներ:

19. Արտադրանքի արտադրության ծավալը իրենից ներկայացնում է մի շարք ցուցանիշների արտադրյալ.

- ա) բանվորների թիվ x օրերի թիվ x օրվա տևողություն x ժամային արտադրողականություն
- բ) բանվորների թիվ x օրերի թիվ x օրվա տևողություն x օրական արտադրողականություն
- գ) բանվորների թիվ x օրերի թիվ x օրվա տևողություն x ամսական արտադրողականություն
- դ) բանվորների թիվ x օրերի թիվ x օրվա տևողություն x տարեկան արտադրողականություն:

20. Մեկ աշխատողի աշխատանքի արտադրողականությունը կախված է հետևյալ ցուցանիշների արտադրյալից.

- ա) բանվորների միջին ցուցակային թիվ x ընդհանուր թվաքանակի մեջ բանվորների տեսակարար կշիռ
- բ) բանվորների միջին ցուցակային թիվ x աշխատատարություն
- գ) բանվորների միջին ցուցակային թիվ x մեկ բանվորի արտադրողականություն
- դ) բանվորների միջին ցուցակային թիվ x մեկ աշխատողի արտադրողականություն:

21. Մեկ բանվորի տարեկան աշխատանքի արտադրողականությունը կախված է հետևյալ ցուցանիշների արտադրյալից.

- ա) օրերի թիվ x օրվա տևողություն x ամսական արտադրողականություն
- բ) օրերի թիվ x օրվա տևողություն x տարեկան արտադրողականություն

- գ) օրերի թիվ x օրվա տևողություն x ժամային արտադրողականություն
- դ) օրերի թիվ x օրվա տևողություն x օրական արտադրողականություն:

22. Ինչպե՞ս է որոշվում արտադրանքի աշխատատարությունը.

- ա) արտադրանքի ծավալ / մարդ/ժամեր
- բ) մարդ/ժամեր / արտադրանքի ծավալ
- գ) մարդ/ժամեր / բանվորների միջին ցուցակային թիվ
- դ) մարդ/ժամեր / մարդ/օրեր:

ԳԼՈՒԽ VII

ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

7.1. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

Կազմակերպությունների ընթացիկ ակտիվների կազմում իրենց ուրուց տեղն ունեն դեբիտորական պարտքերը: Նրանց տնտեսական գործունեության ընթացքում մշտապես գոյանում են դեբիտորական պարտքեր, որոնց առկայությունը բնականոն երևություն է: Դեբիտորական պարտքերը շատ հաճախ գոյանում են արտադրանքի կամ ապրանքների պատճեն վաճառքի դիմաց վճարումների երկարաձգման պատճառով:

Հստ ՀՀՀՀՍ թիվ 39՝ «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտի՝ դեբիտորական պարտքերը ստեղծվում են կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապահն (դեբիտորին) դրամ, ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով: Այլ կերպ ասած՝ դեբիտորական պարտքերը կազմակերպությանը՝ այլ անձանց (դեբիտորների) կողմից վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարն է:

Կազմակերպությունների ֆինանսական դրության վրա մեծ ազդեցություն ունեն դեբիտորական պարտքերի մեծության փոփոխությունները: Ընթացիկ ակտիվների մեջ դեբիտորական պարտքերի տեսակարար կշռի աճը կարող է վկայել կամ իրացման ծավալի ավելացման, կամ Էլ գմորդների անվճարունակության մասին: Դա նպաստում է դրամական միջոցների ներհուսքի կրճատմանը, ակտիվների շրջանառելության դանդաղեցմանը և ֆինանսական անկայուն իրադրության ձևավորմանը: Իսկ եթե կրճատվում է առաքված արտադրանքի ծավալը, ապա նվազում է դեբիտորական պարտքերի գումարը:

Ամեն մի կազմակերպություն մեծ ջանքեր պետք է գործադրի այդ պարտքերի մեծության օպտիմալացման համար, որը հնարավորություն կտա նվազեցնել դրանց մարման ժամանակաշրջանի տևողությունը: Այդ հիմնախնդրի լուծումը պայմանավորված է կազմակերպություններում դեբիտորական պարտքերի գծով վերլուծական հետազոտությունների մշտական անցկացմամբ:

Դեբիտորական պարտքերի վերլուծության հիմնական խնդիրներն են՝

- գնահատել դեբիտորական պարտքերի կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները,
- որոշել դեբիտորական պարտքերի ինտենսիվության ցուցանիշները:

Դեբիտորական պարտքերի վերլուծական գործընթացում օգտագործվում են մի շարք տեղեկատվական տվյալներ՝

- ձև N1. «Հաշվապահական հաշվեկշիռ»,
- սինթետիկ և անալիտիկ հաշվառման տվյալներ և այլն:

7.2. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Դեբիտորական պարտքերի վերլուծական գործընթացը սկսվում է դրանց կազմի ու կառուցվածքի ուսումնասիրությամբ: Այն իրականացվում է հորիզոնական և ուղղահայաց եղանակներով:

Ներկայացնենք դեբիտորական պարտքերի կազմը.

- դեբիտորական պարտքեր վաճառքների գծով,
- դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով,
- տրված ընթացիկ կանխավճարներ,
- կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով,
- կարճաժամկետ դեբիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով,

- ընթացիկ դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով,
- այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր:

Դրանցից յուրաքանչյուրն իր հերթին ստորաբաժանվում է մի քանի խմբերի: Այսպես. վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կազմի մեջ են մտնում՝

- դեբիտորական պարտքեր արտադրանքի, ապրանքների վաճառքների գծով,
- դեբիտորական պարտքեր մատուցած ծառայությունների, կատարած աշխատանքների գծով,
- դեբիտորական պարտքեր այլ պաշարների գծով,
- դեբիտորական պարտքեր ֆինանսական ներդրումների վաճառքների գծով,
- դեբիտորական պարտքեր հիմնական միջոցների վաճառքների գծով,
- դեբիտորական պարտքեր այլ վաճառքների գծով:

Դեբիտորական պարտքերի կազմի վերլուծության ընթացքում որոշվում են դրանցից յուրաքանչյուրի գծով բացարձակ շեղումները և բացահայտվում դրանց վրա տարբեր գործոնների ազդեցությունը:

Դեբիտորական պարտքերի կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ որոշվում է յուրաքանչյուր խմբի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ ըստ դիմամիկայի և գնահատվում առաջված շեղումների հնարավոր ազդեցությունը կազմակերպության գործունեությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշների վրա:

Կազմակերպության տեղեկատվական տվյալներով գնահատենք դեբիտորական պարտքերի կազմում ու կառուցվածքում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ: Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, դեբիտորական պարտքերի գումարը ավելացել է 90 հազ. դ.-ով: Նույն երևույթը նկատվում է նաև առանձին դեբիտորական պարտքերի գծով:

Վաճառքների գծով դեբիտորական պարտքերը ընդհանուրի մեջ կազմում են ամենամեծ տեսակարար կշիռը, որը նվազել է, իսկ տրված կանխավճարների և այլ պարտքերի գծով՝ աճել:

**Դեբիտորական պարտքերի կազմի ու կառուցվածքի
փոփոխությունները**

Աղյուսակ 7.1

Դեբիտորական պարտքերի կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կառուց- վածքի
1. Վաճառքների գծով	800	80.00	850	77.98	+50	-2.02
2. Տրված կանխա- վճարների գծով	180	18.00	210	19.26	+30	+1.26
3. Այլ պարտքերի գծով	20	2.00	30	2.76	+10	+0.76
Ընդամենը	1000	100.00	1090	100.00	+90	-

Նույն ձևով գնահատվում են վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները (աղյուսակ 7.2):

Վաճառքների գծով դեբիտորական բոլոր տեսակների պարտքերի հաշվետու տարվա գումարները նախորդ տարվա համեմատ մեծացել են: Ծառայությունների և աշխատանքների, այլ պաշարների և ֆինանսական ներդրումների գծով դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռները աճել են: Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի մնացած տեսակների բաժինները ընդհանուրի մեջ նվազել են:

**Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կազմի ու
կառուցվածքի փոփոխությունները**

Աղյուսակ 7.2

Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ծեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կառուց- վածքի
1. Արտադրանքի և ապրանքների գծով	400	50.00	410	48.24	+10	-1.76
2. Ծառայություննե- րի և աշխատանք- ների գծով	100	12.50	110	12.94	+10	+0.44
3. Այլ պաշարների գծով	20	2.50	30	3.53	+10	+1.03
4. Ֆինանսական ներդրումների գծով	80	10.00	90	10.59	+10	+0.59
5. Հիմնական միջոց- ների գծով	200	25.00	210	24.70	+10	-0.30
Ընդամենը	800	100.00	850	100.00	+50	-

Դեբիտորական պարտքերի վերլուծությունը այնուհետև իրականացվում է ըստ առանձին դեբիտորների, արտադրատեսակների, գնման ծավալների, վճարունակության մակարդակի, վճարման պայմանների և այլն, ապա՝ ըստ գոյացման ժամկետների՝ մինչև 90 օր, 91-ից մինչև 180 օր, 181-ից մինչև 270 օր, 271-ից մինչև 365 օր։ Այդ ընթացքում անհրաժեշտ է որոշել դրանց տեսակարար կշիռները ընդհանուրի մեջ, գնահատել ստեղծված իրադրությունը, բացահայտել պատճառները և հնարավոր հետևանքները (աղյուսակ 7.3):

Դեբիտորական պարտքերը պետք է ստորաբաժանել ժամկետայինի և ժամկետանցի։ Ժամկետային դեբիտորական պարտքերը մարդում են պայմանագրով նախատեսված ժամկետներում։

**Դեբիտորական պարտքերի վերլուծությունը՝ ըստ գոյացման
ժամկետների**

Աղյուսակ 7.3

Դեբիտորական պարտքերի կազմը	Գու- մարը, հազ. դ.	Ժամկետները, ամիս				Այդ թվում ժամ- կե- տանց	
		մինչև 90 օր	91-ից մինչև 180 օր	181-ից մինչև 270 օր	271-ից մինչև 360 օր		
Վաճառքների գծով	850	500	200	80	70	800	50
Տրված կանխա- վճարների գծով	210	100	60	40	10	210	-
Այլ պարտքերի գծով	30	10	10	10	-	30	-
Ընդամենը	1090	610	270	130	80	1040	50

Դեբիտորական պարտքերը համարվում են ժամկետանց (կետանցված), եթե դրանք սահմանված ժամկետներում չեն մարվել: Այդ պարտքերի մարման ժամկետներ չսահմանելու, ինչպես նաև ցպահանջ պարտքերի դեպքում, մարման ժամկետ է համարվում այդ պարտքերը առաջացնող գործարքի կատարման օրվանը հաջորդող 60-րդ օրը: Եթե դեբիտորական պարտքերի մարման ժամկետները երկարաձգվել են փոխադարձ համաձայնությամբ, ապա դրանք համարվում են ժամկետանց՝ նոր ժամկետներում շմարվելու դեպքում: Նույն անձանց միջև տարբեր գործարքներից միմյանց նկատմամբ հանդիպակաց դեբիտորական պարտքերի հաշվանցումը կատարվում է միայն գովազր համաձայնությամբ: Դեբիտորական պարտքերի մասնակի մարումը չի համարվում պարտքերի (շմարված գումարի մասով) մարման ժամկետների հետաձգում:

Ուսումնասիրվող կազմակերպության հաշվետու տարվա դեբիտորական պարտքերի գերակշիռ մասը համարվում է ժամկետային, որը կազմել է 1040 հազ. դ. կամ ընդհանուր պարտքերի 95.4%-ը ($1040 \times 100 : 1090$): Ժամկետանց դեբիտորական պարտքերի բաժինը կազմում է ընդհամենը 4.6% ($50 \times 100 : 1090$):

Առանձին ուսումնասիրվում են նաև վաճառքների գծով դեբիտորական պարտքերի գոյացման ժամկետները (աղյուսակ 7.4):

Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի վերլուծությունը՝ ըստ գոյացման ժամկետների

Աղյուսակ 7.4

Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կազմը	Գու- մարը, հազ. դ.	Ժամկետները, ամիս				Այդ թվում	
		Մինչև 90 օր	91-ից մինչև 180 օր	181-ից մինչև 270 օր	271-ից մինչև 360 օր	Ժամ- կետա- յին	Ժամ- կե- տանց
1. Արտադրանքի և ապրանքների գծով	410	300	100	10	-	360	50
2. Ծառայություն- ների և աշխա- տանքների գծով	110	50	40	10	10	110	-
3. Այլ պաշարնե- րի գծով	30	10	10	10	-	30	-
4. Ֆինանսական Շերտումների գծով	90	30	10	10	40	90	-
5. Հիմնական միջոցների գծով	210	110	40	40	20	210	-
Ընդամենը	850	500	200	80	70	800	50

Վերլուծվող կազմակերպությունում հաշվետու տարում վա-
ճառքների գծով դեբիտորական պարտքերի ժամկետային մասը
կազմել է 800 հազ. դ., որը ընդհանուր պարտքերի 94.1%-ն է ($800 \times 100 : 850$): Ժամկետանց պարտքերը գոյացել են միայն
արտադրանքի և ապրանքների գծով՝ 50 հազ. դ. գումարով, որը
կազմում է ընդհանուրի մեջ 5.9%-ը ($50 \times 100 : 850$):

Ժամկետանց դեբիտորական պարտքերի դեպքում պայ-
մանագրային ժամկետները խախտվում են, որն էլ հետևանք է
ֆինանսական ռեսուրսների անբավարարության: Արդյունքում

դանդաղում է ակտիվների շրջանառելիությունը և վատքարանում կազմակերպության ֆինանսական դրությունը: Ժամկետանց դերիտորական պարտքերի գումարը վկայում է դրանց չմարման ռիսկի աճի, անհուսալիության մակարդակի բարձրացման և շահուցքի նվազման մասին: Այդ պատճառով յուրաքանչյուր կազմակերպություն շահագրգոված է դերիտորական պարտքերի մարման ժամկետների կրճատման հարցում, որը կարելի է ապահովել հետևյալ միջոցառումների իրականացման դեպքում՝

- դերիտորական պարտքերի չմարման ռիսկը նվազեցնելու համար պետք է ընտրել գնորդների լայն շրջանակ,
- հաշվարկների կատարելագործում,
- հաշվարկային փաստաթղթերի ճիշտ ժամանակին ձևակերպում,
- վճարման ճկուն պայմանների կիրառում, այդ թվում՝ գեղշերի տրամադրում վաղաժամկետ վճարման դեպքում և այլն:

Ժամկետային և ժամկետանց դերիտորական պարտքերի վերլուծությունը կատարվում է նաև ըստ կազմի ու կառուցվածքի: Դա հնարավորություն է տալիս վերահսկողություն սահմանել դերիտորական պարտքերի մարման գործընթացի և հատկապես դատական մարմինների միջոցով դրանց հետ վերադարձման վրա: Այստեղ մեծ ուշադրություն պետք է դարձնել առավել հին և մեծ չափերի հասնող պարտքերի վրա: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է ուսումնասիրել նաև անհուսալի դերիտորական պարտքերի գոյացման ժամկետները, պատճառները և դրանց ազդեցությունը կազմակերպության ֆինանսական դրության վրա:

Անհուսալի ճանաչված դերիտորական պարտքերը մինչև մեկ տարի լրանալը դուրս են գրվում հաշվետու տարում: Այդ պարտքերի վերջնական մարման նպատակով համապատասխան մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային գումար: Անհուսալի դերիտորական պարտքերի դուրս գրումը չի համարվում դրանց ներում: Դուրսգրնան պահից այդ պարտքերը երեք տարի շարունակ դեռ հաշվառվում են կազմակերպությունում, որից հետո հանվում են հաշվառումից:


7.3. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծական գործընթացում գնահատվում են դեբիտորական պարտքերի ինտենսիվությունը բնութագրող ցուցանիշները (գծ 7.1):

Դեբիտորական պարտքերի ինտենսիվություն ասելով՝ առաջին հերթին պետք է հասկանալ դրանց ստացման հնարավորությունը, որը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով.

- դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը,
- անհուսալի պարտքերի տեսակարար կշիռը ընթացիկ ակտիվների մեջ,
- դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ընթացիկ ակտիվների մեջ:

**Դեբիտորական պարտքերի ինտենսիվության վերլուծությունը
Գծապատկեր 7.1**



Դեբիտորական պարտքերի ինտենսիվությունը բնութագրող առավել կարևոր ցուցանիշը դրանց շրջանառելիությունն է (ԳՀ_{2η}): Այն հաշվարկվում է որպես մարզված դեբիտորական պարտքերի գումարի ($\Gamma_{այ}$) և դրանց միջին մեծության ($\bar{\Gamma}_{այ}$) հարաբերությունն և արտահայտվում հետևյալ բանաձևով՝

$$\Phi_{2\eta} = \frac{\Gamma_{այ}}{\bar{\Gamma}_{այ}}$$

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակիցը ցուց է տալիս, թե հաշվետու տարվա ընթացքում քանի անգամ

Են այդ պարտքերը գոյանում և վերադարձվում տվյալ կազմակերպություն (աղյուսակ 7.5):

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության վերլուծությունը

Աղյուսակ 7.5

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Ծերումը
1. Մարված դեբիտորական պարտքերի գումարը, հազ. դ.	10100	10300	+200
2. Դեբիտորական պարտքերի միջին արժեքը, հազ. դ.	990	1045	+55
3. Շրջանառելիությունը ըստ պտույտների	10.2	9.9	-0.3
ըստ օրերի	35.3	36.5	+1.2

Դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը կարելի է հաշվարկել նաև օրերով: Այն արտահայտում է դեբիտորական պարտքերի վերադարձման միջին օրերի թիվը: Դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը օրերով ($S_{ու}$) որոշվում է հետևյալ կերպ՝

$$S_{ու} = \frac{\overline{D}_{ու} \times 360}{\overline{D}_{ամ}}$$

Հաշվետու տարում դեբիտորական պարտքերի պտույտների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.3-ով, իսկ շրջանառելիությունը դանդաղել է 1.2 օրով: Դա ցանկալի երևույթ չէ, քանի որ կազմակերպության ֆինանսական դրության վրա բացասաբար է ազդում:

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության ցուցանիշները կարելի է համեմատել մի շարք մակարդակներում. ըստ դինամիկայի՝ վերջին մի քանի տարիների կտրվածքով, միջին ճյուղային արժեքի հետ և այլն: Հետազոտության արդյունքում

բացահայտվում են շրջանառելիության փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցությունը (հաշվարկների անարդյունավետ համակարգ, գնորդների անվճարունակություն և այլն):

Դեբիտորական պարտքերի ինտենսիվության մակարդակի մասին է վկայում դրանց ընդհանուր մեծության մեջ անհուսալի պարտքերի տեսակարար կշռի (Դապո) փոփոխությունը: Այն կարելի է որոշել անհուսալի պարտքերի գումարի (Դապ) և դեբիտորական պարտքերի միջին մեծության հարաբերակցությամբ՝

$$\text{Դապո} = \frac{\overline{\text{Դ}}_{\text{ապ}}}{\overline{\text{Դ}}_{\text{ա}}} \times 100$$

Անհուսալի դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը վերլուծվող կազմակերպությունում հաշվետու տարում կազմել է 4.8%՝ $50 \times 100 : 1045$:

Կազմակերպություններում անհրաժեշտ է նաև որոշել անհուսալի պարտքերի գծով պահուատի տեսակարար կշիռը դեբիտորական պարտքերի ընդհանուր մեծության մեջ: Տվյալ գործակցի աճը վկայում է դեբիտորական պարտքերի ինտենսիվության մակարդակի անկման, հետևաբար՝ դրանց իրացվելիության աստիճանի նվազման մասին: Վերլուծվող կազմակերպությունում անհուսալի պարտքերի գծով պահուատ չի ձևավորված:

Հաջորդ ցուցանիշը ընթացիկ ակտիվների մեջ դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն է, որի փոփոխությունը ազդում է ակտիվների իրացվելիության մակարդակի վրա: Այն որոշվում է դեբիտորական պարտքերի գումարը հարաբերելով ընթացիկ ակտիվներին, որը նախորդ տարվա համեմատ տվյալ ձեռնարկությունում նվազել է 1.2%-ով [$(1090 \times 100 : 3400) - (1000 \times 100 : 3000)$]:

Վերլուծության արդյունքներով կազմակերպության ֆինանսական կառավարիչները մշակում են դեբիտորական պարտքերի օպտիմալացման ծրագիր:

S E U S E R

1. Դեբիտորական պարտքերի վերլուծությունը կատարվում է հետևյալ ուղղություններով.

- ա) ըստ դինամիկայի, կազմի, պատճառների, ձևավորման
- բ) ըստ դինամիկայի, կազմի, գոյացման ժամկետների, առկայության
- գ) ըստ կազմի, պատճառների, ձևավորման, առկայության
- դ) ըստ պատճառների, կազմի, դինամիկայի, գոյացման ժամկետների:

2. Ինչպես որոշել դեբիտորական պարտքերի շրջանառության ժամանակը տարվա ընթացքում.

- ա) դեբիտորական պարտքերի միջին մնացորդ \times 360 / դեբիտորական պարտքերի մարված գումար
- բ) դեբիտորական պարտքերի մարված գումար \times 360 / դեբիտորական պարտքերի միջին մնացորդ
- գ) արտադրանքի ինքնարժեք \times 360 / դեբիտորական պարտքերի միջին մնացորդ
- դ) դեբիտորական պարտքերի միջին մնացորդ \times 360 / արտադրանքի ինքնարժեք:

3. Որո՞նք են դեբիտորական պարտքերի շրջանառության տևողության ավելացման պատճառները.

- ա) անարդյունավետ մարքեթինգային ռազմավարություն, ֆինանսական խնդիրներ, գների աճ
- բ) շուկայի իրադրության փոփոխություն, գների աճ, ֆինանսական խնդիրներ
- գ) անարդյունավետ մարքեթինգային ռազմավարություն, գների աճ, գնորդների անվճարունակություն
- դ) հաշվարկների անարդյունավետ համակարգ, գնորդների ֆինանսական դժվարություններ, բանկային փաստաթղթավորման ցիկլի երկարաձգում:

4. Որոշել տարվա ընթացքում դեբիտորական պարտքերի մարման տևողությունը.

- ա) իրացումից հասուց x 360 / դեբիտորական պարտքերի միջին տարեկան մնացորդ
- բ) իրացումից հասուց / դեբիտորական պարտքերի միջին տարեկան մնացորդ
- գ) դեբիտորական պարտքերի միջին տարեկան մնացորդ / իրացումից հասուց
- դ) 360 / դեբիտորական պարտքերի պտույտների թիվ:

5. Ինչպե՞ս է որոշվում դեբիտորական պարտքերի մարման ժամանակը կիսամյակի ընթացքում.

- ա) իրացումից հասուց x 180 / դեբիտորական պարտքերի միջին մեծություն
- բ) դեբիտորական պարտքերի միջին մեծություն x 180 / իրացումից հասուց
- գ) արտադրանքի ինքնարժեք x 180 / դեբիտորական պարտքերի միջին մեծություն
- դ) դեբիտորական պարտքերի միջին մեծություն x 180 / արտադրանքի ինքնարժեք:

6. Որոշել դեբիտորական պարտքերի միջին մեծության փոփոխության ազդեցությունը դրանց շրջանառելիության գործակցի վրա.

- ա) դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից₁ - (իրացումից հասուց₁ / դեբիտորական պարտքերի միջին մեծություն₀)
- բ) շրջանառելիության գործակից₀ - շրջանառելիության գործակից₁
- գ) (իրացումից հասուց₁ / դեբիտորական պարտքերի միջին մեծություն₀) - (իրացումից հասուց₀ / դեբիտորական պարտքերի միջին մեծություն₁)
- դ) շրջանառելիության գործակից₁ - շրջանառելիության գործակից:

ԳԼՈՒԽ VIII

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

8.1. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

Կազմակերպությունների տնտեսական գործունեության ընթացքում հրանց դրամական միջոցները անընդհատ գունվում են շարժման մեջ՝ ձևավորելով դրամական հոսքեր: Դրանք դրամական միջոցների և դրան համարժեքների ներհոսքերը և արտահոսքերն են, որոնց տարբերությանը անվանում են գուտ դրամական հոսքեր:

ՀՀՀՀՍ 7՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի համաձայն՝ դրամական միջոցները դրամարկղում գունվող դրամական միջոցներն են և ցպահանչ ավանդները: Դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բայց իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների որոշակի գումարների հետ, և որոնց արժեքի փոփոխման դիսկ էական չէ:

Դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվության հիման վրա շուկայի մասնակիցները գնահատում են դրամական միջոցները և դրանց համարժեքներ ստեղծելու կազմակերպության կարողությունը, որն էլ հիմք է հանդիսանում նրանց կողմից կառավարչական որոշումների կայացման համար:

Ցուրաքանչյուր կազմակերպություն իր տնտեսական գործունեության նորմալ իրականացման համար մեծ շանքեր պետք է գործադրի միշտ օպտիմալ չափերի հասնող դրամական միջոցներ ապահովելու համար: Կազմակերպության դրամական միջոցները եկամուտ չեն ապահովում, իսկ դրանց համարժեքները, ունենալով բարձր իրացվելիություն, ապահովում են շահութաբերության որոշակի մակարդակ:

Կազմակերպության դրամական միջոցների հոսքերը Աերկայացվում են ըստ գործունեության ոլորտների՝ գործառնական, Աերդրումային և ֆինանսական։ Գործառնական գործունեությունը կազմակերպությանը եկամուտ բերող հիմնական ոլորտն է։ Ներդրումային գործունեությունը ոչ ընթացիկ ակտիվների և այլ Աերդրումների ձեռքբերումն ու օտարումն է, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ։ Ֆինանսական գործունեության հետևանքով տեղի են ունենում կազմակերպության սեփական կապիտալի և փոխառու միջոցների ծավալի ու կառուցվածքի փոփոխություններ։

Դրամական միջոցների պակասորդը կարող է կազմակերպությանը հասցնել անվճարունակության, ֆինանսական անկայունության և վերշապես՝ սննկացման։ Դրանց ավելցուկը նույնապես կարող է կազմակերպությանը բերել բացասական հետևվանքների, քանի որ նման վիճակում դրամական միջոցները եկամուտ չեն ապահովում, և դրա հետ միասին, մշտապես ենթարկվում են արժեգործման։ Դրամական միջոցների օգտագործման հետ կապված՝ կառավարչական որոշումների ընդունման համար ամեն մի կազմակերպությունում նպատակահարմար է մշտապես անցկացնել վերլուծական հետագրտություններ։ Դրամական միջոցների հոսքերի վերլուծությունը կարևորվում է հետևյալ պատճառներով՝

- դրամական հոսքերի օպտիմալացումը կազմակերպությանը ապահովում է ֆինանսական կայունություն և վճարունակության բավարար աստիճան,
- դրամական հոսքերի արդյունավետ կառավարումը նվազեցնում է տվյալ կազմակերպության ֆինանսական կախվածությունը արտաքին աղբյուրներից,
- օպտիմալ չափերի դրամական հոսքերի արդյունավետ օգտագործման արդյունքում ազատված միջոցները նպաստում են կազմակերպության գործարար ակտիվության խթանմանը։

Դրամական միջոցների հոսքերի վերլուծության խնդիրներն են՝

- ուսումնասիրել դրամական միջոցների հոսքերի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները՝ ըստ գործունեության տարբեր ոլորտների,
- որոշել դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների վրա տարբեր գործոնների ազդեցությունը:

Դրամական միջոցների հոսքերի վերլուծությունը իրականացվում է մի շարք տեղեկատվական աղբյուրների օգտագործմամբ՝

- ձև N1. «Հաշվապահական հաշվեկշիռ»,
- ձև N2. «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն»,
- ձև N4. «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն»,
- սինթետիկ և անալիտիկ հաշվառման տվյալներ և այլն:

8.2. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒԹՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպության դրամական միջոցների վերլուծական գործընթացում նախ և առաջ անհրաժեշտ է գնահատել դրանց կազմի ու կառուցվածքի փոփոխությունները։ Ֆինանսական հաշվետվության ձև N4. «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության» մեջ դրամական միջոցների շարժը ներկայացվում է հիմնականում երկու կտրվածքով՝ ըստ դրամարկղի և բանկային հաշվների։

Կազմակերպության տնտեսական գործունեության արդյունքում ձևավորված դրամական միջոցների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը իրականացվում է ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց եղանակներով (աղյուսակ 8.1)։ Վերլուծական գործընթացում որոշվում են կատարված փոփոխությունները, բացահայտվում դրանց վրա տարբեր գործոնների ազդե-

ցությունը և գնահատվում հնարավոր հետևանքները կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա:

**Դրամական միջոցների կազմի ու կառուցվածքի
փոփոխությունները**

Աղյուսակ 8.1

Դրամական միջոցների կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ընդումը	
	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կառուց- վածքի
1. Դրամարկղ	20	6.67	25	6.25	+5	-0.42
2. Բանկային հաշիվներ	280	93.33	375	93.75	+95	+0.42
Ընդումը	300	100.00	400	100.00	+100	-

Հստ աղյուսակի տվյալների՝ կազմակերպության դրամական միջոցների մնացորդը մեկ տարվա ընթացքում ավելացել է 100 հազ. դ.-ով, այդ թվում՝ դրամարկղում՝ 5 հազ. դ., իսկ բանկային հաշիվներում՝ 95 հազ. դ.: Կառուցվածքային տեղաշարժերի տեսակետից՝ դրամարկղում գտնվող միջոցների բաժինը ընդհանուրի մեջ նվազել է, և այդ չափով ավելացել բանկային հաշիվներում առկա միջոցների տեսակարար կշիռը:

Դրամական հոսքերի ավելցուկի առկայությունը վկայում է կազմակերպության կողմից ընթացիկ ակտիվների անարդյունավետ օգտագործման մասին: Դրամական միջոցները անընդհանուրացիկ ակտիվների մյուս բաղադրիչների հետ համակցված պետք է գտնվեն շրջանառության մեջ՝ առավելագույն շահութիւն ստացման նպատակով:

Կազմակերպությունում դրամական միջոցների անբավարար վիճակը նպաստում է ժամկետանց պարտավորությունների աճին, ֆինանսական ծախսների ավելացմանը և ակտիվների շահութաբերության մակարդակի նվազմանը:

Դրամական միջոցների մուտքերի արագացում կարող են ապահովել գնորդների կողմից արտադրանքի դիմաց նախնական վճարման համակարգին անցնելու, նրանց ապրանքային վարկերի տրամադրման ժամկետների կրծատման, գնային գեղշերի կիրառման, ժամկետանց դերիտորական պարտքերի մարման միջոցառումները:

Կազմակերպության դրամական միջոցների շարժը բացահայտելու նպատակով և ստացված ֆինանսական արդյունքները դրանց հետ համեմատելու համար պետք է մանրակրկիտ ուսումնասիրել այդ հոսքերի ուղղությունները՝ ըստ կազմակերպության գործունեության բոլոր ոլորտների: Ֆինանսական հաշվետվության ձև N4. «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության» համաձայն՝ դրամական միջոցների շարժը ցուց է տրվում գործունեության հետևյալ ոլորտներում՝ գործառնական, ներդրումային և ֆինանսական (աղյուսակ 8.2):

Դրամական հոսքերի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները՝ ըստ ոլորտների

Աղյուսակ 8.2

Դրամական հոսքերի կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կառուց- վածքի
1.Գործառնական գործունեություն	55	68.75	80	80.00	+25	+11.25
2.Ներդրումային գործունեություն	15	18.75	10	10.00	-5	-8.75
3.Ֆինանսական գործունեություն	10	12.50	10	10.00	-	-2.50
Ընդամենը	80	100.00	100	100.00	+20	-

Աղյուսակի տվյալները վկայում են, որ ինչպես ընդհանուր, այնպես էլ ըստ առանձին ոլորտների դրամական միջոցների

հոսքերը աճել են: Դրանց կառուցվածքի մեջ հիմնական բաժինը պատկանում է գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքերին, որոնց տեսակարար կշիռը հաշվետու տարվա ընթացքում ավելացել է 11.25%-ով: Ներդրումային և ֆինանսական գործունեության հոսքերը նույն ժամանակահատվածում նվազել են:

Այժմ առանձին-առանձին ուսումնասիրենք դրամական միջոցների հոսքերը: Առաջին հերթին զնահատենք կազմակերպության գործառնական գործունեության հետևանքով ստացված դրամական միջոցների հոսքերի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները (աղյուսակ 8.3):

Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքերը հիմնականում ապահովվում են արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից: Նման մուտքեր կարող են արձանագրվել նաև գործառնական այլ գործունեությունից:

Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքերը լինում են նյութերի և ապրանքների ձեռքբերման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման, աշխատակիցների և նրանց անունից վճարումների, բյուջե և սոցիալական ապահովության հիմնադրամին վճարումների դեպքում և գործառնական այլ գործունեության արդյունքում:

Դիտարկվող կազմակերպությունում հաշվետու տարվա ընթացքում գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների գույն հոսքերը ավելացել են 25 հազ. դրամով:

Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների մուտքերը հիմնականում ապահովվել են արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից: Դրանց ելքերի մեջ հիմնական բաժինը պատկանում է նյութերի և ապրանքների ձեռքբերման նպատակով ծախսված դրամական միջոցներին:

**Գործառնական գործունեության դրամական հոսքերի
փոփոխությունները**

Աղյուսակ 8.3

Դրամական հոսքերի կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ընդումը	
	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կառուց- վածքի
1. Մուտքեր, այդ թվում՝	42055	100.00	45000	100.00	+2945	-
արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	39000	92.74	41700	92.67	+2700	-0.07
այլ գործունեու- թյունից	3055	7.26	3300	7.33	+245	+0.07
2. Ելքեր, այդ թվում՝	42000	100.00	44920	100.00	+2920	-
նյութերի, ապ- րանքների ձեռք բերման գծով	30000	71.43	31000	69.01	+1000	-2.42
աշխատանքների կատարման, ծա- ռայությունների մատուցման գծով	3000	7.14	4000	8.90	+1000	+1.76
վճարումներ աշ- խատակիցներին և նրանց անունից	5000	11.91	6000	13.36	+1000	+1.45
վճարումներ բյուջե	1000	2.38	1100	2.45	+100	+0.07
այլ գործունեու- թյուն	3000	7.14	2820	6.28	-180	-0.86
Ընդամենը գուտ հոսքեր	55	-	80	-	+25	-

Այնուհետև պետք է գնահատել կազմակերպության ներ-
դրումային գործունեության արդյունքում ստացված դրամական

միջոցների հոսքերի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները (աղյուսակ 8.4):

**Ներդրումային գործունեության դրամական հոսքերի
փոփոխությունները**

Աղյուսակ 8.4

Դրամական հոսքերի կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	Գու- մարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	Գու- մարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	Ըստ գու- մարի	Ըստ կառուց- վածքի
1. Մուտքեր, այդ թվում՝	1800	100.00	2000	100.00	+200	-
ոչ ընթացիկ նյու- թական և ոչ նյու- թական ակտիվ- ների վաճառքից	300	16.67	400	20.00	+100	+3.33
ֆինանսական ակ- տիվներով գոր- ծառնություններից	9090	50.00	970	48.50	+70	-1.50
այլ գործունեու- թյունից	600	33.33	630	31.50	+30	-1.83
2. Ելքեր, այդ թվում՝	1785	100.00	1990	100.00	+205	-
ոչ ընթացիկ նյու- թական և ոչ նյու- թական ակտիվ- ների ձեռքբերման գծով	400	22.41	410	20.60	+10	-1.81
ֆինանսական ակտիվների ձեռք- բերումից	1200	67.23	1380	69.35	+180	+2.12
այլ գործունեու- թյուն	185	10.36	200	10.05	+15	-0.31
Ընդամենը զուտ հոսքը	15	-	10	-	-5	-

Կազմակերպության ներդրումային գործունեությունից ստացված դրամական միջոցների գուտ հոսքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 5 հազ. դրամով:

Կազմակերպության ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքերը կապված են ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքի, ֆինանսական ակտիվներով գործառնությունների, շահաբաժինների, տոկոսների և այլ գործունեությունից միջոցների ստացման հետ: Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքերը պայմանավորված են ոչ ընթացիկ նյութական, ոչ նյութական ակտիվների և ֆինանսական ակտիվների ձեռքբերմամբ, փոխառությունների տրամադրմամբ և այլ գործունեությամբ:

Դրանից հետո անհրաժեշտ է գնահատել կազմակերպության ֆինանսական գործունեության հետևանքով ստացված դրամական միջոցների հոսքերի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները (այլուսակ 8.5):

Կազմակերպության ֆինանսական գործունեությունից ստացված դրամական միջոցների գուտ հոսքերը նախորդ տարվա համեմատ փոփոխության շեն ենթարկվել:

Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքերը ձևավորվում են սեփական կապիտալի գործիքների թղարկման ու վերավաճառքի, վարկերի և փոխառությունների ստացման, այլ գործունեության արդյունքում: Այդ գործունեությունից դրամական միջոցները ելքագրվում են ստացված վարկերի ու փոխառությունների մարման, շահաբաժինների ու տոկոսների վճարման և այլ գործունեության համար:

Կազմակերպության ֆինանսական կայունության ապահովման նպատակով անհրաժեշտ է կազմել միջոցառումների հատակ ծրագիր՝ գործառնական գործունեությունից դրամական միջոցների բաժինը այդ հոսքերի մեջ ավելացնելու ուղղությամբ: Կարող է պատահել, որ կազմակերպության իրացվելիության պահպանման պայմաններում գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերը նվազեն:

**Ֆինանսական գործունեության դրամական հոսքերի
փոփոխությունները**

Աղյուսակ 8.5

Դրամական հոսքերի կազմը	Նախորդ տարի	Հաշվետու տարի		Ընդումը			
		Գու- մարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	Գու- մարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	Ըստ գու- մարի	Ըստ կառուց- վածքի
1. Մուտքեր, այդ թվում՝	900	100.00		1000	100.00	+100	-
սեփական կա- պիտակի գորիք- երի թողարկու- մից և վերավա- ճարից	300	33.33		340	34.00	+40	+0.67
ստացված վար- կերից և փոխա- ռություններից	400	44.45		440	44.00	+40	-0.45
այլ գործունեու- թյունից	200	22.22		220	22.00	+20	-0.22
2. Ելքեր, այդ թվում՝	890	100.00		990	100.00	+100	-
ստացված վար- կերի և փոխա- ռությունների մարում	500	56.18		550	55.56	+50	-0.62
վճարված շահաբաժիններ և տոկոսներ	190	21.35		210	21.21	+20	-0.14
այլ գործունեու- թյունն	200	22.47		230	23.23	+30	+0.76
Ընդամենը զուտ հոսքեր	10	-		10	-	-	-

Դա կվեայի արտաքին աղբյուրներից կազմակերպության ֆինանսական կախվածության ավելացման և, վերջին հաշվով, նրա ֆինանսական անկայուն իրադրության մասին՝ դրանից բխող բացասական հետևանքներով։ Կազմակերպության ար-

տաքին պարտավորությունների մարման հիմնական աղբյուրը համարվում է գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների զանգվածը:

Դրամական միջոցների հոսքերի վերլուծությունը կատարվում է նաև ուղղակի և անուղղակի մեթոդներով՝ «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության» կազմմամբ: Ուղղակի մեթոդի կիրառման դեպքում այդ հաշվետվության մեջ բացահայտվում են կազմակերպության դրամական միջոցների մուտքերի և ելքերի բացարձակ գումարները: Անուղղակի մեթոդով դրամական հոսքերի հաշվետվության կազմման համար կազմակերպության գուտ շահուցքը վերահաշվարկվում է ոչ դրամական հոսքերի գործառնությունների գումարով, որն էլ թույլ է տալիս ֆինանսական արդյունքից անցում կատարել դրամական հոսքերի ցուցանիշին:

Դրամական միջոցների հոսքերի վերլուծությունը ուղղակի մեթոդով թույլ է տալիս գնահատել կազմակերպության իրացվելիությունը, այն պարզ պատճառով, որ առանձին հաշիվներով ներկայացված դրամական միջոցների շարժը վկայում է նրա ընթացիկ պարտավորությունների մարման հնարավորության մասին: Ի դեպքում դրամական միջոցների ներքին շրջանառությունները որպես հոսքեր չեն դիտարկվում:

Միննույն ժամանակ, այդ մեթոդը ունի մի էական թերություն՝ այն չի բացահայտում ստացված ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի ֆունկցիոնալ փոխկապվածությունը: Դրանց գումարների միջև առկա են էական տարբերություններ, որոնք պայմանավորված են կարևոր առանձնահատկությամբ՝ հաշվապահական հաշվառման մեջ դրամական միջոցները հաշվարկվում են դրամարկղային, իսկ շահուցքը՝ հաշվեգրման մեթոդով: Այդ պատճառով կատարվում են մի քանի վերահաշվարկներ՝ նպատակ ունենալով դրամական միջոցների գումարը հավասարակշռել շահուցքը մեծության հետ:

• Վերահաշվարկներ, որոնք կապված են հաշվապահական հաշվառման մեջ և դրամական միջոցների հոսքերի եկամուտների ու ծախսերի արտացոլման չհամընկման հետ: Օրի-

նակ՝ հաշվառման մեջ արտադրանքի իրացումից ստացվող հասույթի արտացոլումը՝ գնորդներին վճարման հետաձգում տրամադրելու դեպքում, երբ հաշվապահական հաշվառման մեջ իրացումից հասույթի արտացոլման հետ մեկտեղ, բացակայում են դրամական միջոցների համապատասխան հոսքերը: Այդ դեպքում պետք է շահույթը նվազեցնել դեբիտորական պարտքերի մնացորդների աճի գումարով:

• Վերահաշվարկներ, կապված այնպիսի տնտեսական գործառնությունների հետ, որոնք անմիջականորեն չեն ազդում շահույթի վրա, սակայն արդյունքում նպաստում են դրամական միջոցների հոսքերի ձևավորմանը: Օրինակ՝ պարտավորությունների աճը հանգեցնում է դրամական միջոցների հոսքերի և չի ազդում ֆինանսական արդյունքի վրա: Դրանց ավելացման շափով շահույթի գումարը պետք է վերահաշվարկել աճի ուղղությամբ, և ընդհակառակը:

• Վերահաշվարկներ, երբ տնտեսական գործառնությունների ազդեցության հետևանքով փոխվում է շահույթի գումարը, սակայն դրամական միջոցների հոսքեր չեն ձևավորվում: Օրինակ՝ ոչ ընթացիկ հյութական ակտիվների մաշվածության գումարով շահույթը վերահաշվարկվում է ավելացման իմաստով:

Այդ վերահաշվարկները համատարած բնույթ ունեն: Դրամական միջոցների մնացորդների հավելանի և գուտ շահույթի վերահաշվարկված գումարի միջև համապատասխանության ապահովման համար անհրաժեշտ է գուտ շահույթը նվազեցնել ակտիվների և ավելացնել սեփական կապիտալի ու պարտավորությունների հավելանի գումարով: Ի դեպ, նման վերահաշվարկներ պետք է կատարվեն ըստ կազմակերպության գործունեության տարբեր ոլորտների:

Դրամական միջոցների հոսքերի վերլուծության անուղղակի մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս բացահայտել, թե ինչ գործոններ են ազդել գուտ շահույթի և դրամական միջոցների միջին շեղման վրա:

Կազմակերպության ֆինանսական կառավարիչները, հենվելով դրամական միջոցների շարժի ուղղակի և անուղղակի

մեթոդով վերլուծության արդյունքների վրա, հնարավորություն ունեն մշակել իրենց քաղաքականությունը ինչպես դեբիտորների, այնպես էլ կրեդիտորների նկատմամբ, կառավարչական որոշումներ ընդունել օպտիմալ պաշարների ձևավորման, շահույթի բախչան և օգտագործման ուղղությամբ՝ ունեցած ֆինանսական հնարավորությունների և դրամական միջոցների ապահովածության մակարդակի հաշվառմամբ:

8.3. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծական գործընթացի հաջորդ փուլում գնահատվում է դրամական միջոցների հոսքերի օգտագործման արդյունավետության ցուցանիշների մակարդակը և բացահայտվում դրանց փոփոխության վրա տարբեր գործուների ազդեցությունը: Այդ ցուցանիշների վերլուծության միջոցով որոշվում է դրամական միջոցների հոսքերի կառավարման որակը, որն էլ հնարավորություն է տալիս կազմակերպության ֆինանսական կառավարիչներին ընդունել դրանց օպտիմալացման արդյունավետ կառավարչական որոշումներ:


Դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների վերլուծությունը կատարվում է մի քանի ուղղություններով (գծ. 8.1).

Դրամական միջոցների օգտագործման արդյունավետության առավել ընդհանրական ցուցանիշը դրամական հոսքերի իրացվելիության գործակիցն է ($\Phi_{\eta\beta}$): Այն որոշելու համար անհրաժեշտ է կազմակերպության գուտ դրամական հոսքերը (Π_q) բաժանել դրանց ելքերի գումարի (Π_e) վրա՝

$$\Phi_{\eta\beta} = \frac{\Pi_q}{\Pi_e}$$

**Դրամական միջոցների օգտագործման արդյունավետության
ցուցանիշների վերլուծությունը**

Գծապատկեր 8.1



Ուսումնասիրվող կազմակերպության համապատասխան տվյալներով (աղյուսակ 8.6) որոշենք դրամական միջոցների հոսքերի իրացվելիության գործակիցը:

**Դրամական միջոցների հոսքերի իրացվելիության
վերլուծությունը**

Աղյուսակ 8.6

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Զուտ դրամական հոսքերը, հազ. դ.	80	100	+20
2. Դրամական հոսքերի ելքերը, հազ. դ.	44675	47900	+3225
3. Իրացվելիության գործակիցը	0.0018	0.0021	+0.0003

Դրամական միջոցների հոսքերի իրացվելիության գործակցի արժեքը նախորդ տարվա համեմատ փորձ-ինչ աճել է, որը կազմակերպության ֆինանսական դրության վրա կունենա դրական ներգործություն:

Դրամական միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակը գնահատվում է նաև գուտ դրամական հոսքերի շահութաբերության գործակցով (Φ_{η_2}):

$$\Phi_{\eta_2} = \frac{\bar{C}_q}{\bar{P}_q}$$

որտեղ՝ \bar{C}_q - գուտ շահուվաքի գումարն է:

Դրամական միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակը բնութագրող շահութաբերության գործակիցները որոշում են նաև արտադրանքի իրացումից ստացված շահուվաքի, գործառնական շահուվաքի և այլ ցուցանիշներով: Կարելի է որոշել շահութաբերության փոփոխության վրա իրացման շահութաբերության և դրամական միջոցների հոսքերի շրջանառելիության ազդեցությունը (աղյուսակ 8.7):

Զուտ դրամական հոսքերի շահութաբերության վերլուծությունը

Աղյուսակ 8.7

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	Հաշվարկ
1. Իրացումից շահուվաքը, հազ. դ.	900	1300	+400	-
2. Զուտ դրամական հոսքերը, հազ. դ.	80	100	+20	-
3. Իրացումից հասուվաքը, հազ. դ.	15000	15700	+700	-
4. Շահութաբերությունը	11.25	13.00	+1.75	-
5. Իրացման շահութաբերությունը	0.060	0.083	+0.023	+0.023 x 187.5 = = +4.31
6. Շրջանառելիությունը	187.5	157.0	-30.5	-30.5 x 0.083 = = -2.56

Զուտ դրամական հոսքերի շահութաբերության գործակցի փոփոխությունը տարվա ընթացքում կազմել է +1.75: Այդ մեծության վրա իրացման շահութաբերությունը ազդել է դրական (4.31), իսկ շրջանառելիությունը՝ բացասաբար (2.56):

Դրամական միջոցների հոսքերի շահութաբերության մակարդակի վերլուծությունը իրականացվում է նաև ըստ կազմակերպության գործունեության տարբեր ոլորտների: Այս դեպքում տվյալ ոլորտում ձևավորված շահույթի գումարը պետք է բաժանել նույն ոլորտի դրամական միջոցների մուտքերի մեծության վրա: Այդ գործակիցների մակարդակը գնահատվում է վերջին մի քանի տարիների կտրվածքով՝ որոշելով կատարված փոփոխությունները և դրանց վրա տարբեր գործոնների ազդեցությունը: Այսպես, կազմակերպության գործառնական գործունեության դրամական հոսքերի շահութաբերության գործակիցը որոշվում է գործառնական շահույթի և դրամական միջոցների մուտքերի հարաբերակցությամբ (աղյուսակ 8.8):

Գործառնական գործունեության դրամական հոսքերի շահութաբերության վերլուծությունը

Աղյուսակ 8.8

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետող տարի	Շեղումը	Հաշվարկ
1. Գործառնական շահույթը, հազ. դ.	1000	1415	+415	-
2. Գործառնական զուտ դրամական հոսքերը, հազ. դ.	55	80	+25	-
3. Իրացումից հասույթը, հազ. դ.	15000	15700	+700	-
4. Շահութաբերությունը	18.18	17.69	-0.49	-
5. Իրացման շահութաբերությունը	0.067	0.090	+0.023	+0.023 x 272.7 = = +6.27
6. Շրջանառելիությունը	272.7	196.3	-76.4	-76.4 x 0.09 = = -6.76

Գործառնական գործունեության դրամական հոսքերի շահութաբերության մակարդակը նվազել է ի հաշիվ դրամական միջոցների շրջանառելիության դանդաղեցման:

Դրամական միջոցների օգտագործման արդյունավետության ցուցանիշներից է նաև դրանց շրջանառելիության գործակիցը ($\Phi_{\text{շ}}$): Այն որոշելու համար պետք է դրամական միջոցների ելքերի գումարը (Γ_{t}) հարաբերել դրանց միջին ($\bar{\Gamma}$) մեծությանը:

$$\Phi_{\text{շ}} = \frac{\bar{\Gamma}_{\text{t}}}{\bar{\Gamma}}$$

Այդ գործակիցը ցուց է տալիս, թե հաշվետու տարվա ընթացքում դրամական միջոցները քանի պտույտ են կատարում: Շրջանառելիության գործակիցը կարելի է որոշել նաև օրերով ($S_{\text{ո}}$):

$$S_{\text{ո}} = \frac{\bar{\Gamma} \times 360}{\bar{\Gamma}_{\text{t}}}$$

Այժմ որոշենք դրամական միջոցների հոսքերի շրջանառելիությունը՝ ըստ պտույտների և օրերի (աղյուսակ 8.9):

Դրամական միջոցների հոսքերի շրջանառելիության վերլուծությունը

Աղյուսակ 8.9

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղում
1. Դրամական հոսքերի ելքերը, հազ. դ.	44675	47900	+3225
2. Դրամական միջոցների միջին մեծությունը, հազ. դ.	335	350	+15
3. Շրջանառելիությունը՝			
ըստ պտույտների	133	137	+4
ըստ օրերի	2.7	2.6	-0.1

Կազմակերպության դրամական միջոցների հոսքերի շրջանառելիությունը մեկ տարվա ընթացքում արագացել է, որը դրականորեն կազդի նրա ֆինանսական դրության վրա: Ժամկետանց վճարների բացակայության դեպքում դրանց շրջապտույտի տևողության կրճատումը վկայում է դրամական հոսքերի օպտիմալացման մակարդակի մասին:

S E U S E R

1. Որո՞նք են զուտ դրամական հոսքերը.

- ա) հաշվարկային հաշվի մնացորդ
- բ) դրամական միջոցների մուտքեր
- գ) դրամական միջոցների ելքեր
- դ) դրական և բացասական դրամական հոսքերի տարբերություն:

2. Դրամական միջոցների հոսքերը ձևավորվում են հետևյալ ոլորտներում.

- ա) ընթացիկ, հիմնական, լրացուցիչ
- բ) ընթացիկ, հիմնական, ֆինանսական
- գ) գործառնական, ներդրումային, ֆինանսական
- դ) գործառնական, հիմնական, ներդրումային:

3. Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերը ձևավորվում են.

- ա) շահաբաժինների ստացումից
- բ) փոխատվությունների տրամադրումից
- գ) ապրանքների դիմաց
- դ) վարկերի ստացումից:

4. Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքերը ձևավորվում են.

- ա) հիմնական միջոցների վաճառքից
- բ) նյութերի ձեռք բերման դիմաց
- գ) վարձավճարներից
- դ) վճարված տոկոսներից:

5. Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերը ձևավորվում են.

- ա) փոխատվությունների տրամադրումից
- բ) պարտքային արժեթղթերի թողարկումից

- գ) աշխատանքների կատարման դիմաց
- դ) բյուջեին վճարումներից:

6. Դրամական հոսքերի վերլուծության ուղղակի մեթոդը իրենից ներկայացնում է.

- ա) դրամական միջոցների հոսքերի գումարի որոշումը
- բ) դրամական հոսքերի կազմի ու կառուցվածքի գնահատումը
- գ) դրամական հոսքերի իրացվելիության գնահատումը
- դ) դրամական հոսքերի գործակցային վերլուծությունը:

7. Դրամական միջոցների վերլուծության անուղղակի մեթոդը իրենից ներկայացնում է.

- ա) դրամական հոսքերի գործակցային վերլուծությունը
- բ) ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի կառուցվածքի գնահատումը
- գ) գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի կառուցվածքի գնահատումը
- դ) դրամական միջոցների և զուտ շահույթի փոփոխությունների պատճառների բացահայտումը:

8. Դրամական հոսքերի համաչափության գործակիցը արտացոլում է.

- ա) դրամական հոսքերի իրացվելիության մակարդակը՝ ըստ գործունեության տարբեր ոլորտների
- բ) դրամական միջոցների մուտքերի և ելքերի միջև կապերի խտությունը
- գ) տարբեր ժամանակաշրջաններում դրամական հոսքերի բաշխման համաչափության աստիճանը
- դ) դրամական հոսքերի իրացվելիության գնահատումը:

9. Անուղղակի մեթոդով դրամական հոսքերի վերլուծության ընթացքում հաշվարկված ամորտիզացիայի գումարը անհրաժեշտ է.

- ա) ավելացնել գուտ շահույթի գումարին
- բ) հանել գուտ շահույթի գումարից
- գ) վերահաշվարկել գուտ շահույթի գումարը
- դ) գուտ շահույթի գումարը թողնել անփոփոխ:

10. Դրամական հոսքերի վերլուծության անուղղակի մեթոդի կիրառման դեպքում ճշգրտվում է.

- ա) դերիտորական պարտքերի տարեվերջի մնացորդը
- բ) դրամական միջոցների տարեվերջի մնացորդը
- գ) գուտ շահույթի գումարը
- դ) հաշվարկված ամորտիզացիայի գումարը:

11. Դրամական հոսքերի շահույթաբերության գործակցի հաշվարկման համար բանաձևի համարիչում ընդունվում է.

- ա) դերիտորական պարտքերի մնացորդի հավելանը
- բ) Վճարված շահաբաժինների գումարը
- գ) գուտ շահույթի մեծությունը
- դ) հաշվարկված ամորտիզացիայի չափը:

12. Դրամական հոսքերի իրացվելիության գործակիցը որոշվում է հետևյալ կերպ.

- ա) գուտ շահույթ / դրամական միջոցների հոսքեր
- բ) իրացումից հասույթ / դրամական միջոցների հոսքեր
- գ) գուտ շահույթ / իրացումից հասույթ
- դ) (գուտ դրամական հոսքեր - դրամական միջոցների մնացորդի հավելան) / դրամական միջոցների ելքեր:

13. Դրամական հոսքերի արդյունավետությունը որոշվում է.

- ա) գուտ շահույթ / դրամական միջոցների մուտքեր
- բ) գուտ շահույթ / դրամական միջոցների ելքեր
- գ) գուտ դրամական հոսքեր / իրացումից հասույթ

η) գուտ դրամական հոսքեր / դրամական միջոցների ելքեր:

14. Ո՞ր մեթոդվ է նպատակահարմար որոշել դրական դրամական հոսքերի շահութաբերության վրա ազդող գործոնների չափը.

- ա) խմբավորումների
- բ) ինդեքսային
- գ) տարբերությունների
- դ) շղթայական տեղադրումների:

15. Դրամական հոսքերի շահութաբերության աճի վրա ո՞ր գործոնն է ունենում դրական ազդեցություն.

- ա) գուտ շահուվաթի աճը
- բ) վճարված շահաբաժինների աճը
- գ) ակտիվների շրջանառելիության արագացումը
- դ) նյութական ընթացիկ ակտիվների գնումների ավելացումը:

16. Դրամական միջոցների գործակցային վերլուծությունը իրենից ներկայացնում է.

- ա) դրական և բացասական դրամական հոսքերի հարաբերական ցուցանիշների որոշումը
- բ) դրամական միջոցների մուտքերի և ելքերի միջև շեղումների որոշումը՝ ըստ գործունեության ոլորտների
- գ) դրամական միջոցների մուտքերի և ելքերի որոշումը՝ ըստ գործունեության ոլորտների
- դ) դրամական միջոցների մնացորդների որոշումը:

ԳԼՈՒԽ IX

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

9.1. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Կազմակերպությունը իր տնտեսական գործունեության իրականացման ընթացքում ստանում է եկամուտներ և կատարում ծախսեր: Տնտեսական գործունեության արդյունքները բնութագործ այդ կարևորագույն ցուցանիշներն արտացոլում են կազմակերպության աշխատանքի բոլոր կողմերը:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում (26.12.2002թ.) եկամուտները և ծախսերը բնութագրվում են որպես ֆինանսական հաշվետվությունների տարրեր:

Եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների ավելացումն է, որը տեղի է ունենում ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման ձևով, և որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ մասնակիցների կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների հետևանքով սեփական կապիտալի ավելացման:

Ծախսը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների նվազումն է, որը տեղի է ունենում ակտիվների արտահոսքի կամ նվազման կամ պարտավորությունների առաջացման կամ աճի ձևով, և որը առաջանում է սեփական կապիտալի նվազման, բացառությամբ մասնակիցների միջև սեփական կապիտալի բաշխման հետևանքով դրա նվազման դեպքի:

Եկամուտները և ծախսերը վճռական ազդեցություն ունեն ֆինանսական արդյունքների մեծության վրա, քանի որ վերջինս պայմանավորված է դրանց համադրմամբ: Այդ պատճառով յուրաքանչյուր կազմակերպության համար եկամուտների ու ծախ-

սերի վերլուծության հարցերը ունեն բացառիկ կարևոր նշանակություն:

Եկամուտների և ծախսերի վերլուծության հիմնական խնդիրներն են՝

- գնահատել եկամուտների և ծախսերի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները,
- կատարել եկամուտների և ծախսերի գործոնային վերլուծություն:

Վերլուծական հետազոտությունները անցկացվում են հետևյալ տեղեկատվական աղյուրների տվյալներով՝

- ձև N2. «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը»,
- բիզնես-ծրագիր,
- ծախսերի մասին հաշվետվություն,
- առանձին արտադրատեսակների կալկուլացիաներ,
- արտադրանքի մասին հաշվետվություն,
- սինթետիկ ու անալիտիկ հաշվառման տվյալներ և այլն:

9.2. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Եկամուտների և ծախսերի վերլուծական գործընթացը սկսվում է դրանց կազմի ու կառուցվածքի ուսումնասիրությամբ: Այդ նպատակով առաջին հերթին անհրաժեշտ է դիտարկել եկամուտների ու ծախսերի կազմը (գծ. 9.1):

Արտադրական կազմակերպությունների կողմից ստացված եկամուտների կազմը հետևյալն է՝

- գործառնական գործունեությունից եկամուտներ,
- ոչ գործառնական եկամուտներ,
- արտասովոր եկամուտներ,
- նախորդ տարիների եկամուտներ:

Եկամուտների կազմում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում կազմակերպության գործառնական գործունեությունից Եկամուտներին, որոնք ձևավորվում են արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների իրացումից ստացված հասուցիչ և գործառնական այլ Եկամուտներից:

Արտադրական կազմակերպությունների կողմից կատարված բոլոր ծախսերը խմբավորվում են հիեռակալ ուղղություններով՝

- գործառնական գործունեության ծախսեր,
- ոչ գործառնական ծախսեր,
- արտասովոր ծախսեր,
- նախորդ տարիների ծախսեր,
- շահութափարկի գծով ծախս (փոխհատուցում):

Գործառնական գործունեության ծախսերը ներառում են՝

• իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինքնարժեքը,


- իրացման և վարչական ծախսերը,
- գործառնական այլ ծախսերը:

Վերլուծական գործընթացի հստակ իրականացումը կապված է ծախսերի դասակարգման հետ, որը կատարվում է մի քանի հատկանիշներով։

Հստ արտադրանքի ինքնարժեքի մեջ ներառման հատկանիշի՝ բոլոր ծախսերը բաժանվում են ուղղակի և անուղղակի խմբերի։ Ուղղակի ծախսերը կատարման պահին ներառվում են արտադրվող արտադրանքի ինքնարժեքի մեջ, քանի որ հայտնի է, թե որ արտադրատեսակներին են դրանք վերաբերում, այսինքն անմիջականորեն վերագրվում են ծախսերի օբյեկտներին։ Օրինակ՝ ուղղակի նյութական ծախսումները։ Ուղղակի ծախսերը կազմում են արտադրանքի ինքնարժեքի բուն բովանդակությունը։

Եկամուտների և ծախսերի կազմը

Գծապատկեր 9.1



Անուղղակի ծախսերը միաժամանակ կապված են ծախսերի մի քանի օբյեկտների հետ և հնարավոր չեն անմիջականորեն մտցնել արտադրանքի ինքնարժեքի կազմի մեջ: Այդ ծախսերի բնույթն այնպիսին է, որ հնարավոր չեն որոշել տվյալ օբյեկտին բաժին ընկնող մասը: Դրա համար ամսվա ընթացքում դրանք հավաքվում են համապատասխան հաշիվներում և ամսվա վերջում որևէ համամասնությամբ ընդգրկվում ինքնարժեքի մեջ: Օրինակ՝ անուղղակի արտադրական ծախսումները:

Հաշվապահական հաշվառման մեջ գործում է արտադրանքին ծախսերի վերագրման երկու համակարգ՝ պատվերին և գործընթացին: Դրանց ընտրությունը կախված է արտադրական գործընթացի բնույթից:

Պատվերին ծախսերի վերագրման համակարգը սովորաբար կիրառվում է պատվերային, իսկ գործընթացին ծախսերի վերագրման համակարգը՝ հոսքային արտադրություններում: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Պատվերին ծախսերի վերագրման համակարգը որոշում է յուրաքանչյուր առանձին պատվերի ծախսերը՝ անկախ աշխատանքների կատարման հաշվետու ժամանակաշրջանից: Գործընթացին ծախսերի վերագրման համակարգը որոշում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում արտադրանքի արտադրության համար կատարված ծախսերի հանրագրումը: Միավոր արտադրանքի ինքնարժեքը որոշվում է ծախսումների ընդհանուր գումարի և արտադրված արտադրանքի քանակի հարաբերակցությամբ:

Անուղղակի արտադրական ծախսումների վերագրումն ավելի բարդ գործընթաց է, որը այլ կերպ կոչվում է ծախսերի բաշխում: Անուղղակի ծախսումները արտադրատեսակների միջև բաշխվում են գործակիցների օգնությամբ: Այդ գործակիցները սահմանվում են հաշվետու ժամանակաշրջանի սկզբին: Դրանց ուսումնասիրության նպատակով պետք է պատկերացում կազմել ծախսերի վերագրման կենտրոնների մասին:

Այդ կենտրոնը ծախսերի վերագրման օբյեկտն է, որտեղ կուտակվում են մի շարք փոխկապակցված գործառնությունների

ծախսեր: Արտադրանքին ծախսերի վերագրման համակարգի կիրառման ժամանակ դրանք նախ հավաքագրվում են ըստ ծախսերի կենտրոնների և հետո միայն վերագրվում արտադրատեսակին: Այդ կենտրոնները փաստորեն հանդես են գալիս որպես ծախսերի վերագրման միջանկյալ օբյեկտներ՝ ի տարրերություն արտադրատեսակների, որոնք վերջնական օբյեկտ են:

Անուղղակի ծախսումների վերագրումը վերջնական օբյեկտներին կատարվում է հետևյալ կերպ: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված անուղղակի ծախսերի վերագրման առաջին փուլը ծախսերի կենտրոնների միջև դրանց բաշխումն է: Դրանից հետո անցնում են արտադրատեսակներին ծախսերի վերագրման հաջորդ փուլին: Գործընթացին ծախսերի վերագրման համակարգի դեպքում ծախսերի կենտրոնն վերագրված անուղղակի ծախսումները պետք է հարաբերել արտադրված արտադրանքի բանակին՝ ստանալով միավոր արտադրատեսակին բաժին ընկնող անուղղակի ծախսերի գումարը:

Պատվերին ծախսերի վերագրման համակարգի կիրառման դեպքում այդ գործընթացը ավելի բարդ է: Պատվերներին բաժին են ընկնում տարբեր մեծության անուղղակի ծախսեր: Պատվերների միջև անուղղակի ծախսերի համամասնական վերաբաշխման նպատակով հաշվարկվում են դրանց բաշխման գործակիցներ, որոնց օգնությամբ յուրաքանչյուր պատվերին վերագրվում է անուղղակի ծախսերի համապատասխան գումար:

Տարբեր արտադրատեսակներին բաժին է ընկնում անուղղակի ծախսերի որոշակի մեծություն: Այդ արտադրատեսակների միջև անուղղակի ծախսերի բաշխման հիմք են ծառայում ուղղակի աշխատանքային ծախսումները, մեքենա-ժամերի բանակը, ուղղակի ծախսումների հանրագրումարը:

Ծախսերի տարբեր կենտրոնների միջև անուղղակի ծախսերի բաշխման տարբեր հիմքեր կարող են կիրառվել: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մի կենտրոնում կարող է ծախսվել ավելի շատ կենդանի, իսկ մյուսում՝ մեքենայացված աշխատանք: Հիմքի ընթրությունը կատարում են կազմակերպության կառավարման օդակները: Սովորաբար արտադրատե-

սակների ծախսումների յուրաքանչյուր կենտրոնի համար նախօրք սահմանվում են անուղղակի ծախսումների բաշխման գործակիցներ: Գործակիցը որոշվում է ծախսումների տվյալ կենտրոնի գծով հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված անուղղակի ծախսումների հաճրագումարը հարաբերելով ընտրված բաշխման հիմքին:

Հստ կազմակերպության գործարար ակտիվության մակարդակից ունեցած կախվածության՝ ծախսերը լինում են փոփոխուն և հաստատուն բնույթի: Փոփոխուն ծախսերը պայմանավորված են գործարար ակտիվությամբ և, դրա տատանումներից ելնելով, ուղիղ համեմատական կերպով անընդհատ ենթարկվում են փոփոխության: Օրինակ՝ ուղղակի աշխատանքային ծախսումները: Հաստատուն ծախսերի մեծությունը այդ ընթացքում մնում է կայուն և փոփոխության չի ենթարկվում: Օրինակ՝ վարչական ծախսերը: Կան նաև ծախսեր, որոնք մի մասով փոփոխուն, մի մասով էլ՝ հաստատուն են: Օրինակ՝ անուղղակի արտադրական ծախսումները:

Այստեղ անհրաժեշտ է պատերացում կազմել կազմակերպության գործարար ակտիվության մակարդակով պայմանավորված արտադրական ծախսումների փոփոխության կամ «ծախսեր - ծավալ» ցուցանիշների հարաբերակցության մասին: Արտադրանքի ծավալի աճի դեպքում ավելանում է նաև ծախսվող արտադրական պաշարների մեծությունը:

Կազմակերպության հաստատուն և փոփոխուն ծախսերի հարաբերակցությունը կոչվում է ծախսերի կառուցվածք: Դա կարելի է ցուց տալ «ծախսեր - ծավալ» ցուցանիշների հարաբերակցությունը բնութագրող գծապատկերի օգնությամբ (գծ 9.2):

«Ծախսեր-ծավալ» ցուցանիշների հարաբերակցությունը ներկայացվում է ուղիղ գծերի տեսքով, հետևաբար դրանց կախվածության ֆունկցիան կարտահայտվի հետևյալ հավասարման միջոցով՝


$$\sigma = \zeta + (\Phi_{\text{ոժ}} \times \Phi),$$

որտեղ՝ σ - ծախսերի ընդհանուր գումարն է,

ζ - հաստատուն ծախսերն են,

Փառ - տեսակարար փոփոխուն ծախսերն են,
Ք - արտադրանքի քանակն է:

«Ծախսեր - ծավալ» ցուցանիշների հարաբերակցությունը Գծապատկեր 9.2



Եթե փոփոխուն ծախսերը բնութագրում են կազմակերպության գործարար ակտիվության մակարդակը և կազմում արտադրանքի արտադրական ինքնարժեքը, ապա հաստատուն ծախսերը ցուց են տալիս կառավարման արդյունավետության աստիճանը:

Ներկայում արտասահմանյան երկրներում գործում է ծախսերի հաշվառման երկու հիմնական համակարգ՝ եվրոպական (ծախսերի անմիջական ընդգրկում) և անգուամերիկյան (փոփոխուն ծախսերի ներառում՝ «դիրեկտ-կոստինգ»):

- | | |
|---------------------|--------------------------|
| Եվրոպական համակարգ՝ | անգուամերիկյան համակարգ՝ |
| - իրացումից հասուց | - իրացումից հասուց |
| - ինքնարժեք | - փոփոխուն ծախսեր |
| - համախառն շահուց | - սահմանային շահուց |
| - իրացման ծախսեր | - հաստատուն ծախսեր |
| - վարչական ծախսեր | - իրացումից շահուց |
| - իրացումից շահուց | |

Այդ երկու համակարգերի միջև սկզբունքային տարբերությունը հաստատուն ծախսերի բաշխման կարգն է: Եվրոպական համակարգի դեպքում այդ ծախսերը բաշխվում են իրացված և պատրաստի արտադրանքի մնացորդների միջև, իսկ անգուամերիկան համակարգի պայմաններում դրանք լրիվ վերագրվում են իրացված արտադրանքին:

Եկամուտների և ծախսերի կազմի ու կառուցվածքի վերլուծությունը կատարվում է հորիզոնական և ուղղահայաց մեթոդներով (աղյուսակ 9.1 և 9.2):

Եկամուտների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը Աղյուսակ 9.1

Եկամուտների կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ծեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	ըստ գու- մարի վածքի	ըստ կառուց- վածքի
1. Գործառնական	15300	95.63	16100	95.27	+800	-0.36
2. Ոչ գործառնական	700	4.37	800	4.73	+100	+0.36
3. Արտասովոր	-	-	-	-	-	-
Ընդամենը	16000	100.00	16900	100.00	+900	-

Հաշվետու տարում կազմակերպության կողմից ստացված եկամուտների գումարը գերազանցել է նախորդ տարվա մեծությունը 900 հազ. դրամով: Այն կատարվել է գործառնական և ոչ գործառնական եկամուտների գումարների ավելացման հաշվին: Արտասովոր բնույթի և նախորդ տարիների եկամուտներ չեն արձանագրվել: Ի դեպքում գործառնական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ նվազել է, և այդ չափով ավելացել ոչ գործառնական եկամուտների բաժինը:

Այժմ գնահատենք կազմակերպության կողմից կատարված ծախսերի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները:

Ծախսերի կազմի ու կառուցվածքի վերլուծությունը
Աղյուսակ 9.2

Ծախսերի կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	Գումարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	Գումարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	ըստ գումարի	ըստ կառուց- վածքի
1. Գործառնական	14300	93.10	14685	91.78	+385	-1.32
2. Ոչ գործառնական	900	5.86	1090	6.81	+190	+0.95
3. Արտասովոր	-	-	-	-	-	-
4. Շահութահարկի գծով ծախս	160	1.04	225	1.41	+65	+0.37
Ընդամենը	15360	100.00	16000	100.00	+640	-

Մեկ տարվա ընթացքում վերլուծվող կազմակերպության կողմից կատարված ծախսերը բացարձակ մեծությամբ աճել են 640 հազ. դ. գումարով: Այդ աճը պայմանավորված է գործառնական, ոչ գործառնական և շահութահարկի գծով ծախսի ավելացմամբ: Տվյալ կազմակերպությունում արտասովոր բնույթի և նախորդ տարիների ծախսեր չկան: Գործառնական ծախսերի տեսակարար կշիռը դրանց ընդհանուր մեծության մեջ նվազել է և նույն չափով ավելացել ոչ գործառնական ծախսերի ու շահութահարկի գծով ծախսի բաժինները:

Վերլուծական գործընթացում որոշվում է եկամուտների և ծախսերի ու դրանց առանձին բաղադրիչների դիմամիկան, աճի տեմպերը, կառուցվածքային տեղաշարժերը և գնահատվում դրանց հնարավոր հետևանքները կազմակերպության գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա:

9.3. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայութեների իրացումից հասուլի վերլուծությունը: Կազմակերպության գործառնական գործունեությունից եկամուտների հիմնական մասը ձևավորվում է արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից ստացված հասուլի հաշվին: Հասուլի սահմանումը և ճանաչման սկզբունքները ներկայացված են ՀՀՀՀՍ 18՝ «Հասուլ» ստանդարտում: Այդ ստանդարտի համաձայն՝ հասուլը հաշվետու ժամանակաշրջանում ստվորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ մասնակիցների կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի:

Հասուլը ներառում է ստացված կամ ստացվելիք տնտեսական օգուտների միայն այն համախառն ներհոսքը, որը պատկանում է տվյալ կազմակերպությանը: Հասուլի մեծությունը որոշվում է կազմակերպության և գնորդի միջև կնքված պայմանագրով ու չափվում ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով կազմակերպության կողմից տրամադրված ցանկացած գեղեցի կամ իշեցումների գումարները: Սովորաբար հատուցումը ունի դրամական միջոցների տեսք, իսկ հասուլը ստացված կամ ստացվելիք դրամական միջոցների գումարն է: Հասուլի ճանաչումը ունի սկզբունքային նշանակություն: Այն ճանաչվում է, եթե հավանական է, որ ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն և դրանք կարելի է արժանահավատորեն չափել:

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասուլը իրենից ներկայացնում է իրացման ամբողջական ծավալը, որի փոփոխության վրա ազդում են մի շարք գործոններ: Դրանց ազդեցությունը որոշելու համար անհրաժեշտ է օգտվել ապրանքային պաշարների հաշվեկշռից՝

$$\mathcal{Z}_0 + \mathfrak{A} + \Phi_{\omega} = \mathcal{Z} + \Phi_{\omega} + \mathcal{Z}_1,$$

որտեղ՝ \mathcal{Z}_0 և \mathcal{Z}_1 - շիրացված արտադրանքի մնացորդներն են տարեսկզբին և տարեվերջին,
 \mathfrak{A} - արտադրանքի արտադրության ծավալն է,
 \mathcal{Z} - իրացումից հասուցիչն է,
 Φ_{ω} և Φ_{ω} - գույքագրման հետևանքով բացահայտված ավելցուկներն ու պակասորդներն են:

Ապրանքային պաշարների հաշվեկշռից (այլուսակ 9.3) երևում է, որ իրացումից հասուցիչ փոփոխության վրա, բացի արտադրանքի արտադրության ծավալից, ազդում է նաև շիրացված արտադրանքի մնացորդների փոփոխությունը: Դրանից բացի, իրացումից հասուցիչ փոփոխության վրա որոշ ազդեցություն ունեն նաև գույքագրման հետևանքով բացահայտված արտադրանքի ավելցուկները և պակասորդները: Այդ հաշվեկշռով կարելի է կազմել երկու գնահատումներով՝ ըստ ինքնարժեքի և ըստ գների, ինչպես արժեքային, այնպես էլ բնեղեն արտահայտությամբ: Վերջին դեպքում այն կարելի է կազմել միայն միատեսակ արտադրանքի արտադրության պայմաններում: Եթե ապրանքային հաշվեկշռի երկու բաղկացուցիչները հավասարվում են իրար, ապա դա վկայում է տնտեսական տեղեկատվության արժանահավատության մասին:

Ապրանքային պաշարների հաշվեկշռի վերլուծությունը Այլուսակ 9.3

Ցուցանիշներ	Ինքնարժեքով	Գներով
1. Զիրացված արտադրանքի մնացորդը տարեսկզբին, հազ. դ.	340	365
2. Արտադրանքի արտադրության ծավալը, հազ. դ.	12320	15750
3. Գույքագրման ավելցուկները, հազ. դ.	10	15
4. Ընդհամենը	12670	16130
5. Իրացված արտադրանքի ծավալը, հազ. դ.	12300	15700
6. Գույքագրման պակասորդները, հազ. դ.	20	25
7. Զիրացված արտադրանքի մնացորդը տարեսկերջին, հազ. դ.	350	405
8. Ընդհամենը	12670	16130

Ապրանքային պաշարների հաշվեկշռի բաժինները, և ըստ ինքնարժեքի, և ըստ գների, իրար հավասար են: Այդ հաշվեկշռից կարելի է որոշել արտադրանքի իրացումից հասույթի գումարը՝

$$\zeta = Z_0 + A + F_w - F_u - Z_1$$

Այնուհետև իրացման ծավալի փոփոխության ($\Delta\zeta$) վրա շղթայական տեղադրումների մեթոդով որոշվում է տարբեր գործոնների ազդեցությունը:

Ապրանքային պաշարների գումարը մեծ ազդեցություն ունի կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող բոլոր ֆինանսական ցուցանիշների վրա: Դրա համար այդ պաշարների մեծությունը ցանկալի է պահպանել օպտիմալ չափերով: Պաշարների մեծ չափերի կուտակումները միայն խոսում են կազմակերպության գործարար ակտիվության անկման մասին: Դրանք հանգեցնում են ընթացիկ ակտիվների շրջանառելիության դանդաղեցմանը, որի հետևանքով վատթարանում է կազմակերպության ֆինանսական դրությունը:

Կազմակերպություններում ընթացիկ ակտիվների կազմում մեծ տեսակարար կշիռ ունեն ապրանքային պաշարները, հատկապես վերջին տարիներին՝ կապված մրցակցության ուժեղացման, վաճառքի շուկաների կորստի, գնորդների ցածր վճարունակության, ապրանքի ինքնարժեքի բարձր մակարդակի և այլ գործոնների հետ: Պահեստում չիրացված արտադրանքի մնացորդների աճը հանգեցնում է ընթացիկ ակտիվների սառեցմանը, դրամական հոսքերի և կրեդիտորական պարտքերի աճին և որպես հետևանք նվազում է կազմակերպության վճարունակության աստիճանը, ձևավորվում անկայուն ֆինանսական իրադրություն, որն էլ տանում է դեպի սնանկացում:

Ապրանքային պաշարների շրջանառելիության տևողությունը հավասար է դրանց պահեստ ընդունվելու և իրացման նպատակով դրւու գրվելու ժամանակաշրջանին: Շրջանառելիության տևողությունը օրերով ($S_{ապ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$S_{ապ} = \frac{\text{Ապրանքային պաշարների միջին մնացորդ}}{\text{Իրացված արտադրանքի ինքնարժեք}} \quad 360$$

Վերլուծվող կազմակերպությունում հաշվետու տարվա ապրանքային պաշարների շրջանառելիության տևողությունը կազմել է՝ $345 \times 360 : 12300 = 10.1$ օր։ Այն նախորդ տարվա համեմատ որոշ չափով կրճատվել է ($10.1 - 10.3 = -0.2$):

Վերլուծական գործընթացում գնահատվում են ապրանքային պաշարների յուրաքանչյուր տեսակի գերնորմատիվային մնացորդների գոյացման պատճառները։ Նոր իրացման շուկաների հայթայթման նպատակով պետք է ուսումնասիրել արտադրանքի ինքնարժեքի իշեցման, որակի և մրցունակության բարձրացման, արդյունավետ գովագրի կազմակեպման հիմնահարցերը։

Իրացումից հասույթի վերլուծությունը սերտորեն կապված է մատակարարությունների գծով պայմանագրային պարտավորությունների կատարման հետ։ Պայմանագրային պարտավորությունների խախտումները բացասականորեն են ազդում կազմակերպության գործունեությունը բնութագրող բոլոր ցուցանիշների վրա։ Դրա հետ միասին, շուկայական մրցակցության պայմաններում, կազմակերպությունը կարող է կորցնել իր սպառման շուկաները, որն ել կհանգեցնի արտադրության անկմանը։ Ըստ կարևոր նշանակություն ունի աետպատվերի կատարումը, քանի որ այն կազմակերպությանը երաշխավորում է արտադրանքի վաճառքը, ժամանակին վճարումը, հարկային գեղշեր և այլ արտոնություններ։

Մատակարարությունների գծով պայմանագրային պարտավորությունների կատարման աստիճանը ($\Psi_{\text{պ}}$) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Psi_{\text{պ}} = \frac{\zeta_0 - \mathbf{I}\mathbf{U}}{\zeta_0} \times 100$$

որտեղ՝ ζ_0 - իրացումից հասույթի նախատեսված ծավալն է,
 $\mathbf{I}\mathbf{U}$ - խախտումների գումարն է։

Մատակարարությունների գծով պայմանագրային պարտավորությունների խախտումները կարող են կատարվել հետևյալ պատճառներով՝ արտադրանքի տեսականու, մատակարարման

ժամկետների և որակի: Դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը որոշելու համար խախտման գումարը պետք է հարաբերել իրացումից հասույթի նախատեսված ծավալին: Մատակարարումների գծով պայմանագրային պարտավորությունների վերլուծությունը կատարվում է նաև ըստ ժամկետների, արտադրատեսակների և պայմանագրերի (աղյուսակ 9.4):

Մատակարարումների գծով պայմանագրային պարտավորությունները կազմակերպության կողմից կատարվել են 98.67%-ով, իսկ խախտումները կազմել են 1.33%: Այդ խախտումները ամբողջությամբ վերաբերում են «Բ» արտադրատեսակին: Առանձին գործուների ազդեցությունը մատակարարումների գծով պայմանագրային պարտավորությունների կատարման վրա կազմել է՝

1. ըստ ժամկետների՝ $100 \times 100 : 15000 = 0.67\%$,
2. ըստ տեսականու՝ $70 \times 100 : 15000 = 0.46\%$,
3. ըստ որակի՝ $30 \times 100 : 15000 = 0.20\%$:

Պայմանագրային պարտավորությունների կատարման վերլուծությունը

Աղյուսակ 9.4

Ցուցանիշներ	Նախատեսված, Բազ. դ.	Փաստացի, Բազ. դ.	Գործուներ, Բազ. դ.			Պայմանագրի սահման-ներում, %
			Ժամկետներ	Տեսականի	Որակ	
1. Արտադրատեսակներ	15000	14800	100	70	30	98.67
«Ա» արտադրատեսակ	4300	4300	-	-	-	100.00
«Բ» արտադրատեսակ	4700	4500	100	70	30	95.75
«Գ» արտադրատեսակ	6000	6000	-	-	-	100.00
2. Գործուների ազդեցություն	-	-	0.67	0.46	0.20	-

Գործոնների ազդեցության ընդհանուր հանրագումարը կկազմի 1.33%:

Մատակարարումների գծով պայմանագրային պարտավորությունների խախտումները բացասաբար են ազդում ոչ միայն տվյալ կազմակերպության, այլ նաև առևտրային ֆիրմաների և տրանսպորտային ընկերությունների գործունեության վրա: Վերլուծական գործընթացքում անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնել նաև կազմակերպության արտահանման պարտավորությունների կատարման վրա:

Իրացումից հասույթի վերլուծությունը նպատակահարմար է կատարել ըստ հետևյալ շուկաների՝

1. Ներքին շուկա

- պետապետական,
- մարզերի,
- տարածաշրջանների և այլն:

2. Արտաքին շուկա

- ԱՊՀ երկրների,
- Մերձավոր Արևելքի երկրների,
- «Մեծ ությակի» երկրների,
- Եվրոպական երկրների,
- Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրների և այլն:

Այս դեպքում վերլուծությունը կատարվում է ըստ մի շարք տարիների դինամիկայի՝ պահպանելով ցուցանիշների համադրելիության սկզբունքը: Վերլուծության արդյունքներով որոշվում են աճի տեմպերը, զարգացման համամասնությունները և օրինաչափությունները (աղյուսակ 9.5):

Աղյուսակում ներկայացված տվյալներից երևում է, որ արտադրանքի իրացման ծավալը, ինչպես ընդհանուր, այնպես էլ ըստ առանձին շուկաների, բացարձակ գումարով աճել է: Սակայն ըստ առանձին շուկաների տեղի են ունեցել կառուցվածքային տեղաշարժեր: Որոշ չափով ներքին շուկայի տեսակարար կշիռը նվազել է, սակայն աճել է արտաքին շուկայի բաժինը ընդհանուր իրացման մեջ:

**Արտադրանքի իրացման դինամիկան՝ ըստ տարբեր շուկաների
Աղյուսակ 9.5**

Իրացման շուկաներ	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գումարը, հազ. դ.	կառուցվածքը, %	գումարը, հազ. դ.	կառուցվածքը, %	ըստ գումարի, հազ. դ.	ըստ կառուցվածքի, %
1. Ներքին շուկա, այդ թվում՝	12000	80.27	12600	80.25	+600	-0.02
- պետական	4000	26.76	4200	26.75	+200	-0.01
- մարզային	8000	53.51	8400	53.50	+400	-0.01
2. Արտադրին շուկա, այդ թվում՝	2950	19.73	3100	19.75	+150	+0.02
- ԱՊՀ երկրներ	2100	14.04	2200	14.01	+100	-0.03
- այլ երկրներ	850	5.69	900	5.74	+50	+0.05
Ընդամենը	14950	100.00	15700	100.00	+750	-

Գործառնական այլ եկամուտների վերլուծությունը: Կազմակերպությունների գործառնական գործունեությունից ստացված եկամուտների մի մասն էլ ձևավորվում է գործառնական այլ եկամուտներից: Դրանց կազմի ու կառուցվածքի փոփոխությունները դիտարկենք ըստ ներկայացված աղյուսակի տվյալների (աղյուսակ 9.6):

Գործառնական այլ եկամուտների վերլուծությունը նախ պետք է իրականացնել ըստ կազմի ու կառուցվածքի՝ հորիզոնական և ուղղահայաց մեթոդներով: Վերլուծական գործընթացում որոշվում են այլ եկամուտների դինամիկան, աճի տեսակերը և կառուցվածքային տեղաշարժերը:

Կազմակերպության տնտեսական գործունեության արդյունքում ստացած գործառնական այլ եկամուտների գումարը նախորդ տարվա համեմատ ավելացել է 100 հազ. դ. չափով: Այդ եկամուտների առանձին տեսակները ունեցել են աճ, բացի այլ գործառնական գործունեությունից, երբ արձանագրվել է անկում: Վերջինիս և այլ պաշարների վաճառքներից ստացված եկամուտների տեսակարար կշիռները ընդհանուրի մեջ նվազել են:

**Գործառնական այլ գործունեության եկամուտների
վերլուծությունը**

Աղյուսակ 9.6

Հոդվածներ	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ընդումը	
	գումարը, հազ. դ.	կառուցվածքը, %	գումարը, հազ. դ.	կառուցվածքը, %	ըստ գումարի, հազ. դ.	ըստ կառուցվածքի, %
1. Այլ պաշարների վաճառքներից	170	56.67	200	50.00	+30	-6.67
2. Պաշարների արժեքի փոփոխությունից	30	10.00	50	12.50	+20	+2.50
3. Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կորուստների հակադարձումից	-	-	30	7.50	+30	+7.50
4. Գործառնական վարձակալությունից	-	-	-	-	-	-
5. Տուֆերից, տուգանքներից	60	20.00	90	22.50	+30	+2.0
6. Նյութական վճարի փոխհատուցումից	-	-	-	-	-	-
7. Այլ գործառնական գործունեությունից	40	13.33	30	7.50	-10	-5.83
Ընդամենը	300	100.00	400	100.00	+100	-

Վերլուծական գործընթացում այնուհետև պետք է բացահայտել գործառնական այլ եկամուտների փոփոխության վրա տարբեր գործունենքների ազդեցությունը և գնահատել դրանց հնարավոր հետևանքները կազմակերպության գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա:

9.4. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինքնարժեքի վերլուծությունը: Գործառնական ծախսերի գերակշիռ մասը կազմում է արտադրանքի ինքնարժեքը: Դա արտադրական բնույթի ծախսումների ամբողջությունն է, որը որոշակի նպատակների համար ծախսված պաշարների մեծությունն է՝ արժեքային արտահայտությամբ:


Կազմակերպության ծախսերի կառավարման համակարգում կարենոր նշանակություն ունի իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինքնարժեքի վերլուծությունը: Այն հնարավորություն է ընձեռում որոշել դրա փոփոխության միտումները, բացահայտել տարրեր գործոնների ազդեցությունը և բացահայտել ինքնարժեքի մակարդակի տնտեսման պահուստները: Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինքնարժեքի վերլուծությունը ներկայացված է գծապատկերում (գծ. 9.3):

Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինքնարժեքի մակարդակը ընդհանրացնող ցուցանիշներն են՝ արտադրանքը ըստ տնտեսական տարրերի, արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսերի մակարդակը և առանձին արտադրատեսակների ինքնարժեքը:

Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինքնարժեքի վերլուծությունն ըստ տնտեսական տարրերի: Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինքնարժեքի վերլուծությունը սկսվում է դրա դինամիկայի գնահատմամբ՝ ինչպես ընդհանուր գումարով, այնպես էլ ըստ առանձին տնտեսական տարրերի:

Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինքնարժեքի գործոնային վերլուծությունը

Գծապատկեր 9.3



Գծապատկերից նկատելի է, որ արտադրանքի ինքնարժեքի փոփոխությունը կարող է արձանագրվել հետևյալ գործոնների ազդեցությամբ՝

- արտադրանքի տեսականի ($Ա_{\text{ո}}$),
- արտադրանքի կառուցվածք ($Ա_{\text{պ}}$),
- տեսակարար փոփոխուն ծախսեր ($\Phi_{\text{ոչ}}$),
- հաստատուն ծախսեր (ζ_{o}):

Հաշվարկների կատարման համար կիրառենք հետևյալ բանաձևը՝

$$U_{\psi} = \sum (U_{\psi_0} x U_{\psi_1} x \Phi_{\psi_0}) + \zeta :$$

Արտադրանքի ինքնարժեքի շեղումը հավասար կլինի՝

$$U_{\psi_1} - U_{\psi_0} = \Delta U_{\psi} :$$

Ծղթայական տեղադրումների մեթոդի օգնությամբ որոշենք շեղման վրա վերը նշված գործոնների ազդեցությունը՝ կատարելով մի շարք հաշվարկներ և տեղադրումներ:

- | | |
|---------------------------|-----------------------------------------------------------------------------|
| 1) հաշվարկ | $U_{\psi_0} = \sum (U_{\psi_0} x U_{\psi_0} x \Phi_{\psi_0}) + \zeta_0$ |
| 2) հաշվարկ, 1) տեղադրում՝ | $U_{\psi}^I = \sum (U_{\psi_0} x U_{\psi_1} x \Phi_{\psi_0}) + \zeta_0$ |
| 3) հաշվարկ, 2) տեղադրում՝ | $U_{\psi}^{II} = \sum (U_{\psi_1} x U_{\psi_1} x \Phi_{\psi_0}) + \zeta_0$ |
| 4) հաշվարկ, 3) տեղադրում՝ | $U_{\psi}^{III} = \sum (U_{\psi_1} x U_{\psi_1} x \Phi_{\psi_1}) + \zeta_0$ |
| 5) հաշվարկ, 4) տեղադրում՝ | $U_{\psi_1} = \sum (U_{\psi_1} x U_{\psi_1} x \Phi_{\psi_1}) + \zeta_1$ |

Այդ գործոնների ազդեցությունը կազմել է՝

- արտադրանքի տեսականի՝ $U_{\psi}^I - U_{\psi_0}$,
- արտադրանքի կառուցվածք՝ $U_{\psi}^{II} - U_{\psi}^I$,
- տեսակարար փոփոխուն ծախսեր՝ $U_{\psi}^{III} - U_{\psi}^{II}$,
- հաստատուն ծախսեր՝ $U_{\psi_1} - U_{\psi}^{III}$:

Բոլոր գործոնների հանրահաշվական գումարը կլինի ΔU_{ψ} :

Արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունը այնուհետև կատարվում է ըստ կազմի ու կառուցվածքի՝ կիրառելով հորիզոնական և ուղղահայաց եղանակները: Արտադրանքի ինքնարժեք կազմը ներկայացվում է հետևյալ տնտեսական տարրերով:

- ուղղակի նյութական ծախսումներ,
- ուղղակի աշխատանքային ծախսումներ,
- անուղղակի արտադրական ծախսումներ:

Վերլուծական գործընթացում որոշվում են արտադրանքի ինքնարժեքի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները (աղյուսակ 9.7): Արտադրանքի փաստացի ինքնարժեքը նախատեսվածի համեմատ աճել է 40 հազ. դրամով: Այն տեղի է ունեցել բոլոր տնտեսական տարրերի գծով: Կառուցվածքային տեղաշարժերի տեսակետից առաջին երկու տնտեսական տարրերի տեսակարար կշիռները նվազել են, իսկ անուղղակի արտադրական ծախսումներինը՝ աճել:

**Արտադրանքի ինքնարժեքի կազմի ու կառուցվածքի
վերլուծությունը**

Աղյուսակ 9.7

Տնտեսական տարրեր	Նախատեսված		Փաստացի		Շեղումը	
	Գու- մարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	Գու- մարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	Ըստ գումարի, հազ. դ.	Ըստ կառուց- վածքի, %
1. Ուղակի նյութական ծախսումներ	5360	43.65	5370	43.59	+10	-0.06
2. Ուղակի աշխատանքային ծախսումներ	4740	38.60	4750	38.56	+10	-0.04
3. Անուղակի արտադրական ծախսումներ	2180	17.75	2200	17.85	+20	+0.10
Ընդամենը	12280	100.00	12320	100.00	+40	-

Արտադրանքի ինքնարժեքը իր հերթին կախված է ծախս-ված պաշարների և գների փոփոխությունից: Արտադրանքի ինքնարժեքի մակարդակի շեղման վրա այդ գործումների ազդեցությունը կարելի է որոշել կամ շղթայական տեղադրումների, կամ տարրերությունների եղանակով:

Վերլուծական գործընթացում անհրաժեշտ է որոշել յուրաքանչյուր տարրի փոփոխության վրա տարրեր գործումների ազդեցությունը: Դրա հետ միասին, պետք է հաշվարկել նաև հարաբերական շեղումները ըստ այդ տնտեսական տարրերի: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել կազմակերպության գործարար ակտիվության մակարդակի փոփոխությունը (աղյուսակ 9.8):

Ուղակի ծախսումների տարրերը այդ մակարդակից անմիջական կախվածություն ունեն, այսինքն՝ դրանք փոփոխուն ծախսեր են: Հետևաբար այդ ծախսերի նախատեսված արժեքը պետք է վերահաշվարկել գործարար ակտիվության մակարդակի փոփոխությամբ և դրանց փաստացի մեծությունից հանել այդ վերահաշվարկված գումարը:

**Արտադրանքի ինքնարժեքի մեջ առանձին տնտեսական
տարրերի հարաբերական շեղումների հաշվարկը**

Աղյուսակ 9.8

Տնտեսական տարրերը	Կախվա- ծության գործա- կիցը	Հաշվարկ
1. Ուղարկի նյութական ծախսումներ	1.0	$[5370 - 5360 + (5360 \times 3.42 : 100)] = -173$
2. Ուղղակի աշխատանքային ծախսումներ	1.0	$[4750 - 4740 + (4740 \times 3.42 : 100)] = -152$
3. Անուղղակի արտադրական ծախսումներ	0.7	$2180 \times 0.7 = 1526$ (փոփոխուն մաս), $2180 \times 0.3 = 654$ (հաստատուն մաս), $1526 + (1526 \times 3.42 : 100) = 1578,$ $2200 - (1578 + 654) = -32$
Ընդամենը	-	-357

Անուղղակի արտադրական ծախսումների համար պետք է այլ կերպ վարվել, քանի որ դրանք, ըստ բնույթի, մի մասով փոփոխուն, մի մասով էլ հաստատուն են: Այդ պատճառով դրանք նախնապես առանձնացվում են, փոփոխուն մասը վերահաշվարկվում է վերը նկարագրված կարգով և այդ գումարին ավելացվում է հաստատուն մասը՝ ստանալով վերահաշվարկված մեծությունը: Այնուհետև այդ ծախսումների փաստացի գումարը համեմատվում է վերահաշվարկված մեծության հետ:

Արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսերի վերլուծությունը: Արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսերի մակարդակը ինքնարժեքի մեծությունը ընդհանրացնող առավել կարևոր ցուցանիշն է, որն ունի մի քանի առավելություններ: Առաջին՝ այն ունիվերսալ ցուցանիշը է ն կարող է հաշվարկվել արտադրության ցանկացած ճյուղում, երկրորդ՝ պարզ արտացոլում է կախվածությունը երկու կարևորագույն ցուցանիշների՝ ինքնարժեքի և շահույթի միջև:

Արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսերի մակարդակի ցուցանիշը որոշվում է արտադրանքի ինքնարժեքի և գործող գներով արտահայտված արտադրանքի ծավալի հարաբերությամբ: Վերլուծական գործընթացում ուսումնասիրվում են տվյալ ցուցանիշի դինամիկան, աճի տեմպերը և բացահայտվում դրանց վրա տարբեր գործոնների ազդեցույթունը:

Արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսերի մակարդակի ցուցանիշը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\sigma_d = \frac{U_p}{U} = \frac{\sum (U_{n1} \times U_{q1} \times \Phi_{nd}) + \zeta_d}{\sum (U_{n1} \times U_{q1} \times \Phi)}$$

որտեղ՝ σ_d - արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսերի մակարդակն է,
 U_p - արտադրանքի ինքնարժեքն է,
 U - արտադրանքի արտադրության ծավալն է՝
 գործող գներով,
 U_{n1} - արտադրանքի արտադրության քանակն է,
 U_{q1} - արտադրանքի կառուցվածքն է,
 Φ_{nd} - տեսակարար փոփոխուն ծախսերն են,
 ζ_d - հաստատուն ծախսերի գումարն է,
 Φ - միավոր արտադրանքի գինն է:

Այդ գործոնների ազդեցությունը հաշվարկենք շղթայական տեղադրումների եղանակով՝

1) հաշվարկ՝

$$\sigma_{d0} = \frac{\sum (U_{n0} \times U_{q0} \times \Phi_{nd0}) + \zeta_{d0}}{\sum (U_{n0} \times U_{q0} \times \Phi_0)}$$

2) հաշվարկ, 1) տեղադրում՝

$$\sigma_d^I = \frac{\sum (U_{n1} \times U_{q0} \times \Phi_{nd0}) + \zeta_{d0}}{\sum (U_{n1} \times U_{q0} \times \Phi_0)}$$

3) հաշվարկ, 2) տեղադրում՝

$$\sigma_d^{II} = \frac{\Sigma (U_{n1} \times U_{q1} \times \Phi_{nd0}) + \zeta_{d0}}{\Sigma (U_{n1} \times U_{q1} \times \Phi_0)}$$

4) հաշվարկ, 3) տեղադրում՝

$$\sigma_d^{III} = \frac{\Sigma (U_{n1} \times U_{q1} \times \Phi_{nd1}) + \zeta_{d0}}{\Sigma (U_{n1} \times U_{q1} \times \Phi_0)}$$

5) հաշվարկ, 4) տեղադրում՝

$$\sigma_d^{IV} = \frac{\Sigma (U_{n1} \times U_{q1} \times \Phi_{nd1}) + \zeta_{d1}}{\Sigma (U_{n1} \times U_{q1} \times \Phi_0)}$$

6) հաշվարկ, 5) տեղադրում՝

$$\sigma_{d1} = \frac{\Sigma (U_{n1} \times U_{q1} \times \Phi_{nd1}) + \zeta_{d1}}{\Sigma (U_{n1} \times U_{q1} \times \Phi_1)}$$

Արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսերի մակարդակի փոփոխությունը տեղի է ունեցել հետևյալ գործողների հաշվին՝

- արտադրանքի տեսականու՝ $\sigma_d^I - \sigma_{d0}$,
- արտադրանքի կառուցվածքի՝ $\sigma_d^{II} - \sigma_d^I$,
- տեսակարար փոփոխուն ծախսերի՝ $\sigma_d^{III} - \sigma_d^{II}$,
- հաստատուն ծախսերի՝ $\sigma_d^{IV} - \sigma_d^{III}$,
- արտադրանքի գների՝ $\sigma_{d1} - \sigma_d^{IV}$:

Բոլոր հինգ գործոնների հանրագումարը հաշվարկների ճիշտ կատարման դեպքում պետք է կազմի՝

$$\Delta\sigma_d = \sigma_{d1} - \sigma_{d0}:$$

Արտադրանքի իրացումից շահույթի վրա այդ գործոնների ազդեցությունը որոշելու համար նախորդ հաշվարկների արդյունքները պետք է բազմապատկել իրացումից ստացված հասույթի փաստացի մեծությամբ:

Արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսերի մակարդակը կարելի է ներկայացնել նաև հետևյալ բանաձևի տեսքով՝

$$\sigma_d = U_q = 208 \cdot \Sigma (U_n \times U_{nh})$$

որտեղ՝ U_{ω_i} - առանձին արտադրատեսակների ինքնարժեքն է:

Ըստ նշված բանաձևի՝ արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսերի մակարդակի փոփոխության վրա ազդում են հետևյալ գործոնները՝ արտադրանքի տեսականին ու կառուցվածքը, առանձին արտադրատեսակների ինքնարժեքը և միավոր արտադրանքի գները: Այդ գործոնների ազդեցությունը կարելի է որոշել հետևյալ աղյուսակի տվյալներով (աղյուսակ 9.9):

**Արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող
ծախսերի գործոնային վերլուծությունը**

Աղյուսակ 9.9

Ծախսերի մակարդակը	Արտա-դրանքի ինքնարժեքը, հազ. դ.	Արտա-դրանքի ծավալը, հազ. դ.	Մակարդակը	Հաշվարկ
1. Նախատեսված	12120	15200	0.7974	-
2. Փաստացի տեսականիով	12280	15690	0.7827	-0.0147
3. Փաստացին նախատեսվածով	12290	15720	0.7818	-0.0009
4. Փաստացի	12320	15750	0.7822	+0.0004

Արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսերի փաստացի մակարդակը նախատեսվածի համեմատ նվազել է՝ $0.7822 - 0.7979 = -0.0152$: Դա կարելի է բնութագրել դրական, քանի որ, այլ հավասար պայմաններում, կավելանա արտադրանքի իրացումից ստացվող շահուվածի գումարը: Այդ մակարդակը ավելի կիշներ, եթե չիներ երրորդ գործոնի բացասական ազդեցությունը:

Առանձին արտադրատեսակների ինքնարժեքի վերլուծությունը: Վերլուծական գործընթացում ուսումնասիրվում են առանձին արտադրատեսակների ինքնարժեքի փոփոխությունները (աղյուսակ 9.10) և բացահայտվում դրանց վրա տարբեր գործոնների ինչպես ընդհանուր ազդեցությունը, այնպես էլ ըստ ծախսերի առանձին հոդվածների:

**Առանձին արտադրատեսակների միավորի ինքնարժեքի
փոփոխությունների գնահատումը**

Աղյուսակ 9.10

Արտադրատեսակներ	Նախատեսված, հազ. դ.	Փաստացի, հազ. դ.	Շեղումը	Աճի տեմպը, %
1. «Ա» արտադրատեսակ	9.571	7.962	-1.609	83.19
2. «Բ» արտադրատեսակ	11.600	11.667	+0.067	100.58
3. «Գ» արտադրատեսակ	26.000	26.500	+0.500	101.92

Առանձին արտադրատեսակների միավորի ինքնարժեքի փոփոխությունները վկայում են, որ բացի «Ա» արտադրատեսակից, մյուս արտադրատեսակների փաստացի ինքնարժեքը գերազանցել է նախատեսված մեծությունը:

Առանձին արտադրատեսակների ինքնարժեքի փոփոխության (ζ_p) վրա ազդում են հետևյալ գործոնները՝

- արտադրանքի տեսականի ($U_{\text{ա}}$),
- հաստատուն ծախսերի գումար (ζ_d),
- տեսակարար փոփոխուն ծախսերի գումար ($\Phi_{\text{ան}}$):

Այդ գործոնների ազդեցությունը բացահայտելու համար նպատակահարմար է օգտվել հետևյալ բանաձևից՝

$$\zeta_p = \frac{\zeta_d}{U_{\text{ա}}} + \Phi_{\text{ան}}$$

Ինքնարժեքի մակարդակի փոփոխությունը նախատեսվածի համեմատ հավասար է՝

$$\zeta_{\text{p}1} - \zeta_{\text{p}0} = \Delta \zeta_{\text{p}}$$

Հաշվարկները կատարենք շղթայական տեղադրումների եղանակով՝

1) հաշվարկ՝

$$\zeta_{\text{p}0} = \frac{\zeta_{\delta 0}}{U_{u0}} + \Phi_{u\delta 0}$$

2) հաշվարկ, 1) տեղադրում՝

$$\zeta_{\text{p}}^I = \frac{\zeta_{\delta 0}}{U_{u1}} + \Phi_{u\delta 0}$$

3) հաշվարկ, 2) տեղադրում՝

$$\zeta_{\text{p}}^{II} = \frac{\zeta_{\delta 1}}{U_{u1}} + \Phi_{u\delta 0}$$

4) հաշվարկ, 3) տեղադրում՝

$$\zeta_{\text{p}1} = \frac{\zeta_{\delta 1}}{U_{u1}} + \Phi_{u\delta 1}$$

Գործոնների ազդեցությունը կազմել է՝

- արտադրանքի տեսականու՝ $\zeta_{\text{p}}^I - \zeta_{\text{p}0}$,
- հաստատուն ծախսերի՝ $\zeta_{\text{p}}^{II} - \zeta_{\text{p}}^I$,
- տեսակարար փոփոխուն ծախսերի՝ $\zeta_{\text{p}1} - \zeta_{\text{p}}^{II}$:

Այդ գործոնների ընդհանուր հանրագումարը կլինի՝ $\Delta \zeta_{\text{p}}$:

Նմանատիպ հաշվարկներ կատարվում են յուրաքանչյուր արտադրատեսակի համար: Դրանից հետո մանրամասն գնահատվում են ծախսերի առանձին հոդվածների կտրվածքով արձանագրված փոփոխությունները և որոշվում դրանց վրա տարբեր գործոնների ազդեցությունը: Դա նպատակ է հետապնդում ապահովել ծախսերի ձևավորման գործընթացի արդյունավետ կառավարման իրականացումը և դրանց մակարդակի նվազեցման պահուստների բացահայտումը:

Ուղղակի նյութական ծախսումների վերլուծությունը: Արտադրանքի ինքնարժեքի մեջ ամենամեծ տեսակարար կշիռը սպորտաբար կազմում են ուղղակի նյութական ծախսումները: Միավոր արտադրանքին բաժին ընկնող ուղղակի նյութական ծախսումները որոշվում են նյութերի ծախսի նորմաները բազմապատկելով դրանց միավորի գնով: Հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի նյութական ծախսումների ընդհանուր մեծությունը որոշվում է արտադրանքի արտադրության համար ուղղակի նյութական ծախսումների գումարը բազմապատկելով արտադրված արտադրանքի քանակով:

Ուղղակի նյութական ծախսումների շեղումը արտադրանքի փաստացի ծավալի արտադրության համար կատարված նյութական փաստացի և նախատեսված ծախսումների տարբերությունը է: Հետևաբար ուղղակի նյութական ծախսումների շեղումը որոշվում է արտադրված արտադրանքի փաստացի մեծության հիման վրա:

Ուղղակի նյութական ծախսումների ընդհանուր մեծությունը պայմանավորված է արտադրանքի տեսականիով (U_n), կառուցվածքով (U_p) և առանձին արտադրատեսակների նյութատարությամբ (U_m): Վերջինս իր հերթին ենթարկվում է փոփոխության նյութական ծախսումների նորմայի (σ_c) և դրանց միավորի գների (Φ) ազդեցությամբ:

Վերլուծական հետագուտությունը սկսվում է միավոր արտադրանքին բաժին ընկնող նյութական ծախսումների (U_d) փոփոխության վրա տարբեր գործուների ազդեցության որոշմամբ՝ օգտագործելով հետևյալ բանաձևը՝

$$U_d = \Sigma (\sigma_c \times \Phi) :$$

Այդ հաշվարկները իրականացնենք «Ա» նյութատեսակի համար (աղյուսակ 9.11):

Նույն ձևով դրանք հաշվարկվում են նաև արտադրանքի ընդհանուր ծավալի հաշվով՝ ամբողջ նյութական ծախսումների կտրվածքով՝

$$\Sigma U_d = U_n \times \Sigma (\sigma_c \times \Phi) :$$

Ուղղակի նյութական ծախսումների վերլուծությունը
Աղյուսակ 9.11

Ցուցանիշներ	Նախատեսված	Փաստացի	Ծեղումը	Հաշվարկ
1. Ուղղակի նյութական ծախսումները, հազ. դ.	3200	3381	+181	-
2. Ծախսի նորման, տ.	16.0	16.1	+0.1	+0.1 x 200 = +20
3. Միավորի գինը, հազ. դ.	200	210	+10	+10 x 16.1 = +161

Տվյալ դեպքում հաշվարկները իրականացվում են բացարձակ մեծությունների տարբերության եղանակով ըստ գործոնների.

- արտադրանքի տեսականի՝ $\Delta U_{\text{ա}} \times \Sigma (\sigma_{G0} \times \Phi_0)$,
- ծախսերի նորմա՝ $U_{\text{ա1}} \times \Sigma (\Delta \sigma_G \times \Phi_0)$,
- գներ՝ $U_{\text{ա1}} \times \Sigma (\sigma_{G1} \times \Delta \Phi)$:

Ուղղակի նյութական ծախսումների մեծության փոփոխությունը, բացի վերը նշված գործոններից, կախված է նաև արտադրանքի կառուցվածքից՝

$$U_d = \Sigma (U_{\text{ա}} \times U_{\text{գ}} \times \sigma_G \times \Phi) :$$

Այդ գործոնների ազդեցությունը հաշվարկվում է շղթայական տեղադրումների եղանակով:

Միավոր արտադրանքի վրա կատարված նյութական ծախսումների գումարը կախված է արտադրանքի որակից, արտադրության տեխնիկայի, տեխնոլոգիայի և կազմակերպման մակարդակից, բանվորի որակավորման աստիճանից և այլ գործոններից: Նյութական ծախսումների գումարը որոշվում է նյութատարության շեղման չափը բազմապատկելով նյութերի նախատեսված գնով և արտադրանքի փաստացի քանակով:

Նյութերի միջին գների մակարդակը առաջին հերթին կախված է հումքի շուկաներից, նյութական պաշարների ներխմբային կառուցվածքից, տրանսպորտային ծախսերից, հումքի որակից և այլ գործոններից: Նյութական ծախսումների փոփոխության

Վրա դրանց ազդեցության որոշման համար անհրաժեշտ է գների շեղման գումարը բազմապատկել ծախսված նյութերի և արտադրանքի փաստացի մեծությամբ:

Ուղղակի աշխատանքային ծախսումների վերլուծությունը:
Ուղղակի աշխատանքային ծախսումները արտադրանքի ինքնուժերի մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն: Դրանք մեծ ազդեցություն են գործում արտադրանքի ինքնարժեքի ձևավորման վրա: Այդ պատճառով ուղղակի աշխատանքային ծախսումների վերլուծությունը կարևոր նշանակություն ունի:

Արտադրանքի մեկ միավորին բաժին ընկնող ուղղակի աշխատանքային ծախսումները որոշում են վերջնական միավոր արտադրանքի արտադրության համար անհրաժեշտ աշխատաժամանակի մեծությունը բազմապատկելով ժամային նորմատիվային դրույքով: Հաշվետու ժամանակաշրջանի ընդհանուր աշխատանքային ծախսումները իրենցից ներկայացնում են միավոր արտադրանքին բաժին ընկնող աշխատանքային ծախսումների և արտադրությալ աշխատանքային ծախսումների բանակի արտադրյալը:

Ուղղակի աշխատանքային ծախսումների մեծությունը (U_a) պայմանավորված է մի շարք գործոնների ազդեցությամբ՝ արտադրանքի տեսականու (U_u), կառուցվածքի (U_v) և միավոր արտադրանքին բաժին ընկնող ծախսումների մակարդակի (U_w): Վերջինս իր հերթին կախված է արտադրանքի աշխատատրության վրա (Վ):

Վերլուծական գործընթացում կիրառվում են հետևյալ բանաձևները՝

- միավոր արտադրանքին բաժին ընկնող ուղղակի աշխատանքային ծախսումների գումարը՝

$$U_w = U_{uw} \times V,$$

- աշխատանքային ծախսումների ընդհանուր գումարը՝

$$U_a = \Sigma (U_u \times U_v \times U_w \times V) :$$

Նախ և առաջ բացարձակ մեծությունների տարբերության եղանակով որոշվում է միավոր արտադրանքին բաժին ընկնող աշխատանքային ծախսումների մակարդակի փոփոխության վրա արտադրանքի աշխատատրության և մեկ մարդ/ժամ վար-

ձատրության ազդեցությունը: Այնուհետև հաշվարկվում է միավոր արտադրանքին բաժին ընկնող ուղղակի աշխատանքային ծախսումների շեղման վրա տարբեր գործուների ազդեցությունը՝

- արտադրանքի տեսականու՝ $\Delta U_{\text{տ}} \times U_{\text{առ}0} \times \Psi_0$,
- աշխատատարության՝ $U_{\text{առ}} \times U_{\text{տ}1} \times \Psi_0$,
- մեկ մարդ/ժամ վարձատրության՝ $\Delta \Psi_0 \times U_{\text{տ}1} \times U_{\text{առ}1}$:

Վերլուծվող կազմակերպության օրինակով որոշենք ուղղակի աշխատանքային ծախսումների փոփոխության վրա բանվորների միջին ցուցակային թվի ու մեկ աշխատողի միջին աշխատավարձի ազդեցությունը (աղյուսակ 9.12):

Ուղղակի աշխատանքային ծախսումների վերլուծությունը Աղյուսակ 9.12

Ցուցանիշներ	Նախա- տեսված	Փաս- տացի	Ծե- ղումը	Հաշվարկ
1. Ուղղակի աշխատանքային ծախսումներ, հազ. դ.	4740	4750	+10	-
2. Բանվորների միջին ցուցակային թվի, մարդ	24	22	-2	-2 x 197.5 = -395
3. Մեկ բանվորի միջին աշխատավարձ, հազ. դ.	197.5	215.5	+18.4	+18.4 x 22 = +405

Նշված գործուների հետ մեկտեղ, ուղղակի աշխատանքային ծախսումների մեծության վրա ազդում է նաև արտադրանքի կառուցվածքը: Դրա մեջ տարբեր արտադրատեսակների աշխատատարության մակարդակի աճի հաշվին ավելանում է նաև ուղղակի աշխատանքային ծախսումների գումարը: Այդ գործուների ազդեցությունը հաշվարկվում է շղթայական տեղադրումների եղանակով՝

- 1) հաշվարկ $U_{\delta 0} = \sum (U_{\text{տ}0} \times U_{\text{պ}0} \times U_{\text{առ}0} \times \Psi_0)$
- 2) հաշվարկ, 1) տեղադրում $U_{\delta}^I = \sum (U_{\text{տ}1} \times U_{\text{պ}0} \times U_{\text{առ}0} \times \Psi_0)$
- 3) հաշվարկ, 2) տեղադրում $U_{\delta}^{II} = \sum (U_{\text{տ}1} \times U_{\text{պ}1} \times U_{\text{առ}0} \times \Psi_0)$

4) հաշվարկ, 3) տեղադրում $U_{\delta}^{III} = \Sigma (U_{\eta 1} \times U_{\psi 1} \times U_{\omega 1} \times \Phi_0)$

5) հաշվարկ, 4) տեղադրում $U_{\delta 1} = \Sigma (U_{\eta 1} \times U_{\psi 1} \times U_{\omega 1} \times \Phi_1)$

Ուղղակի աշխատանքային ծախսումների փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցությունը կազմել է՝

- արտադրանքի տեսականու՝ $U_{\delta}^I - U_{\delta 0}$,
- արտադրանքի կառուցվածքի՝ $U_{\delta}^{II} - U_{\delta}^I$,
- աշխատատարության՝ $U_{\delta}^{III} - U_{\delta}^{II}$,
- ժամային վարձատրության՝ $U_{\delta 1} - U_{\delta}^{III}$:

Այսպիսով բոլոր չորս գործոնների հանրագումարը կկազմի՝ $U_{\delta 1} - U_{\delta 0} = \Delta U_{\delta}$:

Միավոր արտադրանքին բաժին ընկնող ուղղակի աշխատանքային ծախսումների մեծության փոփոխությունը պայմանավորված է հիմնականում արտադրության կազմակերպատեխնիկական մակարդակը բնութագրող գործոններով:

Անուղղակի արտադրական ծախսումների վերլուծությունը:
Արտադրանքի ինքնարժեքի կարևոր բաղկացուցիչներից մեկն է անուղղակի արտադրական ծախսումներն են: Այդ ծախսումները արտադրատեսակների միջև բաշխվում են նախապես սահմանված գործակիցների միջոցով: Այդ գործակիցները հաշվարկվում են՝ արտադրանքի նորմատիվային ծավալը հարաբերելով կատարվող ծախսումների ընդհանուր մեծությանը: Ծախսումների նորմատիվային մեծության և արտադրանքի ծավալի միջև կապը արտացոլվում է հետևյալ հավասարման միջոցով՝

$$\sigma_{\text{աա}} = \zeta_{\delta} + (\Phi_{\text{տծա}} \times \varPhi),$$

որտեղ՝ $\sigma_{\text{աա}}$ - անուղղակի արտադրական ծախսումների գումարն է,

ζ_{δ} - անուղղակի արտադրական ծախսումների հաստատուն մասն է,

$\Phi_{\text{տծա}}$ - միավոր արտադրանքին բաժին ընկնող փոփոխուն ծախսումների չափն է,

\varPhi - արտադրանքի քանակն է:

Անուղղակի արտադրական ծախսումների անվանացանկը վերծանված ձևով ներկայացնենք ստորև՝

- արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի աշխատանքի վճարման ծախսումներ,
- արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի սոցիալական ապահովագրության վճարներ,
- արտադրական նշանակության հիմնական միջոցների մաշվածություն,
- արտադրական նշանակության հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսումներ,
- արտադրական նշանակության ոչ նյութական ակտիվների ամրութիզացիա,
- աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության ծախսումներ,
- արտադրական անձնակազմի գործուղման ծախսումներ,
- անուղղակի արտադրական այլ ծախսումներ:

Անուղղակի արտադրական ծախսումների վերլուծությունը իրականացվում է առաջին հերթին ըստ դրանց կազմի ու կառուցվածքի՝ հորիզոնական և ուղղահայց եղանակներով (աղյուսակ 9.13):

Վերլուծության նպատակն է՝ որոշել ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական շեղումները և բացահայտել դրանց պատճառները: Դրա համար շատ կարևոր նշանակություն ունի այն հարցի լուծումը, թե այդ ծախսումները կազմակերպության գործարար ակտիվությունից ինչ կախվածության մեջ են գտնվում (աղյուսակ 9.14):

Անուղղակի արտադրական ծախսումների մեծ մասը փոփոխուն (աշխատանքային ծախսումներ), ավելի փոքր մասը՝ հաստատուն բնույթ ունեն (հիմնական միջոցների մաշվածություն): Կան նաև այնպիսի ծախսումներ, որոնք մասամբ փոփոխուն են մասամբ էլ հաստատուն (հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսումներ):

**Անուղղակի արտադրական ծախսումների կազմի ու
կառուցվածքի վերլուծությունը**

Աղյուսակ 9.13

Հողմածներ	Նախատեսված		Փաստացի		Ծեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կառուց- վածքի
1. Աշխատանքի վճարման ծախսումներ	1200	54.80	1203	54.68	+3	-0.12
2. Սոցիալական ապահովագրության վճարներ	300	13.70	302	13.73	+2	+0.03
3. Հիմնական միջոց- ների մաշվածություն	200	9.13	202	9.18	+2	+0.05
4. Հիմնական միջոց- ների նորոգման և սպասարկման ծախ- սումներ	100	4.57	101	4.59	+1	+0.02
5. Ոչ նկութական ակտիվների ամոր- տիզմիա	-	-	-	-	-	-
6. Աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի ան- վտանգության ծախսումներ	150	6.84	151	6.87	+1	+0.03
7. Գործուղման ծախսումներ	-	-	-	-	-	-
8. Այլ ծախսումներ	240	10.96	241	10.95	+1	-0.01
Ընդամենը	2190	100.00	2200	100.00	+10	-

Անուղղակի արտադրական ծախսումների փոփոխութ բնույ-
թի հողմածների նախատեսված չափը պետք է վերահաշվարկել
գործարար ակտիվության մակարդակի փոփոխությամբ և դրանց
փաստացի մեծությունը համեմատել այդ վերահաշվարկած գու-
մարի հետ՝ ստանալով հարաբերական շեղումը:

**Անուղղակի արտադրական ծախսումների հարաբերական
շեղումների որոշումը**

Աղյուսակ 9.14

Հորվածներ	Նախա- տեսված, հազ. դ.	Փաս- տացի, հազ. դ.	Կախվա- ծության գործակիցը	Հաշվարկ
1. Աշխատանքի վճարման ծախսումներ	1200	1203	1.0	-38
2. Սոցիալական ապահովագրության վճարներ	300	302	1.0	-8
3. Հիմնական միջոցների մաշվա- ծություն	200	202	-	-
4. Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսումներ	100	101	0.9	-2
5. Ոչ նյութական ակտիվների ամոր- տիզացիա	-	-	-	-
6. Աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության ծախսումներ	150	151	0.8	-3
7.Գործուղման ծախսումներ	-	-	-	-
8. Այլ ծախսումներ	240	241	0.7	-5
Ընդամենը	2190	2200	-	-56

Այս հորվածների համար, որոնք մի մասով փոփոխուն, մի մասով էլ հաստատուն են, պետք է փոփոխուն մասը վերահաշվարկել գործարար ակտիվության մակարդակի փոփոխությամբ, որան ավելացնել հաստատուն մասը և ստանալ վերահաշվարկված մեծությունը: Եվ, վերջապես, այդ հորվածների փաստացի գումարը համեմատվում է վերահաշվարկվածի հետ:

Վերլուծական գործընթացում պետք է բացահայտել անուղղակի արտադրական ծախսումների առանձին հոդվածների փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցությունը: Այսպես, աշխատանքային ծախսումների շեղումը կարող է պայմանավորված լինել անձնակազմի թվաքանակի և միջին աշխատավարձի գործոններով: Հիմնական միջոցների մաշվածության չափը իր հերթին կարող է փոխվել դրանց միջին տարեկան արժեքի ու մաշվածության նորմայի ազդեցությամբ և այլն:

Իրացման ծախսերի վերլուծությունը: Կազմակերպության կողմից կատարվող բոլոր այն ծախսերը, որոնք չեն ներառվում պաշարների ինքնարժեքի կազմում, համարվում են ոչ արտադրական կամ շրջանառության ծախսեր: Դրանք են՝ իրացման և վարչական ծախսերը:

Կազմակերպության իրացման ծախսերը իրենց մեջ ընդգրկում են՝

- աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովության վճարներ,
- հիմնական միջոցների մաշվածություն, դրանց նորոգման և սպասարկման գծով ծախսեր,
- պահեստում գտնվող արտադրանքի, ապրանքների փաթեթավորման, տարայի, տեսակավորման և պահպանման ծախսեր,
- արտադրանքի, ապրանքների իրացման տրանսպորտային և ապահովագրության ծախսեր,
- կոմիսիոն և կոնսիդերացիոն վարձատրություն,
- մարքեթինգի և գովագի ծախսեր,
- իրացման այլ ծախսեր:

Իրացման ծախսերի վերլուծության համար օգտագործվում են անալիտիկ հաշվառման տվյալները: Դրանց վերլուծությունը սկզբում տարվում է ըստ կազմի ու կառուցվածքի (աղյուսակ 9.15):

Այնուհետև, ըստ առանձին հոդվածների, որոշվում է բացարձակ շեղումների վրա տարբեր գործոնների ազդեցությունը:

**Իրացման ծախսերի կազմի ու կառուցվածքի վերլուծությունը
Աղյուսակ 9.15**

Հորմածներ	Ծախսատեսված		Փաստացի		Շեղումը	
	գումարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	գումարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	ըստ գումարի	ըստ կառուց- վածքի
1. Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովագրության վճարներ	300	37.04	303	36.95	+3	-0.09
2. Հիմնական միջոցների մաշվածության, դրանց նորոգման և սպասարկման ծախսեր	100	12.35	301	12.32	+1	-0.03
3. Պահեստում գտնվող արտադրանքի, ապրանքների փաթեթավորման, տարայի, տեսակավորման, պահպանման ծախսեր	200	24.69	202	24.63	+2	-0.06
4. Արտադրանքի, ապրանքների իրացման տրանսպորտային և ապահովագրության ծախսեր	150	18.52	152	18.54	+2	+0.02
5. Կոմիսիոն և կոնսիդենցիոն վարձատրությունը	-	-	-	-	-	-
6. Մարքեթնգի և գովազդի ծախսեր	50	6.17	51	6.22	+1	+0.05
7. Իրացման այլ ծախսեր	10	1.23	11	1.34	+1	+0.11
Ընդամենը	810	100.00	820	100.00	+10	-

Արտադրանքի և ապրանքների փաթեթավորման, տարայի, տեսակավորման պահպանման ծախսերի շեղումը կախված է դրանց քանակից և արժեքից: Արտադրանքի և ապրանքների իրացման տրանսպորտային ծախսերի փոփոխություն կարող է

արձանագրվել տեղափոխման հեռավորության, դրանց քաշի և սակագների ազդեցության հետևանքով։ Մի շարք ծախսային հոդվածների գծով կատարված տնտեսումը կարող է արդյունավետ չլինել։ Օրինակ՝ մարքեթինգի և գովագրի ծախսերի գծով տնտեսումը կարող է վատ անդրադառնալ արտադրանքի իրացման գործընթացի վրա՝ կազմակերպությանը պատճառելով գգալի ֆինանսական կորուստներ։

Իրացման ծավալի վերլուծությունը շարունակվում է ըստ գործարար ակտիվության հետ ունեցած կախվածության աստիճանի՝ վերը նկարագրված կարգով (աղյուսակ 9.16)։

Իրացման ծախսերի հարաբերական շեղումների որոշումը Աղյուսակ 9.16

Հոդվածներ	Նախատեսված հազ. դ.	Փաստացի, հազ. դ.	Կախվածության գործակիցը	Հաշվարկ
1. Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովության վճարներ	300	303	0.8	-7
2. Հիմնական միջոցների մաշվածության, դրանց նորոգման և սպասարկման ծախսեր	100	301	0.3	-2
3. Պահեստում գտնվող արտադրանքի, ապրանքների փաթեթավորման, տարայի, տեսակավորման, պահպանման ծախսեր	200	202	0.9	-5
4. Արտադրանքի, ապրանքների իրացման տրանսպորտային և ապահովագրության ծախսեր	150	152	0.9	-3
5. Կոմիսիոն և կոնսիգնացիոն վարձատրություն	-	-	-	-
6. Մարքեթինգի և գովագրի ծախսեր	50	51	1.0	-1
7. Իրացման այլ ծախսեր	10	11	0.7	-1
Ընդամենը	810	820	-	-19

Կազմակերպության գործարար ակտիվության մակարդակի հետ ունեցած կախվածության հաշվառմամբ՝ իրացման ժախսերի գծով արձանագրվել է 19 հազ. դ. գումարի հարաբերական տնտեսում:

Վարչական ծախսերի վերլուծությունը: Հաշվապահական հաշվառման համակարգը նախատեսում է վարչական ծախսերի հետևյալ անվանացանկը՝

- աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովագրության վճարներ,
- հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածություն, դրանց նորոգման և սպասարկման ծախսեր,
- գործուղման և ներկայացուցչական ծախսեր,
- փոստի և հեռախաղորդակցության ծախսեր,
- գուստենյակային և կոմունալ ծախսեր,
- առողիտորական և խորհրդատվական ծախսեր,
- բանկային ծառայությունների և ապահովագրության ծախսեր,
- չփոխհատուցվող հարկերից ծախսեր,
- վարչական այլ ծախսեր:

Վարչական ծախսերի վերլուծության համար պետք է օգտվել անալիտիկ հաշվառման հարուստ տվյալներից: Դրանց վերլուծությունը իրականացվում է ըստ կազմի ու կառուցվածքի՝ հորիզոնական և ուղղահայաց եղանակներով՝ բացահայտելով առանձին հոդվածների շեղման վրա տարբեր գործոնների ազդեցությունը (աղյուսակ 9.17):

Վերլուծական գործընթացում անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնել, այսպես կոչված՝ «անարդարացի տնտեսումների» և «արդարացի գերածախսերի» վրա: Ծատ դեպքերում տարբեր հոդվածների գծով տնտեսումը կապված է լինում մի շարք կարևոր միջոցառումների թերի կատարման հետ՝ աշխատանքի պայմանների բարելավում, կադրերի պատրաստում և վերապատրաստում, առողիտորական և խորհրդատվական ծառայությունների ստացում, ապահովագրության իրականացում և այլն:

**Վարչական ծախսերի կազմի ու կառուցվածքի վերլուծությունը
Աղյուսակ 9.17**

Հոդվածներ	Նախատեսված		Փաստացի		Շեղումը	
	գումարը, հազ. դ.	կառուցվածքը, %	գումարը, հազ. դ.	կառուցվածքը, %	ըստ գումարի	ըստ կառուցվածքի
1. Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովագրության վճարներ	600	49.18	620	48.44	+20	-0.74
2. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության, դրանց նորոգման և սպասարկման ծախսեր	150	12.30	160	12.50	+10	+0.20
3. Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	50	4.10	55	4.30	+5	+0.20
4. Փոստի և հեռախաղորդակցության ծախսեր	60	4.92	65	5.08	+5	+0.16
5. Գրասենյակային և կոմունալ ծախսեր	140	11.47	150	11.72	+10	+0.25
6. Առողջորական և խորհրդատվական ծախսեր	20	1.64	22	1.72	+2	+0.08
7. Բանկային ծառայությունների և ապահովագրության ծախսեր	90	7.38	93	7.26	+3	-0.12
8. Զիոնիստուցվող հարկերից ծախսեր	-	-	-	-	-	-
9. Վարչական այլ ծախսեր	110	9.01	115	8.98	+5	-0.03
Ընդամենը	1220	100.00	1280	100.00	+60	-

Նման բացթողումները կազմակերպությանը պատճառում են զգալի վնասներ: Այդ հոդվածների գծով նախարաշվային

գումարներից փաստացի մեծությունների գերազանցումը միաժամանակ դիտարկվում են որպես «արդարացի գերածախսեր»:

Գործառնական այլ ծախսերի վերլուծությունը: Գործառնական այլ ծախսերի մեջ ներառված են՝

ա) այլ պաշարների վաճառքներից (օտարումներից) ծախսերը,

բ) պաշարների արժեքի փոփոխությունից ծախսերը, վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կորուստների (հնարավոր կորուստների պահուստի) գծով ծախսերը, երաշխիքային սպասարկման և վերանորոգման գծով ծախսերը,

գ) գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցների մաշվածության ծախսերը,

դ) տուգմերից, տուգանքներից ծախսերը, դատական ծախսերը,

ե) արժեքների պակասորդները և փչացումից կորուստները, արտադրական ծախսումների սովորական (նորմալ) մակարդակը գերազանցող ծախսերը, խոտանված արտադրանքի հետ կապված ծախսերը,

զ) հետազոտության և մշակման ծախսերը,

է) ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների պահպանման ծախսերը, հիմնական միջոցների լուծարման ծախսերը,

ը) գործառնական այլ ծախսերը:

Գործառնական այլ ծախսերի վերլուծությունը կատարվում է նախ հորիզոնական և ուղղահայաց եղանակներով՝ որոշելով դրանց կազմի ու կառուցվածքի փոփոխությունները: Այնուհետև պետք է բացահայտել այդ ծախսերի յուրաքանչյուր հոդվածի փոփոխության վրա տարբեր գործութերի ազդեցությունը (այսուսակ 9.18):

Գործառնական այլ ծախսերի կազմում ու կառուցվածքում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ: Մեկ տարվա ընթացքում դրանց մեծությունը ավելացել է 85 հազ. դ.-ով:

**Գործառնական այլ ծախսերի կազմի ու կառուցվածքի
վերլուծությունը**

Աղյուսակ 9.18

Հոդվածներ	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գումարը, հազ. դ.	կառուցվածքը, %	գումարը, հազ. դ.	կառուցվածքը, %	ըստ գումարի	ըստ կառուցվածքի
1. Այլ պաշարների վաճառքներից	130	65.00	120	42.10	-10	-22.9
2. Պաշարների արժեքների փոփոխությունից	20	10.00	30	10.53	+10	+0.53
3. Վաճառքների գծով դեբիտորական պարտքների անհավաքագրելիությունից	-	-	10	3.51	+10	+3.51
4. Երաշխիքային սպասարկումից և վերանորոգումից	10	5.00	-	-	-10	-5.00
5. Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցներից	-	-	-	-	-	-
6. Տուժերից, տուժանքներից	10	5.00	70	24.56	+60	+19.56
7. Արժեքների պակասորդներից և փշացումից ու դրանց փոխհատուցումից	-	-	-	-	-	-
8. Արտադրական ծախսումների սովորական մակարդակի գերազացումից	-	-	-	-	-	-
9. Խոտանված արտադրանքից	10	5.00	30	10.53	+20	+5.53
10. Հիմնական միջոցների պահպանումից և լուծարումից	-	-	-	-	-	-
11. Հետազոտությունից և մշակումից	-	-	-	-	-	-
12. Այլ գործառնական գործունեությունից	20	10.00	25	8.77	+5	-1.23
Ընդամենը	200	100.00	285	100.00	+85	-

Այն տեղի է ունեցել հիմնականում կազմակերպության կողմից շուկայի մասնակիցներին վճարված տուցմերի և տուգանքների հաշվին: Գործառնական այլ ծախսերի կառուցվածքում որոշ հոդվածների տեսակարար կշիռը աճել է, որը ցանկալի չէ տվյալ կազմակերպության համար:

9.5. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ: Կազմակերպությունների կողմից ստացված այլ եկամուտներից են՝ ոչ գործառնական, արտասովոր և նախորդ տարիների եկամուտները:

Կազմակերպությունները, գործառնական գործունեությունից բացի, կարող են եկամուտներ ստանալ նաև ոչ գործառնական գործունեության իրականացման արդյունքում: Ոչ գործառնական եկամուտների կազմում ներառվում են՝

ա) ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից (օտարումներից) եկամուտները,

բ) ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից (օտարումներից) եկամուտները,

գ) ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից (օտարումներից) և պարտավորությունների մարումներից եկամուտները,

դ) ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից եկամուտները,

ե) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտները,

զ) ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեգրկման (անհավաքագրելիության) հակադարձումից եկամուտները,

է) ֆինանսական ներդրումներից եկամուտները,

ը) ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտները,

թ) ոչ գործառնական այլ գործունեությունից եկամուտները:

Կազմակերպության արտասովոր եկամուտները բնութագրվում են արտակարգ դեպքերի հետևանքները վերացնելու համար ստացված միջոցներով: ՀՀՀՀՍ 8՝ «Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտի համաձայն՝ արտասովոր եկամուտները հստակ տարբերվում են կազմակերպության սովորական գործունեությունից և չի ակնկալվում դրանց հաճախակի և պարբերաբար կրկնվելը:

Նախորդ տարվա եկամուտները նախորդ ժամանակաշրջաններում կատարված գործառնությունների արդյունքում ստացված, սակայն հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված և ֆինանսական արդյունքներում ներկայացված եկամուտներն են:

Այլ եկամուտների վերլուծությունը կատարվում է ըստ կազմի ու կառուցվածքի՝ օգտվելով հորիզոնական և ուղղահայաց մեթոդներից (այսուսակ 9.19):

Այնուհետև որոշվում է այդ եկամուտների փոփոխության վրա տարբեր գործուների ազդեցությունը և գնահատվում դրանց հնարավոր հետևանքները կազմակերպության գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա:

Վերլուծական հետազոտությունների արդյունքներով բացահայտվում են եկամուտների հնարավոր ավելացման պահուստները: Այդ պահուստները առաջին հերթին կապված են արտադրանքի արտադրության ծավալի աճի և չիրացված արտադրանքի մնացորդների կրճատման հետ: Արտադրանքի արտադրության ծավալի աճը պայմանավորված է անավարտ արտադրության մնացորդների կրճատմամբ և արտադրական գործուներով՝ հիմնական միջոցների, աշխատանքային և նյութական պաշարների օգտագործման բարելավմամբ: Դրանից բացի, պետք է հաշվի առնել տվյալ արտադրատեսակի նկատմամբ եղած սպառողական պահանջարկը և դրա իրական հնարավորությունները:

**Ոչ գործառնական եկամուտների կազմի ու կառուցվածքի
վերլուծությունը**

Աղյուսակ 9.19

Հոդվածներ	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ընդումը	
	Գումարը, հազ. դ.	Կառուցվածքը, %	Գումարը, հազ. դ.	Կառուցվածքը, %	Ըստ գումարի	Ըստ կառուցվածքի
1. Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից	270	38.57	280	35.00	+10	-3.57
2. Ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից	40	5.71	50	6.25	+10	+0.54
3. Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից	28	4.00	30	3.75	+2	-0.25
4. Ոչ ընթացիկ հյութական ակտիվների և ոչ հյութական ակտիվների վերաչափումից	42	6.00	70	8.75	+28	+2.75
5. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից	100	14.29	150	18.75	+50	+4.46
6. Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեգոլկման հակադարձումից	-	-	-	-	-	-
7. Ֆինանսական ներդրումներից	60	8.57	50	6.25	-10	-2.32
8. Ակտիվներին վերաբերող շնորհներից	-	-	-	-	-	-
9. Ոչ գործառնական այլ գործունեությունից	160	22.86	170	21.25	+10	-1.61
Ընդամենը	700	100.00	800	100.00	+100	-

Եկամուտների հնարավոր ավելացման աղբյուրներից են՝ գործառնական այլ, արտասովոր և նախորդ տարիների եկամուտների աճը:

Այլ ծախսների վերլուծությունը: Կազմակերպությունները իրենց տնտեսական գործունեության ընթացքում կարող են կատարել նաև այլ ծախսներ: Դրանցից են՝ ոչ գործառնական, արտասովոր և նախորդ տարիների ծախսները, ինչպես նաև շահութահարկի գծով ծախսը:

Ոչ գործառնական ծախսներում ընդգրկվում են՝

ա) ոչ ընթացիկ ակտիվների վաճառքների (օտարումների) ծախսները,

բ) ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքների (օտարումների) և պարտավորությունների մարումների ծախսները,

գ) ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքների (օտարումների) և պարտավորությունների մարումների ծախսները,

դ) ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից ծախսները,

ե) արտաքույթի փոխարժեքային տարբերություններից ծախսները,

զ) ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեգրկումից (անհավաքագրելիությունից) ծախսները,

Է) վարկերի և փոխառությունների գծով ծախսները,

ը) անհատուց տրված ակտիվների գծով ծախսները,

թ) ոչ գործառնական այլ ծախսները:

Այլ ծախսների վերլուծությունը նախ պետք է իրականացնել ըստ կազմի ու կառուցվածքի՝ հորիզոնական և ուղղահայաց մեթոդներով (աղյուսակ 9.20): Վերլուծական գործընթացում որոշվում են այդ ծախսների դինամիկան, աճի տեմպերը, կառուցվածքային տեղաշարժերը, տարբեր գործոնների ազդեցությունը և բացահայտվում դրանց մակարդակի նվազեցման պահուստները:

**Ոչ գործառնական ծախսերի կազմի ու կառուցվածքի
վերլուծությունը**

Աղյուսակ 9.20

Հոդվածներ	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ընդունված	
	գումարը, հազ. դ	կառուցվածքը, %	գումարը, հազ. դ	կառուցվածքը, %	ըստ գումարի	ըստ կառուցվածքի
1. Ոչ ընթացիկ ակտիվ-ների վաճառքներից	400	44.44	490	44.95	+90	+0.51
2. Ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից	35	3.89	40	3.67	+5	-0.22
3. Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից	25	2.78	45	4.13	+20	+1.35
4. Ոչ ընթացիկ օչուրական ակտիվների և ոչ օչուրական ակտիվների վերաշափումից	60	6.67	90	8.26	+30	+1.59
5. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից	110	12.22	140	12.84	+30	+0.62
6. Ֆինանսական ներդրումներից	40	4.44	25	2.29	-15	-2.15
7. Վարկերի և փոխառությունների գծով	-	-	-	-	-	-
8. Ակտիվներին վերաբերող շնորհներից	-	-	-	-	-	-
9. Անհատուց տրված ակտիվների գծով	-	-	-	-	-	-
10. Ոչ գործառնական այլ գործունեությունից	230	25.26	260	23.86	+30	-1.70
Ընդամենը	900	100.00	1090	100.00	+190	-

Կազմակերպության կողմից կատարված ոչ գործառնական ծախսերի կազմում ու կառուցվածքում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ: Այդ ծախսերի գումարը տարվա ընթացքում աճել է 190 հազ. դրամի չափով, որը տեղի է ունեցել համարյա բոլոր հոդվածների գծով, բացառությամբ ֆինանսական ներդրումների:

Կազմակերպությունների արտասովոր ծախսերը առաջանում են արտակարգ դեպքերի արդյունքում, որոնց բացահայտումը տրվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

Կազմակերպություններում լինում են նաև այնպիսի ծախսեր, որոնք նախորդ ժամանակաշրջաններում կատարված գործառնությունների գծով թույլ տրված էական սխալների կամ հաշվային քաղաքականության փոփոխության հետևանք են:

Ծախսերի մեջ է ներառվում նաև շահութահարկի գծով ծախսը: Շահութահարկը վճարվում է՝ ելնելով կազմակերպության գործունեության տարեկան արդյունքներից:

Կազմակերպության ծախսերի գործոնային վերլուծության արդյունքներով անհրաժեշտ է բացահայտել դրանց մակարդակի հնարավոր նվազեցման պահուստները: Այդ պահուստները գլխավորապես պայմանավորված են արտադրանքի ինքնարժեքի մակարդակի տնտեսմամբ՝ ուղղակի նյութական և աշխատանքային, ինչպես նաև անուղղակի արտադրական ծախսումների կտրվածքով:

Անհրաժեշտ է նաև բացահայտել իրացման ու վարչական ծախսերի հնարավոր նվազեցման պահուստները:

Կազմակերպության ծախսերի տնտեսման ուղղություններից են նաև գործառնական այլ, արտասովոր ու նախորդ տարիների ծախսերի և շահութահարկի գծով ծախսի նվազեցումը:

Վերլուծական գործընթացում բացահայտված եկամուտների ավելացման և ծախսերի նվազեցման պահուստների գումարը համադրելով միմյանց հետ՝ կստանանք ֆինանսական արդյունքների հնարավոր աճի պահուստների մեծությունը:

S E U S E R

1. Ո՞րն է կազմակերպության տնտեսական գործունեության ընթացքում ստացված եկամուտների կազմը.

- ա) գործառնական, գործառնական այլ, ոչ գործառնական, արտասովոր
- բ) գործառնական, ոչ գործառնական, արտասովոր, նախորդ տարիների
- գ) ոչ գործառնական, գործառնական այլ, արտասովոր, նախորդ տարիների
- դ) ոչ գործառնական, իրացումից հասուլթ, արտասովոր, նախորդ տարիների:

2. Որո՞նք են կազմակերպության գործառնական գործունեությունից ստացված եկամուտների բաղկացուցիչները.

- ա) իրացումից հասուլթ, գործառնական այլ
- բ) իրացումից հասուլթ, ոչ գործառնական
- գ) ոչ գործառնական, գործառնական այլ
- դ) գործառնական այլ, արտասովոր:

3. Իրացումից հասուլթի վերլուծությունը տարվում է հետևյալ ուղղություններով.

- ա) ըստ ծավալի, տեսականու, կառուցվածքի, աշխատատարության
- բ) ըստ ծավալի, որակի, տեսականու, աշխատատարության
- գ) ըստ ծավալի, որակի, համաշափության, կապիտալատարության
- դ) ըստ ծավալի, տեսականու, որակի, համաշափության:

4. Ինչպե՞ս որոշել պայմանագրային պարտավորությունների կատարման աստիճանը.

- ա) իրացման ծավալ $\times 100$: իրացման ծավալ₀

- թ) (իրացման ծավալ₁ - խախտումների գումար) x 100 / իրացման ծավալ₀
- գ) (իրացման ծավալ₀ - խախտումների գումար) x 100 / իրացման ծավալ₀
- դ) (իրացման ծավալ₁ - խախտումների գումար) x 100 / իրացման ծավալ₁:

5. Արտադրանքի իրացման ծավալը հավասար է.

- ա) Δպաշարներ - թողարկման ծավալ
- թ) Δպաշարներ + թողարկման ծավալ
- զ) Δթողարկման ծավալ - պաշարներ
- դ) Δթողարկման ծավալ + պաշարներ:

6. Ո՞րն է իրացումից ստացված հասուլի կազմը.

- ա) պաշարների, հիմնական միջոցների, արտադրանքի, ապրանքների
- թ) աշխատանքների, ծառայությունների, նյութերի, ոչ նյութական ակտիվների
- զ) պաշարների, հիմնական միջոցների, նյութերի, ֆինանսական ակտիվների
- դ) արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների:

7. Գործառնական այլ եկամուտներ են ստացվում.

- ա) այլ պաշարների վաճառքից, գործառնական վարձակալությունից
- թ) տուվմերից և տուգանքներից, հիմնական միջոցների վաճառքից
- զ) նյութական վճարի փոխհատուցումից, ֆինանսական ակտիվների վաճառքից
- դ) պաշարների արժեքի փոփոխությունից, շահաբաժիններից:

8. Ոչ գործառնական եկամուտներ են ստացվում.

- ա) ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից, դեբիտորական պարտքերի կորուստների հակադարձումից
- բ) ֆինանսական ակտիվների վաճառքից, գործառնական վարձակալությունից
- գ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, այլ պաշարների վաճառքից
- դ) ակտիվներին վերաբերող շնորհներից, շահաբաժիններից:

9. Ո՞րն է կազմակերպության տնտեսական գործունեության ընթացքում կատարված ծախսերի կազմը.

- ա) գործառնական, գործառնական այլ, ոչ գործառնական, արտասովոր
- բ) ոչ գործառնական, իրացման, արտասովոր, նախորդ տարիների
- գ) գործառնական, ոչ գործառնական, արտասովոր, նախորդ տարիների
- դ) վարչական, ինքնարժեք, արտասովոր, նախորդ տարիների:

10. Որո՞նք են գործառնական գործունեության ծախսերի բաղկացուցիչները.

- ա) ինքնարժեք, իրացման, վարչական, արտասովոր
- բ) իրացման, վարչական, արտասովոր, գործառնական այլ
- գ) ինքնարժեք, իրացման, վարչական, գործառնական այլ
- դ) ինքնարժեք, իրացման, նախորդ տարիների, արտասովոր:

11. Իրացման ծախսերից են.

- ա) աշխատանքի վճարման, սոցիալական ապահովագրության, հիմնական միջոցների մաշվածության, առողջորական

- թ) ապրանքների փաթեթավորման, տրանսպորտային, մարքեթինգի, գրասենյակային
- զ) մարքեթինգի, գովազդի, ապահովագրության, փոստի
- ռ) աշխատանքի վճարման, տրանսպորտային, տարայի, գովազդի:

12. Վարչական ծախսերից են.

- ա) աշխատանքի վճարման, հիմնական միջոցների մաշվածության, գործուղման, կոմունալ
- թ) ներկայացուցչական, փոստի, հետազոտության, մշակման
- զ) գրասենյակային, խորհրդատվական, սոցիալական ապահովագրության, դատական
- ռ) այլ պաշարների վաճառքի, գովազդի, ապահովագրության, տուգանքների:

13. Գործառնական այլ ծախսերից են.

- ա) այլ պաշարների վաճառքների, երաշխիքային սպասարկման, տուգանքներից, դատական
- թ) հետազորության, գործուղման, գովազդի, փոստի
- զ) մշակման, մարքեթինգի, խորհրդատվական, կոմունալ
- ռ) տույժներից, տրանսպորտային, տարայի, գովազդի:

14. Ոչ գործառնական ծախսերից են.

- ա) ոչ ընթացիկ ակտիվների վաճառքի, ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքի, արտարժուվթի փոխարժեքային տարբերություններից, ոչ ընթացիկ նյութական ակտիվների վերաշափումից
- թ) ոչ նյութական ակտիվների վերաշափումից, վարկերի գծով, անհատուց տրված ակտիվների գծով, դատական
- զ) հիմնական միջոցների վաճառքի, ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքի, ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքի, տրանսպորտային

դ) հիմնական միջոցների վաճառքի, հիմնական միջոցների վերաբնահատումից, տուգանքներից, առևդիտորական:

15. Թվարկվածներից որո՞նք են մտնում հիմնական արտադրության ծախսումների մեջ.

- ա) ուղղակի նյութական, ուղղակի աշխատանքային, օժանդակ արտադրության, անուղղակի արտադրական
- բ) խոտանի շտկման, ուղղակի նյութական, գործուղման, աշխատանքի պաշտպանության
- գ) տեխնիկայի անվտանգության, հիմնական միջոցների մաշվածության, խոտանի շտկման, անուղղակի արտադրական
- դ) օժանդակ արտադրության, այլ արտադրական, աշխատանքի վճարման, հիմնական միջոցների նորոգման:

16. Ի՞նչ տնտեսական տարրերից է բաղկացած արտադրի ինքնարժեքը.

- ա) ուղղակի նյութական ծախսումներ, հիմնական արտադրություն, օժանդակ արտադրություն
- բ) ուղղակի աշխատանքային ծախսումներ, հիմնական արտադրություն, անուղղակի արտադրական ծախսումներ
- գ) ուղղակի նյութական ծախսումներ, ուղղակի աշխատանքային ծախսումներ, անուղղակի արտադրական ծախսումներ
- դ) խոտան և դրա շտկման ծախսումներ, հիմնական արտադրություն, օժանդակ արտադրություն:

17. Արտադրանքի ինքնարժեքը իրենից ներկայացնում է.

- ա) արտադրական և շրջանառության ծախսերի ամբողջությունը
- բ) արտադրական ծախսումների մեծությունը
- գ) արտադրական ծախսումների և իրացման ծախսերի գումարը

η) իրացման և վարչական ծախսերի հանրագումարը:

18. Արտադրանքի ինքնարժեքի մակարդակը առավել ընդհանրացնող ցուցանիշը.

- ա) արտադրանքի փաստացի ինքնարժեքն է
- բ) կարևոր արտադրատեսակների ինքնարժեքն է
- գ) արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսումների մակարդակն է
- դ) արտադրանքի ինքնարժեքն Է ըստ տնտեսական տարրերի:

19. Ըստ ինքնարժեքի մեջ ներառման եղանակի՝ ծախսումները լինում են.

- ա) հաստատուն և փոփոխուն
- բ) ուղղակի և անուղղակի
- գ) ընթացիկ և գալիք
- դ) արտադրության և շրջանառության:

20. Ըստ գործարար ակտիվության մակարդակից ունեցած կախվածության՝ ծախսերը լինում են.

- ա) արտադրության և շրջանառության
- բ) ուղղակի և անուղղակի
- գ) փոփոխուն և հաստատուն
- դ) ընթացիկ և գալիք:

21. Ի՞նչ են բնութագրում փոփոխուն ծախսերը.

- ա) գործարար ակտիվությունը
- բ) արտադրության արդյունավետությունը
- գ) կառավարման արդյունավետությունը
- դ) ընդունված վերարտադրությունը:

22. Ի՞նչ են բնութագրում հաստատուն ծախսերը.

- ա) գործարար ակտիվությունը
- բ) կառավարման արդյունավետությունը

- գ) արտադրության արդյունավետությունը
- դ) արտադրանքի ինքնարժեքը:

23. Ուղղակի նյութական ծախսումների գումարը ներկայացվում է որպես.

- ա) ծախսի նորմա x միավորի գին
- բ) ծախսի նորմա / միավորի գին
- գ) միավորի գին / ծախսի նորմա
- դ) նյութական ծախսումներ / իրացումից հասուլք:

24. Ուղղակի աշխատանքային ծախսումների գումարը ներկայացվում է որպես.

- ա) աշխատողների միջին ցուցակային թիվ / մեկ աշխատողի միջին աշխատավարձ
- բ) աշխատողների միջին ցուցակային թիվ x մեկ աշխատողի միջին աշխատավարձ
- գ) մեկ աշխատողի միջին աշխատավարձ / աշխատողների միջին ցուցակային թիվ
- դ) իրացումից հասուլք / աշխատողների միջին ցուցակային թիվ:

Գ Լ ՈՒ Խ

ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

10.1. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

Սեփական կապիտալը կազմակերպության ակտիվների ձևավորման կարևորագույն աղբյուրն է: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում (26.12.2002) սեփական կապիտալը բնութագրվում է որպես ֆինանսական հաշվետվությունների տարր: Սեփական կապիտալը կազմակերպության ակտիվներն են՝ պարտավորությունները հանելուց հետո: Սեփական կապիտալի մեջ ներկայացվում են՝ կանոնադրական կապիտալը, կուտակված շահույթը, պահուատները և այլ տարրեր: Դրանց մեջ առանցքայինը կանոնադրական կապիտալն է, որի ձևավորումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ և կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով: Ըստ ՀՀՀՀՍ 1՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի՝ յուրաքանչյուր կազմակերպություն իր հաշվետվություններում պետք է բացահայտի՝ հայտարարված, թողարկված, լրիվ վճարված և չվճարված բաժնետոմսերի քանակը, անվանական արժեքը, շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի քանակը տարեսկզբին ու տարեվերջին և այլ կարևոր տեղեկություններ:

Կանոնադրական կապիտալի մեծությունը սահմանվում է բաժնետիրական ընկերության հիմնադիրների ժողովի կողմից հաստատված կանոնադրությամբ: Այն փաստորեն հիմնադիրների կողմից ներդրված միջոցների ընդհանրական գումարն է, որով սահմանվում է պարտատերերի շահերը երաշխավորող գույքի նվազագույն չափը:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ բաց բաժնետիրական ընկերությունների պետական գրանցման պահին կանոնադրական կապիտալի գումարը չպետք է պակաս լինի նվազագույն աշխատավարձի հազարապատիկի, իսկ փակ բաժնետիրական ընկերությունների համար՝ հարյուրապատիկի չափից: Բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալը ձևավորվում է թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերի, իսկ այլ ընկերակցություններում՝ մասնակիցների կողմից տրամադրվող բաժնեմասերի կամ փայերի հաշվին:

Կանոնադրական կապիտալի վերլուծությունը կարևոր նշանակություն ունի ինչպես տվյալ կազմակերպության, այնպես Էլշուկայի բոլոր մասնակիցների համար: Կանոնադրական կապիտալի վերլուծության ժամանակ առաջադրվում են հետևյալ խնդիրները՝

- գնահատել կանոնադրական կապիտալի կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները,
- որոշել կանոնադրական կապիտալի օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները:

Կանոնադրական կապիտալի վերլուծությունը իրականացվում է տեղեկատվական մի շարք տվյալներով՝

- ձև N1. «Հաշվապահական հաշվեկշիռ»,
- ձև N2. «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն»,
- ձև N3. «Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն»,
- սինթետիկ ու անալիտիկ հաշվառման տվյալներ և այլն:

Հաշվապահական հաշվեկշիռի երրորդ բաժնում ներկայացվում է կազմակերպության սեփական կապիտալը՝ իր բաղկացուցիչ տարրերով: Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը բնութագրում է կազմակերպության սեփական կապիտալի հոդվածների մնացորդը հաշվետու ամսաթվի դրությամբ և դրանց շարժը հաշվետու ժամանակաշրջանում:

10.2. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Բաժնետիրական ընկերությունը, կանոնադրական կապիտալի մեծությանը համապատասխան, անվանական արժեքով թղթարկում է բաժնետոմսեր, որոնք բաշխվում են հիմնադիրների միջև՝ կատարված ներդրումներին համապատասխան: Բաժնետոմսերը ըստ բնույթի լինում են հասարակ և արտոնյալ: Հասարակ բաժնետոմսերը կազմում են դրանց ընդհանուր մեծության առնվազն $3/4$ մասը: Բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերության չափով ձևավորվում է Էմիսիոն եկամուտը:

Հասարակ բաժնետոմսի տերը իրավունք ունի մասնակցելու տվյալ ընկերության կառավարման գործընթացին և օժտված է մեկ ձայնի իրավունքով: Այդ բաժնետոմսերը կարող են ազատ շուկայական գներով վաճառվել արժեթղթերի շուկայում: Հասարակ բաժնետոմսերի դիմաց տրվում է շահաբաժին, որի մեծությունը պայմանավորված է ընկերության ստացած գուտ շահությով: Շահաբաժնի չափը որոշվում է բաժնետիրական ընկերության տարեկան ժողովի արդյունքներով:

Ի տարբերություն հասարակ բաժնետոմսերի՝ արտոնյալ բաժնետոմսերի տերը չի կարող մասնակցել բաժնետիրական ընկերության կառավարման գործընթացին, քանի որ նա ձայնի իրավունք չունի: Սակայն արտոնյալ բաժնետոմսը իր տիրոջը ապահովում է շահաբաժնի կայուն և երաշխավորված գումար: Այն վճարվում է ընկերության գուտ շահությի, իսկ դրա չբավարարման դեպքում՝ պահուստների հաշվին:

Ֆինանսական հաշվետվությունների մեջ կանոնադրական կապիտալը ներկայացվում է գուտ գումարով: Այն իրենից ներկայացնում է կանոնադրական կապիտալի և չվճարված ու հետ գնված կապիտալի հանրահաշվական գումարը: Չվճարված կապիտալը գոյանում է այն ժամանակ, երբ բաժնետոմսերի տեղաբաշխման և դրանց դիմաց վճարման պահերը չեն համընկնում: Չվճարված կապիտալը ցույց է տալիս կազմակերպության կա-

Առնադրական կապիտալում ներդրումների գծով բաժնետերերի պարտքը:

Հետ գնված կապիտալը իրենից ներկայացնում է բաժնետերերից հետ գնված բաժնետոմսերի արժեքը: Հետ գնված բաժնետոմսերը կարող են հետագայում իրացվել ավելի բարձր գնով: Բաժնետոմսերի հետգնման արդյունքում նվազում է կազմակերպության ակտիվների և սեփական կապիտալի մեծությունը: Այդ բաժնետոմսերը, մինչև նորից շրջանառության մեջ դրվելը, կորցնում են իրենց իրավունքները: Քանի որ չվճարված և հետ գնված կապիտալ հաշիվները ակտիվային բնույթ ունեն, ուրեմն հարկ է, որ կանոնադրական կապիտալի պասիվային հաշվի մեծությունը նվազեցվի դրանց գումարի չափով:

Կանոնադրական կապիտալի գուտ գումարի փոփոխության վերլուծությունը նախ կատարվում է ըստ վերը ներկայացված կազմի, ապա՝ ըստ կառուցվածքի: Վերլուծական գործընթացում օգտագործվում են ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայց եղանակները՝ նպատակ ունենալով գնահատել կանոնադրական կապիտալի առանձին տարրերի բացարձակ ու հարաբերական շեղումները (այլուսակ 10.1) և բացահայտել դրանց վրա տարրեր գործոնների ազդեցությունը:

Կանոնադրական կապիտալի կազմի ու կառուցվածքի վերլուծությունը

Այլուսակ 10.1


Կանոնադրական կապիտալի կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ըեղումը	
	Գու- մարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	Գու- մարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	Ըստ գու- մարի	Ըստ կառուց- վածքի
1. Հասարակ բաժ- նետոմսեր	4950	75.00	4950	75.00	-	-
2. Արտոնայլ բաժ- նետոմսեր	1650	25.00	1650	25.00	-	-
3. Փայեր	-	-	-	-	-	-
Ընդամենը	6600	100.00	6600	100.00	-	-

Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպության կանոնադրական կապիտալի կազմի ու կառուցվածքի մեջ փոփոխություններ տեղի չեն ունեցել:

10.3. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծական գործընթացի հաջորդ փուլում կատարվում է կազմակերպության կանոնադրական կապիտալի օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների վերլուծություն: Այդ ցուցանիշները ներկայացվում են համակարգի տեսքով (գծ. 10.1):

**Կանոնադրական կապիտալի օգտագործման
արդյունավետության վերլուծությունը**
Գծապատկեր 10.1



Կանոնադրական կապիտալի օգտագործման արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշներից է մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը (β_2): Այդ ցուցանիշը որոշելու համար կազմակերպության ստացած գուտ շահույթից (σ_q) նախ հանվում է արտոնյալ բաժնետոմսերին բաժին ընկնող շահույթի գումարը (β_w), այնուհետև արդյունքը բաժանվում է շրջանառության մեջ գտնվող հասարակ բաժնետոմսերի միջին տարեկան քանակի (β_n) վրա (աղյուսակ 10.2): Ստացված մեծությունը ցուց է տակիս շրջանառության մեջ գտնվող մեկ հասարակ բաժնետոմսին որքան գուտ շահույթ է բաժին ընկնում: Նշված ցուցանիշը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\beta_2 = \frac{\sigma_q - \beta_w}{\beta_n}$$

**Մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող
շահույթի որոշումը**

Աղյուսակ 10.2

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Զուտ շահույթը, հազ. դ.	640	900	+260
2. Հասարակ բաժնետոմսերի միջին տարեկան քանակը, հատ	990	990	-
3. Արտոնյալ բաժնետոմսերին բաժին ընկնող շահույթը, հազ. դ.	96	135	+39
4. Մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը, հազ. դ.	0.550	0.773	+0.223

Աղյուսակի տվյալների համաձայն՝ կազմակերպության մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող շահույթի չափը հաշվետու տարվա ընթացքում աճել է 0.223 հազ. դրամով:

Ծովայական տնտեսության պայմաններում մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահուցի մեծությունը արժեթղթերի շուկայական արժեքի վրա ազդող առավել կարևոր ցուցանիշներից է: Այն արժեթղթերի շուկայում չափազանց զգայուն է, քանի որ դրա հետ առնչվում են ինչպես շահութաբաժնի չափը, այնպես էլ մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գինը:

Մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժնի մեծությունը կախված է ինչպես բաժնետոմսի շահութաբերության մակարդակից, այնպես էլ կազմակերպության տարեկան ընդհանուր ժողովի ընդունած որոշումից այն մասին, թե որքան շահաբաժնի է անհրաժեշտ վճարել մեկ հասարակ բաժնետոմսի դիմաց: Մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժնի չափը (R_{2p}) հաշվարկելու համար անհրաժեշտ է շահաբաժնների գումարը (C_p) բաժանել բաժնետոմսների միջին տարեկան քանակին: Այդ ցուցանիշը որոշվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$R_{2p} = \frac{C_p}{\sum R_w}$$

Մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժնի մեծության հետ միասին որոշվում է նաև շահաբաժնների վճարման գործակիցը: Այն ցուց է տալիս, թե որքան զուտ շահուցը է ծախսվել շահաբաժնների վճարման համար: Շահաբաժնների վճարման գործակիցը (R_{2w}) որոշվում է մի կողմից՝ հասարակ բաժնետոմսների շահաբաժնների մեծության, մյուս կողմից՝ զուտ շահուցի և արտոնյալ բաժնետոմսներին բաժին ընկնող շահուցի գումարի տարբերության հարաբերակցությամբ.

$$R_{2w} = \frac{C_p}{C_g - R_w}$$

Այժմ վերլուծվող կազմակերպության տվյալներով որոշենք մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժնի չափը և շահաբաժնների վճարման գործակիցը (աղյուսակ 10.3):

**ՄԵԿ ԲԱՍԱՐԱԿ ԲԱԺՆԵՏՈՄՄԻՆ ԲԱԺԻՆ ԸՆԿՆՈՂ ՉԱԲԱԲԱԺՆԻ
ՀԱՓԻ և ՉԱԲԱԲԱԺՆԱՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԵՋԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ԱՆԳՈՒԱԿ 10.3**

ՑՈՒցԱՅԻՉՆԵՐ	ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻ	ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐԻ	ԾԵՆՈՒՄԸ
1. Հասարակ բաժնետոմսերի շահաբաժինների գումարը, հազ. դ.	30	40	10
2. Հասարակ բաժնետոմսերի միջին տարեկան քանակը, հատ	990	990	-
3. Զուտ շահույթը՝ առանց արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինների գումարի, հազ. դ.	544	765	+221
4. ՄԵԿ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժնի շափը, հազ. դ.	0.03	0.04	+0.01
5. Շահաբաժինների վճարման գործակիցը	0.055	0.052	-0.03

Անգուակի տվյալները վկայում են, որ մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժնի շափը նախորդ տարվա համեմատ աճել է 0.01 հազ. դրամով, իսկ շահաբաժինների վճարման գործակիցը՝ նվազել 0.03-ով:

Տվյալ ցուցանիշի համար չկա բարձր կամ ցածր մակարդակ: Այստեղ առավել ընդհանուր շափանիշը այն է, որ այդ մակարդակը չպետք է գերազանցի մեկ միավորը: Եթե այդ պայմանը բավարարված է, ապա պարզ է, որ տվյալ կազմակերպությունը հաշվետու տարում շահաբաժնի վճարման համար ապահովել է շահույթի բավարար գումար: Հակառակ պարագայում խոսքը կազմակերպության անարդյունավետ շահաբաժնային քաղաքականության կամ ֆինանսական դժվարությունների մասին է: Դիտարկվող կազմակերպությունում շահաբաժնների վճարման գործակիցի արժեքը խիստ ցածր է:

Կարելի է որոշել նշված գործակիցների փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցությունը: Հասարակ բաժնետոմսե-

Իին բաժին ընկնող շահաբաժինների գումարի փոփոխությունը (+10 հազ. դ.) պայմանավորված է միայն մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժնի չափի ազդեցությամբ (0.01×990): Հաջորդ գործոնը՝ հասարակ բաժնետոմսերի միջին տարեկան քանակը, հաշվետու տարվա ընթացքում փոփոխության չի ենթարկվել:

Հասարակ բաժնետոմսերի շահաբաժինների վրա ազդում են նաև առանց արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինների գումարի գուտ շահուցի ($+221 \times 0.055 = +12.2$) և շահաբաժինների վճարման գործակցի փոփոխությունները ($-0.003 \times 765 = -2.2$):

Հասարակ բաժնետոմսերը վաճառվում են արժեթղթերի շուկայում և ունեն իրենց գինը: Մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գինը (β_q) իրենից ներկայացնում է հասարակ բաժնետոմսերի շահաբաժինների գումարի և բանկային ավանդների միջին տարեկան տոկոսադրուցի հարաբերությունը (β_w)՝

$$\beta_q = \frac{\bar{\sigma}_p}{\bar{\sigma}_w}$$

Վերուծվող կազմակերպության տվյալներով որոշենք մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գինը (այլուսակ 10.4):

Մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գինի որոշումը Այլուսակ 10.4

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Հասարակ բաժնետոմսերի շահաբաժինների գումարը, հազ. դ.	30	40	+10
2. Բանկային ավանդների միջին տարեկան տոկոսադրուցը, %	11.0	12.0	-1.0
3. Մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գինը, դ.	272.7	333.3	+60.6

Հաշվետու տարվա ընթացքում մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գինը ավելացել է, որը դրական երևուցի է:

Կանոնադրական կապիտալի օգտագործման արդյունավետության մակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշներից է նաև բաժնետոմսերի կուրսը (β_4): Դրա համար նախապես որոշվում է մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ կանոնադրական կապիտալը բաժանելով թողարկված բաժնետոմսերի քանակին: Այնուհետև բաժնետոմսերի կուրսը որոշելու համար անհրաժեշտ է մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գինը հարաբերել մեկ արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքին ($\beta_{աս}$)

$$\beta_4 = \frac{\beta_g}{\beta_{աս}}$$

Հասարակ բաժնետոմսերի կուրսը նախորդ տարում կազմել է՝ $272.7 : 5000 = 0.054$, իսկ հաշվետու տարում՝ $333.3 : 5000 = 0.066$: Այսպիսով՝ բաժնետոմսերի կուրսը աճել է:

Վերլուծական գործնաթացում որոշվում է մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գնի և շահույթի հարաբերակցությունը (β_g/β_2): Այն արտահայտում է տվյալ կազմակերպության և նրա բաժնետերերի հարաբերությունը: Այդ գործակիցը որոշելու համար մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գինը պետք է բաժանել մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի վրա՝

$$\beta_g/\beta_2 = \frac{\beta_g}{\beta_2}$$

Մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գնի և շահույթի հարաբերակցությունը նախորդ տարում կազմել է 0.50 ($0.2727 : 0.550$), իսկ հաշվետու տարում՝ 0.43 ($0.3333 : 0.773$): Ինչպես տեսնում ենք, նշված հարաբերակցությունը նվազել է:

Կանոնադրական կապիտալի օգտագործման արդյունավետության աստիճանը գնահատվում է նաև մեկ հասարակ բաժնետոմսի շահութաբերության մակարդակով (Φ_{p2}): Այն ուղիղ համեմատական է մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող

շահաբաժնի գործակցին և հակադարձ համեմատական՝ նրա շուկայական գնին.

$$Q_{P2} = \frac{Q_{2q}}{R_q}$$

Որոշենք մեկ հասարակ բաժնետոմսի շահութաբերության մակարդակը: Այն հաշվետու տարում կազմել է 0.16 (0.052 : 0.3333), որը գիշում է նախորդ տարվա մակարդակը՝ 0.20 (0.055 : 0.2727):

Կանոնադրական կապիտալի օգտագործման արդյունավետության աստիճանը բնութագրող ցուցանիշների վերլուծությունը նպատակահարմար է անցկացնել վերջին մի քանի տարիների կտրվածքով՝ ըստ դինամիկայի, դրանց զարգացման միտումների և համամասնությունների վերաբերյալ առավել բազմակողմանի պատկերացում ունենալու համար:

S E U S E R

1. Թվարկվածներից որո՞նք են մտնում կանոնադրական կապիտալի կազմի մեջ.

- ա) չվճարված կապիտալ, հետ գնված կապիտալ, փայեր, պահուստային կապիտալ
- բ) հասարակ բաժնետոմսեր, արտոնյալ բաժնետոմսեր, բաժնեմասեր, փայեր
- գ) բաժնեմասեր, փայեր, պահուստային կապիտալ, միջանկյալ շահաբաժններ
- դ) շբաշխված շահուց, ֆինանսական արդյունք, Էմիսիոն եկամուտ, չվճարված կապիտալ :

2. Ի՞նչ ուղղություններով է կատարվում կանոնադրական կապիտալի վերլուծությունը.

- ա) կազմի ու կառուցվածքի, արդյունավետության ցուցանիշների
- բ) կազմի ու կառուցվածքի, ձևավորման աղբյուրների,
- գ) արդյունավետության ցուցանիշների, ձևավորման աղբյուրների
- դ) ձևավորման աղբյուրների, օպտիմալացման:

3. Կանոնադրական կապիտալի վերլուծության ժամանակ օգտագործվում են հետևյալ մեթոդները.

- ա) հորիզոնական, ուղղահայաց, ինդեքսային, գրաֆիկական
- բ) հորիզոնական, ուղղահայաց, շղթայական տեղադրումների, տարբերությունների
- գ) խմբավորումների, ուղղահայաց, ինդեքսային, տարբերությունների
- դ) խմբավորումների, հաշվեկշռային, ինդեքսային, գրաֆիկական:

4. Ինչպե՞ս է որոշվում մեկ բաժնետոմսի անվանական արժեքը.

- ա) կանոնադրական կապիտալ / թողարկված բաժնետոմսերի քանակ
- բ) թողարկված բաժնետոմսերի քանակ / կանոնադրական կապիտալ
- գ) շուկայական գին / շահաբաժինների գումար
- դ) շահաբաժինների գումար / շուկայական գին:

5. Ինչպե՞ս է որոշվում մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժնի չափը.

- ա) շահաբաժինների գումար / բաժնետոմսերի միջին տարեկան քանակ
- բ) բաժնետոմսերի միջին տարեկան քանակ / շահաբաժինների գումար
- գ) իրացումից շահույթ / բաժնետոմսերի միջին տարեկան քանակ
- դ) բաժնետոմսերի միջին տարեկան քանակ / իրացումից շահույթ:

6. Ինչպե՞ս է որոշվում մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գինը.

- ա) բանկային տոկոսադրույթ / շահաբաժինների գումար
- բ) շահաբաժինների գումար / բանկային տոկոսադրույթ
- գ) իրացումից շահույթ / բանկային տոկոսադրույթ
- դ) շահաբաժինների գումար / գուտ շահույթ:

7. Ինչպե՞ս է որոշվում մեկ հասարակ բաժնետոմսի շահույթաբերության մակարդակը.

- ա) շուկայական գին / շահաբաժինների գումար
- բ) գուտ շահույթ / շահաբաժինների գումար
- գ) գուտ շահույթ / շուկայական գին
- դ) շահաբաժնի գործակից / շուկայական գին:

Գ Լ ՈՒ Խ XI

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

11.1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆՆԵՐԸ

Ծովայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր կազմակերպություն իր տնտեսական գործունեությունից ստանում է ֆինանսական արդյունքներ, որոնք բնութագրվում են շահուզթի (վճարի) մեծությամբ: Շահուզթ համարվում է կազմակերպության տնտեսական գործունեության արդյունավետությունը բնութագրող հիմնական, ամփոփ և սինթետիկ ցուցանիշը:

ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահուզթ կամ վճար, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտի համաձայն՝ գուտ շահուզթը (վճարը) կազմակերպության սովորական գործունեությունից և արտասովոր հոդվածներից առաջացող ֆինանսական արդյունքն է՝ հաշվի առած էական սխալները և հաշվային քաղաքականության փոփոխությունները:

Սովորական գործունեությունը տվյալ կազմակերպության կողմից իրականացվող և դրա հետ առնչվող գործունեությունն է: Գործնականում եկամուտների և ծախսների բոլոր հոդվածների միջոցով որոշված, տվյալ ժամանակաշրջանի գուտ շահուզթը կամ վճարը, սովորական գործունեության արդյունքն են: Այն իր հերթին ստորաբաժանվում է գործառնական և ոչ գործառնական գործունեության:

Արտասովոր բնույթի եկամուտները և ծախսները հատակորեն տարբերվում են կազմակերպության սովորական գործունեությունից ստացված ֆինանսական արդյունքներից, հետևաբար՝ չի ակնկալվում դրանց պարբերականությունը: Ֆինանսական

արդյունքների մեջ են ներառվում նաև նախորդ տարիների եկամուտներն ու ծախսերը և շահութահարկի գծով ծախսը:

Կազմակերպության ֆինանսական արդյունքները ձևավորվում են տվյալ ժամանակաշրջանում հաշվեգրման սկզբունքով ճանաչված եկամուտների և ծախսերի համադրումից:

Ըստ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի (26.12.2002թ.)՝ եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների ավելացումն է, որը տեղի է ունենում ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման ձևով, և որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ մասնակիցների կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների հետևանքով սեփական կապիտալի ավելացման:

Ծախսը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների նվազումն է, որը տեղի է ունենում ակտիվների արտահոսքի կամ նվազման կամ պարտավորությունների առաջցման կամ աճի ձևով, և որը հանգեցնում է սեփական կապիտալի նվազման, բացառությամբ մասնակիցների միջև սեփական կապիտալի բաշխման հետևանքով դրա նվազման դեպքի:

Ծահովաթ կազմակերպության կենսագործունեության հիմնական լծակներից է: Կազմակերպության գործունեության ֆինանսավորման համար շահուվարի առկայությունը ստեղծում է կայուն հիմք: Դա հնարավորություն է տալիս կազմակերպությանը իրականացնել ընդհայնված վերարտադրություն, ապահովել անձնակազմի և սեփականատերների հարաճուն պահանջմունքները ու կատարել բյուջեի, բանկերի և այլ կազմակերպությունների նկատմամբ ունեցած պարտավորությունները: Դրա համար անհրաժեշտ է բոլոր կազմակերպություններում մշտապես անցկացնել վերլուծական հետազոտություններ՝ շահուվարի ձևավորման, բաշխման և օգտագործման ուղղությամբ: Այդ վերլուծությունը կարևոր նշանակություն ունի նաև արտաքին սուբյեկտների համար (հարկային տեսչություն, ֆինանսական ու վիճակագրական օղակներ, բանկային համակարգ և այլն):

Կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծության խնդիրներն են՝

- ուսումնասիրել շահուցի կազմն ու կառուցվածքը և գնահատել աճի տեմպերը,
- իրականացնել արտադրանքի իրացումից ստացված շահուցի գործունային վերլուծություն,
- գնահատել «ծախսեր - ծավալ - շահուցի» հարաբերակցությունը,
- վերլուծել գործառնական այլ և ոչ գործառնական գործունեության ֆինանսական արդյունքները,
- հետազոտել կուտակված շահուցի բաշխման և օգտագործման կարգը:

Ֆինանսական արդյունքների վերլուծության եղանակներից են՝

- հորիզոնական վերլուծություն՝ ընթացիկ ժամանակաշրջանի յուրաքանչյուր ցուցանիշի փոփոխության ուսումնասիրությունը,
- ուղղահայաց վերլուծություն՝ համապատասխան ցուցանիշների կառուցվածքի ուսումնասիրությունը,
- տրենդային վերլուծություն՝ ֆինանսական արդյունքների ցուցանիշների ուսումնասիրությունն ըստ դինամիկայի,
- գործոնային վերլուծություն՝ ֆինանսական արդյունքների փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցության բացահայտումը:


Ֆինանսական արդյունքների վերլուծության համար օգտագործվում են հետևյալ տեղեկատվական աղյուրները՝

- կազմակերպության բիզնես-ծրագիրը,
- ձև N2. «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն»,
- ձև N5. «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ»,
- սինթետիկ և անալիտիկ հաշվառման տվյալներ և այլն:

11.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացնենք ֆինանսական արդյունքների վերլուծության գծապատկերը:

Ֆինանսական արդյունքների վերլուծությունը Գծապատկեր 11.1



Հստ ՀՀՀՀՍ 1՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կազմակերպությունը պետք է ներկայացնի ծախսերի բաժանումը՝ օգտագործելով կամ ծախսերի բնույթի, կամ կազմակերպության մեջ դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը:

Ծախսերի բաժանման առաջին մեթոդը կոչվում է ծախսերի բնույթի մեթոդ, որի համաձայն՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում դրանք միավորվում են ըստ իրենց բնույթի (մաշվածություն, նյութական, աշխատանքային ծախսեր և այլն): Այս մեթոդը հեշտ կիրառելի է փոքր կազմակերպություններում, որտեղ անհրաժեշտ չէ գործառնական ծախսերը բաշխել ըստ գործառույթների:

Ծախսերի բաշխման մլուս մեթոդը կոչվում է ծախսերի գործառույթի կամ «վաճառքի ինքնարժեքի» մեթոդ: Այս մեթոդի համաձայն՝ ծախսերը դասակարգվում են ըստ իրենց գործառույթի՝ որպես վաճառքի ինքնարժեքի, իրացման կամ վարչական գործունեության հետ կապված ծախսերի մաս: Նման ձևով ներկայացնեն օգտագործողների համար հաճախ ավելի անհրաժեշտ տեղեկատվություն է ապահովում, քան ծախսերի՝ ըստ բնույթի դասակարգում:

Նշված մեթոդներից որևէ մեկի ընտրությունը կախված է ինչպես պատմական և արտադրական գործոններից, այնպես էլ կազմակերպության բնույթից:

Կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծության ժամանակ օգտագործվում են «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության» մեջ ներկայացված հետևյալ ցուցանիշները՝ համախառն շահույթ, արտադրանքի իրացումից շահույթ, գործառնական այլ գործունեությունից շահույթ, ոչ գործառնական գործունեությունից շահույթ, սովորական գործունեությունից շահույթ, արտասովոր դեպքերից շահույթ, գուտ շահույթ՝ մինչև հարկումը և գուտ շահույթ՝ հարկումից հետո:

Համախառն շահույթը արտադրանքի իրացումից ստացված հասույթի և ինքնարժեքի տարբերությունն է:

Արտադրանքի իրացումից շահույթը համախառն շահույթի և իրացման ու վարչական ծախսերի տարբերությունն է:

Գործառնական գործունեությունից շահույթն արտադրանքի իրացումից ստացված շահույթի և գործառնական այլ եկամուտների ու ծախսերի հաճրագումարն է:

Ոչ գործառնական շահույթը կազմակերպության ոչ գործառնական գործունեությունից ստացված եկամուտների և ծախսերի դրական տարբերությունն է:

Սովորական գործունեությունից շահույթը գործառնական և ոչ գործառնական գործունեությունից ստացված եկամուտների ու ծախսերի դրական տարբերությունն է:

Արտասովոր դեպքերից շահույթի մեծության մեջ ներկայացվում է այն եկամուտների և ծախսերի դրական տարրերությունը, որոնք բնութագրական չեն կազմակերպության գործունեության համար, և որոնց առաջացումը անսպասելի է ու կախված չէ նրա ընդունած որոշումներից:

Զուտ շահույթ՝ մինչև հարկումը սովորական գործունեությունից և արտասովոր դեպքերից ստացված շահույթի հանրագումարն է:

Զուտ շահույթ՝ հարկումից հետո ցուցանիշը ցույց է տալիս նախորդ ցուցանիշից շահութահարկի գծով ծախսի նվազեցման մեծությունը:

Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթը կամ վճարը բաժանելով նույն ժամանակաշրջանում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի միջին կշռված թվի վրա:

Մեկ բաժնետոմսին ընկնող նոսրացված շահույթը հաշվարկվում է տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթին ավելացրած նոսրացնող հետևանք ունեցող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի դիմաց հաշվեգրված շահաբաժինների ու տոկոսների գումարը առանց հարկերի մեծության և սովորական բաժնետոմսերի թվին ավելացրած լրացրության փոխարկված պոտենցիալ բաժնետոմսերի թվի հարաբերակցությամբ:

Վերլուծական հետազոտության ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել ֆինանսական արդյունքների կազմն ու կառուցվածքը (աղյուսակ 11.1) և գնահատել աճի տեմպերը (աղյուսակ 11.2):

Հաշվետու տարում կազմակերպության տնտեսական գործունեությունից ստացված ֆինանսական արդյունքները (շահույթ), նախորդ տարվա համեմատ, աճել են 325 հազ. դրամի չափով: Այդ աճը տեղի է ունեցել ֆինանսական արդյունքների բոլոր բաղկացուցիչների գծով:

**Ֆինանսական արդյունքների կազմի ու կառուցվածքի
վերլուծությունը**

Աղյուսակ 11.1

Ֆինանսական արդյունքների կազմ	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ծեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Արտադրանքի իրացնիքից շահույթը	900	112.50	1300	115.56	+400	+3.06
2. Գործառնական այլ գործունեությունից շահույթը	100	12.50	115	10.22	+15	-2.28
3. Գործառնական շահույթը	1000	125.00	1415	125.78	+415	+0.78
4. Ոչ գործառնական վճարը	200	25.00	290	25.78	+90	+0.78
5. Սովորական գործունեությունից շահույթը	800	100.00	1125	100.00	+325	-
6. Արտասովոր դեպքերից շահույթը (վճար)	-	-	-	-	-	-
Ընդամենը	800	100.00	1125	100.00	+325	-

Տվյալ կազմակերպությունը, նախորդ տարվա համեմատ, իր գործառնական գործունեությունից ստացել է 415 հազ. դ. ավելի շահույթ, իսկ ոչ գործառնական գործունեությունից՝ 90 հազ. դրամով ավելի վճար: Սակայն սովորական գործունեության արդյունքներով արձանագրվել է շահույթ, որի փոփոխությունը կազմել է 325 հազ. դրամով: Արտասովոր դեպքերից կազմակերպությունը ֆինանսական արդյունքներ չի արձանագրել:

Ֆինանսական արդյունքների կազմում տեղի են ունեցել կառուցվածքային տեղաշարժեր: Դրանց ընդհանուր գումարի մեջ, գործառնական շահույթի տեսակարար կշռի նվազեցման հետ մեկտեղ, նույն չափով ավելացել է ոչ գործառնական վճարի բաժինը:

Ֆինանսական արդյունքների աճի տեմպերի որոշումը Աղյուսակ 11.2

Ֆինանսական արդյունքների կազմը	Նախորդ տարի, հազ. դ.	Հաշվետու տարի, հազ. դ.	Աճի տեմպը, %
1. Արտադրանքի իրացումից շահուցքը	900	1300	144.44
2. Գործառնական այլ գործունեությունից շահուցքը	100	115	115.00
3. Գործառնական շահուցքը	1000	1415	141.50
4. Ոչ գործառնական վճար	200	290	145.00
5. Սովորական գործունեությունից շահուցքը	800	1125	140.63
6. Արտասովոր դեպքերից շահուցքը (վճար)	-	-	-
Ընդամենը	800	1125	140.63

Ֆինանսական արդյունքների աճի տեմպը, նախորդ տարվա համեմատ, կազմել է 140.63%: Արտադրանքի իրացումից ստացված շահուցքի աճի տեմպը 144.44% է, որը գնահատվում է դրականորեն: Ոչ գործառնական վճարի շեշտակի ավելացման պատճառով՝ դրա աճի տեմպը ամենաբարձրն է՝ 145.0%:

11.3. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՇԱՀՈՒՅԹԻ ԳՈՐԾՈՆԱՑԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական արդյունքների ընդհանուր մեծության մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունի արտադրանքի իրացումից ստացված շահուցքը: Այն իրենից ներկայացնում է զուտ եկամտի մի մասը, որը ձևավորվում է արտադրական գործընթացում և իրացվում շրջանառության ոլորտում: Արտադրանքի իրացումից հետո զուտ եկամուտը ստանում է շահուցքի ձև: Շահուցքը իրացումից ստացված հասուցքի և ինքնարժեքի, իրացման ու վարչական ծախսերի տարբերությունն է:

Արտադրանքի իրացումից ստացված շահույթի փոփոխությունը կազմել է՝

$$1300 - 1100 = +200 \text{ հազ. դ.:$$

Արտադրանքի իրացումից ստացված շահույթի փոփոխության վրա անհրաժեշտ է որոշել հետևյալ գործոնների՝ վաճառքի գների, ինքնարժեքի, իրացման ծավալի, տեսականու ու կառուցվածքի, իրացման և վարչական ծախսերի ազդեցությունը (այսուսակ 11.3):

Արտադրանքի իրացումից ստացված շահույթի գործոնային վերլուծությունը

Այլուսակ 11.3

Ցուցանիշներ	Նախատեսված, հազ. դ.	Փաստացին նախատեսվածով, հազ. դ.	Փաստացի, հազ. դ.
1. Արտադրանքի իրացումից հասույթ	15100	15500	15700
2. Արտադրանքի ինքնարժեք	12100	12200	12300
3. Համախառն շահույթ	3000	3300	3400
4. Իրացման ծախսեր	750	810	820
5. Վարչական ծախսեր	1150	1220	1280
6. Արտադրանքի իրացումից շահույթ	1100	1270	1300

Վաճառքի գների փոփոխության ազդեցությունը: Շահույթի մեծությունը և վաճառքի գների փոփոխությունը գտնվում են ուղղի համեմատական կախվածության մեջ՝ գների բարձրացումը հանգեցնում է շահույթի գումարի աճի, և ընդհակառակը: Շահույթի վրա վաճառքի գների փոփոխության ազդեցությունը որոշելու համար անհրաժեշտ է փաստացի հասույթը համադրել փաստացի նախատեսվածով, որը կազմակերպությունը կստանա նախատեսված գներով իրացման փաստացի ծավալի դիմաց՝

$$15700 - 15500 = +200 \text{ հազ. դ.:$$

Վաճառքի գների վրա իրենց հերթին կարող են ազդել իրացվող արտադրանքի որակը, վաճառքի շուկաները, շուկայական մրցակցության աստիճանը, սղանը և այլ գործոնները: Այդ գործոնների մեջ ամենակարևորը արտադրանքի որակի մակարդակն է, քանի որ բարձրորակ արտադրանքի համար սահմանվում են բարձր գներ, և ընդհակառակը: Վերլուծվող կազմակերպությունում վաճառքի գների հաշվին շահույթի աճը ամբողջ չութամբ պայմանավորված է արտադրանքի բարձր որակով:

Ինքնարժեքի փոփոխության ազդեցությունը: Իրացված արտադրանքի ինքնարժեքը և շահույթը իրար նկատմամբ ունեն հակադարձ համեմատական կախվածություն՝ ինքնարժեքի մակարդակի անկումը նպաստում է շահույթի աճին, և ընդհակառակը: Արտադրանքի ինքնարժեքի փոփոխության ազդեցությունը շահույթի վրա որոշվում է որպես փաստացի ինքնարժեքի և նրա փաստացին նախատեսվածով վերահաշվարկված մեծության տարբերություն՝

$$12300 - 12200 = +100 \text{ հազ. դ.}:$$

Իրացման ծավալի փոփոխության ազդեցությունը: Արտադրանքի իրացման ծավալի փոփոխությունը շահույթի վրա կարող է ունենալ կամ դրական, կամ բացասական ազդեցություն: Բարձր շահութաբեր արտադրատեսակների իրացման ծավալի ավելացման հաշվին կմեծանա շահույթի գումարը: Նշված գործոնի ազդեցությունը շահույթի վրա բացահայտելու համար, վերջինիս նախատեսված մեծությունը պետք է բազմապատկել իրացման ծավալի հավելանի տեմպով և արդյունքը բաժանել 100%-ի՝

$$(15500 \times 100 : 15500) - 100 = +2.7\%,$$

$$+2.7\% \times 1100 : 100 = +30 \text{ հազ. դ.}:$$

Արտադրանքի տեսականու և կառուցվածքի փոփոխության ազդեցությունը: Արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ առանձին արտադրատեսակների շահութաբերության մակարդակը տարբեր է, որն ուղիղ համեմատական ազդեցություն է ունենում շահույթի վրա: Այդ գործոնի ազդեցության որոշման համար վերահաշվարկված շահույթը համեմատվում է նախատեսվածի

Իետ՝ վերջինս ճշգրտելով իրացման ծավալի փոփոխության մասով՝

$$1270 - (1100 + 30) = +140 \text{ հազ.դ.:$$

Իրացման ծախսերի փոփոխության ազդեցությունը: Ծահուցիքի վրա իրացման ծախսերի փոփոխությունը հակադարձ համեմատական ազդեցություն է ունենում: Այն որոշվում է որպես այդ ծախսերի փաստացի և վերահաշվարկված մեծության տարբերություն՝

$$820 - 810 = +10 \text{ հազ.դ.:$$

Վարչական ծախսերի փոփոխության ազդեցությունը: Ինչպես նախորդ, այնպես էլ այս գործոնի դեպքում ծախսերի մեծությունը և շահուցիքի գումարը հակադարձ համեմատական են: Ծահուցիքի փոփոխության վրա վարչական ծախսերի ազդեցությունը որոշվում է ինչպես նախորդ գործոնի դեպքում՝

$$1280 - 1220 = +60 \text{ հազ.դ.:$$

Արտադրանքի իրացումից ստացված շահուցիքի վրա ազդող գործոնները ամփոփ ներկայացնենք աղյուսակի տեսքով (աղյուսակ 11.4):

**Արտադրանքի իրացումից ստացված շահուցիքի վրա ազդող
գործոնների ամփոփ հաշվարկը**

Աղյուսակ 11.4

Գործոնների ազդեցությունը	Հաշվարկը, հազ.դ.
1. Արտադրանքի վաճառքի գների աճը	+200
2. Արտադրանքի ինքնարժեքի աճը	-100
3. Արտադրանքի իրացման ծավալի ավելացումը	+30
4. Արտադրանքի տեսականու կառուցվածքի բարելավումը	+140
5. Իրացման ծախսերի գերածախսը	-60
6. Վարչական ծախսերի գերածախսը	-10
Ընդամենը	+200

Արտադրանքի իրացումից ստացված շահույթի վրա բացասական ազդեցություն են ունեցել արտադրանքի ինքնարժեքի աճը և իրացման ու վարչական ծախսերի գերածախսը: Դրանք հանդիսանում են արտադրանքի իրացումից ստացված շահույթի ծավալի հնարավոր ավելացման պահուատները:

11.4. «ԾԱԽՍԵՐ –ԾԱՎԱԼ –ՇԱՀՈՒՅԹ» ՀԱՐՍԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպության ֆինանսական արդյունքների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է նաև գնահատել «ծախսեր - ծավալ - շահույթ» ցուցանիշների միջև հարաբերակցությունը: Այն հնարավոր է իրականացնել միայն «դիրեկտկոստինգ» համակարգով ծախսերի հաշվառումը կազմակերպելու պայմաններում:

Վերլուծական հետազոտության ընթացքում ուսումնասիրվում է արտադրական կազմակերպության գործունեությունը բնութագրող առավել կարևոր ցուցանիշներից շահույթի կախվածությունը, և դրա հիման վրա պայմաններ են ստեղծվում կառավարելու շահույթի ձևավորման գործընթացը: «Դիրեկտկոստինգ» համակարգի կիրառման դեպքում լիովին հաշվի է առնվում այդ ցուցանիշների փոխկապվածությունը՝ բացահայտելով դրանց վրա տարբեր գործոնների ազդեցությունը:


«Ծախսեր - ծավալ - շահույթ» ցուցանիշների միջև ֆունկցիոնալ կախվածությունը ներկայացվում է հետևյալ գծապատճերի տեսքով (գծապատճեր 11.2).

Մեզ հայտնի «Ծախսեր - ծավալ» հարաբերակցության գծապատճերը (գծ. 9.2) լրացնելով իրացումից ստացվող հասույթը ցուց տվող կորով, ստացվում է «ծախսեր-ծավալ-շահույթ» գծապատճերը: Ծահույթի կորը ցուց է տալիս արտադրության տարբեր ծավալների դեպքում ծախսերի ընդհանուր ծավալի և հասույթի գումարների սպասվելիք փոխհարաբե-

րությունը: Շահուցի կորը կարելի է պատկերել ինչպես ամբողջ կազմակերպության և տարրեր ստորաբաժանումների, այնպես է առանձին արտադրատեսակների համար: Շահուցի կորի համար արտադրության ծավալի չափիչ կարող է լինել իրացումից ստացվող հասուցի գումարը:

**«Ծախսեր - ծավալ - շահուցի» ցուցանիշների
հարաբերակցությունը**

Գծապատկեր 11.2



Արդեն դիտարկել ենք ծախսերի կորի $\sigma = \zeta_0 + (\Phi_\delta \times \Phi)$ հավասարումը: Այժմ դիտարկենք իրացումից ստացվող հասուցի կորի հավասարումը (այսուակ 11.5):

**«Ծախսեր - ծավալ - շահույթ» հարաբերակցության
վերլուծությունը**

Աղյուսակ 11.5

Ցուցանիշներ	Հաշվարկը
1. Արտադրանքի ծավալը, հազ. դ.	4800
2. Հաստատուն ծախսերը, հազ. դ.	1000
3. Փոփոխուն ծախսերը, հազ. դ.	1800
4. Արտադրանքի քանակը, հատ	240
5. Միավորի գինը, հազ. դ.	20.0
6. Տեսակարար փոփոխուն ծախսերը, հազ. դ.	7.5
7. Արտադրանքի կրիտիկական ծավալը, հազ. դ.	$1000 : (20.0 - 7.5) = 80$ հատ, $80 \times 20.0 = 1600$
8. Շահույթը, հազ. դ.	2000

Ծահույթի կորի վրա հասույթի մեծությունը նշվում է ելնելով այն ենթադրությունից, որ միավոր արտադրանքի վաճառքի գինը հաստատուն է: Իրացումից հասույթի հանրագումարը (Σ) հավասար է միավոր արտադրանքի վաճառքի գնի (Φ) և արտադրանքի քանակի (Ψ) արտադրյալին ($\Sigma = \Phi \times \Psi$): Իրացումից ստացված հասույթի և փոփոխուն ծախսերի տարբերությունը կազմում է սահմանային շահույթ: Վերջինս միաժամանակ իրենից ներկայացնում է հաստատուն ծախսերի և շահույթի հանրագումարը:

Այն կետը, որտեղ ծախսերի ընդհանուր գումարը հավասար է հասույթի ընդհանուր գումարին, կոչվում է կրիտիկական ծավալի կետ: Եթե իրացման ծավալը այդ կետից փոքր է, կազմակերպությունը վնասներ է կրում, իսկ եթե մեծ է շահույթը և ստանում (անվտանգության գոտում): Ցանկացած ծավալի դեպքում շահույթի կամ վնասի գումարը որոշվում է տվյալ ծախսերի և հասույթի կորերի միջև հեռավորությամբ: Կրիտիկական ծավալի կետը որոշվում է հետևյալ կերպ:

- հասույթը հավասար է

$$\zeta = \Phi \times \Phi = 80 \times 20.0 = 1600 \text{ հազ.դ.,}$$

- Ընդհանուր ծախսերի գումարը հավասար է՝

$$\sigma = \zeta + (\Phi_{\text{ոճ}} \times \Phi) = 1000 + (7.5 \times 80) = 1600 \text{ հազ.դ.։}$$

Քանի որ կրիտիկական ծավալի կետը արտահայտում է ծախսերի և հասուցիչ հավասարությունը՝ $\sigma = \zeta$, ապա՝

$$\Phi \times \Phi = \zeta + (\Phi_{\text{ոճ}} \times \Phi) :$$

Արտադրության կրիտիկական ծավալի բանաձնը կարող է արտահայտվել նաև հետևյալ կերպ՝

$$\Phi = \zeta : (\Phi - \Phi_{\text{ոճ}}) = 1000 : (20.0 - 7.5) = 80 \text{ հատ,}$$

այսինքն՝ այն որոշվում է հաստատուն ծախսերը հարաբերելով արտադրանքի միավորի գնի և տեսակարար փոփոխուն ծախսերի տարբերությանը:

Նույն կորի օգնությամբ կարելի է ցուց տալ, թե ինչպես է ծավալի փոփոխության պատճառով աճում միավոր արտադրանքի միջին շահուցիքը։ Դա պայմանավորված է այն առանձնահատկությամբ, որ արտադրանքի ծավալի աճի դեպքում միավոր արտադրանքի համար ծախսերը նվազում են՝ հաստատուն ծախսերը բաշխվում են ավելի շատ բանակությամբ արտադրատեսակների միջև, և միավոր արտադրանքին ավելի քիչ հաստատուն ծախսեր են բաժին ընկնում։ Արտադրանքի յուրաքանչյուր միավորի փոփոխությունը առաջ է բերում շահուցիքի փոփոխություն։ Այդ իսկ պատճառով արտադրության ծավալի վերահսկողությունը անընդհատ կազմակերպության կառավարիչների ուշադրության կենտրոնում է։

Այսպիսով՝ արտադրանքի տարբեր ծավալների դեպքում միավոր արտադրանքին բաժին ընկնող շահուցիքը տարբեր է։ Սակայն գոյություն ունի ևս մի հասկացություն, որը հաստատուն է համապատասխան սահմաններում արտադրության ցանկացած ծավալի դեպքում։ Դա սահմանային շահուցիքն է։ Այս մեծությունը լինելով հաստատուն՝ շատ հարմար է արտադրության ցանկացած ծավալի դեպքում հասուցիչ և ծախսերի հարաբերակցության արտացոլման համար։ Յուրաքանչյուր մեկ միավորով արտադրության աճի դեպքում շահուցիքի մեծությունը

փոփոխվում է: Ծահուզի ընդհանուր գումարի (Ը) բանաձևի կազմման համար կարող ենք կիրառել նոր մեծություն՝

$$\text{Ը} = (\Phi - \Phi_d) \times \Phi - \zeta$$

Ծահուզի ընդհանուր գումարը իրենից ներկայացնում է արտադրանքի ծավալով բազմապատկված և հաստատուն ծախսերի գումարով նվազեցված սահմանային շահուզը: Այս դեպքում արտադրության կրիտիկական ծավալի բանաձևը կը նդրւնի հետևյալ տեսքը՝

$$\text{Կրիտիկական ծավալ} = \frac{\text{Հաստատուն ծախսեր}}{\text{Միավոր արտադրանքի սահմանային շահուզ}}$$

$$\text{Կրիտիկական ծավալ} = \frac{1000}{3000 : 240} = 80 \text{ հատ}$$

Եթե այն արտահայտենք ոչ թե բնելով ցուցանիշներով, այլ իրացման մեծության օգնությամբ, ապա կունենանք հետևյալ՝

$$\text{Կրիտիկական ծավալ} = \frac{\text{Հաստատուն ծախսեր}}{\text{Սահմանային շահուզի նորմա}}$$

Սահմանային շահուզի որոշումը կարևոր դեր է խաղում տնտեսական գործունեության ուսումնասիրության ժամանակ, և առանց նրա մասին հստակ պատկերացման դժվար է հասկանալ գործարարության մի շարք կողմերը: Իրացումից հասուզի մի մասը ուղղվում է միավոր արտադրանքի փոփոխուն ծախսերի ծածկմանը, որից հետո ստացվում է սահմանային շահուզը: Դրանից էլ հանելով հաստատուն ծախսերի գումարը՝ ստացվում է շահուզը: Այսպիսով՝ սահմանային շահուզը նախ և առաջ ուղղված է փոփոխուն ծախսերի ծածկմանը, ապա՝ շահուզի ձևավորմանը:

«Ծախսեր-ծավալ-շահուզ» հարաբերակցությունը կարելի է կիրառել ոչ միայն միատեսակ արտադրանք արտադրող կազմակերպությունների համար: Այն կիրառելի է նաև բազմատեսակ արտադրանք արտադրողների համար, եթե յուրաքանչյուր արտադրատեսակի համար սահմանային շահուզի ցուցանիշները մոտավորապես հավասար են:

Ծահուզի կորի կառուցման համար այս դեպքում որպես ծավալային ցուցանիշ վերցվում է իրացումից հասուցթ: Հասուցթի յուրաքանչյուր միավոր կապահովի միևնույն գումարի շահուցթ, և կարևոր չէ, որ այդ հասուցթը ստացվել է տարբեր արտադրատեսակների իրացումից: Եթե կազմակերպությունը արտադրում է տարբեր սահմանային շահուցթ ունեցող արտադրատեսակներ, բայց իրացման ընդհանուր ծավալում յուրաքանչյուրի տեսակարար կշիռը հարաբերականորեն կայուն է, ապա կարելի է կառուցել շահուցթի միասնական կոր: Այն հիմնված կլինի ոչ թե որևէ մեկ արտադրատեսակի սահմանային շահուցթի, այլ նրանց միջին կշռված ցուցանիշի վրա:

Իսկ եթե տարբեր արտադրատեսակների սահմանային շահուցթի նորման տարբեր է, և նրանց տեսակարար կշիռը ընդհանուր իրացման մեջ կայուն չէ, ապա անհրաժեշտ կլինի յուրաքանչյուր արտադրատեսակի համար կառուցել շահուցթի առանձին կոր:

Վերլուծական հետազոտության ընթացքում անհրաժեշտ է կատարել նաև շահուցթի հեռանկարային վերլուծություն, որի նպատակն է բացահայտել նախորդ ժամանակաշրջանի միտումները և դրանց հիման վրա կանխատեսել զարգացման հեռանկարները:

Վերլուծական հետազոտության համար անհրաժեշտ է ունենալ բազմակողմանի տեղեկատվություն դինամիկայի շարքի տեսքով՝ պահպանելով նրա առանձին տարրերի միջև համադրելիության սկզբունքը: Ըստ դինամիկայի շարքի՝ որոշվում է շահուցթի հավելանի գումարը (\bar{C}_n) հետևյալ բանաձևով՝

$$\bar{C}_n = \bar{C}_0 + \Delta \bar{C} \times S,$$

որտեղ՝ \bar{C}_0 - շարքի սկզբնական մակարդակն է,

$\Delta \bar{C}$ - միջին բացարձակ հավելանն է,

S - ժամանակաշրջանի հերթական համարը (տարի):

Վերլուծական գործընթացում նախ պետք է որոշել նախորդ տարիների տվյալներով շահուցթի միջին բացարձակ հավելանը:

Դրանից հետո, նշված բանաձևով, առաջիկա տարիների համար կանխատեսվում է շահույթի գումարը (աղյուսակ 11.6):

Շահույթի կանխատեսումը

Աղյուսակ 11.6

Տարիները	Շահույթը, հազ. դ.	Ժամանակաշրջանի հերթական համարը	Հաշվարկը, հազ. դ.
1-ին տարի	470	6	1454
2-րդ տարի	605	7	1589
3-րդ տարի	670	8	1654
4-րդ տարի	800	9	1784
5-րդ տարի	1125	10	2109

Ըստ աղյուսակի տվյալների՝ շահույթի միջին բացարձակ հավելանը կազմում է՝

$$\Delta \bar{S} = (135 + 65 + 130 + 325) : 4 = 164 \text{ հազ. դ.}:$$

Շահույթի կանխատեսումը կատարվում է վերը նշված բանաձևի օգնությամբ: 6-րդ տարվա համար այն հավասար է՝

$$\bar{S}_6 = 470 + (164 \times 6) = 1454 \text{ հազ. դ.}:$$

Հաշվետու տարվա համեմատությամբ, արտադրանքի իրացումից ստացված շահույթը առաջիկա հինգ տարիների ընթացքում կաճի 984 հազ. դ.-ով ($2109 - 1125$) կամ 87.5%-ով ($(2109 \times 100 : 1125)$):

Շահույթի կանխատեսումը կարելի է կատարել նաև ըստ միջին աճի տեմպերի: Այդ ժամանակ նախ պետք է հաշվարկել շահույթի միջին աճի տեմպը, այնուհետև այն, հերթական տարվա աստիճան բարձրացնելով, բազմապատկել շարքի սկզբնական մակարդակով:

11.5. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՅԼ ԵՎ ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԽԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՔՈՒԹՅԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպության ֆինանսական արդյունքների մեծության վրա զգալի ներգործություն են ունենում նաև արտադրանքի իրացման հետ չկապված գործառնական այլ գործունեությունից ստացված եկամուտները և ծախսերը:

Գործառնական այլ գործունեությունից կազմակերպությունը ֆինանսական արդյունքներ կարող է ստանալ հետևյալ դեպքերում՝

- այլ պաշարների վաճառքներից,
- պաշարների արժեքների փոփոխությունից,
- վաճառքների գծով դերհատորական պարտքերի անհավաքագրելիությունից,
- երաշխիքային սպասարկումից և վերանորոգումից,
- գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցներից,
- տուչժերից, տուգանքներից,
- արժեքների պակասորդներից և փչացումից ու դրանց փոխհատուցումից,
- արտադրական ծախսումների սովորական մակարդակի գերազանցումից,
- խոտանված արտադրանքից,
- ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցների պահպանումից և լուծարումից,
- հիմնական միջոցների լուծարումից,
- հետազոտությունից և մշակումից,
- այլ գործառնական գործունեությունից:

Գործառնական այլ գործունեությունից ստացված ֆինանսական արդյունքների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է հորիգնական և ուղղահայաց վերլուծության եղանակներով որոշել յուրաքանչյուր հոդվածի գծով հաշվետու տարվա փոփոխությունները նախորդ տարվա նկատմամբ, բացահայտել

դրանց պատճառները և մշակել վճասների վերացման միջոցների ծրագիր (աղյուսակ 11.7):

**Գործառնական այլ գործունեության ֆինանսական
արդյունքների վերլուծությունը**

Աղյուսակ 11.7

Հոդվածներ	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ծեղումը	
	գումարը՝ հազ. դր.	կառուցվածքը, %	գումարը՝ հազ. դր.	կառուցվածքը, %	ըստ գումարի	ըստ կառուցվածքի
1. Այլ պաշարների վաճառքներից	40	40.00	80	69.56	+40	+29.56
2. Պաշարների արժեքների փոփոխությունից	10	10.00	20	17.39	+10	+7.39
3. Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի անհավաքրելիությունից	-	-	20	17.39	+20	+17.39
4. Երաշխիքային սպասարկումից և վերանորոգումից	(10)	10.00	-	-	+10	+10.00
5. Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցներից	-	-	-	-	-	-
6. Տույժերից, տուգանքներից	50	50.00	20	17.39	-30	-32.61
7. Արժեքների պակասորդներից և փշացումից ու դրանց փոխհատուցումից	-	-	-	-	-	-
8. Արտադրական ծախսումների սովորական մակարակի գերազանցումից	-	-	-	-	-	-
9. Խոտանված արտադրանքից	(10)	10.00	(30)	26.08	-20	-16.08
10. Հիմնական միջոցների պահպանումից և լուծարումից	-	-	-	-	-	-
11. Հետազոտությունից և մշակումից	-	-	-	-	-	-
12. Այլ գործառնական գործունեությունից	20	20.00	5	4.35	-15	-15.65
Ընդամենը	100	100.00	115	100.00	+15	-

Գործառնական այլ գործունեությունից կազմակերպության ստացած ֆինանսական արդյունքների վերլուծությունն իրականացվում է ձև N5. «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների» տվյալներով:

Վերլուծվող կազմակերպությունը գործառնական այլ գործունեությունից հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ ստացել է 15 հազ. դ. գումարով ավելի շահուցք: Հաշվետու տարում խոտանված արտադրանքից արձանագրվել է վճառ՝ 30 հազ. դ. չափով, որը երեք անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

Տուվժերից և տուգանքներից վճասներ կարող են առաջանալ հատկապես այլ կազմակերպությունների նկատմամբ պայմանագրային պարտավորությունների թերակատարման պատճառով: Վերլուծության ընթացքում անհրաժեշտ է բացահայտել դրանց վրա տարբեր գործուների ազդեցությունը:

Վաճառքների գծով դեբյուտուրական պարտքերի անհավաքագրելիությունից կազմակերպությունը վճասներ է կրել դրանց անհուսալի մասի դուրսգրումից: Դա վկայում է միայն հաշվառման դրվագների ցածր մակարդակի և հաշվարկների նկատմամբ թույլ վերահսկողության մասին: Մեծ է կազմակերպության հաշվային ծառայության դերը նաև արժեքների պակասորդներից և փշացումից կրած կորուստների փոխհատուցումից ստացված ֆինանսական արդյունքների ապահովման գործում:

Գործառնական այլ գործունեությունից ստացված ֆինանսական արդյունքների փոփոխության վրա ազդող գործուները բացահայտելուց հետո անհրաժեշտ է վերլուծության արդյունքներով կազմել տարբեր ծախսերի մակարդակի նվազեցման և վճասների կրճատման ուղղությամբ միջոցառումների ծրագիր:

Կազմակերպության ֆինանսական արդյունքները պայմանավորված են նաև ոչ գործառնական գործունեությունից ստացված ենկամուտներով և կատարված ծախսերով: Դրանց հետազոտության մեթոդիկան էականորեն չի տարբերվում գործառնական այլ գործունեության ֆինանսական արդյունքների վերլուծական գործընթացից:

Ոչ գործառնական գործունեությունից կազմակերպությունը ֆինանսական արդյունքներ կարող է ստանալ հետևյալ դեպքերում՝

- ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից,
- ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից,
- ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից,
- ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաշափումից,
- արտարժույթի փոխարժեքային տարբերություններից,
- ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաշափումից և արժեգրկումից,
- ֆինանսական ներդրումներից,
- վարկերի և փոխառությունների գծով,
- ակտիվներին վերաբերող շնորհներից,
- անհատուց տրված ակտիվների գծով,
- ֆինանսական ծախսերից,
- կապակցված կազմակերպությունների շահույթից (վճասից)` ներդրումները «բաժնեմասնակցության մեթոդով» հաշվառելիս,
- ոչ գործառնական այլ գործունեությունից:

Ոչ գործառնական ֆինանսական արդյունքների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը ներկայացված է այլուակ 11.8-ում:

Ոչ գործառնական գործունեությունից կազմակերպության կողմից հաշվետու տարվա ընթացքում ստացված ֆինանսական արդյունքները արտացոլվում են ձև N5. «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ»-ի համապատասխան ենթաբաժնում։ Դրա հետ միասին, ոչ գործառնական գործունեության ֆինանսական արդյունքները հավաքական կերպով ներկայացվում են նաև ձև N2. «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության» մեջ՝ հետևյալ հոդվածներում՝ ֆինանսական ծախսեր, կապակցված կազմակերպությունների շահույթը՝ ներդրումները «բաժնեմասնակցության մեթոդով» հաշվառելիս և այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վճաս)։

**Ոչ գործառնական գործունեության ֆինանսական
արդյունքների վերլուծությունը**

Աղյուսակում 11.8

Հոդվածներ	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- ված- քը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- ված- քը, %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից	(130)	65.00	(210)	72.41	-80	-7.41
2. Ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից	5	2.50	10	3.45	+5	+0.95
3. Ընդհատվող գործառնու- թյանը վերագրելի ակտիվ- ների վաճառքներից և պարտավորությունների մարումներից	3	1.50	(15)	5.17	-18	-6.67
4. Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութա- կան ակտիվների վերաշա- փումից	(18)	9.00	(20)	6.90	-2	+2.10
5. Արտարժուվովի փոխար- ժեքային տարբերություն- ներից	(10)	5.00	10	3.45	+20	+8.45
6. Ոչ գործառնական ֆինան- սական գործիքների վե- րաչփումից և արժեզրկու- մից	-	-	-	-	-	-
7. Ֆինանսական ներդրում- ներից	20	10.00	25	8.62	+5	-1.38
8. Վարկերի և փոխառու- թյունների գծով	-	-	-	-	-	-
9. Ակտիվներին վերաբերող շնորհներից	-	-	-	-	-	-
10. Անհատուց տրված ակ- տիվների գծով	-	-	-	-	-	-
11. Այլ գործունեությունից	(70)	35.00	(90)	31.04	-20	+3.96
Ընդամենը	(200)	100.00	(290)	100.00	+90	-

Տվյալ կազմակերպությունը հաշվետու տարում ոչ գործառնական գործունեությունից ստացել է 290 հազ. դ. վճառ, որը 90 հազ. դ.-ով գերազանցում է նախորդ տարում կրած վճառի գումարը՝ 200 հազ. դ.: Հիմնական վճառը արձանագրվել է ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից և այլ գործունեության հետևանքով: Դրանցից բացի, կան նաև այլ անարդյունավետ հոդվածներ: Բոլոր դեպքերում լավ կլիներ միջոցներ ձեռնարկել կրճատելու անհարկի ծախսերը, նվազեցնելու վճառի գումարը՝ շահույթի ավելի մեծ ծավալ ապահովելու համար:

Վերլուծական հետազոտությունների արդյունքներով բացահայտվում են շահույթի ծավալի ավելացման պահուստները, որոնք հաշվետու տարում չօգտագործված հնարավորություններն են՝ ի հաշիվ.

- արտադրանքի իրացման ծավալի ավելացման,
- ինքնարժեքի մակարդակի նվազեցման,
- իրացման և վարչական ծախսերի կրճատման,
- արտադրանքի որակի բարձրացման,
- ավելի շահավետ շուկաներում արտադրանքի իրացման,
- կառուցվածքային տեղաշարժերի,
- գործառնական այլ և ոչ գործառնական գործունեությունից կրած վճառների կանխման,
- արտասովոր դեպքերի հետևանքով առաջացած վճառների վերացման և այլն:

Այնուհետև կազմակերպության ֆինանսական կառավարիչները մշակում են շահույթի ծավալի հնարավոր ավելացման պահուստների իրացման միջոցառումների ծրագիր և վերահսկողություն սահմանում դրա իրականացման վրա:

11.6. ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպության տնտեսական գործունեության արդյունքում ձևավորված շահույթը կուտակվում է՝ հետագայում օգտագործելու նպատակով: Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթը (վճասը) միացվում է նախորդ տարիների չբաշխված շահույթին: Մինչ այդ, կազմակերպության հաշվային քաղաքականության փոփոխությունների և էական սխալների ուղղման հետ կապված, ճշգրտվում է նախորդ տարիների շահույթի (վճասի) մնացորդը՝ բացահայտված տարբերությունները արտացոլելով հետընթաց կերպով:

Երկրում գործող օրենսդրությանը համապատասխան, կազմակերպության շահույթը ենթակա է հարկման: Հարկվող շահույթի և շահութահարկի գումարի որոշման կարգը սահմանված է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով և ֆինանսների նախարարության ու հարկային պետական ծառայության՝ «Շահութահարկի հաշվարկման և բյուջե վճարման» կարգի մասին հրահանգով:

«Շահութահարկի մասին» օրենքի համաձայն՝ հարկվող շահույթի մեծությունը իրենից ներկայացնում է համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերությունը: Հարկվող շահույթի 20%-ի չափով հաշվարկվում է շահութահարկի գումարը: Շահույթից շահութահարկի գծով ծախսը հիմնելուց հետո, նրա գուտ մասը մնում է կազմակերպության տրամադրության տակ և բաշխվում հիմնադիր փաստաթղթերի ու բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներին համապատասխան:

Շահույթի որոշակի մասը պարտադիր կարգով ուղղվում է պահուստների ծևավորմանը, իսկ մնացած մասը՝ շահաբաժինների վճարմանը, լրացուցիչ բաժնետոմսերի թղարկմանն ու տեղաբաշխմանը, կուտակման ու սպառման հիմնադրամների ստեղծմանը և այլ ուղղություններով:

Կազմակերպության տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման համար կարևոր է այն հանգամանքը, որ շահուցի բաշխման ժամանակ պետության, կազմակերպության և անձնակազմի շահերի բավարարման միջև պահպանվի օպտիմալ հարաբերակցություն: Պետությունը շահագրգությած է բյուջե մուտքագրել հնարավորին չափ ավելի շատ շահուցիք: Կազմակերպությունը ձգուում է շահուցի գգայի մասն ուղղել ընդլայնված վերարտադրության, իսկ նրա անձնակազմը՝ աշխատանքի վարձատրության բարձրացման նպատակներով:

Սակայն եթե պետությունը ուժեղացնում է հարկային բեռլ, ապա այն չի խթանում գործարար ակտիվության զարգացմանը՝ կրճատվում է արտադրության ծավալը, հետևաբար նվազում միջոցների մուտքը բյուջե: Նույնը կարող է կատարվել, եթե շահուցի գգայի մասը օգտագործվի կազմակերպության անձնակազմի սոցիալական զարգացման համար: Այդ դեպքում չի ապահովվի ընդլայնված վերարտադրություն: Կրանդադի գործարար ակտիվությունը և կվատթարանա անձնակազմի կյանքի պայմանները: Իսկ եթե նվազի նյութական խրախուսմանը ուղղվող շահուցի չափը, ապա այդ դեպքում կնվազի կազմակերպության անձնակազմի նյութական շահագրգությունը, որի հետևանքով կիշճի տնտեսական գործունեության արդյունավետության մակարդակը:

Ասվածից հետևում է, որ յուրաքանչյուր կազմակերպությունում նպատակահարմար է գտնել շահուցի բաշխման օպտիմալ տարբերակ: Այս խնդիրի լուծման գործում մեծ դեր ունի տնտեսական վերլուծությունը: Վերլուծական հետազոտության ընթացքում գնահատվում է կուտակված շահուցի բաշխումն ըստ հիմնական ուղղությունների և բացահայտվում դրանց շեղման պատճառները (աղյուսակ 11.9):

Կուտակված շահուցից տարբեր ուղղություններով կատարվող հատկացումների գումարն իրենից ներկայացնում է շահուցի մեծության և հատկացումների տոկոսափի արտադրյալը: Անհրաժեշտ է բացահայտել ըստ առանձին ուղղությունների շահուցի բաշխման վրա հետևյալ գործուների՝ վաճառքի գնի,

Ծահույթի բաշխման վերլուծությունը

Աղյուսակ 11.9

Ցուցանիշներ	Հատկացում-ների տոկոսա-չափը, %		Գումարը, հազ. դ.		Ծեղումը, հազ. դ.		
	Նա-խա-տես-ված	փաս-տացի	Նախա-տես-ված	փաս-տացի	ըն-դա-մենը	այդ թվում՝ գուտ շա-հույթի	տոկո-սա-փի
1. Զուտ շահույթ	100.00	100.00	640	900	+260	-	-
2. Բաշխման ուղղությունները՝							
պահուստներին	10.0	10.0	64	90	+26	+26	-
շահաբաժիններին	9.0	11.0	57.6	99	+41.4	+23.4	+18
կուտակմանը	50.0	49.0	320	441	+121	+130	-9
սպառմանը	31.0	30.0	198.4	270	+71.6	+80.6	-9

արտադրանքի ինքնարժեքի, իրացման ծավալի, արտադրանքի տեսականու ու կառուցվածքի, իրացման ու վարչական ծախսերի, գործառնական այլ, ոչ գործառնական գործունեությունից ու արտակարգ դեպքերից ստացված արդյունքների և շահութա-հարկի գծով ծախսերի ազդեցությունը (աղյուսակ 11.10):

Կարևոր խնդիրներից է բաշխված շահույթի օգտագործման վերլուծությունը: Պահուստները ստեղծվում են գործող օրենսդրությանը և կազմակերպության հիմնադիր փաստաթղթերին համապատասխան՝ անկանխիատեսելի վճասների և կորուստների ծածկման, շահաբաժինների վճարման և կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով: Պահուստների գումարը չպետք է պակաս լինի կանոնադրական կապիտալի 15%-ից: Եթե պահուստների գումարը փոքր է կազմակերպության կանոնադրությամբ սահմանված մեծությունից, ապա հատկացումները պետք է կատարվեն շահույթի առնվազն 5%-ի չափով: Վերլուծական գործընթացում անհրաժեշտ է պարզել պահուստների օգտագործման կոնկրետ շարժառիթները:

**Ծահույթի բաշխման վրա ազդող գործոնների
վերլուծությունը**

Աղյուսակ 11.10

Գործոնները	Ծահույթը, Բազ. դ.	Հատկացումների գումարը, %			
		պահուստ-ներին	շահաբաժիններին	կուտակմանը	սպառմանը
1. Իրացումից շահույթ	+400	+40.0	+36.0	+200.0	+124.0
2. Գործառնական այլ գործունեությունից շահույթը	+15	+1.5	+1.35	+7.5	+4.65
3. Ոչ գործառնական վճառ	-90	-9.0	-8.1	-45.0	-27.90
4. Ծահութահարկ	-65	-6.5	-5.85	-32.5	-20.15
Ընդամենը	+260	+26.0	+23.4	+130.0	+80.6

Կուտակման և սպառման հիմնադրամների միջոցներն ունեն նպատակային նշանակություն և ծախսվում են հաստատված նախահաշիվների համաձայն: Կուտակման հիմնադրամի միջոցները հիմնականում օգտագործվում են ընդառնված վերարտադրության՝ տեխնիկական վերագինման և նոր տեխնոլոգիաների ներդրման համար:

Սպառման հիմնադրամի միջոցները, ի տարբերություն կուտակման հիմնադրամի, ուղղվում են անձնակազմի սոցիալական զարգացմանը և նյութական խրախուսմանը: Այդ միջոցները նախատեսված են անձնակազմի սոցիալական պաշտպանվածության ապահովման (առողջապահական, մշակութային, մարզական միջոցառումների անցկացման ծախսեր և այլն), ինչպես նաև նրանց նյութական խրախուսման (միանվագ պարզաբանում, նյութական օգնություն և այլն) համար:

Վերլուծության գործընթացում յուրաքանչյուր հոդվածի գծով որոշվում է փաստացի ծախսումների շեղումը նախահաշիվներից, բացահայտվում դրանց վրա տարբեր գործոնների ազդեցությունը և մանրակրկիտ ուսումնասիրվում իրականացված միջոցառումների արդյունավետությունը:

S E U S E R

1.Գործունեության ո՞ր ոլորտներում են արձանագրվում ֆինանսական արդյունքներ.

- ա) գործառնական, հիմնական, օժանդակ
- բ) գործառնական, ոչ գործառնական, արտասովոր դեպքերից
- շ) գործառնական, ոչ գործառնական, օժանդակ
- դ) հիմնական, օժանդակ, լրացուցիչ:

2. Ինչպե՞ս է որոշվում ֆինանսական արդյունքների գումարը.

- ա) եկամուտներ - արտադրանքի ինքնարժեք
- բ) եկամուտներ - իրացման և վարչական ծախսեր
- շ) եկամուտներ - ծախսեր
- դ) իրացումից հասուլթ - ծախսեր:

3. Ո՞րն է ֆինանսական արդյունքների կազմը.

- ա) իրացումից, գործառնական այլ, ոչ գործառնական, արտասովոր դեպքերից
- բ) արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից
- շ) գործառնական եկամուտներ և ծախսեր, ոչ գործառնական եկամուտներ և ծախսեր
- դ) գործառնական գործունեությունից շահուլթ կամ վճառ, սովորական գործունեությունից շահուլթ կամ վճառ:

4. Որո՞նք են կուտակված շահուլթի բաղկացուցիչները.

- ա) նախորդ տարիների չբաշխված շահուլթ + հաշվետու տարվա զուտ շահուլթ
- բ) նախորդ տարիների չբաշխված շահուլթ - հաշվետու տարվա զուտ շահուլթ
- շ) հաշվետու տարվա զուտ շահուլթ - նախորդ տարիների չբաշխված շահուլթ
- դ) եկամուտներ - ծախսեր:

5. Ինչպե՞ս որոշել իրացումից շահույթը՝ ծախսերի անմիջական ներառման մեթոդով.

- ա) իրացումից հասույթ - ինքնարժեք - իրացման և վարչական ծախսեր
- բ) իրացումից հասույթ - ինքնարժեք
- գ) իրացումից հասույթ - փոփոխուն ծախսեր -հաստատուն ծախսեր
- դ) իրացումից հասույթ - փոփոխուն ծախսեր:

6. Ինչպե՞ս որոշել իրացումից շահույթը՝ «ղիրեկտ - կոստիճան» մեթոդով.

- ա) իրացումից հասույթ - փոփոխուն ծախսեր
- բ) իրացումից հասույթ - սահմանային շահույթ
- գ) իրացումից հասույթ - հաստատուն ծախսեր
- դ) իրացումից հասույթ - փոփոխուն ծախսեր - հաստատուն ծախսեր:

7. Ո՞ր մեթոդներ են հիմնականում օգտագործվում ֆինանսական արդյունքների վերլուծության ժամանակ.

- ա) հորիզոնական, ուղղահայաց, գործոնային,
- բ) հորիզոնական, ուղղահայաց, ինդեքսային
- գ) գործոնային, գրաֆիկական, հաշվեկշռային
- դ) հորիզոնական, ուղղահայաց, հաշվեկշռային:

8. Ի՞նչ գործոններ են ազդում արտադրանքի իրացումից ստացված շահույթի վրա.

- ա) վաճառքի գին, իրացման ծավալ, տեսականի և կառուցվածք, ինքնարժեք, իրացման և վարչական ծախսեր
- բ) վաճառքի գին, ինքնարժեք, տեսականի և կառուցվածք, նյութատարություն, որակ
- գ) իրացման ծախսեր, իրացման ծավալ, ինքնարժեք, որակ, միավորի գին

- η) իրացման ծավալ, միավորի գին, միավորի ինքնարժեք, նյութական ծախսումներ, աշխատավարձ:

9. Ինչպե՞ս է որոշվում վաճառքի գների փոփոխության ազդեցությունը իրացումից շահույթի վրա.

- ա) իրացումից փաստացի հասույթ - իրացումից վերահաշվարկված հասույթ
- բ) իրացումից փաստացի հասույթ - իրացումից նախատեսված հասույթ
- գ) իրացումից վերահաշվարկված հասույթ - իրացումից նախատեսված հասույթ
- դ) իրացումից վերահաշվարկված հասույթ - իրացումից փաստացի հասույթ:

10. Ինչպե՞ս է որոշվում ինքնարժեքի փոփոխության ազդեցությունը իրացումից շահույթի վրա.

- ա) փաստացի ինքնարժեք - նախատեսված ինքնարժեք
- բ) վերահաշվարկված ինքնարժեք - փաստացի ինքնարժեք
- գ) փաստացի ինքնարժեք - վերահաշվարկված ինքնարժեք
- դ) վերահաշվարկված ինքնարժեք - նախատեսված ինքնարժեք:

11. Ինչպե՞ս է որոշվում իրացման ծավալի փոփոխության ազդեցությունը իրացումից շահույթի վրա.

- ա) փաստացի շահույթ x 100 / նախատեսված շահույթ
- բ) իրացման ծավալի հավելանի տեմա x նախատեսված շահույթ / 100
- գ) իրացման փաստացի ծավալ x 100 / իրացման նախատեսված ծավալ
- դ) իրացումից փաստացի հասույթ - իրացումից փաստացի շահույթ:

12. Ինչպե՞ս է որոշվում արտադրանքի տեսականու և կառուցվածքի փոփոխության ազդեցությունը իրացումից շահույթի վրա.

- ա) վերահաշվարկված շահույթ - նախատեսված շահույթ
- բ) փաստացի շահույթ - նախատեսված շահույթ
- գ) փաստացի շահույթ - վերահաշվարկված շահույթ
- դ) վերահաշվարկված շահույթ - (նախատեսված շահույթ + իրացման ծավալի ազդեցության գումար):

13. Ինչպե՞ս է որոշվում իրացման ծախսերի փոփոխության ազդեցությունը իրացումից շահույթի վրա.

- ա) իրացման փաստացի ծախսեր - իրացման նախատեսված ծախսեր
- բ) իրացման վերահաշվարկված ծախսեր - իրացման նախատեսված ծախսեր
- գ) իրացման փաստացի ծախսեր - իրացման վերահաշվարկված ծախսեր
- դ) իրացման փաստացի ծախսեր / իրացման նախատեսված ծախսեր:

14. Ինչպե՞ս է որոշվում վարչական ծախսերի փոփոխության ազդեցությունը իրացումից շահույթի վրա.

- ա) վարչական փաստացի ծախսեր - վարչական վերահաշվարկված ծախսեր
- բ) վարչական փաստացի ծախսեր / վարչական վերահաշվարկված ծախսեր
- գ) վարչական փաստացի ծախսեր - վարչական նախատեսված ծախսեր
- դ) վարչական փաստացի ծախսեր / վարչական նախատեսված ծախսեր:

15. «Ծախսեր - ծավալ - շահույթ» ցուցանիշների միջև հարաբերակցության գնահատումը պայմաններ է ստեղծում.

- ա) կատարել իրացումից ստացված շահույթի վերլուծություն
- բ) ուսումնասիրել շահույթի փոխկախվածությունը առավել կարևոր ցուցանիշներից
- գ) կառավարել շահույթի ձևավորման գործընթացը
- դ) իրականացնել ֆինանսական արդյունքների վերլուծություն:

16. Ինչպե՞ս է որոշվում սահմանային շահույթի մեծությունը.

- ա) իրացումից հասուլթ - ինքնարժեք
- բ) իրացումից շահույթ + փոփոխուն ծախսեր
- գ) իրացումից հասուլթ - հաստատուն ծախսեր
- դ) իրացումից շահույթ + հաստատուն ծախսեր:

17. Շահույթի կանխատեսման համար անհրաժեշտ է.

- ա) շարքի սկզբնական մակարդակ x հերթական տարվա համարը
- բ) շարքի սկզբնական մակարդակ + շահույթի միջին բացարձակ հավելան
- գ) (շարքի սկզբնական մակարդակ + շահույթի միջին բացարձակ հավելան) x հերթական տարվա համարը
- դ) շահույթի միջին բացարձակ հավելան x հերթական տարվա համարը:

Գ Լ ՈՒ Խ XII

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

12.1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴՐԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի (26.12.2002թ.) համաձայն՝ պարտավորությունը կազմակերպության ներկա պարտականությունն է՝ որպես կատարված գործառնությունների արդյունք, որի կատարումն ակնկալվում է, որ կրանքեցնի կազմակերպությունից տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի: Կազմակերպության պարտավորությունները խմբավորվում են ֆինանսական պարտավորությունների և կրեդիտորական պարտքերի:

Հստ ՀՀՀՍ 32[՝] «Ֆինանսական գործիքներ. բացահայտումը և ներկայացումը» և ՀՀՀՍ 39[՝] «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտների՝ ֆինանսական պարտավորությունը իրենից ներկայացնում է ֆինանսական գործիք: Այն ֆինանսական շուկայի կարևոր բաղադրիչներից մեկն է: Ֆինանսական գործիքը ցանկացած պայմանագիր է, որը միաժամանակ մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուս կազմակերպությունում՝ ֆինանսական պարտավորություն կամ սեփական կապիտալի գործիք:

Ֆինանսական պարտավորությունը իրենից ներկայացնում է՝

ա) մեկ այլ կազմակերպությանը դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելու (վճարելու), կամ՝

բ) մեկ այլ կազմակերպության հետ պոտենցիալ ոչ նպատակով պայմաններով ֆինանսական գործիքներ փոխանակելու պայմանագրային պարտականություն:

Կազմակերպությունը պայմանագրային պարտականությունը կարող է մարել ֆինանսական ակտիվներով կամ բաժնային արժեթղթերով վճարման միջոցով: Եթե պարտականությունը մարելու համար պահանջվող բաժնային արժեթղթերի քանակը տատանվում է դրանց իրական արժեքի փոփոխությունների հետ մեկտեղ այնպէս, որ վճարված բաժնային արժեթղթերի ընդհանուր արժեքը միշտ հավասար է պայմանագրային պարտականության գումարին, պարտապանը գների տատանումներից շահույթ կամ վնաս չի ունենում: Այդպիսի պարտականությունը կոչվում է ֆինանսական պարտավորություն:

Ֆինանսական պարտավորությունը հաշվեկշռում ճանաչվում է այն ժամանակ, երբ կազմակերպությունը հանդես է գալիս որպես դրանց առաջացնող գործիքի պայմանագրային կողմ:

Կազմակերպությունները ունեն իրենց սեփական կապիտալը, որը սակայն միշտ չէ, որ ապահովում է երաշխավորված շահույթը: Եթե նույնիսկ ձևավորվում է շահույթի որոշակի մեծություն, ապա դա չի նշանակում, որ այն բավարար է արտադրության զարգացման, ընթացիկ ակտիվների լրացման, շահաբաժինների վճարման և այլ հիմնախնդիրների լուծման համար:

Ծովայի պայմաններում շատ կազմակերպությունների տնտեսական գործունեության ընթացքում հաճախակի զգացվում է ֆինանսական միջոցների պահանջ, որը կարող է բավարարվել բանկային վարկերի ու փոխառությունների հաշվին: Բանկային հիմնարկները կազմակերպություններին վարկեր են տրամադրում վերադարձելիության, ժամկետայնության, վճարելիության և ապահովածության սկզբունքներով: Այդ միջոցները, օգտագործման ժամկետը լրանալուն պես, տոկոսներով հանդերձ, վերադարձվում են ըստ պատկանելության: Կազմակերպությունները իրացնում են նաև փոխառության պարտատոմսեր: Մինչև վարկերի և փոխառությունների վճարման ժամկետների լրանալը և մարումը դրանք վերածվում են ֆինանսական պարտավորությունների:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծության խնդիրներն են՝

- գնահատել ֆինանսական պարտավորությունների կազմի ու կառուցվածքի փոփոխությունները,
- վերլուծել ֆինանսական պարտավորությունների ինտենսիվությունը բնութագրող ցուցանիշները:

Վերլուծական հետազոտությունները իրականացվում են տեղեկատվական մի քանի աղբյուրների ընդգրկմամբ՝

- ձև N1. «Հաշվապահական հաշվեկշիռ»,
- ձև N5. «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ»,
- սինթետիկ ու անալիտիկ հաշվառման տվյալները և այլն:

12.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒԿԱՌՈՒԹՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են ոչ ընթացիկ և ընթացիկ ուղղություններով: Պարտավորությունը դասակարգվում է որպես ընթացիկ, եթե այն՝

- ակնկալվում է մարել կազմակերպության սովորական գործառնական փուլի ընթացքում, կամ՝
- ենթակա է մարման հաշվեկշիռի ամսաթվից հետո տասներկու ամսվա ընթացքում:

Բոլոր այլ պարտավորությունները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ պարտավորություններ:

- Ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների կազմը՝
- երկարաժամկետ բանկային վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ,
 - երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ,
 - ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ,

- չկրած տոկոսային ծախսեր՝ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով,
- որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ:

Ընթացիկ ֆինանսական պարտավորությունների կազմը՝

- կարճաժամկետ բանկային վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ,
- երկարաժամկետ բանկային վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս,
- կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ,
- երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս,
- ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս,
- չկրած տոկոսային ծախսեր՝ ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով,
- առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ,
- որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ:

Վերլուծական գործընթացը սկսվում է ֆինանսական պարտավորությունների կազմի ու կառուցվածքի ուսումնասիրությամբ: Այն իրականացվում է վերլուծության հորիզոնական և ուղղահայաց եղանակներով, երբ գնահատվում են ֆինանսական պարտավորությունների կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները և դրանց հետևանքները կազմակերպության գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա (այսուսակ 12.1):

Ֆինանսական պարտավորությունների գերակշիռ մասը կազմում են բանկային վարկերը: Հստ վարկավորման ժամկետների՝ դրանք լինում են երկարաժամկետ և կարճաժամկետ բնույ-

թի: Եթե երկարաժամկետ վարկերը տրամադրվում են մեկ տարուց ավելի, ապա կարճաժամկետ վարկերը՝ մինչև մեկ տարի ժամկետով։ Կարճաժամկետ վարկերը կազմակերպություններին տրվում են պաշարների ձեռքբերման համար, հաշվարկային գործառնությունների իրականացման նպատակով և այլն։ Երկարաժամկետ վարկերը կազմակերպություններին տրամադրվում են կապիտալ ներդրումների իրականացման համար։

Ֆինանսական պարտավորությունների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը

Աղյուսակ 12.1

Ֆինանսական պարտավորությունների կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ծեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- ված- քը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- ված- քը, %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	1300	54.85	1100	48.46	-200	-6.39
Երկարաժամկետ բանկային վարկեր	1300	54.85	1100	48.46	-200	-6.39
Երկարաժամկետ փոխառություններ	-	-	-	-	-	-
2. Ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	1070	45.15	1170	51.54	+100	+6.39
Կարճաժամկետ բանկային վարկեր	700	29.54	780	34.36	+8	+4.82
Կարճաժամկետ փոխառություններ	370	15.61	390	17.18	+20	+1.57
Ընդամենը	2370	100.00	2270	100.00	-100	-

Հնայած ֆինանսական աղբյուրներից միջոցների ստացման որոշակի դժվարություններին և սպասարկման բարձր տոկոսներին՝ շատ կազմակերպություններ օգտվում են այդ միջոցներից:

Բանկերի կողմից վարկային միջոցներ տրամադրվում են մի շարք նախապատրաստական աշխատանքներ կատարելուց հետո: Դրանցից են՝ կազմակերպության տնտեսական գործունեության վերաբերյալ նախնական տեղեկատվության հավաքագրումը, վարկային հայտերի ուսումնասիրումը, վարկային ռիսկի գնահատումը և ֆինանսական դրության վերլուծությունը:

Նախապատրաստական աշխատանքները սկսվում են կազմակերպության տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմամբ (կանոնադրական կապիտալի մեծությունը, դրամական միջոցների առկայությունը, ժամկետանց պարտավորությունների չափը, տվյալ ճյուղում նրա դիրքերը և մրցունակության մակարդակը, գործարար ակտիվության աստիճանը և այլն):

Այնուհետև բանկը ուսումնասիրում է կազմակերպության վարկային հայտերը՝ հենվելով նրա վճարունակության և ֆինանսական պարտավորությունների ժամանակին հավանական մարման վերաբերյալ կատարված հաշվարկների վրա:

Դրանցից հետո կատարվում է վարկային ռիսկի գնահատում: Դա վերաբերում է ինչպես բանկային հիմնարկին, այնպես Էլ տվյալ կազմակերպությանը: Վարկային ռիսկը գնահատվում է հետևյալ ցուցանիշներով՝ կազմակերպության գործունեության արտաքին միջավայրի (գործունեության ոլորտներ, շուկաներ, մրցունակություն, իրացման ծավալ, ակտիվների շահութաբերություն և այլն), կառավարման որակի (կառավարիչների որակական աստիճան, ֆինանսական վերահսկողության մակարդակ, բաժնետերեր, հիմնադիր փաստաթղթեր և այլն), համագործակցության պատմության (կապերի ինտենսիվություն, դրամական միջոցների շարժ՝ ըստ վարկային միջոցների և այլն), վարկային հայտերի (վարկերի գումար և մարման ժամկետներ,

նպատակայնություն, տրման կարգ, սպասարկման ծախսեր, բանկի ռիսկ, գրավով ապահովածություն և այլն):

Բանկային հիմնարկին կազմակերպությունները ներկայացնում են մի շարք փաստաթղթեր՝ դիմում, ֆինանսական հաշվետվություններ, առողջութական եզրակացություն, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը՝ վերծանված կարգով, ֆինանսական պարտավորությունները՝ վերծանված կարգով, վարկերի ստացման նպատակահարմարության տեխնիկան նշանական:

Վարկային ռիսկը գնահատելուց հետո կատարվում է կազմակերպության ֆինանսական դրության վերլուծություն՝ հաշվապահական հաշվեկշռի կազմի ու կառուցվածքի, ակտիվների իրացվելիության, շահութաբերության, գործարար ակտիվության և ֆինանսական կայունության:

Ֆինանսական դրության վերլուծության դրական արդյունքների դեպքում բանկը կազմակերպությանը տրամադրում է վարկային միջոցներ:

Կազմակերպությունները իրենց տնտեսական գործունեության ընթացքում, վարկային միջոցներից բացի, կարող են ներգրավել նաև փոխառություններ, որոնք իրենց ուրուց տեղն ունեն ֆինանսական պարտավորությունների մեջ: Փոխառությունները ծեավորվում են պայմանագրային հիմունքներով կամ մուրհակներով: Հատ մարման ժամկետների՝ դրանք կարող են լինել երկարաժամկետ և երկարաժամկետ: Փոխառությունների դիմաց վճարվում են համապատասխան տոկոսներ:

Վերլուծվող կազմակերպության ֆինանսական պարտավորությունները մեկ տարվա ընթացքում նվազել են 100 հազ. դ.գումարով: Դա հատկապես տեղի է ունեցել ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների կրճատման հաշվին: Վերջինիս մասնաբաժինը ֆինանսական պարտավորությունների ընդհանուր կառուցվածքում նվազել է: Նույն չափով ավելացել է ընթացիկ ֆինանսական պարտավորությունների տեսակարար կշիռը:

Ֆինանսական պարտավորությունները լինում են ժամկետային և ժամկետանց: Ժամկետային ֆինանսական պարտավորությունները մարդում են պայմանագրով նախատեսված ժամկետներում: Ֆինանսական պարտավորությունները համարվում են ժամկետանց, եթե դրանք սահմանված ժամկետներում չեն մարվել:

Վերլուծվող կազմակերպության տեղեկատվական տվյալներով՝ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների ժամկետանց գումարը նախորդ տարում կազմել է 20 հազ. դ., իսկ հաշվետու տարում՝ 25 հազ. դ.: Ժամկետանց ֆինանսական պարտավորությունների դեպքում պայմանագրային ժամկետները խախտվում են, որն էլ հետևանք է կազմակերպության ֆինանսական անկայունության:

Վերլուծության արդյունքներով կազմակերպություն ֆինանսական կառավարիչները պետք է մշակեն և իրականացնեն ֆինանսական պարտավորությունների ժամանակին մարման միջոցառումների ծրագիր:


12.3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծական գործընթացի հաջորդ փուլում կատարվում է կազմակերպության ֆինանսական պարտավորությունների ինտենսիվությունը բնութագրող ցուցանիշների վերլուծություն (գծ. 12.1).

Ֆինանսական պարտավորությունների ինտենսիվությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից է դրանց շրջանառելիության մակարդակը ($\Phi_{2\phi}$): Այն որոշվում է որպես մարված ֆինանսական պարտավորությունների ($\Phi_{պ}$) և դրանց միջին մեծության ($\bar{\Phi}_{պ}$) հարաբերակցություն և արտացոլվում հետևյալ բանաձևով՝

**Ֆինանսական պարտավորությունների ինտենսիվության
վերլուծությունը**

Գծապատկեր 12.1



Վերլուծական գործընթացում որոշվում է նաև ֆինանսական պարտավորությունների շրջանառելիության տևողությունը օրերով ($S_{\Phi\psi}$)՝

$$S_{\Phi\psi} = \frac{\overline{\Phi}_{\psi} \times 360}{\Phi_{\psi}}$$

Որոշենք կազմակերպության ընթացիկ ֆինանսական պարտավորությունների շրջանառելիությունը՝ ըստ պտույտների և օրերի (այլուսակ 12.2):

Ընթացիկ ֆինանսական պարտավորությունների շրջանառելիությունը մեկ տարվա ընթացքում դանդաղել է՝ դրանից բխող բացասական հետևանքներով:

**Ընթացիկ ֆինանսական պարտավորությունների
շրջանառելիության վերլուծությունը**

Աղյուսակ 12.2

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Մարված ընթացիկ ֆինան- սական պարտավորությունն- ների գումարը, հազ. դ.	3300	3400	+100
2. Ընթացիկ ֆինանսական պարտավորությունների մի- ջին արժեքը, հազ. դ.	1050	1120	+70
3. Շրջանառելիություն՝			
բար պառակտների	3.1	3.0	-0.1
բար օրերի	115	119	+4

Ֆինանսական պարտավորությունների ինտենսիվության մակարդակի մասին է վկայում նաև դրանց ընդհանուր գումարի մեջ ժամկետանց մասի տեսակարար կշռի (Ֆ_{ԺԿ}) փոփոխությունը: Այն կարելի է որոշել ժամկետանց պարտավորությունների գումարի (Ֆ_{ԳՄ}) և ֆինանսական պարտավորությունների միջին մեծության հարաբերակցությամբ՝

$$\Phi_{ԺԿ} = \frac{\Phi_{ԳՄ}}{\Phi_{Ա}}$$

Ֆինանսական պարտավորությունների ժամկետանց գումարը նախորդ տարում եղել է 20 հազ. դ., իսկ հաշվետու տարում՝ 25 հազ. դ.: Նշված գործակիցը նախորդ տարվա համար կկազմի՝ $20 \times 100 : 1050 = 1.9\%$, իսկ հաշվետու տարվա համար՝ $25 \times 100 : 1120 = 2.2\%$: Այդ աճը վկայում է կազմակերպության ֆինանսական դժվարությունների մասին:

Ֆինանսական պարտավորությունների ինտենսիվությունը բնութագրող շատ կարևոր ցուցանիշ է դրանց արդյունավետության գործակիցը (Գ_{ՓԿ}), որը ցույց է տալիս միավոր ֆինանսական պարտավորությանը բաժին ընկնող հասուլթի (Հ)

չափը: Այն որոշվում է արտադրանքի իրացումից ստացված հասուլքը հարաբերելով ֆինանսական պարտավորությունների միջին մեծությանը՝

$$Q_{\text{փա}} = \frac{\zeta}{\Phi_{\text{պ}}}$$

Ներկայացված աղյուսակի տվյալներով որոշենք ընթացիկ ֆինանսական պարտավորությունների արդյունավետության գործակիցը (աղյուսակ 12.3):

Ընթացիկ ֆինանսական պարտավորությունների

արդյունավետության գործակիցի որոշումը

Աղյուսակ 12.3

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Ծեղումը
1. Արտադրանքի իրացումից հասուլքը, հազ. դ.	15000	15700	+700
2. Ընթացիկ ֆինանսական պարտավորությունների միջին արժեքը, հազ. դ.	1050	1120	+70
3. Արդյունավետության գործակիցը	14.3	14.0	-0.3

Ընթացիկ ֆինանսական պարտավորությունների արդյունավետության գործակիցը հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ նվազել է: Ցանկալի է, որ այդ հաշվարկները կատարվեն վերջին մի քանի տարվա կտրվածքով՝ ֆինանսական պարտավորությունների մասին լիարժեք պատկերացում կազմելու նպատակով:

Վերլուծության արդյունքներով կազմակերպության ֆինանսական կառավարիչները մշակում են ֆինանսական պարտավորությունների օպտիմալացման ծրագիր:

S E U S E R

1. Որո՞ք են ֆինանսական պարտավորությունների բաղկացուցիչները.

- ա) երկարաժամկետ վարկեր + երկարաժամկետ փոխառություններ
- բ) ոչ ընթացիկ պարտավորություններ + ընթացիկ պարտավորություններ
- գ) ընթացիկ պարտավորություններ + կրեդիտորական պարտքեր
- դ) ոչ ընթացիկ պարտավորություններ + կրեդիտորական պարտքեր:

2. Ֆինանսական պարտավորությունները դասակարգել ըստ ոչ ընթացիկ (1) և ընթացիկ (2) խմբերի.

- ա) առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններ
- բ) երկարաժամկետ բանկային վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ
- գ) երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ
- դ) չկրած տոկոսային ծախսեր՝ ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով
- ե) կարճաժամկետ բանկային վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ
- զ) չկրած տոկոսային ծախսեր՝ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով
- է) ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ
- ը) կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ:

3. Որո՞նք են ոչ ընթացիկ ֆիճանսական պարտավորությունների բաղկացուցիչները.

- ա) ոչ ընթացիկ պարտավորություններ + կրեդիտորական պարտքեր
- բ) դեբիտորական պարտքեր + կրեդիտորական պարտքեր
- գ) երկարաժամկետ վարկեր + կրեդիտորական պարտքեր
- դ) երկարաժամկետ վարկեր + երկարաժամկետ փոխառություններ:

4. Որո՞նք են ընթացիկ ֆիճանսական պարտավորությունների բաղկացուցիչները.

- ա) երկարաժամկետ վարկեր + երկարաժամկետ փոխառություններ
- բ) դեբիտորական պարտքեր + կրեդիտորական պարտքեր
- գ) ընթացիկ պարտավորություններ + կրեդիտորական պարտքեր
- դ) դեբիտորական պարտքեր + կարճաժամկետ փոխառություններ:

5. Ֆիճանսական պարտավորությունների վերլուծությունը տարվում է հետևյալ ուղղություններով.

- ա) կազմի, կառուցվածքի, ձևավորման, ժամկետների
- բ) դինամիկայի, ձևավորման, կազմի, ժամկետների
- գ) կազմի, կառուցվածքի, առկայության, դինամիկայի
- դ) պատճառների, դինամիկայի, ձևավորման, ժամկետների:

6. Ինչպե՞ս է որոշվում ֆիճանսական պարտավորությունների մարման տևողությունը.

- ա) մարված պարտավորություններ / պարտավորությունների միջին մեծություն
- բ) պարտավորությունների միջին մեծություն / մարված պարտավորություններ
- գ) իրացումից հասուլթ / մարված պարտավորություններ

η) իրացումից շահուց / պարտավորությունների միջին մեծություն:

7. Ֆինանսական պարտավորությունների շրջանառելիությունը որոշվում է.

- ա) մարված պարտավորություններ / պարտավորությունների միջին մեծություն
- բ) պարտավորությունների միջին մեծություն \times 360 / մարված պարտավորություններ
- գ) իրացումից հասուց \times 360 / մարված պարտավորություններ
- դ) իրացումից հասուց / պարտավորությունների միջին մեծություն \times 360:

8. Ինչպես է որոշվում պարտավորությունների արդյունավետության գործակիցը.

- ա) պարտավորությունների միջին մեծություն / մարված պարտավորություններ
- բ) պարտավորությունների միջին մեծություն \times 360 / իրացումից հասուց
- գ) իրացումից հասուց / մարված պարտավորություններ
- դ) իրացումից հասուց / պարտավորությունների միջին մեծություն:

Գ Լ ՈՒ Խ XIII

ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

13.1. ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆՆԵՐԸ

Կազմակերպության ունեցած ընթացիկ պարտավորությունների մեջ առավել կարևոր բաղկացուցիչը կրեդիտորական պարտքերն են: Դրանք ձևավորվում են կազմակերպության տնտեսական գործունեության ընթացքում, քանի որ շուկայի պայմաններում կազմակերպությունը հանդես է գալիս մի կողմից որպես գնորդ, մյուս կողմից՝ որպես մատակարար: Գնորդների և մատակարարների միջև հաշվարկային հարաբերությունները հիմնականում իրականացվում են անկանխիկ ձևով: Եթե կազմակերպությունը, նախապես կնքված պայմանագրին համապատասխան, իր մատակարարից ստանում է արտադրանք և մինչև վճարման ժամկետի լրանալը չի վճարում ապա գոյանում է կրեդիտորական պարտք:

Շուկայի պայմաններում կազմակերպությունը իր տնտեսական գործունեության ընթացքում գնորդից ստանում է կանխագծար՝ հետագայում պայմանագրով նախատեսված արտադրանքի տրամադրման պայմանով: Այս դեպքում կազմակերպությունը մինչև այդ պայմանի կատարումը ունենում է կրեդիտորական պարտք: Փաստորեն կրեդիտորական պարտքը տվալ կազմակերպության կողմից այլ անձանց (կրեդիտորներին) վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարն է:

Կազմակերպության տնտեսական գործունեության մեջ փոխառու աղբյուրների ներգրավումը նպաստում է նրա ֆինանսական դրության բարելավմանը՝ այն պայմանով, որ դրանց արդյունավետ օգտագործումից հետո ճիշտ ժամանակին հետ են

վերադարձվում: Հակառակ պարագայում գոյանում են ժամկետանց կրեդիտորական պարտքեր, ինչը կարող է հանգեցնել անբարենպաստ ֆինանսական իրադրության:

Կազմակերպության համար կրեդիտորական պարտքերի վերլուծությունը կարևոր նշանակություն ունի: Դրանց վերլուծության հիմնական խնդիրներն են՝

- գնահատել կրեդիտորական պարտքերի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները,
- վերլուծել կրեդիտորական պարտքերի ինտենսիվության ցուցանիշները:

Կրեդիտորական պարտքերի վերլուծությունը կարելի է հստակորեն իրականացնել հետևյալ տեղեկատվական աղբյուրներով՝

- ձև N1. «Հաշվապահական հաշվեկշիռ»,
- ձև N 5. «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ»,
- սինթետիկ ու անալիտիկ հաշվառման տվյալներ և այլն:

13.2. ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կրեդիտորական պարտքերի վերլուծությունը սկսվում է դրանց կազմի ու կառուցվածքի փոփոխությունների գնահատմամբ՝ հորիզոնական և ուղղահայաց եղանակներով: Վերլուծության գործընթացում կրեդիտորական պարտքերի յուրաքանչյուր հոդվածի գծով որոշվում են ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական շեղումները և բացահայտվում դրանց վրա տարբեր գործողների ազդեցությունը:

Կրեդիտորական պարտքերն արտացոլվում են հետևյալ հոդվածներում՝

- կրեդիտորական պարտքեր՝ գնումների գծով,
- ստացված կանխավճարներ,
- կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին,

- կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր՝ սոցիալական ապահովագրության գծով,
- կրեդիտորական պարտքեր՝ աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով,
- կրեդիտորական պարտքեր՝ աշխատակիցներին այլ գործառնությունների գծով,
- կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին),
- այլ ընթացիկ պարտավորություններ:

Գնահատենք դիտարկվող կազմակերպության կրեդիտորական պարտքերի կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները (աղյուսակ 13.1):

Կրեդիտորական պարտքերի կազմի ու կառուցվածքի վելլուծությունը

Աղյուսակ 13.1

Կրեդիտորական պարտքերի կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- ված- քը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- ված- քը, %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Գնումների գծով	200	60.61	240	55.81	+40	-4.80
2. Կանխավճարների գծով	40	12.12	50	11.63	+10	-0.49
3. Աշխատավարձի գծով	30	9.09	40	9.30	+10	-0.21
4. Այլ պարտքերի գծով	60	18.18	100	23.26	+40	+5.08
Ընդամենը	330	100.00	430	100.00	+100	-

Կազմակերպության հաշվետու տարվա կրեդիտորական պարտքերը գերազանցել են նախորդ տարվա մեծությունը 100 հազ. դրամով, ընդ որում՝ բոլոր պարտքերի գումարը մեծացել է: Դրանց կառուցվածքում տեղի են ունեցել որոշակի տեղաշարժեր: Եթե գնումների ու կանխավճարների գծով կրեդիտորական պարտքերի բաժինը ընդհանուրի մեջ նվազել է, ապա աշխատավարձի և այլ պարտքերի գծով՝ աճել:

Կրեդիտորական պարտքերն արտացոլող նշված հոդվածները իրենց հերթին բաղկացած են որոշակի տարրերից: Իր կարևորությամբ առանձնացող՝ գնումների գծով պարտքերը, ներառում են հետևյալ տարրերը՝

- կրեդիտորական պարտքեր՝ ստացված հումքի, նյութերի գծով,
- կրեդիտորական պարտքեր՝ ապրանքների, գնումների գծով,
- կրեդիտորական պարտքեր՝ ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով,
- կրեդիտորական պարտքեր՝ ստացված ֆինանսական ակտիվների գծով,
- կրեդիտորական պարտքեր՝ ստացված հիմնական միջոցների գծով,
- կրեդիտորական պարտքեր՝ այլ գնումների գծով:

Այժմ գնահատենք գնումների գծով կրեդիտորական պարտքերի կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները (աղյուսակ 13.2):

Գնումների գծով կրեդիտորական պարտքերի կազմի ու կառուցվածքի վերլուծությունը

Աղյուսակ 13.2

Գնումների գծով կրեդիտորական պարտքերի կազմը	Նախորդ տարի		Հաջետու տարի		Ըեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կառուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կառուց- վածքի
1. Հումքի և նյու- թերի գծով	120	60.00	135	56.25	+15	-3.75
2. Ապրանքների գծով	20	10.00	27	11.25	+7	+1.25
3. Հիմնական մի- ջոցների գծով	40	20.00	50	20.83	+10	+0.83
4. Այլ գնումների գծով	20	10.00	28	11.67	+8	+1.67
Ընդամենը	200	100.00	240	100.00	+40	-

Գնումների գծով կրեդիտորական պարտքերի մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն հումքի և նյութերի գծով ձևավորված պարտքերը, որոնց բացարձակ գումարը չնայած աճել է 15 հազ. դրամով, սակայն հարաբերական մեծությամբ նվազել 3.75%-ով:

Կրեդիտորական պարտքերը գոյանում են կազմակերպության տնտեսական գործունեության ընթացքում՝ որոշակի ժամանակաշրջանում: Այնուհետև կրեդիտորական պարտքերի վերլուծությունը շարունակվում է ըստ գոյացման ժամկետների՝ մինչև 90 օր, 91-ից մինչև 180 օր, 181-ից մինչև 270 օր, 271-ից մինչև 365 օր (այլուսակ 13.3 և 13.4): Դա հնարավորություն է ընձեռում գնահատել տվյալ իրավիճակը և որոշել դրա ձևավորման վրա տարբեր գործոնների ազդեցությունը:

Կրեդիտորական պարտքերի վերլուծությունն ըստ գոյացման ժամկետների

Այլուսակ 13.3

Կրեդիտորական պարտքերի կազմը	Գու- մարը, հ. դ.	Ժամկետը, ամիս				Այդ թվում	
		մինչև 90 օր	91-ից մինչև 180 օր	181-ից մինչև 270 օր	271-ից մինչև 360 օր	ժամ- կետա- յին	ժամ- կե- տանց
1. Գնումների գծով	240	140	60	30	10	200	40
2. Կանխավճար- ների գծով	50	20	10	10	10	50	-
3. Աշխատավար- ձի գծով	40	10	10	10	10	40	-
4. Այլ պարտքերի գծով	100	40	30	20	10	100	-
Ընդամենը	430	210	110	70	40	390	40

Կրեդիտորական պարտքերի վերլուծության ժամանակ պետք է տարբերել դրանց ժամկետային և ժամկետանց տեսակ-ները: Ժամկետային կրեդիտորական պարտքերը մարվում են

պայմանագրով նախատեսված ժամկետներում: Կրեդիտորական պարտքերը համարվում են ժամկետանց (կետանցված), եթե սահմանված ժամկետներում չեն մարվել:

Գնումների գծով կրեդիտորական պարտքերի վերլուծությունն ըստ գոյացման ժամկետների

Աղյուսակ 13.4

Գնումների գծով կրեդիտորական պարտքերի կազմը	Գումարը, հ. դ.	Ժամկետը, ամիս				Այդ թվում՝	
		մինչև 90 օր	91-ից մինչև 180 օր	181-ից մինչև 270 օր	271-ից մինչև 360 օր	ժամկետային	ժամկետանց
1. Հումքի և նյութերի գծով	135	97	30	5	3	95	40
2. Ապրանքների գծով	27	-	10	10	7	27	-
3. Հիմնական միջոցների գծով	50	35	10	5	-	50	-
4. Այլ գնումների գծով	28	8	10	10	-	28	-
Ընդամենը	240	140	60	30	10	200	40

Վերլուծվող կազմակերպության կրեդիտորական պարտքերը մեծամասամբ ունեն ժամկետային բնույթ (390 հազ. դ.): Այդ պարտքերը հիմնականում ձևավորվում և մարվում են մինչև 90 օրվա ընթացքում (210 հազ. դ.):

Կազմակերպությունը հաշվետու տարում ունի 40 հազ. դրամի ժամկետանց կրեդիտորական պարտքեր: Դրանք ամբողջովին վերաբերում են հումքի և նյութերի գծով ձևավորված կրեդիտորական պարտքերին:

Կրեդիտորական պարտքերի մարման ժամկետներ չսահմանելու, ինչպես նաև ցպահանջ պարտքերի դեպքում, մարման ժամկետ է համարվում այդ պարտքերը առաջացնող գործարքի

կատարման օրվանը հաջորդող 60-րդ օրը: Եթե կրեդիտորական պարտքերի մարման ժամկետները երկարաձգվել են փոխադարձ համաձայնությամբ, ապա դրանք համարվում են ժամկետանց՝ նոր ժամկետներում չմարվելու դեպքում: Նույն անձանց միջև տարբեր գործարքներից միմյանց նկատմամբ հանդիպակաց կրեդիտորական պարտքերի հաշվանցումը կատարվում է միայն գրավիր համաձայնությամբ: Կրեդիտորական պարտքերի մասնակի մարումը չի համարվում պարտքերի (չմարված գումարի մասով) մարման ժամկետների հետաձգում:

Ժամկետանց կրեդիտորական պարտքերը համարվում են անհուսալի պարտքեր, որոնք վկայում են կազմակերպության ֆինանսական դժվարությունների մասին: Անհրաժեշտ է ուսումնասիրել նաև անհուսալի կրեդիտորական պարտքերի գոյացման ժամկետները, պատճառները և դրանց ազդեցությունը կազմակերպության ֆինանսական դրության վրա:


Ժամկետային և ժամկետանց կրեդիտորական պարտքերի վերլուծությունը կատարվում է նաև ըստ դրանց կազմի ու կառուցվածքի: Դա հնարավորություն է տալիս կրեդիտորական պարտքերի ժամանակին մարման միջոցառումներ ձեռնարկել:

Անհուսալի ճանաչված կրեդիտորական պարտքերը մինչև մեկ տարին լրանալը դուրս են գրվում հաշվետու տարում, որը չի համարվում դրանց ներում: Դուրսգրման պահից այդ պարտքերը երեք տարի շարունակ դեռ հաշվառվում են կազմակերպությունում, որից հետո հանվում են հաշվառումից:

13.3. ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԽՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծական գործընթացում գնահատվում են կրեդիտորական պարտքերի ինտենսիվությունը բնութագրող ցուցանիշները (գծ 13.1):

Կրեդիտորական պարտքերի վերլուծությունը Գծապատկեր 13.1



Կրեդիտորական պարտքերի ինտենսիվության ցուցանիշը բնութագրում են դրանց օգտագործման տևողությունը և մարման հնարավորությունը: Այդ ցուցանիշներն են՝

- կրեդիտորական պարտքերի շրջանառելիությունը,
- կրեդիտորական պարտքերի շրջանառելիության տևողությունը,
- կրեդիտորական պարտքերի տեսակարար կշիռը ընթացիկ պարտավորությունների մեջ,
- դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հարաբերակցությունը:

Կրեդիտորական պարտքերի ինտենսիվության մակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշը շրջանառելիությունն է (Φ_{24}): Այն կարելի է որոշել կրեդիտորական պարտքերի մարված գումարը ($\Psi_{պ}$) բաժանելով դրանց միջին մեծության ($\bar{\Psi}_{պ}$) վրա՝

$$\Phi_{24} = \frac{\Psi_{պ}}{\bar{\Psi}_{պ}}$$

Շրջանառելիության գործակիցը ցուց է տալիս, թե հաշվետու ժամանակաշրջանում քանի անգամ են այդ պարտքերը գոյանում և վերադարձվում կազմակերպության կրեդիտորներին (աղյուսակ 13.5):

**Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության
վերլուծությունը**

Աղյուսակ 13.5

Ցուցանիշներ	Նսխորդ տարի	Հաշվետու տարի	Շե- դումը
1. Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը, հազ. դ.	310	380	+70
2. Մարված կրեդիտորական պարտ- քերի գումարը, հազ. դ.	2200	2400	+200
3. Շրջանառելիությունը՝			
բատ պտույտների	7.1	6.3	-0.8
բատ օրերի	51	57	+6

Վերլուծական գործընթացում հաշվարկվում է նաև կրեդի-
տորական պարտքերի շրջապտույտի տևողությունը՝ օրերով
արտահայտված։ Դա ցուց է տալիս այդ պարտքերի օգտա-
գործման տևողությունը։ Կրեդիտորական պարտքերի շրջա-
պտույտի տևողությունը օրերով ($S_{պ}$) որոշվում է հետևյալ
բանաձևի օգնությամբ՝

$$S_{պ} = \frac{\bar{U}_{պ} \times 360}{U_{պ}}$$

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիությունը տարվա
ընթացքում դանդաղել է, որը տվյալ կազմակերպության համար
կարող է ձևավորել անբարենապատ ֆինանսական իրադրու-
թյուն։

Կրեդիտորական պարտքերի ինտենսիվության մակարդակի
մասին է վկայում ընթացիկ պարտավորությունների մեջ դրանց
տեսակարար կշիռը, որի փոփոխությունը գգալի ազդեցություն է
ունենում հաշվապահական հաշվեկշռի իրացվելիության գնա-
հատման ժամանակ։ Այն որոշվում է կրեդիտորական պարտ-
քերը հարաբերելով ընթացիկ պարտավորություններին (աղյու-
սակ 13.6):

Կրեդիտորական պարտքերի տեսակարար կշիռը ընթացիկ պարտավորություններում

Աղյուսակ 13.6

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը, հազ. դ.	310	380	+70
2. Ընթացիկ պարտավորությունների գումարը, հազ. դ.	1400	1600	+200
3. Կրեդիտորական պարտքերի տեսակարար կշիռը	22.14	23.75	+1.61

Հաշվետու տարում ընթացիկ պարտավորություններում կրեդիտորական պարտքերի տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ աճել է 1.61%-ով:

Վերլուծական հետազոտության ընթացքում շատ կարևոր է նաև հստակ պատկերացում կազմել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հարաբերակցության մասին: Հայտնի է, որ կրեդիտորական պարտքերը համարվում են դեբիտորական պարտքերի ծածկման աղբյուրը: Դրա համար պետք է համադրել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի գումարները: Այդ հարաբերակցությունը նախորդ տարի կազմել է՝ $980 : 310 = 3.16$, իսկ հաշվետու տարում՝ $1045 : 380 = 2.75$: Զնայած այն աստիճանաբար կրճատվում է, սակայն դեբիտորական պարտքերը կրեդիտորական պարտքերին գերազանցման պայմաններում կազմակերպության ֆինանսական կայունությունը վտանգված է:

Կազմակերպության ֆինանսական կառավարիչները վերլուծության արդյունքներով մշակում են կրեդիտորական պարտքերի օպտիմալացման ծրագիր:

S E U S E R

1. Կրեդիտորական պարտքերի վերլուծությունը կատարվում է հետևյալ ուղղություններով.

- ա) կազմի, կառուցվածքի, պատճառների, ձևավորման
- բ) դինամիկայի, ձևավորման, կազմի, ժամկետների
- գ) կազմի, ձևավորման, առկայության, պատճառների
- դ) պատճառների, կազմի, դինամիկայի, ժամկետների:

2. Ինչպես է որոշվում կրեդիտորական պարտքերի մարման տևողությունը.

- ա) արտադրանքի ինքնարժեք / կրեդիտորական պարտքերի միջին տարեկան մնացորդ
- բ) կրեդիտորական պարտքերի միջին տարեկան մնացորդ / իրացումից հասուլթ
- գ) 360 / կրեդիտորական պարտքերի պտույտների թիվ
- դ) իրացումից հասուլթ x 360 / կրեդիտորական պարտքերի միջին տարեկան մնացորդ:

3. Ինչպես է որոշվում կրեդիտորական պարտքերի պտույտների թիվը.

- ա) իրացումից հասուլթ / կրեդիտորական պարտքերի միջին տարեկան գումար
- բ) կրեդիտորական պարտքերի միջին տարեկան գումար / իրացումից հասուլթ
- գ) կրեդիտորական պարտքերի միջին տարեկան գումար / իրացված արտադրանքի ինքնարժեք
- դ) իրացված արտադրանքի ինքնարժեք / կրեդիտորական պարտքերի միջին տարեկան գումար:

4. Կրեդիտորական պարտքերի մարման արագությունը որոշվում է.

- ա) կրեդիտորական պարտքերի միջին տարեկան գումար / իրացումից հասուլթ x 360

- թ) իրացումից հասուլթ / կրեդիտորական պարտքերի միջին տարեկան մնացորդ x 360
- գ) կրեդիտորական պարտքերի միջին տարեկան գումար / արտադրանքի ինքնարժեք x 360
- դ) արտադրանքի ինքնարժեք / կրեդիտորական պարտքերի միջին տարեկան գումար x 360:

5. Ինչպե՞ս է որոշվում կրեդիտորական պարտքերի օգտագործման միջին տևողությունը.

- ա) կրեդիտորական պարտքերի միջին տարեկան գումար x 360 / կրեդիտորական պարտքերի միջին մնացորդ
- թ) կրեդիտորական պարտքերի միջին մնացորդ x 360 / կրեդիտորական պարտքերի միջին տարեկան գումար
- գ) իրացումից հասուլթ / կրեդիտորական պարտքերի միջին տարեկան գումար x 360
- դ) կրեդիտորական պարտքերի միջին տարեկան գումար / իրացումից հասուլթ x 360:

Գ Լ ՈՒ Խ XIV

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

14.1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

Ծուկայական տնտեսության պայմաններում կազմակերպության գործարար ակտիվությունը և հուսալիությունը բնութագրվում է նրա ֆինանսական դրությամբ: Դա շուկայի բոլոր մասնակիցների շահերի իրագործման երաշխիքն է, քանի որ բավականին մեծ է հետաքրքրությունը յուրաքանչյուր կազմակերպության ֆինանսական դրության վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացման նկատմամբ: Ծուկայի մասնակիցները մշտապես շահագրգուված են իրենց գործընկերների մրցունակության և հուսալիության գնահատման հիմնահարցերով:

Ֆինանսները դրամական հարաբերությունների համակարգ են, որը ընկած է կազմակերպության տնտեսական գործունեության իրականացման հիմքում: Ֆինանսական դրությունը իրենից ներկայացնում է կազմակերպության տնտեսական գործունեության ֆինանսավորման հնարավորությունը և ինքնազարգացման ունակությունը: Այն արտացոլվում է ֆինանսական ռեսուրսների օպտիմալ ձևավորման, նպատակահարմար տեղաբաշխման և արդյունավետ օգտագործման մեջ:

Հայտնի է, որ կազմակերպության տնտեսական գործունեությունը իրականացվում է հետևյալ ոլորտներում՝ գործառնական, ներդրումային և ֆինանսական, որտեղ միջոցների անընդմեջ շրջանառության հետևանքով փոփոխվում է ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների կառուցվածքը, ֆինանսական ռեսուրսների պահանջարկը՝ ազդելով նրա ֆինանսական դրության վրա:

Բարվոք ֆինանսական դրության ապահովման համար կազմակերպությունը պետք է ձևավորի ակտիվների ճկուն կառուցվածք՝ այնպես կազմակերպելով դրանց շարժը, որ եկամուտները գերազանցեն ծախսերին, և արձանագրվեն կայուն ֆինանսական արդյունքներ:

Կայուն ֆինանսական դրություն ունենալու համար կազմակերպությանը անհրաժեշտ է հաջողությամբ իրականացնել իր տնտեսական գործունեությունը, անընդհատ փոփոխվող միջավայրում պահպանել ակտիվների ու պասիվների միջև օպտիմալ հավասարակշռվածություն և թույլատրելի ոփսիկի սահմաններում ապահովել վճարունակության ու ներդրումային գործության բարձր մակարդակ:

Կազմակերպության ֆինանսական դրությունը պայմանավորված է իր գործունեության վերջնական արդյունքներով: Բիզնես-ծրագրի հաջող իրագործումը դրականորեն է ազդում կազմակերպության ֆինանսական դրության վրա, հակառակ դեպքում բարձրանում է ծախսերի մակարդակը, նվազում շահույթի գումարը և վատանում կազմակերպության ֆինանսական դրությունը: Այսպիսով՝ բարվոք ֆինանսական դրությունը երջանիկ պատահականության դրսնորում չէ, այլ կազմակերպության գործունեության արդյունքները որոշող բոլոր գործոնների արդյունավետ կառավարման ամբողջական հետևանք:

Բարենպաստ ֆինանսական դրության առկայության պայմաններում կազմակերպության բիզնես-ծրագիրը հաջողությամբ է իրականացվում: Այդ դեպքում կազմակերպության տնտեսական գործունեությունը նպատակահարմար է ուղղել դրամական միջոցների հոսքերի ապահովմանը, ակտիվների, սեփական կապիտալի ու պարտավորությունների միջև օպտիմալ հարաբերակցության ձևավորմանը և դրանց առավել արդյունավետ օգտագործմանը:

Ծովայական տնտեսության պայմաններում ֆինանսական ռեսուրսների անարդյունավետ ձևավորման, տեղաբաշխման և օգտագործման հետևանքով կազմակերպությունները կարող են ֆինանսական դժվարություններ ունենալ:

Տնտեսական գործունեության ռազմավարական խնդիրների լուծման նպատակով յուրաքանչյուր կազմակերպությունում պետք է մշտապես անցկացնել ֆինանսական դրության վերլուծական հետազոտություններ:

Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծության հիմնական խնդիրներն են՝

- գնահատել հաշվապահական հաշվեկշռի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները,
- որոշել հաշվապահական հաշվեկշռի իրացվելիությունը,
- վերլուծել կազմակերպության ֆինանսական դրությունը բնութագործ գործակիցների համակարգը՝ ակտիվների իրացվելիություն, շահութաբերություն, շրջանառելիություն և ֆինանսական կայունություն,
- ուսումնասիրել անվճարունակ կազմակերպության ֆինանսական դրության վերլուծության առանձնահատկությունները,
- բացահայտել կազմակերպության ֆինանսական դրության առողջացման պահուստներ:

Ֆինանսական դրության վերլուծական հետազոտություններով շահագրգուված են և տվյալ կազմակերպությունը, և շուկայի մասնակիցները: Հետևաբար ֆինանսական վերլուծությունը ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթ:


Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությունը առաջին հերթին իրականացվում է իր ֆունկցիոնալ ծառայությունների միջոցով՝ վերլուծական, հաշվային և այլն: Ներտնտեսական վերլուծության նպատակն է՝ ուսումնասիրել ակտիվների ձևավորման, տեղաբախշման և օգտագործման արդյունավետությունը, պարտավորությունների մարման հնարավորությունը, չեզոքացնել սնանկացման դիսկի վտանգը՝ բացահայտելով ֆինանսական դրության առողջացման պահուստներ:

Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությամբ շահագրգուված են նաև շուկայի մասնակիցները. այս դեպքում վերլուծությունը ստանում է արտաքին բնույթ: Արտաքին ֆինանսական վերլուծության նպատակն է՝ ուսումնասիրել

Կազմակերպության ֆինանսական դրությունը՝ կանխատեսելով ներդրումների ռիսկի աստիճանն ու շահութաբերության մակարդակը և ընդունել արդյունավետ կառավարչական որոշումներ:

Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությունը իրականացվում է մի շարք ուղղություններով (գծ. 14.1):

Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությունը Գծապատկեր 14.1



Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությունը իրականացվում է հետևյալ եղանակներով՝

- հորիզոնական, երբ որոշվում են հաշվեկշռի առանձին հոդվածների գծով ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական շեղումները,
- ուղղահայաց, երբ հաշվարկվում է առանձին հոդվածների տեսակարար կշիռը հաշվեկշռի ընդհանուր հանրագումարի մեջ և գնահատվում շեղման հետևանքները,
- տրենդային, երբ համադրվում են հաշվեկշռի առանձին հոդվածները վերջին մի քանի տարիների կտրվածքով՝ զարգացման միտումները որոշելու նպատակով,
- գործակցային, երբ որոշվում է բազմաթիվ հարաբերական ցուցանիշների մակարդակները ըստ դինամիկայի՝ դրանք համեմատելով միջազգային նորմատիվների հետ,
- գործոնային, երբ բացահայտվում է մի որևէ արդյունքային ցուցանիշի փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցությունը:

Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծական գործընթացում օգտագործվում են մի շարք տեղեկատվական աղյուրներ, որոնք ձևավորվում են ինչպես ֆինանսական, այնպես էլ կառավարչական հաշվառման և հաշվետվության միջոցով: Դրանցից են՝

- ձև N1. «Հաշվապահական հաշվեկշիռ»,
- ձև N2. «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն»,
- ձև N3. «Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն»,
- ձև N4. «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն»,
- ձև N5. «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ»,
- կառավարչական հաշվետվությունների տվյալներ և այլն:

14.2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒԻ ԿԱԶՄԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծության հիմնական տեղեկատվական աղյուրը հաշվապահական հաշվեկշիռն է, որի մեջ արժեքային արտահայտությամբ որևէ մի ժամանակաշրջանի դրությամբ արտացոլվում են նրա ակտիվները, սեփական կապիտալը և պարտավորությունները:

Հաշվապահական հաշվեկշիռը կազմված է հաշվապահական հաշվառման հիմնական հավասարման սկզբունքով՝

ԱԿՏԻՎՆԵՐԻ = ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ +

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվապահական հաշվեկշիռը իրենից ներկայացնում է կազմակերպության ֆինանսական դրության մասին հաշվետվություն, որը հնարավորություն է տալիս լիարժեք պատկերացում կազմել նրա վճարունակության, շահութաբերության, շրջանառելիության և ֆինանսական կայունության մասին:

Կազմակերպության ֆինանսական դրության համալիր վերլուծության համար անհրաժեշտ է խորապես պատկերացնել հաշվապահական հաշվեկշիռի կազմը: Ելենով վերլուծական հետազոտությունների անհրաժեշտությունից և նպատակահարմարությունից՝ ներկայացնենք հաշվապահական հաշվեկշիռ՝ ըստ առանձին բաժինների և ենթաբաժինների:

1. Ոչ ընթացիկ ակտիվներ

1.1. Ոչ ընթացիկ նյութական ակտիվներ

1.2. Ոչ նյութական ակտիվներ

1.3. Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ

2. Ընթացիկ ակտիվներ

2.1. Պաշարներ

2.2. Դերիտորական պարտքեր

2.3. Դրամական միջոցներ և համարժեքներ

3. Սեփական կապիտալ

3.1. Կանոնադրական կապիտալ

3.2. Կուտակված շահույթ

3.3. Սեփական կապիտալի այլ տարրեր

4. Ոչ ընթացիկ պարտավորություններ

5. Ընթացիկ պարտավորություններ

5.1. Ընթացիկ ֆինանսական պարտավորություններ

5.2. Կրեդիտորական պարտքեր:

Հաշվապահական հաշվեկշոփի կազմը ուսումնասիրելու հետ մեկտեղ, պետք է կարողանալ այն գրագետ կարդալ: Կարդալ հաշվապահական հաշվեկշոփ՝ նշանակում է հստակորեն իմանալ նրա յուրաքանչյուր բաժնի, ենթաքաժնի և հոդվածի բովանդակությունը, գնահատման մեթոդները, պատճառահետևանքային կապերը, շեղման պատճառները և դրանց ազդեցությունը կազմակերպության ֆինանսական դրության վրա:

Հաշվապահական հաշվեկշոփ վերլուծության ժամանակ պետք է օգտվել հորիզոնական և ուղղահայաց եղանակներից՝ գնահատելով ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները և դրանց ազդեցությունը կազմակերպության ֆինանսական դրության վրա:

Հաշվապահական հաշվեկշոփի ակտիվում ներկայացված է կազմակերպության տրամադրության տակ գտնվող միջոցների տեղաբաշխումը՝ ըստ առանձին ուղղությունների: Ակտիվների խմբավորման հիմնական հատկանիշը դրանց իրացվելիության աստիճանն է, այսինքն՝ դրամական միջոցների վերածման արագությունը, ըստ որի՝ ակտիվները ստորաբաժանվում են երկու մեծ խմբի՝ ոչ ընթացիկ և ընթացիկ (այլուսակ 14.1):

Այլուսակից երևում է, որ վերլուծվող կազմակերպության ակտիվները մեկ տարվա ընթացքում աճել են 1000 հազ. դ. գումարով, այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները՝ 600 հազ. դ., իսկ ընթացիկ ակտիվները՝ 400 հազ. դ.: Աճել են նաև դրանց առանձին բաղկացուցիչների ցուցանիշները: Ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռները կառուցվածքային փոփոխություն են կրել: Եթե ոչ ընթացիկ ակտիվների բաժինը ընդհանուրի մեջ նվազել է, ապա ընթացիկ ակտիվներինը՝ աճել է:

**Հաշվապահական հաշվեկշի ակտիվային մասի կազմի ու
կառուցվածքի վերլուծությունը**

Աղյուսակ 14.1

Ակտիվ	Նսախորդ տարի		Հաշվետու տարի		Ծեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Ոչ ընթացիկ ակ- տիվներ	7000	70.00	7600	69.09	+600	-0.91
1.1. Նյութական ակ- տիվներ	6300	63.00	6620	60.18	+320	-2.82
1.2. Ոչ նյութական ակտիվներ	400	4.00	550	5.00	+150	+1.00
1.3. Ֆինանսական ակտիվներ	300	3.00	430	3.91	+130	+0.91
2. Ընթացիկ ակտիվ- ներ	3000	30.00	3400	30.91	+400	+0.91
2.1. Պաշարներ	1650	16.50	1860	16.91	+210	+0.41
2.2. Դեբիտորական պարտքեր	1000	10.00	1090	9.91	+90	-0.09
2.3. Դրամական մի- ջոցներ և համարժեք- ներ	350	3.50	450	4.09	+100	+0.59
Հաշվեկշին	10000	100.00	11000	100.00	+1000	-

Կազմակերպության ֆինանսական դրույթունը պայմանա-
վորված է այդ խմբերի հարաբերակցությամբ: Երբ կազմակեր-
պության ոչ ընթացիկ նյութական ակտիվները նյութական
պաշարների բացակայության պատճառով անբավարար են
օգտագործվում, ապա դա բացասաբար է անդրադառնում նրա
ֆինանսական դրույթունը բնութագրող ցուցանիշների վրա: Նույն
իրավիճակը կարող է արձանագրվել, եթե արտադրական պա-

շարների չափից ավելի կուտակման պայմաններում կազմակերպության ոչ ընթացիկ նյութական ակտիվները բավարար չեն դրանք մշակելու համար:

Հայտնի է, որ ընթացիկ ակտիվները գտնվում են ինչպես արտադրական (պաշտրներ), այնպես էլ շրջանառության (դեբիտորական պարտքեր, դրամական միջոցներ և համարժեքներ) ոլորտում՝ կամ արժեքային, կամ նյութական տեսքով: Հետևաբար դրանց միջև անհրաժեշտ է ապահովել օպտիմալ հարաբերակցություն:

Այժմ գնահատենք կազմակերպության ոչ ընթացիկ ակտիվների կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները (աղյուսակ 14.2):

Ոչ ընթացիկ ակտիվների մեծությունը 600 հազ. դրամով գերազանցել է նախորդ տարվա գումարը: Դա տեղի է ունեցել ոչ ընթացիկ ակտիվների բոլոր տեսակների գծով: Ոչ ընթացիկ նյութական ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ նվազել է, որը բացասաբար է անդրադարձել կազմակերպության գործարար ակտիվության վրա:

Ոչ ընթացիկ ակտիվների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը

Աղյուսակ 14.2

Ոչ ընթացիկ ակտիվներ	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- ված- քը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- ված- քը, %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Նյութական ակ- տիվներ	6300	90.00	6620	87.11	+320	-2.89
2. Ոչ նյութական ակ- տիվներ	400	5.71	550	7.23	+150	+1.52
3. Ֆինանսական ակ- տիվներ	300	4.29	430	5.66	+130	+1.37
Ընդամենը	7000	100.00	7600	100.00	+600	-

Ոչ ընթացիկ ակտիվների ուսումնասիրության ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում ոչ ընթացիկ նյութական ակտիվների վերլուծությանը, որոնք կազմակերպության երկարաժամկետ օգուագործման ակտիվներից են: Այդ ակտիվների կազմում ներառվում են՝ հիմնական միջոցները, հողամասերը, բնական ռեսուրսները, ներդրումային գույքը և անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվները: Ոչ ընթացիկ նյութական ակտիվների գերակշիռ մասը կազմում են հիմնական միջոցները, որոնց վերլուծությունը տարվում է հետևյալ ուղղություններով՝ ըստ կազմի ու կառուցվածքի, ապահովվածության աստիճանի, տեխնիկական մակարդակի, արդյունավետության ցուցանիշների և այլն (գլուխ II):

Հիմնական միջոցների կազմում առանձնացվում են երկու կարևոր խմբեր՝ շահագործման մեջ գտնվող մաշվող, և չգտնվող, հիմնական միջոցներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր տեսակները: Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցների կազմում տարբերում են դրանց ակտիվ և պասիվ մասերը:

Կազմակերպության համար սկզբունքային նշանակություն ունի հիմնական միջոցների ակտիվ ու պասիվ մասերի միջև հարաբերակցությունը, քանի որ դրանով են պայմանավորվում մի շարք կարևորագույն ցուցանիշների մակարդակները՝ հիմնական միջոցների շահութաբերություն, հատուց և այլն:

Վերլուծական գործընթացում գնահատվում է կազմակերպության և նրա կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական միջոցներով և դրանց առանձին տեսակներով ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական պահովվածության աստիճանը:

Հիմնական միջոցներով կազմակերպության ապահովվածության աստիճանը բնութագրվում է աշխատանքի գինվածության և մասնավորապես տեխնիկական գինվածության ցուցանիշներով: Կազմակերպության համար ցանկալի է, որ աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը գերազանցեն այդ ցուցանիշների աճի տեմպերը, որը վկայում է հիմնական միջոցների հատուցի մակարդակի բարձրացման մասին:

Կազմակերպության համար կարևոր նշանակություն ունի հատկապես մեքենասարքավորումների օգտագործման աստիճանը: Վերլուծվում են մեքենասարքավորումների քանակը, աշխատաժամանակը և հզորությունը բնութագրող ցուցանիշները: Դրա հետ մեկտեղ, համապատասխան գործակիցներով գնահատվում է հիմնական միջոցների, հատկապես մեքենասարքավորումների տեխնիկական մակարդակը:

Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակի բնութագրվում է մի շարք ցուցանիշներով՝ շահութաբերության, հատուցի և ակտիվ մասի հատուցի:

Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության մակարդակի առավել ընդհանրական ցուցանիշը շահութաբերությունն է, որի փոփոխությունը պայմանավորված է ինչպես հատուցի, այնպես էլ իրացման շահութաբերության ազդեցությամբ: Վերլուծության համապատասխան եղանակներով որոշվում է այդ գործոնների ազդեցությունը շահութաբերության փոփոխության վրա:

Հիմնական միջոցների հատուցի փոփոխությունը առաջին հերթին պայմանավորված է ակտիվ մասի տեսակարար կշռի և դրա հատուցի ազդեցությամբ: Որոշվում է նաև հատուցի փոփոխության վրա միավոր մեքենասարքավորման միջին գնի, օրերի թվի, հերթափոխային գործակցի, հերթափոխի միջին տևողության և միջին ժամային արտադրողականության ազդեցությունը:

Ոչ ընթացիկ ակտիվների կազմում զգալի տեսակարար կշռություն ու նյութական ակտիվները: Այդ ակտիվների բացարձակ գումարը հաշվենորու տարվա ընթացքում ավելացել է 150 հազ. դրամով, իսկ տեսակարար կշռությունը ընդհանուրի մեջ՝ 1.52%-ով:

Ոչ նյութական ակտիվների վերլուծությունը իրականացվում է ըստ կազմի ու կառուցվածքի և օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների (գլուխ III):

Այդ ակտիվների կազմի մեջ են մտնում՝ բուն ոչ նյութական ակտիվները, անավարտ ոչ նյութական ակտիվները և գուրվիլը: Ոչ նյութական ակտիվները, ըստ կազմի, օգտագործման բնույթի և ֆինանսական ցուցանիշների վրա ունեցած ազդեցության,

միասեռ չեն: Այդ պատճառով ոչ նյութական ակտիվները գնահատվում են տարբերակված մոտեցմամբ՝ դրանց նախապես խմբավորելով ըստ տեսակների, մուտքագրման աղյուրների և ելքագրման ուղղությունների, իրավական պաշտպանվածության, արդյունավետ օգտագործման ժամկետների, հեղինակության աստիճանի, իրացվելիության մակարդակի, ներստեղծված ակտիվների և այլն:

Ոչ նյութական ակտիվների վերլուծական գործընթացում որոշվում են դրանց դիմամիկան, կառուցվածքային տեղաշարժերը, տարբեր գործոնների ազդեցությունը և դրա հնարավոր հետևանքները կազմակերպության գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա:

Այնուհետև պետք է վերլուծել ոչ նյութական ակտիվների օգտագործման արդյունավետությունը բնութագրող շահութաբերության ցուցանիշը և բացահայտել դրա փոփոխության վրա մի կողմից այդ ակտիվների ամորտիզացիայի շահութաբերության և շրջանառելիության, մյուս կողմից՝ իրացման շահութաբերության և հատուցի ազդեցությունը: Վերլուծական գործողությունները կատարվում են կամ շղթայական տեղադրումների, կամ տարբերությունների եղանակով:

Ոչ ընթացիկ ակտիվների երրորդ բաղկացուցիչը ֆինանսական ակտիվներն են: Նախորդ տարվա համեմատ դրանց աճը բացարձակ գումարով կազմել է 130 հազ. դ., իսկ հարաբերական մեծությամբ՝ 1.37%:

Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվները պետք է վերլուծել ինչպես ըստ կազմի ու կառուցվածքի, այնպես էլ ըստ օգտագործման արդյունավետության ցուցանիշների (գլուխ IV):

Այդ ակտիվները կազմակերպության ժամանակավորապես ազատ միջոցների արդյունավետ օգտագործման գործուն ձևերից են, և ունեն մեկ տարուց ավելի իրացվելիության ժամկետ: Դրանք խմբավորվում են հետևյալ կերպ՝ առևտրական նպատակներով պահպող ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահպող ներդրումներ, տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր և վաճառքի համար մատչելի ակտիվներ:

Վերլուծական գործընթացում որոշվում են ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների աճի տեմպերը, կառուցվածքային տեղաշարժերը, տարբեր գործոնների ազդեցությունը և դրանց հետևանքները կազմակերպության գործունեությունը բնութագրող ցուցանիշների վրա:

Այնուհետև որոշվում է ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների օգտագործման արդյունավետությունը բնութագրող շահութաբերության մակարդակի փոփոխության վրա դրանց կառուցվածքի և առանձին ակտիվների շահութաբերության ազդեցությունը: Դրա հետ մեկտեղ, հաշվարկվում է նաև նույն մակարդակի փոփոխության վրա իրացման շահութաբերության և ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների հատուցի ազդեցությունը:

Ընթացիկ ակտիվները մեծ տեսակարար կշիռ ունեն կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի մեջ (այլուսակ 14.3): Դրանք ակտիվների կազմում ունեն ամենամեծ շարժունակության աստիճանը: Հետևաբար ընթացիկ ակտիվների օգտագործման արդյունավետության մակարդակով է մեծապես պայմանավորված կազմակերպության ֆինանսական դրույթունը:

Ընթացիկ ակտիվների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը

Այլուսակ 14.3

Ընթացիկ ակտիվների կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Պաշարներ	1650	55.00	1860	54.71	+210	-0.29
2. Դեբետորական պարտքեր	1000	33.33	1090	32.06	+90	-1.27
3. Դրամական միջոց- ներ և համարժեքներ	350	11.67	450	13.23	+100	+1.56
Ընդամենը	3000	100.00	3400	100.00	+400	-

Կազմակերպության ընթացիկ ակտիվները հաշվետու տարում ավելացել են 400 հազ. դրամով: Անը գրանցվել է ընթացիկ ակտիվների յուրաքանչյուր տեսակի գծով: Սակայն պաշարների և դեբտորական պարտքերի տեսակարար կշիռները ընդհանուրի մեջ նվազել են, իսկ դրամական միջոցների և համարժեքների բաժինը՝ աճել:

Ընթացիկ ակտիվների մեջ ամենամեծ բաժինը կազմում են պաշարները (նյութական և ապրանքային պաշարներ, ինչպես նաև անավարտ արտադրություն): Կազմակերպության պաշարների գումարը տարվա ընթացքում ավելացել է 210 հազ. դրամով:

Նյութական պաշարներով ապահովածության, դրանց օպտիմալացման և արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների վերլուծությունը ներկայացված է 5-րդ գիխում: Նյութական պաշարները ամբողջությամբ սպառվում են արտադրական մեկ շրջափուլի ընթացքում և իրենց արժեքը վերագրում նոր ստեղծվող արդյունքին:

Նյութական պաշարները հաշվառման մեջ արտացոլվում են փաստացի ինքնարժեքով: Դրանց ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԷ, ՎՄԱԷ կամ միջին կշռված արժեքի բանաձևերով:

Կազմակերպության արտադրական ծրագրի կատարման անհրաժեշտ պայմաններից մեկը նյութական պաշարներով ապահովածությունն է: Վերլուծական գործընթացում պետք է որոշել նյութական պաշարների առանձին տեսակներով ապահովածության աստիճանը ինչպես բացարձակ, այնպես էլ՝ հարաբերական կտրվածքով: Այնուհետև գնահատվում է մատակարարման ծրագրի որակը:

Արտադրական գործընթացի կազմակերպման հիմնական պայմաններից մեկը նյութական պաշարների պահանջարկի ապահովածությունն է ներքին և արտաքին աղյուրներով: Շատ կարևոր է առանձին պաշարների որակական մակարդակի, ISO-9000 սերիայի ստանդարտներին և պայմանագրի պայմաններին դրանց համապատասխանության գնահատումը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի նյութական պաշարների մատակարարման համաշափության հարցը:

Վերլուծական գործընթացում անհրաժեշտ է օպտիմալացնել պաշարների կազմն ու կառուցվածքը, նվազեցնել սպասարկման ծախսերը և ապահովել դրանց շարժի վրա արդյունավետ վերահսկողություն: Նյութական պաշարների օպտիմալացման հիմար օգտագործվում են մի շարք մեթոդներ՝ EOG, ABC և XYZ:

Նյութական պաշարների օպտիմալացումը թույլ է տալիս արագացնել ակտիվների շրջանառելիությունը և բարձրացնել դրանց շահութաբերության մակարդակը:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել նյութերի ընթացիկ, սեղոնային և ապահովագրական պաշարների վերլուծությանը: Նյութերի ընթացիկ պաշարի մեծությունը պայմանավորված է մատակարարման պարբերականությամբ և միշտն օրական ծախսով:

Այնուհետև որոշվում է նյութական պաշարների շրջանառության տևողությունը, որը դրանց մուտքագրման և ելքագրման ժամանակի տևողությունն է: Որքան փոքր է այդ ժամանակաշրջանը, այնքան կարճ է արտադրական շրջափուլի տևողությունը:

Նյութական պաշարների օգտագործման արդյունավետությունը բնութագրվում է մի շարք ցուցանիշներով՝ միավոր նյութերի շահութաբերություն, նյութատարություն և նյութահատուց: Նյութերի շահութաբերությունը համարվում է նյութական պաշարների արդյունավետությունը բնութագրող կարևոր ցուցանիշը: Այն ցուց է տալիս միավոր նյութական ծախսին բաժին ընկնող շահույթի չափը: Նյութերի շահութաբերության մակարդակի փոփոխության վրա ազդում են նյութահատուցը և արտադրանքի շահութաբերությունը:

Արտադրանքի նյութատարությունը ցույց է տալիս, թե միավոր արտադրանքի արտադրության համար որքան նյութական ծախսումներ են անհրաժեշտ: Գոյություն ունեն նյութատարության հետևյալ ցուցանիշները՝ ընդիհանուր, մասնակի և տեսակարար: Դրանց վրա ազդում են արտադրանքի տեսականին և կառուցվածքը, նյութերի ծախսի նորման, նյութերի

գները և արտադրանքի գները:

Նյութական պաշարների օգտագործման արդյունավետության աստիճանը բնութագրող մյուս ցուցանիշը նյութահատուցն է: Այն նյութատարության հակադարձ մեծությունն է և ցուց է տալիս, թե միավոր նյութական ծախսումներով որքան արտադրանք է արտադրվել:

Նյութատարությունը զգալի ազդեցություն ունի արտադրաքի ինքնարժեքի և ծավալի վրա: Նյութատարության մակարդակի նվազեցման դեպքում տնտեսված նյութերի հաշվին կարելի է արտադրել լրացուցիչ արտադրանք և ապահովել կայուն ֆինանսական արդյունքներ:

Ընթացիկ ակտիվներում զգալի տեսակարար կշիռ ունեն ապրանքային պաշարները, որոնց մեջ հիմնական բաժինը պատկանում է արտադրանքին: Ապրանքային պաշարների վերլուծական գործընթացում ուսումնասիրվում են կազմակերպության մարքեթինգային գործունեության, արտադրանքի տեսականու, կառուցվածքի, որակի ու համաչափության, արտադրանքի արտադրության ծավալի վրա տարբեր գործուների ազդեցությունը և արտադրական շրջափուլի տևողությունը (գլուխ VI):

Կազմակերպության բիզնես-ծրագիրը կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել արտադրանքի սպառողական պահանջարկը, մրցակիցներին ու գնորդներին, գների մեխանիզմը, պաշարների հասանելիությունը և այլն: Կազմակերպության ֆինանսական ցուցանիշները պայմանավորված են այդ հիմնախնդիրների հաջող լուծմամբ: Այդ նպատակով իրականացվում է կազմակերպության մարքեթինգային գործունեության վերլուծություն: Հավաքագրված տեղեկատվության հիման վրա որոշվում է առանձգականության գործակիցը:

Յուրաքանչյուր ապրանքատեսակի ծավալի և ֆինանսական արդյունքների ցուցանիշները իրացման տարբեր շուկաներում ուսումնասիրելու համար առանձնացվում են չորս ապրանքային՝ «հիմնական», «օժանդակ», «նոր» և «հիմ» արտադրատեսակներ: Այնուհետև դիտարկվում են արտադրանքի կենսատևության հետևյալ փուլերը՝ մշակման, շուկա դուրս

բերման, իրացման ծավալի աճի, հասունության և անկման:

Կարևոր նշանակություն ունի արտադրանքի մրցունակության մակարդակը: Այդ նպատակով գնահատվում ու կանխատեսվում է արտադրանքի մրցունակությունը և բացահայտվում դրա մակարդակի փոփոխության վրա տարբեր գործուների ազդեցությունը:

Վերլուծական գործընթացում որոշվում է արտադրանքի արտադրության ծավալի աճի տեմպը: Դրանից հետո ուսումնասիրվում է արտադրանքի տեսականին ու կառուցվածքը: Կազմակերպությունը պետք է մշակի արտադրանքի տեսականու գծով համապատասխան քաղաքականություն՝ հաշվի առնելով ինչպես սպառողական պահանջարկը, այնպես էլ իր տրամադրության տակ գտնվող պաշարների արդյունավետ օգտագործման խնդիրները: Արտադրանքի տեսականու և կառուցվածքի փոփոխությունները ազդում են կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող բոլոր ցուցանիշների վրա:

Չուկայի պայմաններում կազմակերպության տնտեսական գործունեության առանցքային օղակներից մեկը արտադրանքի որակի բարելավումն է: Չուկան բարձր պահանջներ է ներկայացնում արտադրանքի որակի նկատմամբ: Այդ հիմնահարցը կազմակերպության գործարար ակտիվության ռազմավարության հիմքն է և ֆինանսական կայունության գրավականը:

Արտադրանքի որակի վերլուծությունը իրականացվում է բազմաթիվ ցուցանիշներով: Արտադրանքի որակը բնութագրվում է ընդհանուր ծավալի մեջ տարբեր մակարդակներով արտադրվող արտադրանքի տեսակարար կշիռներով: Արտադրանքի որակի մակարդակը բնութագրվում է տեսակայնության գործակցով և որակի ինդեքտով:

Արտադրանքի որակի մակարդակի վերլուծության ընթացքում որոշվում է շուկայական իրադրության, պաշարների օգտագործման, արտադրության կազմակերպատեխնիկական մակարդակի, նյութական խրախուսման համակարգի, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և արտադրանքի որակի նկատմամբ առաջադրվող պահանջների ազդեցությունը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում արտադրանքի որակի կառավարման ծախսումների վերլուծության հարցերին: Կանխարգելման և գնահատման ծախսումները համարվում են շահավետ ներդրումներ, իսկ արատների հետ կապված ծախսումները՝ կորուստներ: Վերլուծական գործընթացում որոշվում է խոտանից առաջացած կորուստների չափը և դրանց ազդեցությունը արտադրանքի ինքնարժեքի և ծավալի վրա:

Ծատ կարենոր է արտադրանքի արտադրության համաշափության ապահովումը: Համաշափությունը նախատեսված ժամանակացուցին համապատասխան տարբեր արտադրատեսակների համաշափ արտադրությունն է՝ օրվա, շաբաթվա, տասնօրյակի կամ ամսվա ընթացքում:

Համաշափությունը արտադրանքի ժամանակին արտադրության և իրացման հիմնական պայմաններից մեկն է: Արտադրության համաշափության խախտումները բացասաբար են անդրադառնում կազմակերպության տնտեսական գործունեությունը բնութագրող բոլոր ցուցանիշների վրա:

Վերլուծական գործընթացում գնահատում են համաշափության և վարիացիայի գործակիցները: Որքան ցածր է արտադրության համաշափության մակարդակը, այնքան բարձր է դրա անհամաշափության աստիճանը: Անհրաժեշտ է բացահայտել արտադրության անհամաշափության պատճառները:

Արտադրանքի արտադրության ծավալի վրա ազդում են բազմաթիվ գործուներ՝ հիմնական միջոցների, նյութական ու աշխատանքային պաշարների օգտագործման արդյունավետությունը և անավարտ արտադրության մնացորդների փոփոխությունը:

Արտադրանքի արտադրության ծավալի փոփոխության վրա հիմնական միջոցների և նյութական պաշարների ազդեցությունը ներկայացվել է նախորդ գլուխներում (գլուխ II և V): Աշխատանքային գործուների վերլուծությունը կատարվում է ըստ աշխատանքային պաշարներով կազմակերպության ապահովվածության և դրանց օգտագործման արդյունավետության ցուցանիշների:

Աշխատանքային պաշարներով կազմակերպության և նրա առանձին ստորաբաժանումների ապահովածության աստիճանը որոշվում է ինչպես բացարձակ, այնպես էլ՝ հարաբերական կտրվածքով։ Այնուհետև ուսումնասիրվում են անձնակազմի շարժը բնութագրող գործակիցները՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոսունության պատճառների բացահայտմանը։ Դրանից հետո գնահատվում է աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման արդյունավետությունը։

Աշխատանքային պաշարների օգտագործման արդյունավետությունը բնութագրվում և աշխատանքի շահութաբերության, արտադրողականության և արտադրանքի աշխատատարության ցուցանիշներով։

Աշխատանքային պաշարների օգտագործման արդյունավետությունը բնութագրող առավել ընդհանրական ցուցանիշ է աշխատանքի շահութաբերությունը, որի վրա ազդում են հետևյալ գործոնները՝ արտադրանքի շահութաբերությունը, մեկ աշխատողի արտադրողականությունը և այլն։ Իր հերթին կարելի է բացահայտել արտադրանքի արտադրության ծավալի փոփոխության վրա աշխատանքային ցուցանիշների ազդեցությունը՝ բանվորների միջին ցուցակային թիվը, տարվա ընթացքում մեկ բանվորի աշխատած օրերի միջին թիվը, աշխատանքային օրվա տևողությունը և մեկ բանվորի միջին ժամային արտադրողականությանը։

Մեկ աշխատողի արտադրողականության փոփոխությունը պայմանավորված է հետևյալ գործոններով՝ ընդհանուր անձնակազմի մեջ բանվորների տեսակարար կշռով, աշխատած օրերով, աշխատանքային օրվա տևողությամբ և մեկ բանվորի ժամային արտադրողականությամբ։

Մեկ բանվորի միջին տարեկան արտադրողականության փոփոխության վրա ազդում են՝ բանվորների աշխատած օրերի թիվը, աշխատանքային օրվա տևողությամբ և մեկ բանվորի միջին ժամային արտադրողականությամբ։

Աշխատանքի արտադրողականության հակադարձ մեծությունը արտադրանքի աշխատատարությունն է։ Արտադրանքի

աշխատատարության մակարդակի նվազեցումը աշխատանքի արտադրողականության աստիճանի բարձրացման կարևորագուն պայման է: Վերլուծական գործընթացում որոշվում է աշխատատարության ազդեցությունը աշխատանքի արտադրողականության վրա:

Արտադրական բոլոր փուլերով չանցած արտադրատեսակները կազմում են անավարտ արտադրությունը: Անավարտ արտադրության մնացորդների աճը վկայում է արտադրական շրջափուլի տևողության ավելացման հաշվին ակտիվների շրջանուելիության դանդաղեցման մասին: Արտադրական շրջափուլի տևողության ժամանակաշրջանի նվազումը վկայում է կազմակերպության գործարար ակտիվության մակարդակի աճի մասին:

Ընթացիկ ակտիվների մեջ իրենց ուրուց տեղն ունեն դերիտորական պարտքերը, որոնք մեծ ազդեցություն ունեն կազմակերպության ֆինանսական դրության վրա: Այդ պարտքերը տարվա ընթացքում ավելացել են 90 հազ. դրամով:

Ընթացիկ ակտիվների մեջ դերիտորական պարտքերի կտրուկ աճը կարող է վկայել կամ իրացման ծավալի ավելացման, կամ էլ ժամկետանց պարտքերի մասին: Ժամկետանց պարտքերի առկայությունը կազմակերպության համար ստեղծում է ֆինանսական դժվարություններ: Դերիտորական պարտքերի մեջ ակտիվների սառեցումը նպաստում է դրանց շրջանուելիության դանդաղեցմանը և ֆինանսական անկայուն իրադրության ձևավորմանը:

Դերիտորական պարտքերի վերլուծությունը կատարվում է ըստ դրանց կազմի ու կառուցվածքի՝ հորիզոնական և ուղղահայաց եղանակներով, ինչպես նաև արդյունավետության ցուցանիշների (գլուխ VII):

Դերիտորական պարտքերի վերլուծությունը իրականացվում է ըստ առանձին դերիտորների, արտադրատեսակների, գնման ծավալների, վճարման պայմանների և այլն: Այնուհետև դերիտորական պարտքերը դիտարկվում են ըստ գոյացման ժամկետների: Այդ ընթացքում անհրաժեշտ է որոշել դրանց տեսակարար կշիռները ընդհանուրի մեջ, բացահայտել հնարավոր

պատճառները և հետևանքները:

Դեբիտորական պարտքերը լինում են ժամկետային և ժամկետանց: Ցուրաքանչյուր կազմակերպություն շահագրգռված է դեբիտորական պարտքերի մարման ժամկետների կըրճատման հարցում, որի լուծումը կարելի է ապահովել համապատասխան միջոցառումների ձեռնարկման դեպքում: Հատուկ ուշադրություն է դարձվում անհուսալի դեբիտորական պարտքերի գոյացման ժամկետների և պատճառների ուսումնասիրությանը:

Վերլուծական գործընթացում գնահատվում են դեբիտորական պարտքերի ինտենսիվությունը բնութագրող ցուցանիշները՝ շրջանառելիությունը, անհուսալի պարտքերի տեսակարար կշիռը ընդհանուր և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը՝ ընթացիկ ակտիվների մեջ:

Դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը ցուց է տալիս, թե հաշվետու տարվա ընթացքում քանի անգամ են այդ պարտքերը գոյանում և վերադարձվում տվյալ կազմակերպություն:

Դեբիտորական պարտքերի ինտենսիվությունը բնութագրվում է նաև դրանց ընդհանուր մեծության մեջ անհուսալի պարտքերի տեսակարար կշիռ փոփոխությամբ: Այդ ցուցանիշի աճը վկայում է դեբիտորական պարտքերի ինտենսիվության մակարդակի անկման մասին:

Հաջորդ ցուցանիշը ընթացիկ ակտիվների մեջ դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն է, որի փոփոխությունը ազդում է ակտիվների իրացվելիության մակարդակի վրա:

Ընթացիկ ակտիվների վերջին բաղադրիչը դրամական միջոցները և դրանց համարժեքներն են, որոնց գումարը տարվա ընթացքում աճել է 100 հազ. դրամով:

Կազմակերպության տնտեսական գործունեության ընթացքում դրամական միջոցները անընդհատ գունվում են շարժման մեջ՝ ձևավորելով դրամական հոսքեր: Դրամական միջոցների և դրան համարժեքների ներհոսքերի և արտահոսքերի տարբերությանը անվանում են գուտ դրամական հոսքեր:

Կազմակերպության տնտեսական գործունեության նորմալ իրականացման համար անհրաժեշտ է ապահովել օպտիմալ չափերի հասնող դրամական միջոցներ: Դրամական միջոցների հոսքերը ներկայացվում են ըստ գործունեության ոլորտների՝ գործառնական, ներդրումային և ֆինանսական: Դրանց անբավարար գումարը վկայում է կազմակերպության անվճարունակության, իսկ չափից ավելի մեծությունը՝ արժեգործական մասին:

Դրամական միջոցների հոսքերի վերլուծության ընթացքում պետք է ուսումնասիրել դրամական միջոցների հոսքերի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները և որոշել դրանց օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների վրա տարբեր գործուների ազդեցությունը:

Դրամական միջոցների հոսքերի շարժի վերլուծությունը իրականացվում է ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայց եղանակներով: Դրանից հետո վերլուծությունը կատարվում է նաև ուղղակի և անուղղակի մեթոդներով: Ուղղակի մեթոդի կիրառման դեպքում բացահայտվում են կազմակերպության դրամական միջոցների մուտքերի և ելքերի բացարձակ գումարները: Անուղղակի մեթոդի օգտագործման ժամանակ գուտ շահույթը վերահաշվարկվում է ոչ դրամական հոսքերի գործառնությունների գումարով, որն էլ թույլ է տալիս ֆինանսական արդյունքից անցում կատարել դրամական հոսքերի ցուցանիշին:

Վերլուծական գործընթացում որոշվում են նաև դրամական միջոցների հոսքերի օգտագործման արդյունավետության ցուցանիշները՝ իրացվելիությունը, շահութաբերությունը և շրջանառելիությունը:

Դրամական միջոցների օգտագործման արդյունավետության առավել ընդհանրական ցուցանիշը դրամական հոսքերի իրացվելիության գործակիցն է:

Շահութաբերության գործակիցը որոշվում է ըստ գուտ դրամական հոսքերի, իրացումից ստացված շահույթի, գործառնաան շահույթի և այլ ցուցանիշների: Շահութաբերության փոփոխությունը պայմանավորված է իրացման շահութաբերության և դրամական միջոցների հոսքերի շրջանառելիության ազդեցությամբ:

Դրամական միջոցների հոսքերի շահութաբերության մակարդակի վերլուծությունը կատարվում է նաև ըստ կազմակերպության գործունեության տարբեր ոլորտների:

Դրամական միջոցների օգտագործման արդյունավետության ցուցանիշներից է նաև դրանց շրջանառելիության գործակիցը, որը ցուց է տալիս, թե հաշվետու տարվա ընթացքում դրամական միջոցները քանի պատուի են կատարում:

Հաշվապահական հաշվեկշռի պասիվային մասում արտացոլված են կազմակերպության տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների աղբյուրները: Ցուրաքանչյուր կազմակերպության տնտեսական գործունեության անկյունաքարը ֆինանսական ռեսուրսներով ապահովածությունն է:

Հաշվապահական հաշվեկշռի պասիվային մասում ներկայացված տեղեկատվական տվյալները հնարավորություն են ընձեռում որոշել դրա կազմի ու կառուցվածքի փոփոխությունները, բացահայտել դրանց վրա տարբեր գործոնների ազդցությունը և գնահատել կազմակերպության ֆինանսական կայունությունը:

Կազմակերպության կապիտալը ըստ պատկանելիության ստորաբաժանվում է սեփական և փոխառու, իսկ ըստ օգտագործման տևողության՝ հաստատուն և փոփոխուն մասերի:

Փոխառու կապիտալը կազմակերպության ինչպես ոչ ընթացիկ, այնպես էլ ընթացիկ պարտավորությունների ամբողջությունն է: Կազմակերպության հաստատուն կապիտալը սեփական կապիտալի և ոչ ընթացիկ պարտավորությունների գումարն է, իսկ փոփոխուն կապիտալն իրենից ներկայացնում է ընթացիկ պարտավորությունները:

Գնահատենք կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի պասիվային մասի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները (աղյուսակ 14.4):

Կազմակերպության պասիվները հաշվետու տարվա ընթացքում ավելացել են 1000 հազ. դրամով: Դա տեղի է ունեցել սե-

փական կապիտալի հաշվին, քանի որ պարտավորությունների մեջ փոփոխություններ չկան:

Կազմակերպության պասիվների կառուցվածքում տեղի են ունեցել որոշակի տեղաշարժեր: Սեփական կապիտալի և ընթացիկ պարտավորությունների տեսակարար կշիռները մեկ տարվա ընթացքում աճել են: Դրանց հակառակ՝ կրճատվել է ոչ ընթացիկ պարտավորությունների բաժինը հաշվեկշռի հանրագումարի մեջ:

Հաշվապահական հաշվեկշռի պասիվային մասի կազմի ու կառուցվածքի վերլուծությունը

Աղյուսակ 14.4

Պասիվ	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Ըեղումը	
	Գումարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	Գումարը, հազ. դ.	Կառուց- վածքը, %	Ըստ գումարի	Ըստ կառուց- վածքի
3. Սեփական կապիտալ	7300	73.00	8300	75.45	+1000	+2.45
3.1. Կանոնադրական կապիտալ	6600	66.00	6600	60.00	-	-6.00
3.2. Վուտակված շահույթ	640	6.40	1540	14.00	+900	+7.60
3.3. Այլ տարրեր	60	0.60	160	1.45	+100	+0.85
4. Ոչ ընթացիկ պարտավորություններ	1300	13.00	1100	10.00	-200	-3.00
5. Ընթացիկ պարտավորություններ	1400	14.00	1600	14.55	+200	+0.55
5.1. Ֆինանսական պարտավորություններ	1070	10.70	1170	10.64	+100	-0.06
5.2. Կրեդիտորական պարտեր	330	3.30	430	3.91	+100	+0.61
Հաշվեկշռ	10000	100.00	11000	100.00	+1000	-

Կազմակերպության տնտեսական գործունեության ֆինանսավորման հիմնական աղբյուրը նրա սեփական կապիտալն է, որի կազմի մեջ են մտնում՝ կանոնադրական կապիտալը, կուտակված շահույթը և այլ տարրեր:

Սեփական կապիտալը կազմակերպության ֆինանսական անկախության գրավականն է: Այն բնութագրվում է ներգրավման պարզությամբ և կայուն ֆինանսական դրության ու սնանկացման ոիսկի նվազման ապահովմամբ: Սեփական կապիտալը ներգրավվում է երկարաժամկետ հիմունքներով և ունի ոիսկայնության ցածր աստիճան:

Կազմակերպության տեղեկատվական տվյալներով գնահատենք սեփական կապիտալի կազմի ու կառուցվածքի փոփոխությունները (աղյուսակ 14.5):

Սեփական կապիտալի կազմի ու կառուցվածքի վերլուծությունը Աղյուսակ 14.5

Սեփական կապիտալի կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- վածքը, %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Կանոնադրական կապիտալ	6600	90.41	6600	79.52	-	-10.89
2. Կուտակված շա- հույթ	640	8.77	1540	18.55	+900	+9.78
3. Այլ տարրեր	60	0.82	160	1.93	+100	+1.11
Ընդամենը	7300	100.00	8300	100.00	+1000	-

Սեփական կապիտալի մեծությունը մեկ տարվա ընթացքում ավելացել է 1000 հազ. դ. գումարով: Այն ապահովվել է կուտակված շահույթի և սեփական կապիտալի այլ տարրերի մեծության ավելացմամբ: Կանոնադրական կապիտալի չափը տարվա ըն-

թացքում փոփոխության չի ենթարկվել: Այդ պատճառով դրա տեսակարար կշիռը սեփական կապիտալի ընդհանուր մեծության մեջ բավականին նվազել է:

Կանոնադրական կապիտալը կազմակերպության կանոնադրական գործունեության իրականացման համար հիմնադիրների կողմից ներդրված միջոցների մեծությունն է, որի վերլուծությունը սկզբում տարվում է ըստ կազմի ու կառուցվածքի՝ հրոհգոնական և ուղղահայաց եղանակներով՝ բացահայտելով դրա առանձին տարրերի շեղման վրա տարբեր գործուների ազդեցությունը (գլուխ X):

Բաժնետիրական ընկերությունը, կանոնադրական կապիտալի մեծությանը համապատասխան, անվանական արժեքով թողարկում է բաժնետոմսեր, որոնք ըստ բնույթի լինում են հասարակ և արտոնյալ:

Հասարակ բաժնետոմսի տերը մասնակցում է տվյալ ընկերության կառավարման գործընթացին և օժտված է մեկ ձայնի իրավունքով: Հասարակ բաժնետոմսերի դիմաց տրվում է շահաբաժնին, որի չափը որոշվում է բաժնետիրական ընկերության տարեկան ժողովի արդյունքներով:

Արտոնյալ բաժնետոմսերի տերը չի կարող մասնակցել բաժնետիրական ընկերության կառավարման գործընթացին: Սակայն արտոնյալ բաժնետոմսը իր տիրոջը ապահովում է շահաբաժնի կայուն և երաշխավորված գումար: Այն վճարվում է ընկերության գուտ շահույթի, իսկ դրա չբավարարման դեպքում՝ պահուստների հաշվին:

Ֆինանսական հաշվետվությունների մեջ կանոնադրական կապիտալը ներկայացվում է գուտ գումարով: Այն իրենից ներկայացնում է կանոնադրական կապիտալի և չվճարված ու հետ գնված կապիտալի հանրահաշվական գումարը:

Կանոնադրական կապիտալի օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներից է մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը: Այն արժեթղթերի շուկայական արժեքի վրա ազդող առավել կարևոր ցուցանիշներից է:

Մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժնի մեծությունը կախված է ինչպես բաժնետոմսի շահութաքերության մակարդակից, այնպես էլ կազմակերպության տարեկան ընդհանուր ժողովի ընդունած որոշումից: Դրա հետ մեկտեղ, որոշվում է նաև շահաբաժնների վճարման գործակիցը, որը ցուց է տալիս, թե որքան գուտ շահույթ է ծախսվել շահաբաժնների վճարման համար:

Հասարակ բաժնետոմսերը վաճառվում են արժեթղթերի շուկայում և ունեն իրենց գինը: Դրա միջոցով որոշվում է մեկ բաժնետոմսի անվանական արժեքը:

Կերլուծական գործընթացում որոշվում է մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գնի և շահույթի հարաբերակցությունը: Այն արտահայտում է տվյալ կազմակերպության և նրա բաժնետերերի հարաբերությունը:

Կանոնադրական կապիտալի օգտագործման արդյունավետության աստիճանը գնահատվում է նաև մեկ հասարակ բաժնետոմսի շահութաքերության մակարդակով: Այն ուղիղ համեմատական է մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժնի գործակցին և հակադարձ համեմատական՝ նրա շուկայական գնին:

Սեփական կապիտալի լրացման հիմնական աղբյուրը կազմակերպության տնտեսական գործունեությունից ստացված ֆինանսական արդյունքներն են: Դրանք հաշվապահական հաշվեկշռում ներկայացված են «Կուտակված շահույթ» հոդվածում, որը չբաշխված շահույթի և հաշվետու տարվա գուտ շահույթի հանրահաշվական հանրագումարն է: Այն հաշվետու տարում աճել է 900 հազ. դրամով:

Կերլուծական գործընթացը իրականացվում է մի շարք ուղղություններով՝ ուսումնասիրել շահույթի կազմն ու կառուցվածքը, որոշել արտադրանքի իրացումից ստացված շահույթի վրա տարբեր գործոնների ազդեցությունը, գնահատել «ծախսեր-ծավալ - շահույթ» հարաբերակցությունը, վերլուծել գործառնական այլ գործունեության և ոչ գործառնական գործունեության ֆինանսական արդյունքները և հետազոտել շահույթի բաշխման

ու օգտագործման կարգը (գլուխ XI):

Ֆինանսական արդյունքների ամենամեծ տեսակարար կշիռն ունի արտադրանքի իրացումից ստացված շահութը: Շահութը իրացումից ստացված հասուցի և ինքնարժեքի, իրացման ու վարչական ծախսերի տարբերությունն է:

Արտադրանքի իրացումից ստացված շահութի փոփոխության վրա ազդում են հետևյալ գործոնները՝ վաճառքի գինը, ինքնարժեքը, իրացման ծավալը, տեսականին ու կառուցվածքը, իրացման և վարչական ծախսերը:

Ֆինանսական արդյունքների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է գնահատել «ծախսեր - ծավալ - շահութ» ցուցանիշների միջև հարաբերակցությունը: Այն իրականացվում է «դիրեկտ-կոստինգ» համակարգով ծախսերի հաշվառման կազմակերպման պայմաններում:

Վերլուծական գործընթացում ուսումնասիրվում է կազմակերպության գործունեությունը բնութագրող առավել կարևոր ցուցանիշներից շահութի կախվածությունը, և դրա հիման վրա պայմաններ է ստեղծվում կառավարելու շահութի ձևավորման գործընթացը: «Դիրեկտ-կոստինգ» համակարգի կիրառման դեպքում լիովին հաշվի է առնվում փոխկապվածությունը այդ ցուցանիշների միջև՝ բացահայտելով դրանց վրա տարբեր գործուների ազդեցությունը:

Վերլուծական հետազոտության ընթացքում անհրաժեշտ է կատարել նաև շահութի հեռանկարային վերլուծության, որի նպատակն է բացահայտել նախորդ ժամանակաշրջանի միտումները և դրանց հիման վրա կանխատեսել գարգացման հեռանկարները:

Ֆինանսական արդյունքների մեծության վրա զգալի ներգործություն են ունենում նաև արտադրանքի իրացման հետ չկապված գործառնական այլ և ոչ գործառնական գործունեությունից ստացված եկամուտները և ծախսերը: Դրանց վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հորիգնական և ուղղահայաց եղանակներով որոշել յուրաքանչյուր հոդվածի գծով հաշվետու տարվա փոփոխությունները նախորդ տարվա նկատմամբ, բա-

ցահայտել դրանց պատճառները և մշակել միջոցառումների ծրագիր՝ վնասների վերացման ուղղությամբ:

Կազմակերպության տնտեսական գործունեության արդյունքում ձևավորված շահուցքը կուտակվում է հետագայում օգտագործելու նպատակով: Շահուցքից շահութահարկի գծով ծախսը հանելուց հետո նրա գրատ մասը մնում է կազմակերպության տրամադրության տակ և բաշխվում հիմնադիր փաստաթղթերին ու բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներին համապատասխան:

Կազմակերպության պարտավորությունները ըստ ձևավորման ժամանակաշրջանի ստորաբաժանվում են ոչ ընթացիկ (մեկ տարուց ավելի) և ընթացիկ խմբերի (մեկ տարուց պակաս): Փոխառու միջոցների ներգրավումը կազմակերպության շրջանառության ոլորտ՝ դիտարկվում է որպես սովորական երևություն: Այն ժամանակաշրջապես թույլ է տալիս բարելավել կազմակերպության ֆինանսական դրույթունը, որը ճիշտ ժամանակին պետք է վերադարձնել ըստ պատկանելության: Այլապես գոյանում են ժամկետանց պարտավորություններ, և որպես արդյունք, կազմակերպությունը ընկնում է ծանր ֆինանսական դրույթան մեջ:

Վերլուծվող կազմակերպությունում ոչ ընթացիկ պարտավորությունները հաշվետու տարվա ընթացքում նախորդ տարվա համեմատ բացարձակ գումարով նվազել են 200 հազ. դրամով, իսկ հարաբերական մեծությամբ՝ 3%-ով:

Ընթացիկ պարտավորությունների կազմում իր հերթին առանձնացվում են ֆինանսական պարտավորությունները և կրեդիտորական պարտքերը: Այժմ գնահատենք ընթացիկ պարտավորությունների կազմի ու կառուցվածքի փոփոխությունները (այլուսակ 14.6):

Ըստ ազյուսակի տվյալների՝ կազմակերպության ընթացիկ պարտավորությունները նախորդ տարվա համեմատ ավելացել են 200 հազ. դրամով: Սակայն տեղի ունեցած կառուցվածքային տեղաշարժերի հետևանքով ֆինանսական պարտավորությունների տեսակարար կշիռը աճել իսկ կրեդիտորական պարտքերինը՝ նվազել է:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծական գործընթացում մեծ ուշադրություն պետք է դարձնել դրանց ձևավորման ուղղություններին և օգտագործման ինտենսիվության ցուցանիշների ուսումնասիրությանը (գլուխ XII):

Ընթացիկ պարտավորությունների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը

Աղյուսակ 14.6

Ընթացիկ պարտավորություն- ների կազմը	Նախորդ տարի		Հաշվետու տարի		Շեղումը	
	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- ված- քը, %	գու- մարը, հազ. դ.	կա- ռուց- ված- քը, %	ըստ գու- մարի	ըստ կա- ռուց- վածքի
1. Ֆինանսական պար- տավորություններ	1070	76.43	1170	73.13	+100	-3.30
2. Կրեդիտորական պարտքեր	330	23.57	430	26.87	+100	+3.30
Ընդամենը	1400	100.00	1600	100.00	+200	-

Այդ պարտավորությունների կազմի ու կառուցվածքի ուսումնասիրությունը իրականացվում է վերլուծության հորիզոնական և ուղղահայաց եղանակներով։ Դրա համար գնահատվում են ֆինանսական պարտավորությունների կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները և դրանց հետևանքները կազմակերպության գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վրա։

Ֆինանսական պարտավորությունների մեջ գերակշիռ մասը կազմում են բանկային վարկերը։ Ըստ վարկավորման ժամկետների՝ դրանք լինում են երկարաժամկետ և կարճաժամկետ բնույթի։

Բանկերի կողմից վարկային միջոցներ տրամադրվում են մի շարք նախապատրաստական աշխատանքներ կատարելուց հետո։ Դրանցից են՝ կազմակերպության տնտեսական գործու-

Աեռլության վերաբերյալ նախնական տեղեկատվության հավաքագրումը, վարկային հայտերի ուսումնասիրումը, վարկային ոիսկի գնահատումը և ֆինանսական դրույթան վերլուծությունը:

Ֆինանսական դրույթան վերլուծության դրական արդյունքների դեպքում բանկը կազմակերպությանը տրամադրում է վարկային միջոցներ: Կազմակերպությունը իր տնտեսական գործունեության ընթացքում, վարկային միջոցներից բացի, կարող է ներգրավել նաև փոխառություններ: Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը տարվում է ժամկետային և ժամկետանց ուղղություններով:

Վերլուծական գործընթացում կատարվում է նաև կազմակերպության ֆինանսական պարտավորությունների օգտագործման ինտենսիվությունը բնութագրող ցուցանիշների՝ շրջանառելիության, շրջանառելիության տևողության, ժամկետանց պարտքերի տեսակարար կշռի և արդյունավետության գործակցի վերլուծություն:

Կազմակերպության ընթացիկ պարտավորությունների մեջ առանձնանում են կրեդիտորական պարտքերը, որոնք ձևավորվում են տնտեսական գործունեության ընթացքում: Դրանց վերլուծությունը իրականացվում է ըստ կազմի ու կառուցվածքի, գոյացման ժամկետների և ինտենսիվության ցուցանիշների (գլուխ XIII):

Կրեդիտորական պարտքերի վերլուծությունը սկսվում է դրանց կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների գնահատմամբ՝ հորիզոնական և ուղղահայաց եղանակներով՝ որոշենով յուրաքանչյուր հորվածի գծով ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական շեղումները և դրանց վրա տարբեր գործուների ազդեցությունը:

Կրեդիտորական պարտքերը գոյանում են կազմակերպության տնտեսական գործունեության ընթացքում՝ որոշակի ժամանակաշրջանում: Այնուհետև կրեդիտորական պարտքերի վերլուծությունը շարունակվում է ըստ գոյացման ժամկետների: Անհրաժեշտ է տարբերել դրանց ժամկետային և ժամկետանց տեսակները:

Ժամկետանց կրեդիտորական պարտքերը համարվում են անհուսալի պարտքեր, որոնք վկայում են կազմակերպության ֆինանսական դժվարությունների մասին: Անհրաժեշտ է ուսումնասիրել նաև անհուսալի կրեդիտորական պարտքերի գոյացման ժամկետները, պատճառները և դրանց ազդեցությունը կազմակերպության ֆինանսական դրության վրա:

Վերլուծական գործընթացում գնահատվում են կրեդիտորական պարտքերի ինտենսիվության ցուցանիշները՝ շրջանառելիությունը, շրջանառելիության տևողությունը, տեսակարար կշիռը ընթացիկ պարտավորությունների մեջ և դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի հարաբերակցությունը:

Որքան բարձր է կազմակերպության պասիվների մեջ սեփական կապիտալի տեսակարար կշիռը, այնքան ցածր է նրա ֆինանսական կախվածության աստիճանը, հետևաբար՝ ֆինանսական ռիսկի մակարդակը: Սակայն սեփական կապիտալը սահմանափակված է իր չափերի մեջ և, բացի դրանից, կազմակերպության ֆինանսավորումը անհնար է պատկերացնել առանց փոխառու աղբյուրների, հատկապես ֆինանսական ուսուրամասների ոչ բարձր գների պայմաններում, եթե վարկային միջոցների ներդրմամբ կարող է ամրապնդել իր շուկայական դիրքերը և բարձրացնել սեփական կապիտալի շահութաբերության մակարդակը:

Մինույն ժամանակ, եթե կազմակերպությունը իր տնտեսական գործունեության իրականացման համար հիմնականում օգտագործում է ընթացիկ պարտավորություններ, ապա նրա ֆինանսական դրությունը, վերջին հաշվով, կիսի անկայուն վիճակում, քանի որ այդ միջոցները միշտ պետք է ժամանակին հետ վերադարձնել: Դրա հետ մեկտեղ, պետք է նշել նաև վարկային միջոցների ներգրավման բարդությունը, վարկային տոկոսադրույթի մեծ կախվածությունը ֆինանսական շուկայի մրցակցության աստիճանից և, այդ պատճառով՝ կազմակերպության վճարունակության նվազեցման ռիսկի մեծացումը:

Ֆինանսական կայունության ապահովման նպատակով ամեն մի կազմակերպությունը պարտավոր է իր ակտիվների,

սեփական կապիտալի ու պարտավորությունների և դրանց բաղադրիչների միջև մշտապես ապահովել օպտիմալ հարաբերակցություն, որը հնարավորություն կտա մշակել ֆինանսական ռազմավարության հուսալի ծրագիր:

14.3. ՀԱՅՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՅՎԵԿՇՈՒԻ ԻՐԱՑՎԵԼԻՌԻԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպության բարվոք ֆինանսական դրությունը ապահովում է հաշվապահական հաշվեկշոփ իրացվելիությամբ: Այն բնութագրում է կազմակերպության ունակությունը՝ իր ակտիվներով մարելու առկա պարտավորությունները, այլ կերպ ասած՝ ակտիվների՝ դրամական միջոցների վերածման ժամկետների և պարտավորությունների մարման ժամանակամիջոցի համապատասխանությունը:

Կազմակերպության վճարունակությունը կախված է հաշվապահական հաշվեկշոփ իրացվելիության աստիճանից, որը ցուց է տալիս դրամական միջոցներով ընթացիկ պարտավորությունների մարման հնարավորությունը: Հաշվապահական հաշվեկշոփ իրացվելիությունը ավելի ընդհանրական հասկացություն է, քան կազմակերպության վճարունակությունը: Իրացվելիությունը բնութագրում է հաշվարկների ինչպես ընթացիկ, այնպես էլ հեռանկարային վիճակը:

Կազմակերպությունը կարող է մի որևէ ժամանակամիջոցով լինել վճարունակ, սակայն մոտակա ժամանակաշրջանում ունենալ անբարենպաստ ֆինանսական դրություն: Հաշվապահական հաշվեկշոփ իրացվելիությունը համարվում է կազմակերպության վճարունակության ապահովման նախապայմանը:

Հաշվապահական հաշվեկշոփ իրացվելիության վերլուծությունը նպատակահարմար է սկսել կազմակերպության ակտիվների և պատասխանական մարմանների հետևյալ վերախմբավորմամբ՝ ակտիվները ըստ իրացվելիության անկման, իսկ պատասխանական մարմանները՝ ըստ պար-

տավորությունների մարման հրատապության ժամկետների աճի հատկանիշի (գծ. 14.2):

Հաշվապահական հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը Գծապատկեր 14.2

ԱԿՏԻՎ		ՊԱՍԻՎ	
Առավել իրացվելի ակտիվներ (ԱI)	Դրամական միջոցներ և համարժեքներ	Հրատապ պարտավորություններ (ՊI)	Կրեդիտորական պարտքեր
Արագ իրացվելի ակտիվներ (ԱII)	Դեբետորական պարտքեր	Կարճաժամկետ պասիվներ (ՊII)	Ընթացիկ ֆինանսական պարտ.
Դանդաղ իրացվելի ակտիվներ (ԱIII)	Պաշարներ	Երկարաժամկետ պասիվներ (ՊIII)	Ոչ ընթացիկ պարտավորություններ
Դժվար իրացվելի ակտիվներ (ԱIV)	Ոչ ընթացիկ ակտիվներ	Մշտական պասիվներ (ՊIV)	Սեփական կապիտալ

Կազմակերպության ակտիվները ըստ իրացվելիության անկման հատկանիշի ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.

ԱI - առավել իրացվելի ակտիվներ՝ դրամական միջոցներ և համարժեքներ,

ԱII - արագ իրացվելի ակտիվներ՝ դեբետորական պարտքեր,

ԱIII - դանդաղ իրացվելի ակտիվներ՝ պաշարներ,

ԱIV - դժվար իրացվելի ակտիվներ՝ ոչ ընթացիկ ակտիվներ:

Հաշվապահական հաշվեկշռի պասիվային մասը խմբավորվում է ըստ պարտավորությունների մարման ժամկետների աճի հատկանիշի.

ՊI - առավել հրատապ պարտավորություններ՝ կրեդիտորական պարտքեր,

ՊII - կարճաժամկետ պասիվներ՝ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ,

ՊIII - երկարաժամկետ պասիվներ՝ ոչ ընթացիկ պարտավորություններ,

ՊIV - մշտական պասիվներ՝ սեփական կապիտալ:

Վերլուծվող կազմակերպության տվյալներով՝ ըստ ակտիվների և պասիվների նշված խմբերի, որոշենք հաշվապահական հաշվեկշռի իրացվելիությունը (աղյուսակ 14.7):

Հաշվապահական հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը

Աղյուսակ 14.7

(հազ. դ.)

Ակտիվ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Պասիվ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	
						Նախորդ տարվա	հաշվետու տարվա
ԱI	350	450	ՊI	330	430	+20	+20
ԱII	1000	1090	ՊII	1070	1170	-70	-80
ԱIII	1650	1860	ՊIII	1300	1100	+350	+760
ԱIV	7000	7600	ՊIV	7300	8300	-300	-700
Ընդամենը	10000	11000	Ընդամենը	10000	11000	-	-

Հաշվապահական հաշվեկշռի իրացվելիությունը կարող է պահպանվել միայն այն ժամանակ, եթե նշված խմբերի միջև ապահովել են հետևյալ օպտիմալ հարաբերակցությունները՝

ԱI ≥ ՊI, ԱII ≥ ՊII, ԱIII ≥ ՊIII, ԱIV ≤ ՊIV

Այդ խմբերի միջև հարաբերակցությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս գնահատել հաշվապահական հաշվեկշռի կառուցվածքի և իրացվելիության առկա միտումները: Սուածին երեք հարաբերակցությունները վկայում են իրացվելիության հիմնական սկզբունքի մասին՝ ակտիվների գերազանցումը պարտավորությունների նկատմամբ: Չորրորդ հարաբերակցության պահպանումը վկայում է կազմակերպության մոտ սեփական ընթացիկ ակտիվների առկայության մասին, որը նրա ֆինանսական կայունությունն ապահովող անհրաժեշտ պայմանն է:

Ա I և Ա II խմբերը համադրելով Պ I և Պ II խմբերի հետ՝ որոշվում է ընթացիկ իրացվելիության մակարդակը: Իսկ Ա III և Պ III խմբերի համեմատության արդյունքում պատկերացում է կազմվում հեռանկարային իրացվելիության մասին:

Հաշվապահական հաշվեկշռի ակտիվների և պասիվների երկրորդ խմբի օպտիմալ հարաբերակցությունը խախտվել է: Դա վկայում է այն մասին, որ հաշվապահական հաշվեկշռը իրացվելի չէ:

14.4. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ակտիվների իրացվելիության մակարդակը բնութագրում է կազմակերպության վճարունակության աստիճանը: Այն որոշվում է ընթացիկ ակտիվների իրացվելիությամբ և վկայում է կազմակերպության ֆինանսական հնարավորության մասին՝ ամբողջովին մարելու իր ընթացիկ պարտավորությունները:

Ակտիվների իրացվելիության վերլուծական գործընթացը իրականացվում է հետևյալ գործակիցներով՝

- բացարձակ իրացվելիության,
- արագ իրացվելիության,
- ընթացիկ իրացվելիության:

Բացարձակ իրացվելիության գործակիցը (Φ_{hp}) ցուց է տալիս կազմակերպության առավել իրացվելի ակտիվներով (Φ_{eff}) ընթացիկ պարտավորությունների (Σ_{ap}) մարման աստիճանը: Ինչպես նշել ենք, որպես առավել իրացվելի ակտիվներ են հանդես գալիս դրամական միջոցները և համարժեքները (ընթացիկ ֆինանսական ներդրումները): Բացարձակ իրացվելիության գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Phi_{hp} = \frac{\Phi_{eff}}{\Sigma_{ap}}$$

Այժմ կազմակերպության տվյալներով որոշենք ակտիվների բացարձակ իրացվելիության գործակիցը (աղյուսակ 14.8):

Ակտիվների բացարձակ իրացվելիության վերլուծությունը Աղյուսակ 14.8

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	Նորմատիվ
1. Դրամական միջոցները և համարժեքները, հազ. դ.	350	450	+100	-
2. Ընթացիկ պարտավորությունները, հազ. դ.	1400	1600	+200	-
3. Բացարձակ իրացվելիության գործակիցը	0.25	0.28	+0.03	≥ 0.25

Աղյուսակից երևում է, որ հաշվետու տարվա ընթացքում ակտիվների բացարձակ իրացվելիության գործակիցը աճի միտում ունի: Որքան բարձր է բացարձակ իրացվելիության գործակցի մեծությունը, այնքան մեծ է ընթացիկ պարտավորությունների մարման հավանականությունը: Այդ գործակցի նորմատիվային արժեքը կազմում է՝ $\Phi_{hp} \geq 0.25$: Վերլուծվող

կազմակերպությունում ակտիվների բացարձակ իրացվելիության գործակիցը գերազանցում է սահմանված նորմատիվային արժեքը:

Սակայն այն չի կարելի ընդունել որպես վճարունակության պայման: Այդ մակարդակի գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների շրջանառության արագությունը: Եթե ակտիվների շրջանառության արագությունը գերազանցում է պարտավորությունների շրջանառելիությանը, ապա կազմակերպության վճարունակությունը գնահատվում է բավարար, և ընդհակառակը:

Արագ իրացվելիության գործակիցը (Φ_{hw}) ցուց է տալիս, թե ընթացիկ պարտավորությունների որ մասն է կարող կազմակերպությունը մարել իր դրամական միջոցների, դրանց համարժեքների և դեբիտորական պարտքերի հաշվին: Ինչպես հայտնի է, դեբիտորական պարտքերը (Π_{w}) մենք դասակարգել ենք արագ իրացվելի ակտիվների խմբում: Հետևաբար, որպես ընթացիկ պարտավորությունների մարման միջոց են հանդիսանում առավել և արագ իրացվելի ակտիվները: Արագ իրացվելիության գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Phi_{\text{hw}} = \frac{\Pi_{\text{m}} + \Pi_{\text{w}}}{\mathcal{L}_{\text{w}}}$$

Վերլուծվող կազմակերպության ակտիվների արագ իրացվելիության գործակիցը որոշենք ըստ աղյուսակ 14.9-ի տվյալների:

Արագ իրացվելիության գործակիցի նորմատիվային արժեքը ընդունված է՝ $\Phi_{\text{hw}} \geq 1.0$: Տվյալ կազմակերպության տվյալներով՝ այդ գործակիցը փոքր-ինչ նվազել է, սակայն և նախորդ, և հաշվետու տարվա արժեքները դեռ չեն հասել ընդունված նորմատիվին: Այդ մակարդակը կարող է բավարար չլինել, եթե ակտիվների օշված մեծության գգալի բաժինը կազմում են դեբիտորական պարտքերը: Իսկ ինչպես հայտնի է, այդ պարտքերի որոշ մասը դժվար է հետ ստանալ՝ անհուսալիության պատճառով:

Ակտիվների արագ իրացվելիության վերլուծությունը Աղյուսակ 14.9

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	Նորմա-տիվ
1. Դրամական միջոցները և համարժեքները, հազ. դ.	350	450	+100	-
2. Դեբիտորական պարտքերը, հազ. դ.	1000	1090	+90	-
3. Ընթացիկ պարտավորությունները, հազ. դ.	1400	1600	+200	-
4. Արագ իրացվելիության գործակիցը	0.97	0.96	-0.01	≥ 1.0

Ընթացիկ իրացվելիության գործակիցը ($\Phi_{իլ}$) ցուց է տալիս ընթացիկ ակտիվներով (Σ_a) կազմակերպության ընթացիկ պարտավորությունների ծածկման աստիճանը: Որքան բարձր է այդ աստիճանը, այնքան մեծ է կրեդիտորների վստահության մակարդակը տվյալ կազմակերպության տնտեսական գործունեության նկատմամբ: Այդ գործակիցը արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$\Phi_{իլ} = \frac{\Sigma_a}{\Sigma_w}$$

Որոշենք ակտիվների ընթացիկ իրացվելիության գործակիցը (աղյուսակ 14.10):

Ըստ աղյուսակի տվյալների՝ ընթացիկ իրացվելիության գործակի մակարդակի փոփոխությունը չնայած բացասական է, այնուամենայնիվ գերազանցում է նորմատիվային մեծությանը, որը հավասար է՝ $\Phi_{իլ} \geq 2.0$: Եթե այդ գործակիցը փոքր է նորմատիվից, ակնհայտ է կազմակերպության անվճարունակությունը: Այդ նորմատիվի գգալի գերազանցումը վկայում է կազմակերպության կողմից իր ակտիվների անարդյունավետ օգտագործման մասին:

Ակտիվների ընթացիկ իրացվելիության վերլուծությունը

Աղյուսակ 14.10

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	Նորմա-տիվը
1. Ընթացիկ ակտիվները, հազ. դ.	3000	3400	+400	-
2. Ընթացիկ պարտավորությունները, հազ. դ.	1400	1600	+200	-
3. Ընթացիկ իրացվելիության գործակիցը	2.14	2.12	-0.02	≥ 2.0

Ընթացիկ իրացվելիության գործակիցի արժեքը պայմանավորվում է հետևյալ հանգամանքներով՝ գործունեության ոլորտներով, արտադրական շրջափուլի տևողությամբ, դերիտորական և կրեդիտորական պարտքերի որակական մակարդակով և այլն:

Այդ գործակիցի մեծությունը կարող է տատանվել տարբեր կազմակերպություններում: Ընթացիկ իրացվելիության գործակիցի շեղումը պայմանավորված է ինչպես ընթացիկ ակտիվների, այնպես էլ ընթացիկ պարտավորությունների կազմում ու կառուցվածքում տեղի ունեցած փոփոխություններով:

Ակտիվների իրացվելիության գործակիցները, չնայած ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների համամասնական աճին, կարող են որոշակի ժամանակահատվածում փոփոխություններ չկրել: Այդ ընթացքում կազմակերպության ֆինանսական դրությունը կարող է փոփոխության ենթարկվել՝ ֆինանսական արդյունքների նվազում, շահութաբերության մակարդակի իշեցում, գործարար ակտիվների անկում և այլն:

Ընթացիկ իրացվելիության առավել ամբողջական գնահատման նպատակով կարելի է կիրառել հետևյալ բանաձևը՝

$$Q_{\text{իլ}} = \frac{L_w}{L_u} = \frac{L_w}{C_q} \times \frac{C_q}{L_u}$$

- որտեղ՝ \bar{C}_q - գուտ շահուցի գումարն է,
 C_w/\bar{C}_q - միավոր շահուցին բաժին ընկնող ընթացիկ
ակտիվների չափն է,
 \bar{C}_q/C_w - միավոր ընթացիկ պարտավորություններին
բաժին ընկնող շահուցի մեծությունն է:

Եթե C_w/\bar{C}_q -ն իրենից ներկայացնում է ընթացիկ ակտիվների շահութաբերության ցուցանիշի հակադարձ մեծությունը, ապա \bar{C}_q/C_w -ն վկայում է կազմակերպության կողմից իր ֆինանսական արդյունքներով առկա ընթացիկ պարտավորությունների մարման հնարավորության մասին: Որքան բարձր է վերջինիս մեծությունը, ալեքան բարվոր է կազմակերպության ֆինանսական դրությունը: Նշված գործուների ազդեցությունը ընթացիկ իրացվելիության գործակցի վրա կարելի է որոշել տարբերությունների եղանակով (աղյուսակ 14.11):

Ընթացիկ իրացվելիության վրա ազդող գործուների վերլուծությունը

Աղյուսակ 14.11

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	Հաշվարկ
1. Ընթացիկ ակտիվները, հազ. դ.	3000	3400	+400	-
2. Ընթացիկ պարտավորությունները, հազ. դ.	1400	1600	+200	-
3. Զուտ շահուցի, հազ. դ.	640	900	+260	-
4. Ընթացիկ իրացվելիության գործակիցը	2.14	2.12	-0.02	-
5. Միավոր շահուցին բաժին ընկնող ընթացիկ ակտիվները	4.68	3.78	-0.90	$-0.90 \times 0.46 = = -0.40$
6. Միավոր ընթացիկ պարտավորություններին բաժին ընկնող շահուցի	0.46	0.56	+0.10	$+0.10 \times 3.78 = = +0.38$

Այլուսակի տվյալներով՝ ակտիվների ընթացիկ իրացվելիութան գործակցի անկման վրա ազդել է միավոր շահուցին բաժին ընկնող ընթացիկ ակտիվների չափի նվազեցումը (0.40) և միավոր ընթացիկ պարտավորություններին բաժին ընկնող շահուցին մեծության աճը (0.38):

Ակտիվների իրացվելիութան գործակիցների վերլուծության ընթացքում պետք է հաշվի առնել դրանց մեծության պայմանականության բարձր աստիճանը, քանի որ ակտիվների իրացվելիությունը և պարտավորությունների հրատապությունը հնարավոր չեն ճշգրիտ որոշել: Այսպես, ընթացիկ ակտիվների իրացվելիության աստիճանը պայմանավորվում է դրանց որակական մակարդակով: Հետևաբար՝ ակտիվների իրացվելիության գնահատման հավաստիությունը կարելի է ապահովել անալիտիկ հաշվառման տվյալների օգտագործմամբ:

Ակտիվների իրացվելիության գործակիցները հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն կազմակերպության կառավարիչների, այլ նաև շուկայի բոլոր մասնակիցների համար: Այսպես, բացարձակ իրացվելիության գործակիցը առաջին հերթին հետաքրքրում է մատակարարներին, արագ իրացվելիության գործակիցը՝ բանկերին, իսկ ընթացիկ իրացվելիության գործակիցը՝ ներդրողներին:

Կազմակերպությունների վճարունակությունը գնահատվում է նաև դրամական միջոցների հոսքերի միջոցով: Արտադրանքի իրացումից ստացվող միջոցների և դերիտորական պարտքերի ստացման ու պարտավորությունների մարման վրա վերահսկողության ապահովման նպատակով անհրաժեշտ է կազմել վճարային օրացուց, որտեղ մի կողմում ներկայացվում է վճարային միջոցների, իսկ մյուս կողմում՝ վճարային պարտավորությունների գումարը: Վճարունակության գործակիցը որոշվում է վճարային միջոցների և պարտավորությունների հարաբերակցությամբ: ցանկալի է, որ այդ գործակիցը լինի մեկից բարձր:

Կազմակերպության վճարունակության վերլուծության ընթացքում պետք է բացահայտել ֆինանսական դժվարությունների պատճառները, դրանց ձևավորման հաճախականությունը և

ժամկետանց պարտավորությունների տևողությունը:

Կազմակերպության անվճարունակության պատճառներից կարող են լինել արտադրանքի իրացման գծով պայմանագրային պարտավորությունների խախտումները, արտադրանքի ինքնարժեքի մակարդակի աճը, ֆինանսական արդյունքների անբավարար գումարը, ընթացիկ ակտիվների անբարենպաստ կառուցվածքի ձևավորումը և այլն: Վճարունակության բավարար մակարդակի պահպանումը կախված է եկամուտների և ծախսերի օպտիմալ հարաբերակցությունից:

14.5. ԾԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ծովայական տնտեսության պայմաններում արտադրական կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետությունը բնութագրող առավել ընդհանրական ցուցանիշը շահութաբերության մակարդակն է: Ի տարբերություն շահուցիքի, որը արտացոլում է տնտեսական գործունեության արդյունավետության մեծությունը բացարձակ գումարով, շահութաբերությունը այն ներկայացնում է հարաբերական մակարդակով:

Ֆինանսական դրության վերլուծության նպատակով կիրառվում են շահութաբերության տարբեր գործակիցներ՝

- ակտիվների,
- իրացման,
- սեփական կապիտալի,
- ներդրումային կապիտալի,
- ընթացիկ ակտիվների:

Ակտիվների շահութաբերության գործակիցը (Φ_{2w}) ցույց է տալիս միավոր ակտիվներին բաժին ընկնող գուտ շահութի մեծությունը և որոշվում գուտ շահուցիքի (C_q) ու ակտիվների միջին տարեկան արժեքի (\bar{U}) հարաբերակցությամբ՝

$$\Phi_{2w} = \frac{\bar{C}_q}{\bar{U}}$$

Ակտիվների շահութաբերության գործակիցը կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետության որոշման կարևորագույն ցուցանիշն է: Այն օգտագործվում է կազմակերպության տնտեսական գործունեության կառավարման որակի և արդյունավետության գնահատման նպատակով: Նշված ցուցանիշը բնութագրում է կազմակերպության տրամադրության տակ գոնվող բոլոր ակտիվների շահութաբերության աստիճանը՝ անկախ դրանց ձևավորման աղբյուրներից:

Իրացման շահութաբերության գործակիցը (Φ_{2h}) ցուց է տալիս արտադրանքի իրացումից հասուցի միավորի հաշվով ստացված շահուցի մեծությունը: Այդ գործակիցը կարելի է որոշել արտադրանքի իրացումից ստացված շահուցի գումարը (C_h) բաժանելով իրացումից հասուցի (ζ) վրա՝

$$\Phi_{2h} = \frac{C_h}{\zeta}$$

Սեփական կապիտալի շահութաբերության գործակիցը (Φ_{2u}) նշում է միավոր սեփական կապիտալին բաժին ընկնող գուտ շահուցի մեծությունը: Տվյալ գործակիցը իրենից ներկայացնում է գուտ շահուցի (C_u) և սեփական կապիտալի միջին տարեկան արժեքի (U_u) հարաբերակցությունը՝

$$\Phi_{2u} = \frac{C_u}{U_u}$$

Նշված բանաձնը կրում է Դյուպոնի անունը, քանի որ առաջին անգամ կիրառվել է այդ անվանումը կրող ամերիկյան ընկերությունում: Սեփական կապիտալի և ակտիվների շահութաբերության ցուցանիշների համեմատությունը ցուց է տալիս կազմակերպության գուտ շահուցի մեծության վրա պարտավորությունների ազդեցությունը:

Ներդրումային կապիտալի շահութաբերության գործակիցը (Φ_{2a}) ցուց է տալիս միավոր կապիտալին բաժին ընկնող գուտ շահուցի մեծությունը: Այն որոշելու համար անհրաժեշտ է գուտ շահուցի գումարը (C_a) հարաբերել ներդրումային կապիտալի միջին արժեքին (\bar{U}_a)՝

$$\Phi_{\text{շԱ}} = \frac{\bar{C}_q}{\bar{L}_w}$$

Ներդրումային կապիտալի շահութաբերության գործակիցը բնութագրում է ոչ միայն սեփական կապիտալի, այլ նաև ոչ ընթացիկ պարտավորությունների օգտագործման արդյունավետության մակարդակը:

Ընթացիկ ակտիվների շահութաբերության գործակցով ($\Phi_{\text{ըՊ}}$) հաշվարկվում է միավոր ընթացիկ ակտիվների հաշվով ստացված զուտ շահուվաքի մեծությունը: Այն որոշվում է կազմակերպության հաշվետու տարվա զուտ շահուվաքի գումարը (C_q) հարաբերելով ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեքին (L_w):

$$\Phi_{\text{ըՊ}} = \frac{\bar{C}_q}{\bar{L}_w}$$

Նշված գործակիցներից բացի, կարելի է նաև որոշել շահութաբերության հետևյալ գործակիցները՝

$$\frac{\text{Ինքնարժեքի}}{\text{շահութաբերության}} = \frac{\text{Իրացումից շահուվաք}}{\text{Արտադրանքի ինքնարժեք}}$$

$$\frac{\text{Համախառն}}{\text{շահութաբերության}} = \frac{\text{Համախառն հասուվաք}}{\text{Իրացումից հասուվաք}}$$

Կազմակերպության տնտեսական գործունեության արդյունավետության մակարդակը բնութագրող շահութաբերության ցուցանիշներին ծանոթանալուց հետո, այնուհետև անհրաժեշտ է անցկացնել որանց գործոնային վերլուծություն: Նշված ցուցանիշներից յուրաքանչյուրի փոփոխության վրա ազդում են տարբեր գործուներ: Եթե ակտիվների շահութաբերության բանաձևի համարիչն ու հայտարարը բաժանենք արտադրանքի իրացումից ստացված հասուվաքի վրա, ապա կստանանք՝

$$\Phi_{\text{ըՊ}} = \bar{C}_q \cdot 356 \cdot \bar{C}_q \times \zeta$$

Ա

Հ

Ա

Ըստ Հ-Ը ներկայացնում է իրացման շահութաբերության, իսկ Հ/Ա-ն՝ ակտիվների շրջանառելիության գործոնը: Այլ կերպ ասած՝ ակտիվների շահութաբերությունը իրացման շահութաբերության և ակտիվների շրջանառելիության արտադրյալն է: Դրանց ազդեցությունը ակտիվների շահութաբերության մակարդակի փոփոխության վրա կարելի է որոշել բացարձակ մեծությունների տարրերության եղանակի կիրառման միջոցով (աղյուսակ 14.12):

Ակտիվների շահութաբերության վերլուծությունը

Աղյուսակ 14.12

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	Հաշվարկ
1. Զուտ շահույթը, հազ. դ.	640	900	+260	-
2. Իրացումից հասույթը, հազ. դ.	15000	15700	+700	-
3. Ակտիվների միջին արժեքը, հազ. դ.	9900	10500	+600	-
4. Ակտիվների շահութաբերությունը, %	6.46	8.57	+2.11	-
5. Իրացման շահութաբերությունը, %	4.27	5.73	+1.46	$+1.46 \times 1.51 = +2.22$
6. Ակտիվների շրջանառելիությունը	1.51	1.49	-0.02	$-0.02 \times 5.73 = -0.11$

Ակտիվների շահութաբերության գործակիցը վերջին տարում աճել է 2.11%-ով, որը պայմանավորված է եղել իրացման շահութաբերության (+2.22) և ակտիվների շրջանառելիության (-0.11) գործոններով:

Վերլուծական գործընթացում այնուհետև պետք է բացահայտել շահութաբերության մակարդակի նվազման պատճառները՝ արտադրության կազմակերպչատեխնիկական թույլ մակարդակ, արտադրանքի անբարենպաստ տեսականի ու կառուցվածք, արտադրանքի որակի ցածր մակարդակ, շրջանառության ծախսերի ուղղացած մեծություն, վաճառքի անշահավետ շուկաներ և այլն:

Ակտիվների շահութաբերության գործակիցը մեծ նշանակություն ունի իրացումից ստացված շահուցիք (\mathfrak{C}_h) կանխատեսման գործում: Այդ նպատակով շահուցիքի մեծությունը ներկայացվում է որպես ակտիվների միջին տարեկան արժեքի (A) և շահութաբերության գործակցի ($\Phi_{\text{շա}}$) արտադրյալ, որոնց ազդեցությունը նույնական որոշվում է բացարձակ մեծությունների տարբերության եղանակի կիրառմամբ:

Կազմակերպության տնտեսական գործունեության հետևանքով ստացված կայուն ֆինանսական արդյունքները պայմանավորված են ֆինանսական կառավարիչների արհեստավարժությամբ: Այդ պատճառով ակտիվների շահութաբերության ցուցանիշը հանդես է գալիս որպես կազմակերպության տնտեսական գործունեության կառավարման որակի գնահատման չափանիշ: Ֆինանսական գործակիցների մեջ այն ունի սկզբունքային նշանակություն, քանի որ բնութագրում է կազմակերպության տնտեսական գործունեության կառավարման արդյունավետության աստիճանը:

Շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպության տնտեսական գործունեությունը նպատակահարմար է ուղղել սեփական կապիտալի մեծության ավելացմանը և նրա շահութաբերության մակարդակի աճին: Սեփական կապիտալի և ակտիվների շահութաբերության գործակիցները անխցիկորեն կապված են իրար.

$$\frac{\overline{\mathfrak{C}}_q}{\overline{U}_q} = \frac{\overline{\mathfrak{C}}_q}{\overline{U}} \times \frac{\overline{U}}{\overline{U}_q}$$

Սեփական կապիտալի շահութաբերության գործակցի մակարդակը պայմանավորված է երկու գործոնների ազդեցությամբ՝ ակտիվների շահութաբերությամբ ($\overline{\text{Ը}}/\overline{\text{Ա}}$) և կապիտալի ֆինանսական կառուցվածքով ($\overline{\text{Ա}}/\overline{\text{Ը}}$): Ակտիվների շահութաբերության նվազեցման պայմաններում սկսում է աճել ֆինանսական ռիսկի աստիճանը:

Սեփական կապիտալի շահութաբերության մակարդակը կարելի է ներկայացնել նաև հետևյալ կերպ՝

$$\frac{\overline{\text{Ը}}_{\text{q}}}{\overline{\text{Ս}}_{\text{q}}} = \frac{\overline{\text{Ը}}_{\text{q}}}{\zeta} \times \frac{\zeta}{\overline{\text{Ա}}} \times \frac{\overline{\text{Ա}}}{\overline{\text{Ս}}_{\text{q}}}$$

Այս դեպքում կստանանք հետևյալ գործոնները.

- իրացման շահութաբերություն,
- ակտիվների շրջանառելիություն,
- կապիտալի ֆինանսական կառուցվածք:

Իրացման շահութաբերությունը բնութագրում է կազմակերպության ծախսերի կառավարման և գնային քաղաքականության արդյունավետության մակարդակը: Ակտիվների շրջանառելիությունը ցուց է տալիս կազմակերպության գործարար ակտիվության աստիճանը: Կապիտալի ֆինանսական կառուցվածքը վկայում է կազմակերպության ֆինանսավորման քաղաքականության մասին: Այդ գործոնների ազդեցությունը կարելի է որոշել շղթայական տեղադրումների եղանակի կիրառմամբ (այլուսակ 14.13):

Կազմակերպության սեփական կապիտալի շահութաբերության մակարդակը հաշվետու տարվա ընթացքում աճել է 2.65%-ով, որի վրա ազդել են՝ իրացման շահութաբերության (+3.06), ակտիվների շրջանառելիության (-0.16) և կապիտալի ֆինանսական կառուցվածքի (-0.25) գործոնները:

**Սեփական կապիտալի շահութաբերության
վերլուծությունը**

Աղյուսակ 14.13

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	Հաշվարկ
1. Զուտ շահույթը, հազ. դ.	640	900	+260	-
2. Իրացումից հասույթը, հազ. դ.	15000	15700	+700	-
3. Ակտիվների միջին արժեքը, հազ. դ.	9900	10500	+600	-
4. Սեփական կապի- տալի միջին արժեքը, հազ. դ.	7200	7800	+600	-
5. Սեփական կապի- տալի շահութաբերու- թյունը, %	8.89	11.54	+2.65	-
6. Իրացման շահու- թաբերությունը, %	4.27	5.73	+1.46	+1.46 x 1.51 x x1.38 = +3.06
7. Ակտիվների շրջա- նառելիությունը	1.51	1.49	-0.02	-0.02 x 5.73 x x1.38 = -0.16
8. Կապիտալի ֆինանսական կառուցվածքը	1.38	1.35	-0.03	-0.03 x 5.73 x x1.49 = -0.25

Այժմ էլ որոշենք իրացման, ներդրումային կապիտալի, ընթացիկ ակտիվների, ինքնարժեքի և համախառն շահութաբերության գործակիցները (աղյուսակ 14.14):

Աղյուսակից երևում է, որ շահութաբերության բոլոր գործակիցները հաշվետու ժամանակաշրջանի շրջանում աճել են:

Ծահութաբերության գործակիցների վերլուծությունը

Աղյուսակ 14.14

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շե-ռումը
1. Արտադրանքի իրացումից հասուլքը, հազ. դ.	15000	15700	+700
2. Արտադրանքի ինքնարժեքը, հազ. դ.	12100	12300	+200
3. Համախառն շահուլքը, հազ. դ.	2900	3400	+500
4. Արտադրանքի իրացումից շահուլքը, հազ. դ.	900	1300	+400
5. Զուտ շահուլքը, հազ. դ.	640	900	+260
6. Ընթացիկ ակտիվների միջին արժեքը, հազ. դ.	2950	3200	+250
7. Սեփական կապիտալը, հազ. դ.	6600	6600	-
8. Ոչ ընթացիկ պարտավորությունները, հազ. դ.	1300	1100	-200
9. Իրացման շահութաբերությունը, %	6.00	8.28	+2.28
10. Ներդրումային կապիտալի շահութաբերությունը, %	8.10	11.69	+3.59
11. Ընթացիկ ակտիվների շահութաբերությունը, %	21.69	28.12	+6.43
12. Ինքնարժեքի շահութաբերությունը, %	7.44	10.57	+3.13
13. Համախառն շահութաբերությունը, %	19.33	21.65	+2.32

Այդ գործակիցներից բացի, կարելի է որոշել նաև արտադրանքի շահութաբերության մակարդակը: Դրա համար շահուլքի գումարը պետք է հարաբերել արտադրանքի ծավալին: Այնուհետև արտադրանքի շահութաբերության մակարդակի փոփոխության վրա բացահայտվում է տարբեր գործոնների ազդեցությունը (աղյուսակ 14.15):

Արտադրանքի շահութաբերության վերլուծությունը
Աղյուսակ 14.15

Շահութաբերության մակարդակը	Արտադրանքի ինքնարժեքը, հազ. դ.	Արտադրանքի ծավալը, հազ. դ.	Շահուցքի հազ. դ.	Շահութաբերությունը, %
1. Նախատեսված	12120	15200	+3080	20.26
2. Փաստացի տեսականիով	12280	15690	+3410	21.73
3. Փաստացին՝ նախատեսվածով	12290	15720	+3430	21.82
4. Փաստացի	12320	15750	+3430	21.78

Արտադրանքի շահութաբերության փաստացի մակարդակի շեղումը նախատեսվածից կազմել է $+1.52\%$: Դա տեղի է ունեցել հետևյալ գործոնների ազդեցությամբ.

1. արտադրանքի տեսականու և կառուցվածքի՝ $21.73 - 20.26 = +1.47\%$,
 2. առանձին արտադրատեսակների ինքնարժեքի՝ $21.82 - 21.73 = +0.09\%$,
 3. միավոր արտադրանքի գների՝ $21.78 - 21.82 = -0.04\%$:
- Նշված գործոնների հանրահաշվական գումարը կկազմի $+1.52\%$:

14.6. ԾՐԶԱՆԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպության տնտեսական գործունեության ընթացքում ակտիվները անընդհատ գտնվում են շրջանառության մեջ՝ մատակարարման, արտադրության և իրացման փուլերում՝ մեկից անցնելով մյուսը: Որքան արագ է կատարվում այդ շրջանառությունը, այնքան բարձր է կազմակերպության գործարար ակտիվության մակարդակը՝ ակտիվների նույն մեծության պայմաններում:

Յուրաքանչյուր կազմակերպության կարևոր խնդիրներից մեկը ակտիվների շրջանառելիության արագացման բավարար տեմպերի ապահովումն է: Ակտիվների շրջանառության տևողության աճը հանգեցնում է դրանց շրջանառելիության դանդաղեցմանը և, որպես հետևանք՝ կազմակերպության ֆինանսական դրության վատացմանը: Իսկ ակտիվների շրջանառելիության արագացման արդյունքում ավելանում է արտադրանքի իրացումից ստացված հասուլը:

Կազմակերպության գործարար ակտիվության մակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշներից մեկը համարվում է ակտիվների շրջանառելիության գործակիցը կամ պտույտների թիվը (Φ_w): Այն որոշվում է արտադրանքի իրացումից ստացված հասուլի գումարը (Հ) հարաբերելով ակտիվների միջին տարեկան արժեքին (Ա).

$$\Phi_w = \frac{\zeta}{\bar{A}}$$

Շրջանառելիության արագությունը, բացի նշված գործակցից, բնութագրվում է նաև մեկ պտույտի տևողությամբ՝ (S_w) արտահայտված օրերով: Այդ նպատակով ակտիվների միջին տարեկան արժեքը (Ա) պետք է բազմապատկել հաշվետու ժամանակաշրջանի օրերի թվով (Օ) և բաժանել իրացումից ստացված հասուլի (Հ) վրա՝

$$S_w = \frac{\bar{A} \times O}{\zeta} \quad \text{կամ} \quad S_w = \frac{O}{\Phi_w}$$

Վերլուծվող կազմակերպության տվյալներով որոշենք ակտիվների շրջանառելիությունն ըստ պտույտների և մեկ պտույտի տևողությունը (աղյուսակ 14.16):

Աղյուսակի տվյալների համաձայն՝ հաշվետու տարվա ընթացքում կազմակերպության ակտիվների շրջանառելիությունն ըստ պտույտների նվազել է 0.02-ով, իսկ մեկ պտույտի տևողությունը՝ դանդաղել 3 օրով:

Ակտիվների շրջանառելիության որոշումը
Աղյուսակ 14.16

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Արտադրանքի իրացումից հասուլող, հազ. դ.	15000	15700	+700
2. Ակտիվների միջին արժեքը, հազ. դ.	9900	10500	+600
ոչ ընթացիկ ակտիվների	6950	7300	+350
ընթացիկ ակտիվների	2950	3200	+250
3. Ակտիվների շրջանառելիությունը, պտույտ	1.52	1.50	-0.02
ոչ ընթացիկ ակտիվների	2.16	2.15	-0.01
ընթացիկ ակտիվների	5.08	4.91	-0.17
4. Մեկ պտույտի տևողությունը, օր	238	241	+3
ոչ ընթացիկ ակտիվների	167	168	+1
ընթացիկ ակտիվների	71	73	+2

Վերլուծական գործընթացում որոշվում է ինչպես ոչ ընթացիկ, այնպես էլ ընթացիկ ակտիվների և դրանց բաղկացուցիչների շրջանառելիությունը:

Ակտիվների շրջանառելիությունը պայմանավորված է ինչպես ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների շրջանառելիության արագությամբ, այնպես էլ դրա կառուցվածքով: Այսպես, որքան բարձր է ակտիվների մեջ դանդաղ շրջանառվող բնույթ ունեցող ոչ ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռը, այնքան ցածր է դրա շրջանառելիության գործակիցը և երկար՝ շրջանառության տևողությունը.

$$\Phi_w = C_{\text{առ}} \times \Phi_{\text{ըա}}, \quad S_w = S_{\text{ըա}} : C_{\text{առ}},$$

որտեղ՝ Φ_w - ակտիվների շրջանառելիության գործակիցն է,
 $C_{\text{առ}}$ - ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռն է ընդհանուրի մեջ,

$\Phi_{\text{ըա}}$ - ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակիցն է,

S_w - ակտիվների մեկ պտույտի տևողությունն է,

S_Ը - ընթացիկ ակտիվների մեկ պտույտի տևողությունն է:

Ակտիվների շրջանառելիության գործակիցների փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցությունը նպատակահարմար է որոշել շրջայական տեղադրումների եղանակով:

Վերլուծական գործընթացում որոշվում է նաև ընթացիկ ակտիվների առանձին բաղկացուցիչների շրջանառելիության փոփոխությունը: Այդ նպատակով պաշարների, դեբիտորական պարտքերի, դրամական միջոցների և համարժեքների միջին մնացորդները պետք է բազմապատկել հաշվետու ժամանակաշրջանի օրերի թվով և բաժանել իրացումից ստացված հասուլիք վրա՝

$$S_{\text{պ}} = \frac{\overline{\Phi} \times O}{\zeta}, \quad S_{\text{դպ}} = \frac{\overline{\Phi}_{\text{պ}} \times O}{\zeta}, \quad S_{\text{դմ}} = \frac{\overline{\Phi}_{\text{մ}} \times O}{\zeta}$$

Որոշենք կազմակերպության ընթացիկ ակտիվների և դրանց բաղկացուցիչների շրջանառելիությունն ըստ պտույտների և օրերի (աղյուսակ 14.17):

Ընթացիկ ակտիվների շրջանառելիության որոշումը Աղյուսակ 14.17

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շերումը
1. Արտադրանքի իրացումից հասուլիք, հազ. դ.	15000	15700	+700
2. Ընթացիկ ակտիվների միջին արժեքը, հազ. դ.	2950	3200	+250
պաշարների	1600	1755	+155
դեբիտորական պարտքերի	980	1045	+65
դրամական միջոցների և համարժեքների	370	400	+30
3. Ընթացիկ ակտիվների շրջանառելիությունը, պտույտ	5.08	4.91	-0.17
պաշարների	9.38	8.95	-0.43
դեբիտորական պարտքերի	15.31	15.02	-0.29

դրամական միջոցների և համարժեքների	40.54	39.25	-1.29
4. Մեկ պտույտի տևողությունը, օր	71	73	+2
պաշարների	39	40	+1
դեբիտորական պարտքերի	23	24	+1
դրամական միջոցների և համարժեքների	9	9	-

Այլուսակի տվյալները վկայում են կազմակերպության ընթացիկ ակտիվների և դրանց բաղկացուցիչների շրջանառելիության դանդաղեցման մասին: Ընթացիկ ակտիվների մեկ պտույտի տևողությունը երկարաձգվել է 2 օրով, այդ թվում՝ պաշարների և դեբիտորական պարտքերի գծով՝ մեկական օրով: Դրամական միջոցների և համարժեքների մեկ պտույտի տևողությունը տարվա ընթացքում չի փոխվել:

Ընհանրապես ակտիվների շրջանառելիության արագացման տնտեսական հետևանքը նպաստում է շրջանառությունից ակտիվների հարաբերական ազատմանը և իրացումից հասույթի մեծության աճին, իսկ դանդաղեցման դեպքում՝ ընդհակառակը:

Շրջանառելիության փոփոխության հետևանքով շրջանառությունից ազատված (արագացման դեպքում) կամ լրացուցիչ ներգրավված (դանդաղեցման դեպքում) ակտիվների մեծությունը որոշելու համար մեկ օրվա շրջանառության գումարը (իրացումից հասույթ : հաշվետու ժամանակաշրջանի օրերի վրա) պետք է բազմապատճել մեկ պտույտի տևողության փոփոխության վրա:

Տվյալ կազմակերպությունում մեկ օրվա շրջանառության գումարը հավասար կլինի՝ $15700 : 360 = 43.6$ հազ. դ.: Քանի որ ընթացիկ ակտիվների շրջանառելիությունը դանդաղել է 2 օրով, հետևաբար շրջանառության մեջ լրացուցիչ ներգրավված ակտիվների գումարը կկազմի՝ $+2 \times 43.6 = +87.2$ հազ. դ., պաշարների համար՝ $+1 \times 43.6 = +43.6$ հազ. դ. և դեբիտորական պարտքերի համար՝ $+1 \times 43.6 = +43.6$ հազ. դ.:

Ակտիվների շրջանառելիության փոփոխությունն իր ազդեցությունն է ունենում շահույթի վրա: Այն որոշվում է ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակցի շեղումը բազմա-

պատկելով իրացման շահութաբերության նախատեսված մակարդակով և ընթացիկ ակտիվների միջին տարեկան փաստացի արժեքով (աղյուսակ 14.18):

**Ընթացիկ ակտիվների շրջանառելիության ազդեցությունը
շահուվածի վրա**

Աղյուսակ 14.18

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Զուտ շահուված, հազ. դ.	640	900	+260
2. Արտադրանքի իրացումից հաստված, հազ. դ.	15000	15700	+700
3. Ընթացիկ ակտիվների միջին արժեքը, հազ. դ.	2950	3200	+250
4. Շրջանառելիությունը, պտույտ	5.08	4.91	-0.17
5. Իրացման շահութաբերությունը	0.0427	0.0573	+0.0146
6. Ազդեցությունը շահուվածի վրա, հազ. դ.	$-0.17 \times 0.0427 \times 3200 = -23.2$		

Ընթացիկ ակտիվների շրջանառելիության ազդեցության հետևանքով իրացումից ստացված շահուված նվազել է 23.2 հազ. դ. գումարով:

Վերլուծական գործընթացում որոշվում է նաև կրեդիտորական պարտքերի շրջանառելիությունն ըստ պտույտների և օրերի (աղյուսակ 14.19):

**Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության
որոշումը**

Աղյուսակ 14.19

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Արտադրանքի իրացումից հաստված, հազ. դ.	15000	15700	+700
2. Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը, հազ. դ.	310	380	+70

3. Շրջանառելիությունը՝			
ըստ պտույտների	48.4	41.3	-7.1
ըստ օրերի	7.5	8.7	+1.2

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիությունը հաշվետու ժամանակաշրջանում դանդաղեցման միտում ունի:

Վերլուծական հետազոտության վերջում անհրաժեշտ է բացահայտել ընթացիկ ակտիվների շրջանառելիության արագացման պահուստները.

- արտադրության ինտենսիֆիկացման հաշվին արտադրական շրջափուլի տևողության կրճատումը,
- նյութական պաշարների մատակարարման բարելավումը,
- ապրանքային պաշարների առաքման և հաշվարկային փաստաթղթերի ձևակերպման օպերատիվության ապահովումը,
- դեբիտորական պարտքերի կրճատումը,
- մարքեթինգային ռազմավարության իրականացումը:

14.7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպության ֆինանսական կայունությունը պայմանավորված է ակտիվների և պատասխանատվածքի ապահովումից: Վերլուծական գործընթացը նպատակահարմար է սկսել կազմակերպության պատասխանատվածքային գնահատումից, որի համար պետք է օգտագործել հետևյալ ցուցանիշները.

$$1. \text{ Ֆինանսական անկախության գործակից} = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Ակտիվներ}}$$

$$2. \text{ Ֆինանսական կախվածության գործակից} = \frac{\text{Պարտավորություններ}}{\text{Ակտիվներ}}$$

$$3. \text{ Ֆինանսական ռիսկի գործակից} = \frac{\text{Պարտավորություններ}}{\text{Սեփական կապիտալ}}$$

Կազմակերպության ֆինանսական կայունությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, եթե բարձր է առաջին ($\text{Ընդունակություն} \geq 0,5$) ու ցածր՝ երկրորդ ($\text{Ընդունակություն} \leq 0,5$) և երրորդ ($\text{Ընդունակություն} \leq 1,0$) ցուցանիշների մակարդակը:

Հաշվապահական հաշվեկշռի պասիվային մասի կառուցվածքային գնահատումը իրականացնենք աղյուսակ 14.20-ի տվյալներով:

Կազմակերպության պասիվների կառուցվածքային գնահատումը

Աղյուսակ 14.20

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղմումը	Նորմա-տիվը
1. Սեփական կապիտալը, հազ. դ.	7300	8300	+1000	-
2. Ոչ ընթացիկ պարտավորությունները, հազ. դ.	1300	1100	-200	-
3. Ընթացիկ պարտավորությունները, հազ. դ.	1400	1600	+200	-
4. Ակտիվներ, հազ. դ.	10000	11000	+1000	-
5. Ֆինանսական անվանության գործակիցը	0.73	0.75	+0.02	$\geq 0,5$
6. Ֆինանսական կախվածության գործակիցը	0.27	0.25	-0.02	$\leq 0,5$
7. Ֆինանսական ռիսկի գործակիցը	0.37	0.33	-0.04	$\leq 1,0$

Աղյուսակից հետևում է, որ կազմակերպության պասիվների առանձին բաժիններն ունեն արդյունավետ կառուցվածք: Բոլոր ֆինանսական գործակիցները համապատասխանում են սահմանված նորմատիվներին:

Կազմակերպության պասիվների կառուցվածքային գնահատմանը տարբեր կերպ են վերաբերում մի կողմից շուկայի մասնակիցները, մյուս կողմից ինքը՝ կազմակերպությունը։ Ծուկայի մասնակիցների համար ցանկալի է, որ տվյալ կազմակերպությունը ունենա սեփական կապիտալի գգալի տեսակարար կշիռ, որը կվկայի նրա հուսալիության մասին և կբացառի ֆինանսական ռիսկը։

Ծուկայական տնտեսության պայմաններում սեփական կապիտալի բարձր տեսակարար կշիռը դեռևս չի վկայում կազմակերպության ֆինանսական կայունության մասին։ Պարտավորությունների աճը, ընդհակառակը՝ վկայում է կազմակերպության ֆինանսական ճկունության և կրեդիտորների կողմից նրա նկատմամբ ձևավորված վստահության կայուն աստիճանի մասին։

Կազմակերպության ֆինանսական ռիսկի մակարդակը պայմանավորված է տարբեր գործոններով (աղյուսակ 14.21)։ Այդ գործոնների ազդեցության չափը շղթայական տեղադրումների եղանակով որոշելու համար, ֆինանսական ռիսկի գործակցի բանաձևի մեջ կարելի է կատարել մի քանի վերափոխումներ՝

$$\frac{\Phi}{U_{\Phi}} = \frac{\Phi}{U} : \frac{U_{\text{բա}}}{U} : \frac{C_{\text{ա}}}{U_{\text{բա}}} : \frac{U_{\text{կ}}}{C_{\text{ա}}}$$

- որտեղ՝ Φ - պարտավորությունների գումարն է,
 U_{Φ} - սեփական կապիտալի գումարն է,
 U - ակտիվների ընդհանուր գումարն է,
 $U_{\text{բա}}$ - ոչ ընթացիկ ակտիվների գումարն է,
 $C_{\text{ա}}$ - ընթացիկ ակտիվների գումարն է,
 Φ/U - ֆինանսական կախվածության գործակիցն է,
 $U_{\text{բա}}/U$ - ոչ ընթացիկ ակտիվների և ակտիվների հարաբերակցության գործակիցն է,
 $C_{\text{ա}}/U_{\text{բա}}$ - շարժուն և անշարժ ակտիվների հարաբերակցության գործակիցն է,
 $U_{\Phi}/C_{\text{ա}}$ - սեփական կապիտալի և ընթացիկ ակտիվների հարաբերակցության գործակիցն է։

**Ֆինանսական ոիսկի վրա ազդող գործուների
վերլուծությունը**

Աղյուսակ 14.21

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շերտմը
1. Ոչ ընթացիկ ակտիվները, հազ. դ.	7000	7600	+600
2. Ընթացիկ ակտիվները, հազ. դ.	3000	3400	+400
3. Սեփական կապիտալը, հազ. դ.	7300	8300	+1000
4. Պարտավորությունները, հազ. դ.	2700	2700	-
5. Ֆինանսական ոիսկի գործակիցը	0.37	0.33	-0.04
6. Պարտավորությունների և ակտիվների հարաբերակցության գործակիցը	0.27	0.25	-0.02
7. Ոչ ընթացիկ ակտիվների և ակտիվների հարաբերակցության գործակիցը	0.70	0.69	-0.01
8. Շարժուն և անշարժ ակտիվների հարաբերակցության գործակիցը	0.43	0.45	+0.02
9. Սեփական կապիտալի ընթացիկ ակտիվների հարաբերակցության գործակիցը	2.43	2.44	+0.01

Կատարենք հետևյալ հաշվարկները և տեղադրումները.

1) հաշվարկ՝ $0.27 : 0.70 : 0.43 : 2.43 = 0.37$,

2) հաշվարկ, 1) տեղադրում՝ $0.25 : 0.70 : 0.43 : 2.43 = 0.34$,

3) հաշվարկ, 2) տեղադրում՝ $0.25 : 0.69 : 0.43 : 2.43 = 0.35$,

4) հաշվարկ, 3) տեղադրում՝ $0.25 : 0.69 : 0.45 : 2.43 = 0.33$,

5) հաշվարկ, 4) տեղադրում՝ $0.25 : 0.69 : 0.45 : 2.44 = 0.33$:

Վերը նշված գործուների ազդեցությունը կազմել է՝

1. պարտավորությունների և ակտիվների հարաբերակցության գործակիցը՝ -0.03 ,

2. ոչ ընթացիկ ակտիվների և ակտիվների հարաբերակցության գործակիցը՝ $+0.01$,

3. շարժուն և անշարժ ակտիվների հարաբերակցության գործակիցը՝ -0.02 ,

4. սեփական կապիտալի և ընթացիկ ակտիվների հարաբերակցության գործակիցը ազդեցություն չի ունեցել:

Ֆինանսական կայունության մակարդակը բնութագրող ցուցանիշների մեջ առավել ընդհանրական ցուցանիշը ֆինանսական լծակի գործակիցն է: Մնացած ցուցանիշները այս կամ այն չափով որոշում են ֆինանսական լծակի մեծությունը:

Ֆինանսական լծակի գործակիցը արտահայտում է մի կողմից շահուցիքի, մյուս կողմից՝ սեփական կապիտալի ու պարտավորությունների հարաբերակցության փոխկախվածության աստիճանը: Ֆինանսական լծակը կազմակերպության հնարավորությունն է սեփական կապիտալի և պարտավորությունների հարաբերակցության փոփոխության միջոցով ներազելու շահուցիքի վրա: Զուտ շահուցիքի (C_a) և համախառն շահուցիքի (C_f) հավելանի տեմպերի հարաբերակցությանը անվանում են ֆինանսական լծակի գործակից (L_f)՝

$$L_f = \frac{C_a}{C_f}$$

Վերլուծվող կազմակերպության տվյալներով որոշենք ֆինանսական լծակի գործակիցը (աղյուսակ 14.22):

Ֆինանսական լծակի գործակիցի որոշումը

Աղյուսակ 14.22

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Հավելանի տեմպը, %
1. Զուտ շահուցիքը մինչև հարկումը, հազ. դ.	800	1125	40.63
2. Զուտ շահուցիքը հետո, հազ. դ.	640	900	40.63
3. Ֆինանսական լծակը		40.63 : 40.63 = 1.0	

Այդ գործակիցը ցուց է տալիս, թե զուտ շահուցիքի հավելանի տեմպը քանի անգամ են գերազանցում համախառն շահուցիքի հավելանի տեմպերին, որը արտացոլվում է ֆինանսական լծակի արդյունքով (Աֆ):

$$U_{\Phi_L} = (1 - C_{\text{հդ}}) \times (\Phi_{\text{շակ}} - \Phi\%) \times \Phi_{\Phi_L},$$

որտեղ՝ $\text{Ը}_{\text{Բ}} - \text{շահութահարկի դրույքաչափն } \xi (0.2),$
 $\text{Գ}_{\text{շԱ}} - \text{սեփական կապիտալի շահութաբերությունն } \xi,$
 $\text{Բ}\% - \text{բանկային վարկի տոկոսադրույքն } \xi,$
 $\text{Գ}_{\text{Փ}} - \text{ֆինանսական ռիսկի գործակիցն } \xi:$

Որոշենք ֆինանսական լծակի արդյունքը (այսուսակ 14.23):

Ֆինանսական լծակի արդյունքի որոշումը

Այսուսակ 14.23

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Սեփական կապիտալը, հազ. դ.	7300	8300	+1000
2.Պարտավորությունները, հազ. դ.	2700	2700	-
3. Զուտ շահույթը հարկու- մից հետո, հազ. դ.	640	900	+260
4. Սեփական կապիտալի շահութաբերությունը, %	8.8	10.8	+2.0
5. Բանկային տոկոսա- դրույքը, %	7.5	8.0	+0.5
6. Ֆինանսական լծակի արդյունքը, %	$0.8 \times 1.3 \times 0.37 =$ $= 0.4$	$0.8 \times 2.8 \times 0.33 =$ $= 0.7$	+0.3

Ֆինանսական լծակի գործակցի աճը վկայում է ֆինան-սական ռիսկի մեծացման մասին: Ֆինանսական լծակի գործակցի արժեքը արտադրության տարբեր ճյուղերում միատեսակ չէ: Ֆինանսական լծակի գործակցը ցածր է այն ճյուղերում, որտեղ մեծ է ոչ ընթացիկ ակտիվների բաժինը և դանդաղ է ընթանում ակտիվների շրջանառելիությունը, հակառակ դեպ-քում՝ դրա արժեքը բարձր է:

Կազմակերպության ֆինանսական կայունությունը ամբող-ջովին բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրեն ակտիվների և պասիվների հարաբերակցությունը, որոնց միջև առկա է սերտ փոխկապվածություն և փոխայմանավոր-վածություն:

Ոչ ընթացիկ ակտիվները ֆինանսավորվում են սեփական կապիտալի և ոչ ընթացիկ պարտավորությունների միջոցով, չնայած որոշ դեպքերում այն կարող է տեղի ունենալ նաև ընթացիկ պարտավորությունների հաշվին: Ընթացիկ ակտիվները ձևավորվում են սեփական կապիտալի և ընթացիկ պարտավորությունների հաշվին:

Ընթացիկ ակտիվների հաստատուն մասը (պաշարներ) ֆինանսավորվում են սեփական կապիտալի, իսկ փոփոխուն մասը (դեբետորական պարտքեր, դրամական միջոցներ և համարժեքներ)` ընթացիկ պարտավորությունների հաշվին: Սեփական աղբյուրների պակասորդի պայմաններում աճում է ընթացիկ ակտիվների փոփոխուն և նվազում՝ հաստատուն մասը, որը վկայում է կազմակերպության ֆինանսական անկայունության մասին:

Կազմակերպության ֆինանսական կայունությունը պայմանավորված է ոչ միայն ակտիվների և պասիվների, այլ նաև փոփոխուն և հաստատուն ծախսերի օպտիմալ հարաբերակցությամբ: Արտադրության ծավալի, փոփոխուն և հաստատուն ծախսերի փոխկապվածությունը արտահայտվում է գործառնական լծակի գործակցով, որի մակարդակից են կախված ինչպես ֆինանսական արդյունքները, այնպես էլ ֆինանսական կայունությունը: Գործառնական լծակը կազմակերպության հնարավորությունն է արտադրանքի ինքնարժեքի և ծավալի փոփոխության միջոցով ներազելու շահուցիքի վրա:

Գործառնական լծակի բարձր մակարդակը նպաստում է իրացումից հասուլքի հավելանի տեմպերի նկատմամբ համախառն շահուցիքի հավելանի տեմպերի արագացմանը: Համախառն շահուցիքի (C_f) և իրացումից հասուլքի (L_f) հավելանի տեմպերի հարաբերակցությունը իրենից ներկայացնում է գործառնական լծակի գործակիցը (L_f)`

$$L_f = \frac{C_f}{\zeta}$$

Գործառնական լծակի գործակիցը որոշվում է հետևյալ աղյուսակի տվյալներով (աղյուսակ 14.24):

Գործառնական լծակի գործակցի որոշումը
Աղյուսակ 14.24

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Հավելաճի տեմպը, %
1. Արտադրանքի իրացումից հասույթը, հազ. դ.	15000	15700	4.67
2. Զուտ շահույթը մինչև հարկումը, հազ. դ.	800	1125	40.63
3. Գործառնական լծակը	$40.63 : 4.67 = 8.7$		

Գործառնական լծակի գործակիցը ցուց է տալիս իրացումից հասույթի նկատմամբ շահույթի զգայունության աստիճանը: Գործառնական լծակի մակարդակից են կախված ոչ միայն շահույթի հավելաճի տեմպերը, այլ նաև ֆինանսական կայունության պաշարը: Այն որոշվում է հետևյալ կերպ՝

(իրացումից հասույթ-շահութաբերության շեմ) $\times 100$: իրացումից հասույթ

Այժմ որոշենք վերլուծվող կազմակերպության կողմից արտադրվող «Բ» արտադրատեսակի գծով ֆինանսական կայունության պաշարը (աղյուսակ 14.25):

Ֆինանսական կայունության պաշարի որոշումը
Աղյուսակ 14.25

Ցուցանիշներ	Հաշվարկ
1. Արտադրանքի ծավալը, հազ. դ.	4800
2. Հաստատուն ծախսերը, հազ. դ.	1000
3. Փոփոխուն ծախսերը, հազ. դ.	1800
4. Սահմանային շահույթը, հազ. դ.	3000
5. Սահմանային շահույթի տեսակարար կշիռը արտադրանքի ծավալի մեջ, %	62.5
6. Ծահութաբերության շեմը, հազ. դ.	1600
7. Ֆինանսական կայունության պաշարը, %	$(4800 - 1600) : 4800 \times 100 = 66.7$

Ֆինանսական կայունության պաշարը հաշվետու տարում կազմել է 66.7%: Հաստատուն ծախսերի բարձր տեսակարար կշի առկայության դեպքում ցածր է ֆինանսական կայունության պաշարի մեծությունը: Գործառնական լծակի բարձր մակարդակի դեպքում կազմակերպությունը դիմում է մեծ ռիսկի:

Կազմակերպության տնտեսական գործունեության ամբողջական ռիսկը բնութագրվում է գործառնաֆինանսական լծակի գործակցով (Լ_{գֆ}): Այն որոշվում է գործառնական և ֆինանսական լծակի գործակիցների արտադրյալով՝

$$L_{g\phi} = L_g \times L_\phi = 8.7 \times 1.0 = 8.7$$

Կազմակերպության ֆինանսական կայունությունը բնութագրվում է նաև ընթացիկ ակտիվների սեփական մասի մեծությամբ, այսինքն՝ թե սեփական կապիտալի որ մասն է օգտագործվում շրջանառության մեջ: Սեփական ընթացիկ ակտիվների գումարը կարելի է որոշել երկու տարրերակով՝

I տարրերակ՝ Պ3 + Պ4 - Ա1,

II տարրերակ՝ Ա2 - Պ5:

Սեփական ընթացիկ ակտիվների մեծությունը ցուց է տալիս, թե ընթացիկ ակտիվների որ մասն է ձևավորվում սեփական կապիտալի հաշվին կամ ընթացիկ պարտավորությունների մարման դեպքում շրջանառության մեջ մնացած ակտիվների մնացորդը: Այստեղ շատ կարևոր է նաև որոշել սեփական ընթացիկ ակտիվներով ապահովածությունը (սեփական ընթացիկ ակտիվներ / ընթացիկ ակտիվներ), որի նորմատիվը կազմում է $\geq 0,1$:

Կազմակերպության ֆինանսական կայունությունը ամբողջությամբ պայմանավորվում է սեփական աղբյուրներով պաշարների ապահովածության աստիճանով: Այն ներկայացվում է սեփական ընթացիկ ակտիվների և պաշարների հարաբերակցության գործակցով, որի նորմատիվային մեծությունը կազմում է $\geq 0,7$:

Որոշենք կազմակերպության սեփական ընթացիկ ակտիվների գումարը, այնուհետև սեփական աղբյուրներով ընթացիկ ակտիվների և պաշարների ապահովածության գործակիցները (աղյուսակ 14.26):

**Սեփական ընթացիկ ակտիվների գումարի և սեփական
աղբյուրներով ընթացիկ ակտիվների ու պաշարների
ապահովածության գործակիցների որոշումը**

Աղյուսակ 14.26

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը	Նորմատիվը
1. Ոչ ընթացիկ ակտիվները, հազ. դ.	7000	7600	+600	-
2. Սեփական կապիտալը, հազ. դ.	7300	8300	+1000	-
3. Ոչ ընթացիկ պարտավորությունները, հազ. դ.	1300	1100	-200	-
4. Ընթացիկ ակտիվները, հազ. դ.	3000	3400	+400	-
5. Պաշարները, հազ. դ.	1650	1860	+210	-
6. Սեփական ընթացիկ ակտիվները, հազ. դ.	1600	1800	+200	-
7. Սեփական աղբյուրներով ընթացիկ ակտիվների ապահովածության գործակիցը	0.54	0.53	-0.01	≥ 0.1
8. Սեփական աղբյուրներով պաշարների ապահովածության գործակիցը	0.97	0.96	-0.01	≥ 0.7

Հաշվետու տարվա ընթացքում սեփական ընթացիկ ակտիվները աճել են 200 հազ. դ. գումարով: Սեփական աղբյուրներով ընթացիկ ակտիվների և պաշարների ապահովածության գործակիցները գերազանցում են սահմանված նորմատիվները՝ չնայած նախորդ տարվա համեմատ նվազել են:

Անուհետև որոշվում է շարժուն և անշարժ ակտիվների հարաբերակցությունը (Ա2/Ա1), որը պայմանավորված է ճյուղային առանձնահատկություններով: Ցանկալի է դրանց միջև ապահովել օպտիմալ հարաբերակցություն:

Վերլուծական գործընթացում շատ կարևոր է սեփական կապիտալի կառուցվածքի գնահատման հարցը, այլ կերպ ասած՝ դրա մեջ սեփական ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռը: Եթե սեփական ընթացիկ ակտիվների գումարը (Ը_ս) հարաբերենք սեփական կապիտալի մեծությանը (Ս_կ),

ապա կստանանք շարժունակության գործակիցը (Φ_2)՝

$$\Phi_2 = \frac{C_{uu}}{U_u}$$

Շարժունակության գործակիցը ցուց է տալիս, թե սեփական կապիտալի որ մասն է գտնվում շրջանառության մեջ: Այդ գործակիցի նորմատիվը կազմում է՝ ≥ 0.5 , որի մեծությունը հնարավորություն կտա ապահովել կազմակերպության սեփական միջոցների օգտագործման հարցում բավարար ճկունություն:

Որոշենք կազմակերպության շարժուն և անշարժ ակտիվների հարաբերակցության և սեփական կապիտալի շարժունակության գործակիցները (աղյուսակ 14.27):

Ակտիվների հարաբերակցության և սեփական կապիտալի շարժունակության գործակիցների որոշումը

Աղյուսակ 14.27

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Ծերումը
1. Ոչ ընթացիկ ակտիվները, հազ. դ.	7000	7600	+600
2. Ընթացիկ ակտիվները, հազ. դ.	3000	3400	+400
3. Սեփական կապիտալը, հազ. դ.	7300	8300	+1000
4. Ընթացիկ պարտավորությունները, հազ. դ.	1400	1600	+200
5. Սեփական ընթացիկ ակտիվները, հազ. դ.	1600	1800	+200
6. Ակտիվների հարաբերակցության գործակիցը	0.43	0.45	+0.02
7. Շարժունակության գործակիցը	0.22	0.21	-0.01

Շարժուն և անշարժ ակտիվների հարաբերակցության գործակիցը հաշվետու տարում աճել է ի հաշիվ ընթացիկ ակտիվների գումարի առաջնամաց ավելացման: Սեփական կապիտալի շարժունակության գործակիցը այդ ընթացքում փոքր չափով նվազել է:

Կախված պաշարների ֆինանսավորման աստիճանից՝ կազմակերպությունում կարող է ձևավորվել ֆինանսական իրադրության տեսակներից որևէ մեկը.

1. կայուն՝ $Ա2.1 \leq (\Phi 3 + \Phi 4 - Ա1) + \Phi 5.1$
2. անկայուն՝ $Ա2.1 = (\Phi 3 + \Phi 4 - Ա1) + \Phi 5.1 + \Phi_{լա}$
3. ճգնաժամային՝ $Ա2.1 > (\Phi 3 + \Phi 4 - Ա1) + \Phi 5.1$

որտեղ՝ $\Phi_{լա}$ - ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են (պահուստներ, չբաշխված շահութ, վարկեր և այլն):

Կայուն իրադրության դեպքում կազմակերպության վճարունակությունը ապահովված է: Անկայուն իրադրության պայմաններում խախտված է վճարային հաշվեկշիռը, սակայն ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների հաշվին կարելի է դեռևս կարգավորել ստեղծված իրավիճակը: Ծգնաժամային իրադրության դեպքում կազմակերպությունը գտնվում է սնանկացման վտանգի տակ:

Այժմ որոշենք տվյալ կազմակերպությունում ձևավորված ֆինանսական իրադրության տարատեսակը (այսուակ 14.28):

Ֆինանսական իրադրության որոշումը

Այսուակ 14.28

(հազ. դ.)

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Պաշարները	1650	1860	+210
2. Սեփական ընթացիկ ակտիվները	1600	1800	+200
3. Ընթացիկ ֆինանսական պարտավորությունները	1070	1170	+100
4. Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրները	-	-	-
5. Ֆինանսական իրադրությունը	-1020	-1110	-90

Վերլուծվող կազմակերպությունում հաշվետու տարում ձևավորված է կայուն ֆինանսական իրադրություն:

Վերլուծության արդյունքներով՝ կազմակերպության ֆինանսական կայունության ամրապնդման գծով մշակվում է ռազմավարական ծրագիր, որտեղ առանցքային հիմնախնդիրները կապված են ընթացիկ ակտիվների շրջանառելիության արագացման, պաշարների օպտիմալ չափերի ապահովման և ֆինանսավորման ներքին ու արտաքին աղբյուրների հաշվին սեփական ընթացիկ ակտիվների լրացման հետ:

14.8. ԱՆՎՃԱՐՈՒԽԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծովայական տնտեսության պայմաններում կազմակերպության տնտեսական գործունեության անարդյունավետ կազմակերպումը բերում է նրա անվճարունակությանը, իսկ այնուհետև՝ սնանկացմանը: Վերջինս կազմակերպության պարտավորությունների մարման և իր գործունեության ֆինանսավորման անկարողությունն է: Այդ դեպքում կազմակերպության կրեդիտորները կարող են դիմել տնտեսական դատարան՝ նրան սնանկ ճանաչելու մասին:

Կազմակերպության սնանկացման վրա ազդում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթի գործոններ: Ներքին գործոններից են՝ սեփական ընթացիկ ակտիվների պակասորդը, արտադրության կազմակերպչատեխնիկական թույլ մակարդակը, պաշարների անարդյունավետ օգտագործումը, ակտիվների դանդաղ շրջանառելիությունը, անհուսալի դերիտորական պարտքերի աճը, մարքեթինգային գործունեության թերի կազմակերպումը, բանկային վարկերի անշահավետ ներգրավումը և այլն:

Կազմակերպության սնանկացմանը նպաստող արտաքին գործոնների թվին են դասվում՝ տնտեսության ճգնաժամային վիճակը, տնտեսական անկումը, սղաճը, ֆինանսական համա-

կարգի անկայունությունը, քաղաքական անկայուն իրադրությունը, օրենսդրական դաշտի բացակայությունը, արտաքին մրցակցային պայմանների ուժեղացումը և այլն:

Կազմակերպությունների սնանկացման դեպքերի գերակշիռ մասը կապված է ներքին գործոնների առկայության հետ: Նրանց անվճարունակությունը գնահատվում է հետևյալ ցուցանիշներով՝

- ընթացիկ իրացվելիության գործակից,
- վճարունակության վերականգնման (կորստի) գործակից:

Կազմակերպությունը համարվում է անվճարունակ՝ հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում՝

- ընթացիկ իրացվելիության գործակիցը հաշվետու ժամանակաշրջանի վերջին փոքր է 2,0-ից,
- վճարունակության վերականգնման գործակիցը փոքր է 1-ից:

Ընթացիկ իրացվելիության գործակիցը (Q_{hp}) որոշվում է հետևյալ կերպ՝

$$Q_{hp} = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Ընթացիկ պարտավորություններ}}$$

Վճարունակության վերականգնման գործակիցը (Q_{pl}) որոշվում է այն դեպքում, եթե նախորդ երկու գործակիցների մակարդակը առաջիկա վեց ամիսներին ցածր է սահմանված արժեքներից.

$$Q_{pl} = \frac{Q_{hp1} + 0.5 \times \Delta Q_{hp}}{Q_{hp2}}$$

որտեղ՝ 0.5 - վճարունակության վերականգնման ժամանակաշրջանի գործակիցն է,

Q_{hp2} - ընթացիկ իրացվելիության գործակիցի նորմատիվային արժեքն է:

Վճարունակության վերականգնման գործակիցը մեկից մեծ լինելու դեպքում կազմակերպությունը հնարավորություն ունի վերականգնել իր վճարունակությունը:

Ընթացիկ իրացվելիության գործակցի փաստացի մակարդակի՝ նորմատիվային արժեքից ցածր լինելու և առաջիկա աճի միտումների դեպքում հաշվարկվում է վճարունակության կորստի գործակիցը (Գ.պ) առաջիկա երեք ամիսների կտրվածքով՝

$$q_{\text{պ}} = \frac{q_{\text{իր1}} + 0.25 \times \Delta q_{\text{իր}}}{q_{\text{իր6}}}$$

որտեղ՝ 0.25 - վճարունակության կորստի ժամանակաշրջանի գործակիցն է:

Որոշենք կազմակերպության վճարունակության վերականգնման և կորստի գործակիցները (աղյուսակ 14.29): Ենթադրենք՝ կազմակերպության ընթացիկ պարտավորությունները նախորդ տարում կազմել են 1800 հազ. դ., իսկ հաշվետու տարում՝ 1900 հազ. դ.:

Վճարունակության վերականգնման և կորստի գործակիցների որոշումը

Աղյուսակ 14.29

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	Շեղումը
1. Ընթացիկ ակտիվները, հազ. դ.	3000	3400	+400
2. Ընթացիկ պարտավորությունները, հազ. դ.	1800	1900	+100
3. Իրացվելիության գործակիցը	1.67	1.79	+0.12
4. Վճարունակության վերականգնման գործակիցը	$[1.79 + (0.5 \times 0.12)] : 2.0 = 0.93$		
5. Վճարունակության կորստի գործակիցը	$[1.79 + (0.25 \times 0.12)] : 2.0 = 0.91$		

Վճարունակության կորստի գործակիցը մեկից մեծ լինելու դեպքում կազմակերպությունը կարող է առաջիկա երեք ամիս-

Աերի ընթացքում պահպանել իր վճարունակության մակարդակը, սակայն մեր օրինակում դրա հակառակ երևուցին է:

Տվյալ կազմակերպությունը համարվում է անվճարունակ: Այս դեպքում կատարվում է նրա տնտեսական գործունեության համարի վերլուծություն, որի նպատակն է մինչև դատական գործընթացը ընտրել հետևյալ տարրերակներից որևէ մեկը՝

- վճարունակության վերականգնման համար կազմակերպական միջոցառումների անցկացումը,
- գործող օրենսդրությանը համապատասխան՝ լուծարային միջոցառումների անցկացումը:

Կազմակերպությունների սնանկացման ոիսկի գնահատումը կարելի է կատարել Ակտմանի մեթոդով: Այդ դեպքում սնանկացման ոիսկը (Z) գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$Z = 1.2x_1 + 1.4x_2 + 3.3x_3 + 0.6x_4 + 1.0x_5 ,$$

որտեղ՝ x_1 - սեփական ընթացիկ ակտիվներ / ակտիվներ,

x_2 - շբաշխված շահույթ / ակտիվներ,

x_3 - շահույթ մինչև հարկումը / ակտիվներ,

x_4 - սեփական կապիտալ / պարտավորություններ,

x_5 - իրացումից հասույթ / ակտիվներ:

Հետևյալ աղյուսակում Ակտմանի մեթոդով որոշենք կազմակերպության սնանկացման ոիսկի գործակիցը (աղյուսակ 14.30):

Սնանկացման ոիսկի գնահատումը Ակտմանի մեթոդով Աղյուսակ 14.30

Ցուցանիշներ	Գումարը, հազ. դ.
1. Ակտիվները, հազ. դ.	11000
2. Սեփական կապիտալը, հազ. դ.	8300
3. Պարտավորությունները, հազ. դ.	2700
4. Սեփական ընթացիկ ակտիվները, հազ. դ.	1800
5. Արտադրանքի իրացումից հասույթը, հազ. դ.	15700
6. Զբաշխված շահույթը, հազ. դ.	900
7. Շահույթը մինչև հարկումը, հազ. դ.	1125
8. Սնանկացման ոիսկի գործակիցը	3.91

Աղյուսակի տվյալների համաձայն՝ սնանկացման ռիսկի գործակիցը հավասար է՝

$$Z = (1.2 \times 1800 : 11000) + (1.4 \times 900 : 11000) + (3.3 \times 1125 : 11000) + (0.6 \times 8300 : 2700) + (1.0 \times 15700 : 11000) = 3.91$$

Այդ գործակցի սահմանային արժեքը 1.8 է, որը վկայում է սնանկացման բարձր ռիսկի մասին: 1.8-ից 2.7-ի դեպքում սնանկացման հավանականությունը բարձր է, 2.7-ից 3.0-ի դեպքում՝ հնարավոր, իսկ դրանից ավելի լինելու դեպքում՝ սնանկացման հավանականությունը փոքր է: Վերջինս յուրահատուկ է վերլուծողի կազմակերպությանը:

Վերլուծական հետազոտությունների արդյունքներով նպատակահարմար է մշակել կազմակերպության ֆինանսական դրության առողջացման ռազմավարական ծրագիր, որը ներառում է հետևյալ ուղղությունները՝

- մարտերինգային հետազոտության իրականացում,
- ISO 9000 սերիայի ստանդարտներին համապատասխան որակի կառավարման համակարգի ներդրում,
- արտադրական ծրագրի վերանայում,
- ուսուլըների արդյունավետ օգտագործում,
- ակտիվների շրջանառելիության արագացում,
- ծախսերի մակարդակի կրճատում և այլն:

S E U S E R

1. Հաշվապահական հաշվառման հիմնական հավասարման համաձայն.

- ա) ակտիվներ + սեփական կապիտալ = պարտավորություններ
- բ) ակտիվներ = սեփական կապիտալ + պարտավորություններ
- գ) սեփական կապիտալ = ակտիվներ + պարտավորություններ
- դ) ակտիվներ = սեփական կապիտալ - պարտավորություններ:

2. Ներկայացված ընթացիկ ակտիվներից որո՞նք են վերաբերում առավել իրացվելի ակտիվներին.

- ա) դրամական միջոցներ + պաշարներ
- բ) դրամական միջոցներ + դերիտորական պարտքեր
- գ) դրամական միջոցներ + ֆինանսական ներդրումներ
- դ) դրամական միջոցներ + դրանց համարժեքներ:

3. Ներկայացված ընթացիկ ակտիվներից որո՞նք են վերաբերում արագ իրացվելի ակտիվներին.

- ա) պաշարներ
- բ) դերիտորական պարտքեր
- գ) ֆինանսական ներդրումներ
- դ) դրամական միջոցներ:

4. Ներկայացված ընթացիկ ակտիվներից որո՞նք են վերաբերում դանդաղ իրացվելի ակտիվներին.

- ա) դրամական միջոցներ
- բ) ֆինանսական ներդրումներ
- գ) դերիտորական պարտքեր
- դ) պաշարներ:

5. Ներկայացված ակտիվներից որո՞նք են վերաբերում դժվար իրացվելի ակտիվներին.

- ա) պաշարներ
- բ) դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- գ) ընթացիկ ֆինանսական ներդրումներ
- դ) ոչ ընթացիկ ակտիվներ:

6. Հաշվապահական հաշվեկշռի իրացվելիության գնահատման ժամանակ ո՞ր հատկանիշով են վերախմբավորվում բոլոր ակտիվները.

- ա) իրացվելիության աճի
- բ) իրացվելիության մարման
- գ) իրացվելիության արագացման
- դ) իրացվելիության դանդաղեցման:

7. Հաշվապահական հաշվեկշռի իրացվելիության գնահատման ժամանակ ո՞ր հատկանիշով են վերախմբավորվում սեփական կապիտալը և պարտավորությունները.

- ա) մարման ժամկետների աճի
- բ) մարման ժամկետների նվազման
- գ) մարման ժամկետների արագացման
- դ) մարման ժամկետների դանդաղեցման:

8. Թվարկվածներից որո՞նք են վերաբերում առավել իրատապ պարտավորություններին.

- ա) կրեդիտորական պարտքեր
- բ) ընթացիկ ֆինանսական պարտավորություններ
- գ) ոչ ընթացիկ պարտավորություններ
- դ) սեփական կապիտալ:

9. Թվարկվածներից որո՞նք են վերաբերում կարճաժամկետ պարտավորություններին.

- ա) կրեդիտորական պարտքեր
- բ) ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ

- գ) ընթացիկ ֆինանսական պարտավորություններ
- դ) սեփական կապիտալ:

10. Թվարկվածներից որո՞նք են վերաբերում երկարաժամկետ պարտավորություններին.

- ա) ընթացիկ ֆինանսական պարտավորություններ
- բ) կրեդիտորական պարտքեր
- գ) ոչ ընթացիկ պարտավորություններ
- դ) սեփական կապիտալ:

11. Թվարկվածներից որո՞նք են վերաբերում մշտական պասիվներին.

- ա) ընթացիկ ֆինանսական պարտավորություններ + կրեդիտորական պարտքեր
- բ) կրեդիտորական պարտքեր + ոչ ընթացիկ պարտավորություններ
- գ) ոչ ընթացիկ պարտավորություններ + ընթացիկ պարտավորություններ
- դ) սեփական կապիտալ + այլ ընթացիկ պարտավորություններ:

12. Հաշվապահական հաշվեկշիռը գնահատվում է իրացվելի, եթե պահպանվել են հետևյալ օպտիմալ հարաբերակցությունները.

- ա) $U1 \geq \Psi_1, U2 \geq \Psi_2, U3 \leq \Psi_3, U4 \leq \Psi_4$
- բ) $U1 \leq \Psi_1, U2 \geq \Psi_2, U3 \geq \Psi_3, U4 \leq \Psi_4$
- գ) $U1 \geq \Psi_1, U2 \leq \Psi_2, U3 \geq \Psi_3, U4 \leq \Psi_4$
- դ) $U1 \geq \Psi_1, U2 \geq \Psi_2, U3 \geq \Psi_3, U4 \leq \Psi_4$:

13. Հաշվապահական հաշվեկշիռը գնահատվում է ոչ իրացվելի, եթե չի պահպանվել միայն մեկ հարաբերակցություն.
ա) $U1 \geq \Psi_1, \quad \text{բ) } U2 \geq \Psi_2, \quad \text{գ) } U3 \leq \Psi_3, \quad \text{դ) } U4 \leq \Psi_4$:

14. Թվարկվածներից որո՞նք են ընդգրկվում ոչ ընթացիկ ակտիվների կազմի մեջ.

- ա) նյութական, ոչ նյութական, ֆինանսական
- բ) դրամական միջոցներ, պաշարներ, ոչ նյութական
- գ) դրամական միջոցներ, պաշարներ, դեբիտորական պարտքեր
- դ) կրեդիտորական պարտքեր, պաշարներ, դեբիտորական պարտքեր:

15. Թվարկվածներից որո՞նք են ընդգրկվում ընթացիկ ակտիվների կազմի մեջ.

- ա) նյութական, ոչ նյութական, պաշարներ
- բ) դրամական միջոցներ, պաշարներ, ոչ նյութական
- գ) պաշարներ, դեբիտորական պարտքեր, դրամական միջոցներ
- դ) ոչ նյութական, պաշարներ, դեբիտորական պարտքեր:

16. Թվարկվածներից որո՞նք են ընդգրկվում սեփական կապիտալի կազմի մեջ.

- ա) կանոնադրական կապիտալ, կուտակված շահույթ, այլ տարրեր
- բ) դրամական միջոցներ, շահույթ, պաշարներ
- գ) պաշարներ, դեբիտորական պարտքեր, կուտակված շահույթ
- դ) շահույթ, պաշարներ, կրեդիտորական պարտքեր:

17. Թվարկվածներից որո՞նք են ընդգրկվում ոչ ընթացիկ պարտավորությունների կազմի մեջ.

- ա) կուտակված շահույթ, կրեդիտորական պարտքեր
- բ) ֆինանսական պարտավորություններ, իրացումից շահույթ
- գ) պաշարներ, ֆինանսական պարտավորություններ
- դ) ֆինանսական պարտավորություններ, այլ պարտավորություններ:

18. Թվարկվածներից որո՞նք են ընդգրկվում ընթացիկ պարտավորությունների կազմի մեջ.

- ա) սեփական կապիտալ, կուտակված շահույթ, կրեդիտորական պարտքեր
- բ) ֆինանսական ակտիվներ, շահույթ, կրեդիտորական պարտքեր
- գ) ֆինանսական պարտավորություններ, կրեդիտորական պարտքեր, այլ պարտավորություններ
- դ) շահույթ, կրեդիտորական պարտքեր, ֆինանսական պարտավորություններ:

19. Ակտիվների իրացվելիության գործակիցների որոշման համար ընթացիկ պարտավորությունները հաշվարկվում են.

- ա) կրեդիտորական պարտքեր + դեբիտորական պարտքեր
- բ) կրեդիտորական պարտքեր + ընթացիկ ակտիվներ
- գ) ընթացիկ ֆինանսական պարտավորություններ - ընթացիկ ակտիվներ
- դ) ընթացիկ ֆինանսական պարտավորություններ + կրեդիտորական պարտքեր:

20. Բացարձակ իրացվելիության գործակիցը որոշվում է.

- ա) դրամական միջոցներ / ընթացիկ պարտավորություններ
- բ) (դրամական միջոցներ + ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / ընթացիկ պարտավորություններ
- գ) դրամական միջոցներ / կրեդիտորական պարտքեր
- դ) դրամական միջոցներ / ընթացիկ ֆինանսական պարտավորություններ:

21. Արագ իրացվելիության գործակիցը որոշվում է.

- ա) (դրամական միջոցներ + ընթացիկ ֆինանսական ներդրումներ + դեբիտորական պարտքեր) / կրեդիտորական պարտքեր

- թ) (դրամական միջոցներ + դեբիտորական պարտքեր) / կրեդիտորական պարտքեր
 ղ) (դրամական միջոցներ + դեբիտորական պարտքեր) / ընթացիկ ֆինանսական ներդրումներ
 ի) (դրամական միջոցներ + ընթացիկ ֆինանսական ներդրումներ + դեբիտորական պարտքեր) / ընթացիկ պարտավորություններ:

22. Ընդհանուր իրացվելիության գործակիցը որոշվում է.

- ա) ընթացիկ ակտիվներ / ընթացիկ պարտավորություններ
 թ) դեբիտորական պարտքեր / կրեդիտորական պարտքեր
 ղ) դրամական միջոցներ / ընթացիկ պարտավորություններ
 ի) ընթացիկ ֆինանսական ներդրումներ / դեբիտորական պարտքեր:

23. Բացարձակ իրացվելիության գործակիցը համարվում է օպտիմալ եթե.

ա) $K \geq 0.1$, թ) $K \geq 0.25$, ղ) $K \geq 0.5$, ի) $K \geq 1.0$:

24. Արագ իրացվելիության գործակիցը համարվում է օպտիմալ եթե.

ա) $K \geq 0.5$, թ) $K \geq 1.0$, ղ) $K \geq 1.5$, ի) $K \geq 2.0$:

25. Ընդհանուր իրացվելիության գործակիցը համարվում է օպտիմալ եթե.

ա) $K \geq 1.0$, թ) $K \geq 2.0$, ղ) $K \geq 3.0$, ի) $K \geq 4.0$:

26. Վճարունակության վերականգնման գործակիցը համարվում է նորմատիվային, եթե.

ա) $K=1.0$, թ) $K>1.0$, ղ) $K<1.0$, ի) $K \geq 0.5$:

27. Շուկայի մասնակիցներից առաջին ներթին ու՞մ է հետաքրքրում բացարձակ իրացվելիության գործակիցը.

- ա) գնորդներին
 թ) առևտիտորական ֆիրմաներին

- գ) մատակարարներին
- դ) գովազդային գործակալություններին:

28. Ծուկայի մասնակիցներից առաջին հերթին ու՞մ է հետաքրքրում արագ իրացվելիության գործակիցը.

- ա) մատակարարներին
- բ) սեփականատերերին
- գ) գնորդներին
- դ) բանկերին:

29. Ծուկայի մասնակիցներից առաջին հերթին ու՞մ է հետաքրքրում ընդունուր իրացվելիության գործակիցը.

- ա) բորսաներին
- բ) մատակարարներին
- գ) գնորդներին
- դ) բաժնետերերին:

30. Ի՞նչ է ցուց տալիս բացարձակ իրացվելիության գործակիցը.

- ա) ընթացիկ պարտավորությունների՝ դրամական միջոցներով և դրանց համարժեքներով ապահովածության աստիճանը
- բ) առավել իրացվելի ակտիվներով ապահովածության աստիճանը
- գ) արագ իրացվելի ակտիվներով ապահովածության աստիճանը
- դ) դժվար իրացվելի ակտիվներով ապահովածության աստիճանը:

31. Ի՞նչ է ցուց տալիս արագ իրացվելիության գործակիցը.

- ա) արագ իրացվելի ակտիվներով ապահովածության աստիճանը
- բ) ընթացիկ պարտավորությունների՝ առավել իրացվելի ակտիվներով ապահովածության աստիճանը
- գ) դժվար իրացվելի ակտիվներով ապահովածության աստիճանը

η) առավել իրացվելի ակտիվներով ապահովվածության աստիճանը:

32. Ի՞նչ է ցուց տալիս ընդհանուր իրացվելիության գործակիցը.

- ա) արագ իրացվելի ակտիվներով ապահովվածության աստիճանը
- բ) առավել իրացվելի ակտիվներով ապահովվածության աստիճանը
- գ) դանդաղ իրացվելի ակտիվներով ապահովվածության աստիճանը
- դ) ընթացիկ պարտավորությունների՝ ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը:

33. Շահութաբերությունը բնութագրվում է հետևյալ հիմնական ցուցանիշներով.

- ա) ակտիվների, սեփական կապիտալի, իրացման, պատմական կապիտալի
- բ) ակտիվների, սեփական կապիտալի, պատմական գույքի
- գ) ակտիվների, սեփական կապիտալի, իրացման, ընթացիկ ակտիվների
- դ) ակտիվների, իրացման, գույքի, ընթացիկ ակտիվների:

34. Ի՞նչ է ցուց տալիս ակտիվների շահութաբերության գործակիցը.

- ա) միավոր ակտիվների հաշվով շահուցիքի մեծությունը
- բ) միավոր արտադրանքի հաշվով շահուցիքի մեծությունը
- գ) միավոր ծախսների հաշվով շահուցիքի մեծությունը
- դ) միավոր ինքնարժեքի հաշվով շահուցիքի մեծությունը:

35. Ակտիվների շահութաբերության գործակիցը արտահայտվում է հետևյալ կերպ.

- ա) ակտիվների շրջանառելիություն x ֆինանսական անկախության գործակից

- թ) իրացման շահութաբերություն x ակտիվների շրջանառելիություն
- գ) իրացման շահութաբերություն x ակտիվների միջին տարեկան արժեք
- դ) ակտիվների շրջանառելիություն x ֆինանսական լծակ:

36. Ի՞նչ է ցուց տալիս սեփական կապիտալի շահութաբերության գործակիցը.

- ա) միավոր կապիտալի հաշվով շահուցի մեծությունը
- թ) միավոր սեփական կապիտալի հաշվով եկամտի մեծությունը
- զ) միավոր սեփական կապիտալի հաշվով շահուցի մեծությունը
- դ) միավոր կապիտալի հաշվով եկամտի մեծությունը:

37. Սեփական կապիտալի շահութաբերության գործակիցը արտահայտվում է Բնելկալ կերա.

- ա) իրացման շահութաբերություն x ակտիվների շրջանառելիություն / կապիտալի ֆինանսական կառուցվածք
- թ) իրացման շահութաբերություն / ակտիվների շրջանառելիություն / կապիտալի ֆինանսական կառուցվածք
- զ) իրացման շահութաբերություն / ակտիվների շրջանառելիություն x կապիտալի ֆինանսական կառուցվածք
- դ) իրացման շահութաբերություն x ակտիվների շրջանառելիություն x կապիտալի ֆինանսական կառուցվածք:

38. Ի՞նչ է ցուց տալիս իրացման շահութաբերության գործակիցը.

- ա) միավոր համախառն շահուցի հաշվով իրացումից շահուցի մեծությունը
- թ) միավոր հասուցի հաշվով իրացումից շահուցի մեծությունը
- զ) միավոր եկամտի հաշվով իրացումից շահուցի մեծությունը

η) միավոր արտադրանքի հաշվով իրացումից շահույթի մեծությունը:

39. Ի՞նչ է ցուց տալիս ընթացիկ ակտիվների շահութաբերության գործակիցը.

- ա) միավոր ընթացիկ ակտիվների հաշվով շահույթի մեծությունը
- բ) միավոր ընթացիկ ակտիվների հաշվով եկամտի մեծությունը
- գ) միավոր ընթացիկ ակտիվների հաշվով գործառնական շահույթի մեծությունը
- դ) միավոր ընթացիկ ակտիվների հաշվով գործառնական եկամտի մեծությունը:

40. Ինչպես է որոշվում ակտիվների շահութաբերությունը.

- ա) իրացումից շահույթ / ակտիվների միջին տարեկան արժեք
- բ) գործառնական շահույթ / ակտիվների միջին տարեկան արժեք
- գ) ոչ գործառնական շահույթ / ակտիվների միջին տարեկան արժեք
- դ) զուտ շահույթ / ակտիվների միջին տարեկան արժեք:

41. Ինչպես է որոշվում սեփական կապիտալի շահութաբերությունը.

- ա) իրացումից շահույթ / սեփական կապիտալի միջին տարեկան արժեք
- բ) զուտ շահույթ / սեփական կապիտալի միջին տարեկան արժեք
- գ) գործառնական շահույթ / սեփական կապիտալի միջին տարեկան արժեք
- դ) ոչ գործառնական շահույթ / սեփական կապիտալի միջին տարեկան արժեք:

42. Ինչպե՞ս է որոշվում իրացման շահութաբերության գործակիցը.

- ա) իրացումից շահուվթ / իրացումից հասուվթ
- բ) զուտ շահուվթ / իրացումից հասուվթ
- գ) եկամուտ / իրացումից հասուվթ
- դ) դրամական միջոցներ / իրացումից հասուվթ:

43. Ինչպե՞ս է որոշվում ընթացիկ ակտիվների շահութաբերության գործակիցը.

- ա) դրամական միջոցներ / ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք
- բ) դեբիտորական պարտքեր / ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք
- գ) զուտ շահուվթ / ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք
- դ) պաշարներ / ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք:

44. Ինչպե՞ս է որոշվում ակտիվների շրջանառելիության գործակիցը ըստ պտույտների.

- ա) ակտիվների միջին տարեկան արժեք / իրացումից հասուվթ
- բ) իրացումից հասուվթ / ակտիվների միջին տարեկան արժեք
- գ) ակտիվների միջին տարեկան արժեք \times 360 / իրացումից հասուվթ
- դ) իրացումից հասուվթ / ակտիվների միջին տարեկան արժեք \times 360:

45. Ինչպե՞ս է որոշվում ակտիվների շրջապտույտի տևողույունը օրերով.

- ա) ակտիվների միջին տարեկան արժեք / իրացումից հասուվթ \times 360
- բ) ակտիվների միջին տարեկան արժեք / 360 / իրացումից հասուվթ

- գ) ակտիվների միջին տարեկան արժեք \times 360 / իրացումից հասուց
- դ) իրացումից հասուց \times 360 / ակտիվների միջին տարեկան արժեք:

46. Ակտիվների մեկ պտույտի տևողությունը օրերով հաշվարկվում է հետևյալ կերպ.

- ա) 360 / ակտիվների շրջանառելիության գործակից
- բ) ակտիվների շրջանառելիության գործակից / 360
- գ) ակտիվների շրջանառելիության գործակից \times 360
- դ) իրացումից հասուց / 360:

47. Ինչպե՞ս է որոշվում ընթացիկ ակտիվների մեկ պտույտի տևողությունը.

- ա) ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք / իրացումից հասուց
- բ) իրացումից հասուց / ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք
- գ) իրացումից հասուց / ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք \times 360
- դ) ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք \times 360 / իրացումից հասուց:

48. Ընթացիկ ակտիվների շրջանառելիության դանդաղեցումը հանգեցնում է.

- ա) ակտիվների գումարի կրճատմանը
- բ) ակտիվների գումարի ավելացմանը
- գ) հաշվեկշռի հանրագումարի մեծացմանը
- դ) հաշվեկշռի հանրագումարի նվազեցմանը:

49. Ոչ ընթացիկ նյութական ակտիվների շրջանառելիության գործակիցը որոշվում է հետևյալ կերպ.

- ա) ոչ ընթացիկ նյութական ակտիվների միջին տարեկան արժեք / իրացումից հասուց

- թ) ոչ ընթացիկ նյութական ակտիվների միջին տարեկան արժեք / իրացումից շահույթ
- գ) իրացումից հասույթ / ոչ ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք
- դ) իրացումից շահույթ / ոչ ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք:

50. Ինչպե՞ս է որոշվում ընթացիկ ակտիվների շրջանառելիությունը՝ ըստ պտույտների.

- ա) ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք / 360
- թ) իրացումից հասույթ x 360
- զ) ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք / իրացումից հասույթ
- դ) իրացումից հասույթ / ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք:

51. Ընթացիկ ակտիվների շրջապտույտի տևողությունը օրերով որոշվում է հետևյալ կերպ.

- ա) 360 / շրջանառելիության գործակից
- թ) 360 x շրջանառելիության գործակից
- զ) իրացումից հասույթ x 360
- դ) իրացումից հասույթ / 360:

52. Պաշարների շրջանառելիության գործակիցը ըստ պտույտների որոշվում է հետևյալ կերպ.

- ա) պաշարների միջին տարեկան արժեք x 360
- թ) պաշարների միջին տարեկան արժեք / 360
- զ) իրացումից հասույթ / պաշարների միջին տարեկան արժեք
- դ) պաշարների միջին տարեկան արժեք / իրացումից հասույթ:

53. Պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակիցը ըստ պտույտների որոշվում է հետևյալ կերպ.

- ա) իրացումից հասույթ / պատրաստի արտադրանքի միջին տարեկան արժեք

- թ) պատրաստի արտադրանքի միջին տարեկան արժեք / իրացումից հասուցթ
- գ) պատրաստի արտադրանքի միջին տարեկան արժեք / 360
- դ) պատրաստի արտադրանքի միջին տարեկան արժեք / իրացումից շահուցթ:

54. Ի՞նչպե՞ս է որոշվում դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակիցը ըստ պտույտների.

- ա) դեբիտորական պարտքերի միջին տարեկան արժեք / 360
- թ) իրացումից հասուցթ / դեբիտորական պարտքերի միջին տարեկան արժեք x 360
- զ) իրացումից հասուցթ / դեբիտորական պարտքերի միջին տարեկան արժեք
- դ) իրացումից շահուցթ / դեբիտորական պարտքերի միջին տարեկան արժեք:

55. Ի՞նչպե՞ս է հաշվարկվում դեբիտորական պարտքերի շրջապտույտի միջին ժամկետը.

- ա) շրջանառելիության գործակից x շահութաբերության գործակից
- թ) շրջանառելիության գործակից / շահութաբերության գործակից
- զ) 360 / շրջանառելիության գործակից
- դ) շրջանառելիության գործակից / 360:

56. Ի՞նչպե՞ս է որոշվում մեկ օրյա շրջանառությունը.

- ա) իրացումից հասուցթ / ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք
- թ) իրացումից հասուցթ / 360
- զ) ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք / 360
- դ) ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեք / իրացումից հասուցթ:

57. Շրջանառելիության տնտեսական հետևանքը որոշվում է հետևյալ կերպ.

- ա) Ա շրջանառելիությունը օրերով չ իրացումից հասույթ
- բ) Ա շրջանառելիությունը օրերով / իրացումից հասույթ
- գ) մեկ օրյա շրջանառություն x Ա շրջանառելիությունը օրերով
- դ) մեկ օրյա շրջանառություն / Ա շրջանառելիությունը օրերով:

58. Ֆինանսական կայունությունը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով.

- ա) իրացվելիություն, շահութաբերություն
- բ) բացարձակ, հարաբերական
- գ) իրացվելիություն, շրջանառելիություն
- դ) շահութաբերություն, շրջանառելիություն:

59. Ի՞նչ են բնութագրում ֆինանսական կայունության բացարձակ ցուցանիշները.

- ա) պաշարների ապահովածությունը ձևավորման աղբյուրներով
- բ) շահութաբերությունը
- գ) վճարունակությունը
- դ) շրջանառելիությունը:

60. Սեփական ընթացիկ ակտիվների գումարը որոշվում է.

- ա) ոչ ընթացիկ ակտիվներ - ընթացիկ ակտիվներ
- բ) սեփական կապիտալ - ընթացիկ ակտիվներ
- գ) ընթացիկ ակտիվներ - ընթացիկ պարտավորություններ
- դ) ընթացիկ ակտիվներ - ոչ ընթացիկ ակտիվներ:

61. Ինչպես է որոշվում սեփական ընթացիկ ակտիվների մեծությունը.

- ա) $\Psi_4 + \Psi_5 - U_2$
- բ) $U_1 + U_2 - \Psi_3$
- գ) $\Psi_3 - U_1 + U_2$
- դ) $\Psi_3 + \Psi_4 - U_1$:

62. Ի՞՞Ծ հարաբերակցության մեջ են գտնվում սեփական կապիտալը և զուտ ակտիվները.

- ա) սեփական կապիտալ > զուտ ակտիվներ
- բ) սեփական կապիտալ + պարտավորություններ < զուտ ակտիվներ
- գ) սեփական կապիտալ < զուտ ակտիվներ
- դ) սեփական կապիտալ = զուտ ակտիվներ:

63. Ի՞նչպե՞ս է որոշվում սեփական աղբյուրներով ընթացիկ ակտիվների ապահովածության գործակիցը.

- ա) ($\Psi_3 - U_1$) : U_2
- բ) ($U_1 + U_2$) : Ψ_3
- գ) ($U_1 + U_2 - \Psi_3$) : U_2
- դ) ($\Psi_3 + \Psi_4 - U_1$) : U_2 :

64. Սեփական աղբյուրներով ընթացիկ ակտիվների ապահովածության գործակիցի սահմանափակումը համարվում է.

- ա) $K \geq 0.5$,
- բ) $K \geq 1.0$,
- գ) $K \geq 0.1$,
- դ) $K < 0.5$:

65. Ի՞նչպե՞ս է որոշվում սեփական աղբյուրներով պաշարների ապահովածության գործակիցը.

- ա) ($U_1 + U_{2.1} - \Psi_3$) : $\Psi_{5.1}$
- բ) ($U_{2.1} + \Psi_3 - \Psi_4$) : $\Psi_{5.1}$
- գ) ($\Psi_3 + \Psi_4 - U_1$) : $U_{2.1}$
- դ) $U_{2.1} : (\Psi_3 + \Psi_4 - U_1)$:

66. Սեփական աղբյուրներով պաշարների ապահովածության գործակիցի սահմանափակումը կազմում է.

- ա) $K \geq 0.5$,
- բ) $K \leq 0.5$,
- գ) $K \geq 0.7$,
- դ) $K \geq 1.0$:

67. Ի՞՞Ծ են բնութագրում ֆինանսական կայունության հարաբերական գործակիցները.

- ա) սեփական աղբյուրներով ապահովածությունը
- բ) շահութաբերությունը

- գ) իրացվելիությունը
 դ) շրջանառելիությունը:

68. Ինչպե՞ս է որոշվում ֆինանսական անկախության գործակիցը.

- ա) $(\Phi 3 + \Phi 4) : \bar{U}$ բ) $(U1 + U2) : \bar{\Phi}$
 գ) $\Phi 3 : \bar{U}$ դ) $\Phi 4 : \bar{\Phi} :$

69. Ֆինանսական անկախության գործակիցի նորմատիվային մեծությունը կազմում է.

- ա) $K \geq 1.0$, բ) $K \geq 0.5$, գ) $K \geq 0.1$, դ) $K \geq 0.25$:

70. Ինչպե՞ս է որոշվում ֆինանսական կախվածության գործակիցը.

- ա) $(U1 + U2) : \Phi 3$ բ) $(\Phi 3 + \Phi 4) : \bar{U}$
 գ) $(\Phi 4 + \Phi 5) : \bar{U}$ դ) $(\Phi 2 - U1) : U2$:

71. Ֆինանսական կախվածության գործակիցի նորմատիվային մեծությունը կազմում է.

- ա) $K \geq 1.0$, բ) $K \leq 0.5$, գ) $K \geq 0.5$, դ) $K \geq 0.1$:

72. Ինչպե՞ս է որոշվում ֆինանսական ռիսկի գործակիցը.

- ա) $(\Phi 4 + \Phi 5) : \bar{U}$ բ) $\Phi 5 : \Phi 3$
 գ) $\Phi 4 : \Phi 3$ դ) $(\Phi 4 + \Phi 5) : \Phi 3$:

73. Ֆինանսական ռիսկի գործակիցի նորմատիվային մեծությունը կազմում է.

- ա) $K \geq 1.0$, բ) $K \leq 1.0$, գ) $K \geq 0.5$, դ) $K \leq 0.5$:

74. Ինչպե՞ս է որոշվում սեփական կապիտալի շարժունակության գործակիցը.

- ա) $(U2 - \Phi 5) : \Phi 3$ բ) $(U1 + U2) : \Phi 3$
 գ) $(\Phi 4 + \Phi 5) : \Phi 3$ դ) $\Phi 3 : \bar{U} :$

75. Սեփական կապիտալի շարժունակության գործակցի նորմատիվային մեծությունը կազմում է.

ա) $K \geq 1.0$, բ) $K \geq 0.7$, գ) $K \geq 0.1$, դ) $K \geq 0.5$:

76. Ֆինանսական կայունությունը չխախտելու համար ո՞ր աղբյուրների հաշվին պետք է ձևավորվեն ոչ ընթացիկ ակտիվները.

- ա) սեփական կապիտալ, ոչ ընթացիկ պարտավորություններ
- բ) շահույթ, ընթացիկ ֆինանսական պարտավորություններ
- գ) սեփական կապիտալ, ընթացիկ պարտավորություններ
- դ) շահույթ, ոչ ընթացիկ պարտավորություններ:

77. Ինչպե՞ս է որոշվում շարժուն և անշարժ միջոցների հարաբերակցության գործակիցը.

- ա) $\Psi_3 : (\Psi_4 + \Psi_5)$ բ) $Ա1 : Ա2$,
- գ) $(\Psi_4 + \Psi_5) : \Psi_3$ դ) $Ա2 : Ա1$:

78. Ինչպե՞ս է որոշվում ֆինանսական կայունության պաշարը.

- ա) ($\text{իրացումից շահույթ} - \text{շահութաբերության շեմ}) \times 100 / \text{իրացումից հասույթ}$
- բ) ($\text{իրացումից հասույթ} - \text{շահութաբերության շեմ}) \times 100$
- գ) $\text{իրացումից հասույթ} / \text{շահութաբերության շեմ} \times 100$
- դ) $\text{շահութաբերության շեմ} \times 100 / \text{իրացումից հասույթ}$:

79. Կայուն ֆինանսական իրադրության դեպքում.

- ա) $Ա2.1 \leq \Psi_3 + \Psi_4 - Ա1 + \Psi_5.1$
- բ) $Ա2.1 \leq \Psi_3 + \Psi_4 - Ա1$
- գ) $Ա2 > \Psi_3 + \Psi_4$
- դ) $Ա2 > \Psi_4 + \Psi_5$:

80. ԱՅԼԿԱՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՎՔՈՒՄ.

- ա) $Ա2.1 = Պ3 + Պ5.1 - Ա1$
- բ) $Ա2.1 = Պ4 + Պ5 - Ա1$
- գ) $Ա2.1 = Պ3 + Պ4 - Ա1 + Պ5.1$
- դ) $Ա2.1 = Պ3 + Պ4 - Ա1 + Պ5.1 + Ֆ_{լս}:$

81. ՇԳԲԱԺՄԱՐԿԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՎՔՈՒՄ.

- ա) $Ա2.1 < Պ3 + Պ4 - Ա1 + Պ5.1$
- բ) $Ա2.1 = Պ3 + Պ4 - Ա1 + Պ5.1$
- գ) $Ա2.1 = Պ3 + Պ4 - Ա1 + Պ5.1 + Ֆ_{լս}$
- դ) $Ա2.1 > Պ3 + Պ4 - Ա1 + Պ5.1:$

82. ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԼԾԱԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է.

- ա) իրացումից շահույթ / չբաշխված շահույթ
- բ) համախառն շահույթ / գործառնական շահույթ
- գ) համախառն շահույթ / զուտ շահույթ
- դ) համախառն շահույթի հավելած / իրացումից հասույթի հավելած:

83. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԼԾԱԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է.

- ա) իրացումից շահույթ / չբաշխված շահույթ
- բ) համախառն շահույթ / իրացումից շահույթ
- գ) զուտ շահույթ / համախառն շահույթ
- դ) զուտ շահույթի հավելած / համախառն շահույթի հավելած:

84. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԼԾԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՍՏԱԳԾՄԱՆ ԴԵՎՔՈՒՄ.

- ա) սեփական կապիտալի շահութաբերություն $>$ ակտիվ-ների շահութաբերություն
- բ) պարտավորությունների շահութաբերություն = ակտիվ-ների շահութաբերություն
- գ) պարտավորությունների շահութաբերություն $<$ սեփական կապիտալի շահութաբերություն
- դ) ակտիվների շահութաբերություն $>$ սեփական կապիտալի շահութաբերություն:

**ՀԱՎԵԼ ՎԱՆ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԵՇԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՆԱԳԵՎԵՐԸ**

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԲԱՆԱԳԵՎԵՐ
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ	
1. Աշխատանքի գինվածություն	<p style="text-align: center;">Հիմնական միջոցների միջին տարեկան արժեք</p> <hr/> <p style="text-align: center;">Բանվորների միջին ցուցակային թիվ</p>
2. Տեխնիկական գինվածություն	<p style="text-align: center;">Մեքենասարքավորումների միջին տարեկան արժեք</p> <hr/> <p style="text-align: center;">Բանվորների միջին ցուցակային թիվ</p>
3. Առևա մեք. սարք. օգտագործման գործակից	<p style="text-align: center;">Օգտագործվող մեքենասարքավորումների քանակ</p> <hr/> <p style="text-align: center;">Առևա մեքենասարքավորումների քանակ</p>
4. Տեղակայված մեք. սարք. օգտագործման գործակից	<p style="text-align: center;">Օգտագործվող մեքենասարքավորումների քանակ</p> <hr/> <p style="text-align: center;">Տեղակայված մեքենասարքավորումների քանակ</p>
5. Օրացուցային ֆոնդի օգտագործման գործակից	<p style="text-align: center;">Փաստացի ֆոնդ</p> <hr/> <p style="text-align: center;">Օրացուցային ֆոնդ</p>
6. Ուժիմային ֆոնդի օգտագործման գործակից	<p style="text-align: center;">Փաստացի ֆոնդ</p> <hr/> <p style="text-align: center;">Ուժիմային ֆոնդ</p>
7. Պլանային ֆոնդի օգտագործման գործակից	<p style="text-align: center;">Փաստացի ֆոնդ</p> <hr/> <p style="text-align: center;">Պլանային ֆոնդ</p>
8. Նորացման գործակից	<p style="text-align: center;">Մուտքագրված հիմնական միջոցների արժեք</p> <hr/> <p style="text-align: center;">Հիմնական միջոցների տարեվերջի արժեք</p>
9. Մաշվածության գործակից	<p style="text-align: center;">Կուտակված մաշվածություն</p> <hr/> <p style="text-align: center;">Հիմնական միջոցների սկզբնական արժեք</p>

10. Դուրսգրման գործակից	<u>Դուրս գրված հիմնական միջոցների արժեք</u> <u>Հիմնական միջոցների տարեսկզբի արժեք</u>
11. Հավելաճի գործակից	<u>Հիմնական միջոցների հավելաճ</u> <u>Հիմնական միջոցների տարեսկզբի արժեք</u>
12. Պիտանիության գործակից	<u>Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեք</u> <u>Հիմնական միջոցների սկզբնական արժեք</u>
13. Տարիքային կազմի գործակից	<u>Σ (միջին տարիք x տեսակարար կշիռ)</u> 100
14. Հիմնական միջոցների շահու- թարերություն	<u>Զուտ շահույթ</u> <u>Հիմնական միջոցների միջին տարեկան արժեք</u>
15. Հիմնական միջոցների հատուց	<u>Իրացումից հասույթ</u> <u>Հիմնական միջոցների միջին տարեկան արժեք</u>
16. Ակտիվ մասի հատուց	<u>Իրացումից հասույթ</u> <u>Ակտիվ մասի միջին տարեկան արժեք</u>

ՈՉ ՆՑՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

1. Շահութաբերու- թյան գործակից	<u>Ոչ նյութական ակտիվների օգտագործումից շահույթ</u> <u>Ոչ նյութական ակտիվների միջին տարեկան արժեք</u>
2. Շրջանառելիու- թյան գործակից	<u>Իրացումից հասույթ</u> <u>Ոչ նյութական ակտիվների միջին տարեկան արժեք</u>

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

1. Շահութաբերու- թյան գործակից	<u>Ֆինանսական ակտիվներից ստացված շահույթ</u> <u>Ֆինանսական ակտիվների միջին տարեկան արժեք</u>
2. Շրջանառելիու- թյուն գործակից	<u>Իրացումից հասույթ</u> <u>Ֆինանսական ակտիվների միջին տարեկան արժեք</u>

ՆՑՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ	
1. Համաշափության գործակից	Փաստացին՝ նախատեսվածի սահմաններում Նախատեսված գումար
2. Ծրչանառության տևողություն	Պաշարների միջին նացորդ x 360 Ծախսված պաշարների գումար
3. Նյութերի շահութաբերություն	Իրացումից շահուց Նյութական ծախսումներ
4. Նյութատարություն	Նյութական ծախսումներ Արտադրանքի ծավալ
5. Հումքատարություն	Հումքի ծախսումներ Արտադրանքի ծավալ
6. Վառելիքատարություն	Վառելիքի ծախսումներ Արտադրանքի ծավալ
7. Մետաղատարություն	Մետաղի ծախսումներ Արտադրանքի ծավալ
8. Էներգատարություն	Էներգիայի ծախսումներ Արտադրանքի ծավալ
9. Տեսակարար նյութատարություն	Միավոր նյութական ծախսումներ Միավոր արտադրանքի գին
10. Նյութահատուց	Արտադրանքի ծավալ Նյութական ծախսումներ
11. Նյութատարության ազդեցությունը ինքնարժեքի վրա	Δ Նյութատարություն x արտադրանքի փաստացի ծավալ
12. Նյութատարության ազդեցությունը ծավալի վրա	Δ Նյութատարություն x արտադրանքի փաստացի ծավալ Նախատեսված նյութատարություն
ԱՊՐԱՆՔԱՑԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ	
1. Առաջգականության գործակից	Պահանջարկի տոկոսային փոփոխություն Արտադրանքի գների տոկոսային փոփոխություն

2. Տեսականու գործակից	<p>Փաստացի ծավալը՝ նախատեսվածի սահմաններում</p> <p>Նախատեսված ծավալ</p>
3. Կառուցվածքի գործակից	Փաստացի ծավալ – վերահաշվարկված ծավալ
4. Տեսակայնության գործակից	<p>Տարատեսակ ամբողջ արտադրանքի ծավալ</p> <p>Գերազանց գնով արտահայտված արտադրանքի ծավալ</p>
5. Ընդունվածների գործակից	<p>Տարվա ընթացքում աշխատանքի ընդունվածների թիվ</p> <p>Անձնակազմի միջին ցուցակային թիվ</p>
6. Ազատվածների գործակից	<p>Տարվա ընթացքում ազատվածների թիվ</p> <p>Անձնակազմի միջին ցուցակային թիվ</p>
7. Ընդհանուր շրջանառության գործակից	<p>Ընդունվածների և ազատվածների ընդհանուր թիվ</p> <p>Անձնակազմի միջին ցուցակային թիվ</p>
8. Հոսունության գործակից	<p>Սուրյեկտիվ պատճառներով ազատվածների թիվ</p> <p>Անձնակազմի միջին ցուցակային թիվ</p>
9. Օրացուցային ֆոնդի օգտագործման գործակից	<p>Բանվորների աշխատած մարդ/օրեր</p> <p>Օրացուցային ֆոնդ</p>
10. Տարելային ֆոնդի օգտագործման գործակից	<p>Բանվորների աշխատած մարդ/օրեր</p> <p>Օրացուցային ֆոնդ - ոչ աշխատանքային օրեր</p>
11. Առավելագույն ֆոնդի օգտագործման գործակից	<p>Բանվորների աշխատած մարդ/օրեր</p> <p>Օրացուցային ֆոնդ - հերթական արձակուրդի օրեր</p>
12. Աշխատանքի արտադրողականություն	<p>Արտադրանքի ծավալ</p> <p>Անձնակազմի միջին ցուցակային թիվ</p>
13. Արտադրանքի աշխատարություն	<p>Մարդ/ժամների ընդհանուր թիվ</p> <p>Արտադրանքի ծավալ</p>
14. Արտադրական շրջափուլի տևողություն	<p>Անավարտ արտադրության միջին մնացորդ $\times 360$</p> <p>Արտադրված արտադրանքի ինքնարժեք</p>

ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ	
1. Ծրշանառելիության գործակից	Մարված դեբիտորական պարտքեր Դեբիտորական պարտքերի միջին մեծություն
2. Ծրշանառության տևողություն	Դեբիտորական պարտքերի միջին մեծություն x 360 Մարված դեբիտորական պարտքեր
3. Աճհուսալի պարտքերի տեսակարար կշիռ	Աճհուսալի դեբիտորական պարտքեր x 100 Դեբիտորական պարտքերի միջին մեծություն
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻ ԶՈՑԽՆԵՐ	
1. Իրացվելիության գործակից	Զուտ դրամական հոսքեր Դրամական միջոցների ելքեր
2. Դրամական հոսքերի շահութաբերության գործակից	Զուտ շահուցք Զուտ դրամական հոսքեր
3. Ծրշանառելիության գործակից	Դրամական միջոցների ելքեր Դրամական միջոցների միջին մեծություն
4. Ծրշանառության տևողություն	Դրամական միջոցների միջին մեծություն x 360 Դրամական միջոցների ելքեր
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ	
1. Ապրանքային պաշարների հաշվեկշիռ	$\Omega_0 + \Lambda + \Phi_{\omega} = \zeta + \Phi_{\omega} + \Omega_1$
2. Ծրշանառության տևողություն	Պաշարների միջին տարեկան մնացորդ x 360 Իրացված արտադրանքի ինքնարժեք
3. Պայմանագրային պարտավորությունների կատարման աստիճան	Նախատեսված հասուցք – խախտումներ Նախատեսված հասուցք
4. Միավոր արտադրանքին բաժին ընկնող ծախսերի մակարդակ	Արտադրանքի ինքնարժեք Արտադրանքի ծավալ

ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	
1. Մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	Զուտ շահույթ - արտոնյալ բաժնետոմսերի շահույթ Հասարակ բաժնետոմսերի միջին քանակ
2. Մեկ հասարակ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժին	Ծահաբաժինների գումար Հասարակ բաժնետոմսերի միջին քանակ
3. Ծահաբաժինների վճարման գործակից	Ծահաբաժինների գումար Զուտ շահույթ - արտոնյալ բաժնետոմսերի շահույթ
4. Մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գին	Ծահաբաժինների գումար Բանկային ավանդների միջին տարեկան տոկոսադրույթ
5. Մեկ հասարակ բաժնետոմսի կուրս	Մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գին Մեկ արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեք
6. Մեկ հասարակ բաժնետոմսի շահութաբերություն	Մեկ հասարակ բաժնետոմսի շահաբաժնի գործակից Մեկ հասարակ բաժնետոմսի շուկայական գին
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	
1. Իրացումից շահույթ (Եվրոպական տարբերակ)	Հասույթ - ինքնարժեք = համախառն շահույթ - իրացման և վարչական ծախսեր
2. Իրացումից շահույթ (անգլոամերիկյան տարբերակ)	Հասույթ - փոփոխություն ծախսեր = սահմանային շահույթ - հաստատուն ծախսեր
3. Գործառնական շահույթ (վճառ)	Իրացումից շահույթ (վճառ) + այլ գործունեությունից շահույթ (վճառ)
4. Սովորական գործունեությունից շահույթ (վճառ)	Գործառնական գործունեությունից շահույթ (վճառ) + ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վճառ)
5. Գների ազդեցությունը շահույթի վրա	Փաստացի հասույթ - վերահաշվարկված շահույթ

6. Ինքնարժեքի ազդեցությունը շահույթի վրա	Փաստացի ինքնարժեք – վերահաշվարկված ինքնարժեք
7. Իրացման ծավալի ազդեցությունը շահույթի վրա	Հասույթի հավելածի տեմպ x նախատեսված շահույթ : 100
8. Տեսականու ազդեցությունը շահույթի վրա	Վերահաշվարկված շահույթ – (Նախատեսված շահույթ + իրացման ծավալի ազդեցության գումար)
9. Իրացման ծախսերի ազդեցությունը շահույթի վրա	Փաստացի ծախսեր – վերահաշվարկված ծախսեր
10. Վարչական ծախսերի ազդեցությունը շահույթի վրա	Փաստացի ծախսեր – վերահաշվարկված ծախսեր
11. Արտադրության կրիտիկական ծավալ	Հաստատուն ծախսեր Միավորի գին – տեսակարար փոփոխուն ծախսեր
Ֆինանսական ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐ	
1. Ծրջանառելիության գործակից	Մարված ֆինանսական պարտավորություններ Ֆինանսական պարտավորությունների միջին մեծություն
2. Ծրջանառության տևողություն	Ֆինանսական պարտ. միջին մեծություն x 360 Մարված ֆինանսական պարտավորություններ
3. Ժամկետանց պարտքերի տեսակարար կշիռ	Ժամկետանց ֆինանսական պարտավորություններ Ֆինանսական պարտավորությունների միջին մեծություն
4. Արդյունավետության գործակից	Իրացումից հասույթ Ֆինանսական պարտավորությունների միջին մեծություն

ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ	
1. Ծրանառելիության գործակից	Մարված կրեդիտորական պարտքեր Կրեդիտորական պարտքերի միջին մեծություն
2. Ծրանառության տևողություն	Կրեդիտորական պարտքերի միջին մեծություն x 360 Մարված կրեդիտորական պարտքեր
3. Տեսակարար կշիռը ընթացիկ ակտիվների մեջ	Կրեդիտորական պարտքերի միջին մեծություն Ընթացիկ ակտիվների միջին մեծություն
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌՐՈՒԹՑՈՒՆ	
1.Հաշվեկշղի իրացվելիություն	ԱI ≥ ՊI, ԱII ≥ ՊII, ԱIII ≥ ՊIII, ԱIV ≤ ՊIV
2. Բացարձակ իրացվելիության գործակից	Դրամական միջոցներ և համարժեքներ Ընթացիկ պարտավորություններ
3. Արագ իրացվելիության գործակից	Դրամական միջոցներ և համարժեքներ + + դեր. պարտքեր Ընթացիկ պարտավորություններ
4. Ընթացիկ իրացվելիության գործակից	Ընթացիկ ակտիվներ Ընթացիկ պարտավորություններ
5. Ակտիվների շահութաբերության գործակից	Զուտ շահույթ Ակտիվների միջին տարեկան արժեք
6. Իրացման շահութաբերության գործակից	Զուտ շահույթ Իրացումից հասույթ
7. Սեփական կապիտալի շահութաբերության գործակից	Զուտ շահույթ Սեփական կապիտալի միջին տարեկան արժեք
8. Ներդրումային կապիտալի շահութաբերության գործակից	Զուտ շահույթ Ներդրումային կապիտալի միջին տարեկան արժեք
9. Ընթացիկ ակտիվների շահութաբերության գործակից	Զուտ շահույթ Ընթացիկ ակտիվներ

10. Ինքնարժեքի շահութաբեր. գործակից	Իրացումից շահույթ Արտադրանքի ինքնարժեք
11. Համախառն շահութաբեր. գործակից	Համախառն շահույթ Իրացումից հասույթ
12. Ակտիվների շրջանառելիության գործակից	Իրացումից հասույթ Ակտիվների միջին տարեկան արժեք
13. Շրջանառության տևողություն	Ակտիվների միջին տարեկան արժեք x 360 Իրացումից հասույթ
14. Պաշարների շրջանառելիության գործակից	Իրացումից հասույթ Պաշարների միջին տարեկան արժեք
15. Պաշարների շրջանառության տևողություն	Պաշարների միջին տարեկան արժեք x 360 Իրացումից հասույթ
16. Դեք. պարտքերի շրջանառելիության գործակից	Իրացումից հասույթ Դեքի տորական պարտքերի միջին տարեկան արժեք
17. Դեք. պարտքերի շրջանառության տևողություն	Դեք. պարտքերի միջին տարեկան արժեք x 360 Իրացումից հասույթ
18. Դրամ. միջ. շրջանառել. գործակից	Իրացումից հասույթ Դրամական միջոցների միջին արժեք
19. Դրամական միջոցների շրջանառության տևողություն	Դրամ. միջոցների միջին տարեկան արժեք x 360 Իրացումից հասույթ
20. Տեսուսական հետևանք	Մեկօրյա շրջանառության x Δ շրջանառելիություն
21. Ֆինանսական անկախության գործակից	Սեփական կապիտալ Ակտիվների միջին տարեկան արժեք
22. Ֆինանսական կախվածության գործակից	Պարտավորություններ Ակտիվների միջին տարեկան արժեք
23. Ֆինանսական ռիսկի գործակից	Պարտավորություններ Սեփական կապիտալ

24. Ֆինանսական լծակի գործակից	<u>Զուտ շահույթ</u> <u>Համախառն շահույթ</u>
25. Ֆինանսական լծակի արդյունք	(1 – շահութահարկի դրույքաչափ) x (սեփ. կապ. շահ. – բանկի տոկոսադրույք) x x ֆինանսական ռիսկի գործակից
26. Գործառնական լծակի գործակից	<u>Համախառն շահույթ</u> <u>Իրացումից հասույթ</u>
27. Ֆինանսական կա- յունության պաշար	(Հասույթ – շահութաբերության շեմ) x 100 : հասույթ
28. Գործառնաֆինան- սական լծակի գործա- կից	Գործառնական լծակ x ֆինանսական լծակ
29. Սեփական ընթացիկ ակտիվներ	$\Psi_3 + \Psi_4 - U_1$ կամ $U_2 - \Psi_5$
30. Սեփական ընթա- ցիկ ակտ. ապա- հովված. գործակից	<u>Սեփական ընթացիկ ակտիվներ</u> <u>Ընթացիկ ակտիվներ</u>
31. Ակտիվների հարաբերակցության գործակից	<u>Ընթացիկ ակտիվներ</u> <u>Ոչ ընթացիկ ակտիվներ</u>
32. Շարժունակու- թյան գործակից	<u>Սեփական ընթացիկ ակտիվներ</u> <u>Սեփական կապիտալ</u>
33. Սեփ. աղբ. պա- շարների ապահով- վածութ. գործակից	<u>Սեփական ընթացիկ ակտիվներ</u> <u>Պաշարներ</u>
34. Կայուն ֆինան- սական իրադրություն	$U_{2.1} \leq (\Psi_3 + \Psi_4 - U_1) + \Psi_{5.1}$
35. Անկայուն ֆինան- սական իրադրություն	$U_{2.1} = (\Psi_3 + \Psi_4 - U_1) + \Psi_{5.1} + \Phi_{լա}$
36. Շգմաժամային ֆինանսական իրա- դրություն	$U_{2.1} > (\Psi_3 + \Psi_4 - U_1) + \Psi_{5.1}$
37. Վճարունակու- թյան վերականգն- ման գործակից	$\frac{Q_{hnp1} + 0.5 \times \Delta Q_{hp}}{Q_{hnp}}$
38. Վճարունակության կորստի գործակից	$\frac{Q_{hnp1} + 0.25 \times \Delta Q_{hp}}{Q_{hnp}}$
39. Մնանկացման ռիսկի գործակից	$1.2x_1 + 1.4x_2 + 3.3x_3 + 0.6x_4 + 1.0x_5$

ՀԱՎԵԼ ՎԱՆ 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձև N 1

ՀԱՇՎԱՊ ԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿԾԻՌ

առ 01.01.2XX5թ.

(կրնատումներով)

(հազ. դ.)

ԱԿՏԻՎ	ՏՈՂՔ	ՆԱԽՈՐԴ ՏՈՎԻ	ՀԱՇՎԵՏՈՒ ՏՈՎԻ
1	2	3	4
I. ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ			
Հիմնական միջոցներ	010	6200	6500
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020	100	120
Ոչ նյութական ակտիվներ	030	400	550
Բաժնեմասնակցության մերժություն հաշվառվող ներդրումներ	040	230	330
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050	70	100
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	070		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	7000	7600
II. ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ			
Նյութեր	090	900	970
Արագամաշ առարկաներ	110	100	110
Անավարտ արտադրություն	120	310	430
Արտադրանք	130	340	350
Ապրանքներ	140		
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	180	210
Դերիտորական պարտքեր վաճառքների գծով	160	800	850
Այլ դերիտորական պարտքեր	180	20	30
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190	50	50
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200	300	400
Այլ ընթացիկ ակտիվներ	210		
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	3000	3400
ՀԱՇՎԵԿԾԻՌ	230	10000	11000

Ծարունակություն

ՊԱՍԻՎ	Տռոլ	Նախորդ տարի	Հաշվետու տարի
1	2	3	4
III. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՂԻՏԱՆ			
Կանոնադրական կապիտալի գումար	240	6600	6600
Կուտակված շահուց	270	640	1540
Պահուստային կապիտալ	280	60	160
Սեփական կապիտալի այլ տարրեր	290		
Ընդամենը սեփական կապիտալ	300	7300	8300
IV. ՌԶ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310	1300	1100
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	350		
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	1300	1100
V. ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370	700	780
Կարճաժամկետ փոխառություններ	380	370	390
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	200	240
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	40	50
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430	30	40
Այլ կրեդիտորական պարտքեր	450	60	100
Այլ ընթացիկ պարտավորություններ	480		
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	1400	1600
ՀԱԾՎԵԿԾԻՌ	500	10000	11000

Ձև N 2

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

առ 01.01.2XX5թ.

(կրծատումներով)

(հազ. դ.)

Ցուցանիշներ	Տող	Նախորդ տարի	Հաշվետու տարի
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասուլթ	010	15000	15700
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(12100)	(12300)
Համախառն շահուվթ (վճաս)	030	2900	3400
Իրացման ծախսեր	040	(800)	(820)
Վարչական ծախսեր	050	(1200)	(1280)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահուվթ (վճաս)	060	900	1300
Գործառնական այլ եկամուտներ	070	300	400
Գործառնական այլ ծախսեր	080	(200)	(285)
Գործառնական շահուվթ (վճաս)	090	1000	1415
Այլ ոչ գործառնական շահուվթ (վճաս)	130	(200)	(290)
Սովորական գործունեությունից շահուվթ (վճաս)	140	800	1125
Արտասովոր դեպքերից շահուվթ (վճաս)	150		
Զուտ շահուվթ (վճաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	800	1125
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	160	225
Զուտ շահուվթ (վճաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	640	900

Զևս 3

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

առ. 01.01.2XX5թ.

(կրճատումներով)

(հազ. դ.)

Ցուցանիշներ	Տողը	Նախորդ տարի			
		կանոնա- դրական կապիտա- լի գուտ գումարը	կուտակ- ված շա- հույթը (վճարը)	պահուս- տային կապի- տալը	ընդա- մենը
1	2	3	4	5	6
Մնացորդը առ 01.01.2XX3թ.	010	6600			6600
Հաշվետու տարվա գուտ շահույթը (վճար)	060		640		640
Սեփական կապիտալի տարրերի այլ ավելա- ցումը (նվազեցումը)	080			60	60
Մնացորդը առ 01.01.2XX4թ.	100	6600	640	60	7300

Ցուցանիշներ	Տողը	Հաշվետու տարի			
		կանոնա- դրական կապիտա- լի գուտ գումարը	կուտակ- ված շա- հույթը (վճարը)	պահուս- տային կապի- տալը	ընդա- մենը
1	2	3	4	5	6
Մնացորդը առ 01.01.2XX4թ.	010	6600	640	60	7300
Հաշվետու տարվա գուտ շահույթը (վճար)	060		900		900
Սեփական կապիտալի տարրերի այլ ավելա- ցումը (նվազեցումը)	080			100	100
Մնացորդը առ 01.01.2XX5թ.	100	6600	1540	160	8300

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ
ՄԱՍԻՆ ՀԱՃՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

առ 01.01.2XX5թ.

(կրծատումներով)

(հազ. դ.)

Ցուցանիշներ	Տողը	Նախորդ տարի	Հաշվետու տարի
1	2	3	4
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	220	300
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր			
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	39000	41700
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	030	3055	3300
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	040	42055	45000
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների երեր			
Նյութերի, ապրանքների ճեղք բերման գծով	050	30000	31000
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	060	3000	4000
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	070	5000	6000
Վճարումներ ըսութե	080	1000	1100
Գործառնական այլ գործունեությունից երեր	100	3000	2820
Ընդամենը գործառնական գործունեությունից երեր	110	42000	44920
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	120	55	80
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր			
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	130	300	400
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից	140	900	970
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր	160	600	630
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	170	1800	2000

Ծարունակություն

Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր			
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութա- կան ակտիվների ձեռքբերման գծով	180	400	410
Ֆինանսական ակտիվների ձեռքբե- րումից, փոխառությունների տրամա- դրումից	190	1200	1380
Ներդրումային այլ գործունեությունից ելքեր	200	185	200
Ընդամենը Աերդրումային գործունեու- թյունից ելքեր	210	1785	1990
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	220	15	10
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր			
Սեփական կապիտալի գործիքների ռոդարկումից և վերավաճառքից	230	300	340
Ստացված վարկերից և փոխառու- թյուններից	240	400	440
Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր	250	200	220
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	260	900	1000
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր			
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	270	500	550
Վճարված շահաբաժններ և տոկոսներ	280	190	210
Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր	290	200	230
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	300	890	990
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	310	10	10
Ընդամենը դրամական միջոցների գուտ հոսքեր	320	80	100
Ներքին շարժեր	340	65000	67000
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը, այդ թվում՝	350	300	400
դրամարկղում	351	20	25
բանկային հաշիվներում	352	280	375

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՅՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԵՐԻՆ
ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ**

առ 01.01.2XX5թ.

(կրծատումներով)

(հազ. դ.)

1. Հաշվապահական հաշվեկշղին կից ծանոթագրություններ

Հիմնական միջոցներ			Այլուսակ 1		
Դասի անվանումը	Տողը	Նախորդ տարի	Ավելացումը	Նվազեցումը	Հաշվետուտարի
1	2	3	4	5	6
Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ					
Շենքեր	010	1500		60	1440
Կառուցվածքներ	020	300		10	290
Փոխանցող հարմարանքներ	030	200			200
Մեքենաներ և սարքավորումներ	040	3100	500	200	3400
Տրանսպորտային միջոցներ	050	700	70	20	750
Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	060	150	20		170
Բազմամյա տնկարկներ	070	50			50
Բանող և մթերատու անասուններ	080	30	10		40
Այլ հիմնական միջոցներ	090	120		10	110
Ընդամենը շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ					
հաշվեկշղային արժեք	100	6150	600	300	6450
արժեք	101	8840	600	400	9040
կուտակված մաշվածություն	102	2690		100	2590
Ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ	140	50			50

Ծարումակություն

Հողամասեր	150				
Ընդամենը հիմնական միջոցներ					
հաշվեկշռային արժեք	160	6200	600	300	6500
արժեք	161	8890	600	400	9090
կուտակված մաշվա- ծություն	162	2690		100	2590

Ոչ Այութական ակտիվներ

Աղյուսակ 2

Դասի անվանումը	Տողը	Նախորդ տարի	Հաշվետու տարի
1	2	3	4
Ֆիրմային անուններ	010	100	130
Հրապարակումների անուններ	020	10	10
Համակարգչային ծրագրեր	030	20	20
Լիցենզիաներ և վստահագրեր	040	150	160
Հեղինակային իրավունքներ	050	50	70
Արտոնագրեր	060	10	10
Ծառայությունների մատուցման և շահագործման իրավունքներ	070	40	70
Բանաձևեր, մոդելներ, նախա- գծեր, բաղադրատոմսեր և փորձա- նմուշներ	080		
Այլ ոչ Այութական ակտիվներ	090	20	80
Ընդամենը	100	400	550

Ոչ բնօացիկ ֆինանսական ակտիվներ

Աղյուսակ 3

Ներդրման տեսակը	Տողը	Նախորդ տարի	Հաշվետու տարի
1	2	3	4
1. Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ, այդ թվում՝	010	230	330
դրաստի բնկերություններում	011	80	100
ասոցիացված կազմակերպու- թյուններում	012	50	70
համատեղ վերահսկվող միա- վլորումներում	013	100	160
2. Ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնա- դրական կապիտայում	020	60	80
3. Այլ ֆինանսական ակտիվներ	030	10	20
Ընդամենը	040	300	430

**2. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից
ծանոթագրություններ**

Գործառնական այլ գործունեությունից

Եկամուտ և ծախս

Աղյուսակ 4

Ցուցանիշներ	Տողը	Նախորդ տարի			Հաշվետու տարի		
		Եկա- մուտը	ծախ- սը	արդ- յունքը	Եկա- մուտը	ծախ- սը	արդ- յունքը
1	2	3	4	5	6	7	8
1. Այլ պաշարների վաճառքներից	010	170	130	40	200	120	80
2. Պաշարների արժեքների փոփոխությունից	020		30	20	10	50	30
3. Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի անհավաքագրելիությունից	030					30	10
4. Երաշխիքային սպասարկումից և վերանորոգումից	040			10	(10)		
5. Գործառնական վարձակալության տրված հիմնական միջոցներից	050						
6. Տույժերից, տուգանքներից	060	60	10	50	90	70	20
7. Արժեքների պակասորդներից և փչացումից ու դրանց փոխհատուցումից	070						
8. Արտադրական ծախսումների սովորական մակարդակը գերազանցումից	080						
9. Խոտանված արտադրանքից	090			10	(10)		30 (30)
10. Հիմնական միջոցների պահպանումից և լուծարումից	110						
11. Հետազոտությունից և մշակումից	120						
12. Այլ գործառնական գործունեությունից	130	40	20	20	30	25	5
Ընդամենը	140	300	200	100	400	285	115

**Այլ ոչ գործառնական գործունեությունից
եկամուտ և ծախս**

Աղյուսակ 5

Ցուցանիշներ	Տողը	Նախորդ տարի			Հաջետու տարի		
		Եկա- մուտը	ծախ- սը	արդ- յունքը	Եկա- մուտը	ծախ- սը	արդ- յունքը
1	2	3	4	5	6	7	8
1. Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից	010	270	400	(130)	280	490	(210)
2. Ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից	020	40	35	5	50	40	10
3. Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից	030	28	25	3	30	45	(15)
4. Ոչ նյութական ակտիվների վերաշափումից	040	42	60	(18)	70	90	(20)
5. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից	050	100	110	(10)	150	140	10
6. Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաշափումից և արժեզգումնից	060						
7. Ֆինանսական ներդրումներից	070	60	40	20	50	25	25
8. Վարկերի և փոխառությունների գծով	080						
9. Ակտիվներին վերաբերող շնորհներից	090						
10. Անհատուց տըրված ակտիվների գծով	100						
11. Ոչ գործառնական այլ գործունեությունից	110	160	230	(70)	170	260	(90)
Ընդամենը	120	700	900	(200)	800	1090	(290)

ՀԱՎԵԼ ՎԱԾ 3. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՅՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

առ 01.01.2XX5թ.

(կրնատումներով)

1. Մեքենասարքավորումների քանակը ըստ շահագործման ժամկետների (միավոր)

Խմբերը	Նա-խորդ տարի	Հաշվետու տարի					
		Մինչև 5 տարի	5-ից 10 տարի	10-ից 20 տարի	20-ից ավելի	ընդամենը	
«Ա» խումբ	79	50	20	10		80	
«Բ» խումբ	60		10	20	30	60	
«Գ» խումբ	198	80	30	40	50	200	
«Դ» խումբ	99	60	10	30		100	
Ընդամենը	436	190	70	100	80	440	

2. Հիմնական միջոցների միջին տարեկան արժեքը (Բազ. դ.)

Նախորդ տարի՝	6120
Հաշվետու տարի՝	
• նախատեսված	6400
• փաստացի	6450

3. Մեքենասարքավորումների միջին տարեկան արժեքը (Բազ. դ.)

Նախորդ տարի՝	3070
Հաշվետու տարի՝	
• նախատեսված	3300
• փաստացի	3350

4. Մեքենասարքավորումների հերթափոխության գործակիցը

(հերթափոխ)

Նախատեսված՝	1.2
Փաստացի՝	1.1

**ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՅՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

առ 01.01.2XX5թ.

(կրճատումներով)

1. Առանձին նյութատեսակների առկայությունը

Նյութատեսակները	Նախատեսված		Փաստացի	
	քանակը, կգ	գումարը, հազ. դ.	քանակը, կգ	գումարը, հազ. դ.
«Ա» նյութատեսակ	18000	3600	17800	3738
«Բ» նյութատեսակ	15000	2250	14700	2352
«Գ» նյութատեսակ	1500	450	1600	464
«Դ» նյութատեսակ	7200	900	7100	736

2. Նյութերի մատակարարումները՝ ըստ տասնօրյակների (հազ. դ.)

Տասնօրյակները	Նախատեսված	Փաստացի
I տասնօրյակ	2100	2070
II տասնօրյակ	2100	2090
III տասնօրյակ	2100	2160
Ընդամենը	6300	6320

3. Նյութերի ծախսի նորմաները և գմերը

Նյութատեսակները	Նախատեսված		Փաստացի	
	ծախսի նորման, կգ	միավորի գինը, հազ. դ.	ծախսի նորման, կգ	միավորի գինը, հազ. դ.
«Ա» նյութատեսակ	16000	200	16100	210
«Բ» նյութատեսակ	8000	150	7900	160
«Գ» նյութատեսակ	2000	300	2100	290
«Դ» նյութատեսակ	10000	125	10000	103.6

4. Նյութական ծախսումների տարրերը (հազ. դ.)

Ծախսումների տարրերը	Նախորդ տարի	Հաշվետու տարի			
		Նախա- տեսված	Փաստացի տեսակա- նիով	Փաստացի՛՛ Նախատես- վածով	Փաս- տացի
1. Հումք	1900	1920	1923	1930	1931
2. Վառելիք	2200	2210	2215	2220	2227
3. Էներգիա	2100	2120	2122	2130	2132
Ընդամենը	6200	6250	6260	6280	6290

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

առ 01.01.2XX5թ.

(կրճատումներով)

1. Տնտեսական ցուցանիշներ (հազ. դ.)

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	
		Նախա- տեսված	Փաս- տացի
1. Արտադրանքի արտադրության ծավալը			
- համադրելի գներով	15100	15200	15720
- գործող գներով	x	x	15750
2. Արտադրանքի իրացման ծավալը	14950	15000	15700

2. Առանձին արտադրատեսակների արտադրությունը

Արտադրա- տեսակները	Միա- վորի գինը, հազ. դ.	Քանակը, հատ	Արտադրանքի ծավալ, հազ. դ.			
			Նախա- տեսված	Փաս- տացի	Նախորդ տարի	Հաշվետու տարի
«Ա» արտադրա- տեսակ	10.0	420	492	4100	4200	4920
«Բ» արտադրա- տեսակ	20.0	250	240	4900	5000	4800
«Գ» արտադրա- տեսակ	30.0	200	200	6100	6000	6000
Ընդամենը	-	-	-	15100	15200	15720

3. Ապրանքային պաշարների գույքագրման արդյունքները (հազ. դ.)

Պակասորդները՝ ըստ ինքնարժեքի -20, ըստ գների -25
Ավելցուկները՝ ըստ ինքնարժեքի -10, ըստ գների -15

4. Պայմանագրային պարտավորությունները (հազ. դ.)

Արտադրատեսակները	Նախա- տեսված	Փաս- տացի	Խախտումները		
			Ժամկետ	տեսա- կանի	որակ
«Ա» արտադրատեսակ	4300	4300	-	-	-
«Բ» արտադրատեսակ	4700	4500	100	70	30
«Գ» արտադրատեսակ	6000	6000	-	-	-
Ընդամենը	15000	14800	100	70	30

5. Չիրացված արտադրանքի մնացորդները (հազ. դ.)

Նախորդ տարի՝ ըստ ինքնարժեքի -340, ըստ գների -365
Հաշվետու տարի՝ ըստ ինքնարժեքի -350, ըստ գների -405

6. Արտադրանքի արտադրության համաշակույթունը ըստ եռամսյակների

Եռամսյակները	Հաշվետու տարի, հազ. դ.	
	Նախատեսված	փաստացի
I եռամսյակ	3800	3730
II եռամսյակ	3800	3740
III եռամսյակ	3800	4050
IV եռամսյակ	3800	4200
Ընդամենը	15200	15720

7. «Գերազանց» տեսակի արտադրանքի ծավալը (հազ. դ.)

Արտադրատեսակները	Նախորդ տարի	Հաշվետու տարի	
		Նախա- տեսված	փաս- տացի
«Բ» արտադրատեսակ	2000	2100	2080
«Գ» արտադրատեսակ	3000	3150	3200
Ընդամենը	5000	5250	5280

8. «Բ» արտադրատեսակի որակը (հազ. դ.)

Որակը	Նախատեսված	Փաստացի	Բալային գործակիցը
1. «Գերազանց»	2100	2080	1.0
2. «Լավ»	1000	1020	0.7
3. «Բավարար»	1100	990	0.4
4. «Անբավարար»	800	710	0.2
Ընդամենը	5000	4800	-

9. «Գերազանց» որակի արտադրատեսակը (հազ. դ.)՝

միավորի գինը՝ նախատեսված - 22, փաստացի - 23,
միավորի ինքնարժեքը՝ նախատեսված - 13.4, փաստացի - 14.2

10. Արտադրանքի իրացման ծավալն ըստ շուկաների (հազ. դ.)

Շուկաները	Նախորդ տարի	Հաշվետու տարի	
		Նախա- տեսված	փաս- տացի
1. Ներքին շուկա, այդ թվում՝	12000	12040	12600
պետապատվեր	4000	4030	4200
մարզային	8000	8010	8400
2. Արտաքին շուկա, այդ թվում՝	2950	2960	3100
ԱՊՀ երկրներ	2100	2090	2200
այլ երկրներ	850	870	900
Ընդամենը	14950	15000	15700

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

առ. 01.01.2XX5թ.

(կրճատումներով)

1. Աշխատանքային ցուցանիշները

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի	
		Նախա- տեսված	Փաս- տացի
1. Անձնակազմի միջին ցուցակային թիվը, մարդ՝ այդ թվում՝	31	30	29
բանվորների	25	24	22
ծառայողների, որոնցից՝	6	6	7
դեկավարների	4	3	4
մասնագետների	2	3	3
2. Աշխատավարձը, հազ. դ., այդ թվում՝	5630	5710	5820
բանվորների	4840	4880	4900
ծառայողների, որոնցից՝	790	830	920
դեկավարների	510	430	510
մասնագետների	280	400	410

2. Բանվորական անձնակազմի շարժը (մարդ)

Ցուցանիշներ	Նախորդ տարի	Հաշվետու տարի
1. Բանվորների ցուցակային թիվը տարեսկզբին	27	25
2. Ընդունվածները	8	6
3. Ազատվածները, այդ թվում՝	10	9
աշխատանքային պայմանագրի ժամկետի լրանալը	5	4
ուսման, զինծառայության, թոշակի անցնելու պատճառով	3	2
սեփական կամքով	1	2
աշխատանքային կարգապահության խախտման հետևանքով	1	1
4. Բանվորների ցուցակային թիվը տարեվերջին	25	22

3. Բանվորական աշխատաժամանակի ֆոնդը

Նախատեսված

- մարդ/օրերի թիվը (մարդ/օր) - 6250
- մարդ/ժամերի թիվը (մարդ/ժամ) - 50000
- օրվա միջին տևողությունը (ժամ) - 8.0

Փաստացի

- աշխատած մարդ/օրերի թիվը (մարդ/օր) - 5280
- աշխատած մարդ/ժամերի թիվը (մարդ/ժամ) - 39600
- օրվա միջին տևողությունը (ժամ) - 7.5
- ամբողջօրյա պարապուրդերի թիվը (մարդ/օր) - 90
- չաշխատած մարդ/օրերի թիվը (մարդ/օր), այդ թվում՝
 - հերթական արձակուրդի - 110
 - հիվանդության - 15
 - օրենքով թուլատրված - 5
 - դեկավարության կողմից թուլտվությամբ - 10
 - գործալքումների - 12
- ոչ աշխատանքային մարդ/օրերի թիվը (մարդ/օր) - 2508
- ընդամենը օրացուցային ֆոնդը (մարդ/օր) - 8030

ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

առ 01.01.2XX5թ.

(կրճատումներով)

1. Արտադրանքի մեկ դրամական միավորին բաժին ընկնող ծախսումների մակարդակը

Ծախսումների մակարդակը	Արտադրանքի ինքնարժեքը, հազ. դ.	Արտադրանքի ծավալը, հազ. դ.	Մակարդակը
1. Նախատեսված	12120	15200	0.7974
2. Փաստացի տեսականիով	12280	15690	0.7827
3. Փաստացին՝ նախատեսվածով	12290	15720	0.7818
4. Փաստացի	12320	15750	0.7822

2. Արտադրանքի ինքնարժեքը՝ ըստ տնտեսական տարրերի

Տնտեսական տարրերը	Նախա- տեսված, հազ. դ.	Փաստացի, հազ. դ.		Կախվա- ծության գործակից
		Նախա- տեսված	փաս- տացի	
1. Ուղղակի նյութական ծախսումներ	5300	5360	5370	1.0
2. Ուղղակի աշխատան- քային ծախսումներ	4630	4740	4750	1.0
3. Անուղղակի արտա- դրական ծախսումներ	2190	2180	2200	0.7
Ընդամենը արտա- դրանքի ինքնարժեքը	12120	12280	12320	-

3. Տարբեր արտադրատեսակների ինքնարժեքը (հազ. դ.)

Արտադրատեսակները	Միավորի ինքնարժեքը		Արտադրանքի ինքնարժեքը	
	Նախա- տեսված	փաս- տացի	Նախա- տեսված	փաս- տացի
1. «Ա» արտադրատեսակ	9.571	7.962	4020	4220
2. «Բ» արտադրատեսակ	11.600	11.667	2900	2800
3. «Գ» արտադրատեսակ	26.000	26.500	5200	5300
Ընդամենը	-	-	12120	12320

4. «Բ» արտադրատեսակի փաստացի ինքնարժեքը (հազ. դ.)

- հաստատուն ծախսերը՝ 1000
- փոփոխուն ծախսերը՝ 1800
- ընդամենը՝ 2800

5. Անուղղակի արտադրական ծախսումների կազմը (հազ. դ.)

Հոդվածները	Նախատեսված	Փաստացի	Կախվածության գործակից
1. Արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի աշխատանքի վճարման ծախսումներ	1200	1203	1.0
2. Արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի սոցիալական ապահովագրության վճարներ	300	302	1.0
3. Արտադրական նշանակության հիմնական միջոցների մաշվածություն	200	202	-
4. Արտադրական նշանակության հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսումներ	100	101	0.9
5. Արտադրական նշանակության ոչ նյութական ակտիվների ամրութիզացիա	-	-	-
6. Աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության ծախսումներ	150	151	0.8
7. Արտադրական անձնակազմի գործուղման ծախսումներ	-	-	-
8. Անուղղակի արտադրական այլ ծախսումներ	240	241	0.7
Ընդամենը	2190	2200	-

6. Իրացման ծախսերի կազմը (հազ. դ.)

Հոդվածները	Նախա- տեսված	Փաս- տացի	Կախվա- ծության գործակից
1. Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովագրության վճարներ	300	303	0.8
2. Հիմնական միջոցների մաշ- վածության, դրանց նորոգման և սպասարկման ծախսեր	100	101	0.3
3. Պահեստում գտնվող արտադրանքի, ապրանքների փաթեթավորման, տարայի, տեսակավորման, պահպանման ծախսեր	200	202	0.9
4. Արտադրանքի, ապրանք- ների իրացման տրանսպոր- տային և ապահովագրության ծախսեր	150	152	0.9
5. Կոմիսիոն և կոնսիգնացիոն վարձատրություն	-	-	-
6. Մարքեթինգի և գովազդի ծախսեր	50	51	1.0
7. Իրացման այլ ծախսեր	10	11	0.7
Ընդամենը	810	820	-

7. Վարչական ծախսերի կազմը (հազ. դ.)

Հոդվածները	Նախատեսված	Փաստացի
1. Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովագրության վճարներ	600	620
2. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության, դրանց նորոգման և սպասարկման ծախսեր	150	160
3. Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	50	55
4. Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	60	65
5. Գրասենյակային և կոմունալ ծախսեր	140	150
6. Առողջապահության և խորհրդատվական ծախսեր	20	22
7. Բանկային ծառայությունների և ապահովագրության ծախսեր	90	93
8. Հիոնիատուցվող հարկերից ծախսեր	-	-
9. Վարչական այլ ծախսեր	110	115
Ընդամենը	1220	1280

**ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԵՐԻՆ
ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾ**

առ 01.01.2XX5թ.
(կրծատումներով)

1. Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կազմը (Բազ. դ.)

Դեբիտորական պարտքերի կազմը	Նախորդ տարի	Հաշվետու տարի
1. Արտադրանքի և ապրանքների գծով	400	410
2. Ծառայությունների և աշխատանքների գծով	100	110
3. Այլ պաշարների գծով	20	30
4. Ֆինանսական ներդրումների գծով	80	90
5. Հիմնական միջոցների գծով	200	210
Ընդամենը	800	850

2. Դեբիտորական պարտքերի գոյացման ժամկետները

Դեբիտորական պարտքերի կազմը	ԳումարԸ, Բ. դ.	Ժամկետները, ամիս						Այդ թվում՝	
		մինչև 90 օր	91-ից մինչև 180 օր	181-ից մինչև 270 օր	271-ից մինչև 360 օր	ժամկետային	ժամկետանց	ժամկետային	ժամկետանց
1. Վաճառքների գծով	850	500	200	80	70	800	50		
2. Տրված կանխավճարների գծով	210	100	60	40	10	210	-		
3. Այլ պարտքերի գծով	30	10	10	10	-	30	-		
Ընդամենը	1090	610	270	130	80	1040	50		

3. Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի գոյացման ժամկետները

Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի կազմը	Գումարը, հ. դ.	Ժամկետները, ամիս				Այդ թվում՝	
		մինչև 90 օր	91-ից մինչև 180 օր	181-ից մինչև 270 օր	271-ից մինչև 360 օր	ժամ- կետա- յին	ժամ- կետ- անց
1. Արտադրանքի և ապրանքների գծով	410	300	100	10	-	360	50
2. Ծառայություննե- րի և աշխատանք- ների գծով	110	50	40	10	10	110	-
3. Այլ պաշարների գծով	30	10	10	10	-	30	-
4. Ֆինանսական ներդրումների գծով	90	30	10	10	40	90	-
5. Հիմնական միջոցների գծով	210	110	40	40	20	210	-
Ընդամենը	850	500	200	80	70	800	50

4. Գնումների գծով կրեդիտորական պարտքերի կազմը (հազ. դ.)

Գնումների գծով կրեդիտորական պարտքերի կազմը	Նախորդ տարի	Հաշվետու տարի
1. Հումքի և նյութերի գծով	120	135
2. Ապրանքների գծով	20	27
3. Հիմնական միջոցների գծով	40	50
4. Այլ գնումների գծով	20	28
Ընդամենը	200	240

5. Կրեդիտորական պարտքերի գոյացման ժամկետները

Կրեդիտորական պարտքերի կազմը	Գումարը, Բ. դ.	Ժամկետները, ամիս				Այդ թվում՝	
		մինչև 90 օր	91-ից մինչև 180 օր	181-ից մինչև 270 օր	271-ից մինչև 360 օր	ժամկետային	ժամկետանց
1. Գնումների գծով	240	140	60	30	10	200	40
2. Կանխավճար-ների գծով	50	20	10	10	10	50	-
3. Աշխատավարձի գծով	40	10	10	10	10	40	-
4. Այլ պարտքերի գծով	100	40	30	20	10	100	-
Ընդամենը	430	210	110	70	40	390	40

6. Գնումների գծով կրեդիտորական պարտքերի գոյացման ժամկետները

Գնումների գծով կրեդիտորական պարտքերի կազմը	Գումարը, Բ. դ.	Ժամկետները, ամիս				Այդ թվում՝	
		մինչև 90 օր	91-ից մինչև 180 օր	181-ից մինչև 270 օր	271-ից մինչև 360 օր	ժամկետային	ժամկետանց
1. Հումքի և նյութերի գծով	135	97	30	5	3	95	40
2. Ապրանքների գծով	27	-	10	10	7	27	-
3. Հիմնական միջոցների գծով	50	35	10	5	-	50	-
4. Այլ գնումների գծով	28	8	10	10	-	28	-
Ընդամենը	240	140	60	30	10	200	40

7. Կանոնադրական կապիտալի կազմը՝

- Բասարակ բաժնետոմսերը՝
990 միավոր x 5000 դրամ = 4950 հազ. դ.
- արտոնյալ բաժնետոմսերը՝
330 միավոր x 5000 դրամ = 1650 հազ. դ.
ընդամենը - 6600 հազ. դ.

8. Մեկ արտոնյալ բաժնետոմսի տարեկան շահութաբերությունը՝ 15.0 %

9. Հասարակ բաժնետոմսերի շահաբաժինների գումարը (հազ. դ.)

Նախորդ տարի՝	30
Հաշվետու տարի՝	40

10. Բանկային ավանդների միջին տարեկան տոկոսադրությը (%)

Նախորդ տարի՝	7.5
Հաշվետու տարի՝	8.0

11. Արտադրանքի իրացումից շահույթը (հազ. դ.)

Ցուցանիշներ	Նախատեսված	Փաստացին՝ նախատեսվածով
1. Արտադրանքի իրացումից հասույթ	15100	15500
2. Արտադրանքի ինքնարժեք	12100	12200
3. Համախառն շահույթ	3000	3300
4. Իրացման ծախսեր	750	810
5. Վարչական ծախսեր	1150	1220
6. Ըստ շահույթ	1100	1270

12. Զուտ շահույթի բաշխումն ըստ առանձին ուղղությունների (%)

Ուղղությունները	Նախատեսված	Փաստացի
1. Պահուստներին	10.0	10.0
2. Շահաբաժիններին	9.0	11.0
3. Կուտակմանը	50.0	49.0
4. Սպառմանը	31.0	30.0

13. Կազմակերպության շահութը նախորդ տարիներին (Բազ. դ.)

Տարիները	Շահութը
2XX0	470
2XX1	605
2XX2	670
2XX3	800
2XX4	1125

14. Ընթացիկ պարտավորությունների միջին արժեքը նախորդ տարում (Բազ. դ.)՝

Ֆինանսական պարտավորությունների՝ 1050
Կրեդիտորական պարտքերի՝ 310

15. Սեփական կապիտալի միջին արժեքը նախորդ տարում՝ 7200 Բազ. դ.

16. Ակտիվների միջին արժեքը նախորդ տարում (Բազ. դ.)

- | | | |
|---------------------------------|---|------|
| Ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | - | 6950 |
| • նյութական ակտիվներ | - | 6350 |
| • ոչ նյութական ակտիվներ | - | 390 |
| • ֆինանսական ակտիվներ | - | 210 |
| Ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | - | 2950 |
| • պաշարներ | - | 1600 |
| • դեբիտորական պարտքեր | - | 980 |

• դրամական միջոցներ և համարժեքներ	- 370
Ընդամենը ակտիվներ	- 9900

17. Մարված դեբիտորական պարտքերի գումարը (հազ. դ.)

Նախորդ տարի՝	10100
Հաշվետու տարի՝	10300

18. Մարված կրեդիտորական պարտքերի գումարը (հազ. դ.)

Նախորդ տարի՝	2200
Հաշվետու տարի՝	2400

19. Մարված ընթացիկ ֆինանսական պարտավորությունների գումարը (հազ. դ.)

Նախորդ տարի՝	3300
Հաշվետու տարի՝	3400

20. Ժամկետանց ընթացիկ ֆինանսական պարտավորությունների գումարը (հազ. դ.)

Նախորդ տարի՝	20
Հաշվետու տարի՝	25

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Երևան, 2002թ.
2. Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներ: Երևան, Հայ Էղիթ, 2000թ.
3. Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների համառոտ ուղեցուց: Երևան, ՀՀԱԱ, 2001թ.
4. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան: Երևան, ՀՀԱԱ, 2001թ.
5. Հրահանգ կազմակերպությունների տարեկան (ամբողջական փաթեթով՝ միջամկյալ) ֆինանսական հաշվետվությունների լրացման մասին: Երևան, 2002թ.
6. Абрютина М.С. Экспресс-анализ бухгалтерской отчетности: Методика. Практические рекомендации. М., ДиС, 1999г.
7. Абрютина М.С., Грачев А. В. Анализ финансово-экономической деятельности предприятия. М., ДиС, 1998г.
8. Анализ хозяйственной деятельности в промышленности. Под ред. В. И. Стражева. Мн., ВШ, 1998г.
9. Артеменко В. Г., Беллендир М.В. Финансовый анализ. М., ДиС, 1999г.
10. Առաքելյան Կ. Ա. Կազմակերպության ֆինանսական արդյունքների վերլուծությունը: Երևան, Տնտեսագետ, 2000թ.
11. Առաքելյան Կ. Ա. Արտադրանքի որակի վերլուծություն: Երևան, Զանգակ-97, 2002թ.
12. Առաքելյան Կ. Ա. Տնտեսական գործունեության վերլուծության տեստերի ժողովածու: Երևան, Զանգակ-97, 2003թ.
13. Առաքելյան Կ. Ա. Տնտեսական գործունեության վերլուծության խնդիրների ժողովածու: Երևան, Զանգակ-97, 2004թ.

14. Սուքելյան Կ. Ա. Անգլերեն-հայերեն հաշվապահական բառարան: Երևան, Զանգակ-97, 2004թ.
15. Սուքելյան Կ. Ա. Տնտեսական գործունեության վերլուծության հիմունքներ: Երևան, Զանգակ-97, 2005թ.
16. Балабонов И. Т. Основы финансового менеджмента. Учебное пособие. М., ФиС, 1997г.
17. Баканов М.И, Шеремет А. Д. Теория экономического анализа. Учебник. М., ФиС. 2002г.
18. Бернштайн Л. А. Анализ финансовой отчетности. Пер. с англ. М., ФиС. 1996г.
19. Бороненкова С. А., Маслова Л. И., Крылов С. И. Финансовый анализ предприятий. Екатеринбург. УГУ. 1997г.
20. Бочаров В.В. Финансовый анализ. СПб., Питер. 2001г.
21. Бригхем Ю., Гапенски Л. Финансовый менеджмент: Полный курс в 2-х т. Пер. с англ. СПб., Экономическая школа. 1997г.
22. Бухгалтерский анализ. Пер. с англ. Киев., ТИБ. ВНУ. 1993г.
23. Быкодаров В. А., Алексеев П. Д. Финансово-экономическое состояние предприятия. М., Приор. 2000г.
24. Ван Хорн Дж. Основы управления финансами. Пер. с англ. М., ФиС. 1996г.
25. Вакуленко Т. Г., Фомина Л. Ф. Анализ бухгалтерской (финансовой) отчетности для принятия решений. М., Герда. 1999г.
26. Винсент Дж. Лав. Пособия Эрнст энд Янг. Как понимать и использовать финансовую отчетность. Пер. с англ. М., ДУэС, 1995г.
27. Донцова Л. В., Никифорова Н. А. Комплексный анализ бухгалтерской отчетности. М., ДиС, 1999г.
28. Едронова В. Н., Мизиковский Е. А. Учет и анализ финансовых активов. М., ФиС. 1995г.

29. Ермолович Л. Л. Анализ финансово-хозяйственной деятельности предприятия. Мин., БГЭУ. 2001г.
30. Ефимова О. В. Как анализировать финансовое положение предприятия. М., БШ. 1994г.
31. Ефимова О. В. Финансовый анализ. М., БУ. 1999г.
32. Зудилин А. П. Анализ хозяйственной деятельности предприятия развитых капиталистических стран. М., РУДН. 1995г.
33. Зудилин А. П. Учись читать бухгалтерскую отчетность партнера и конкурента. М., РУДН. 1993г.
34. Карлин Т. П., Мимкин А. Р. Анализ финансовых отчетов на основе GAAP. Пер. с англ. М., ИНФРА-М. 1998г.
35. Ковалев В. В. Финансовый анализ. М., БУ. 1999г.
36. Ковалев В. В. Введение в финансовый менеджмент. М., ФиС. 1999г.
37. Ковалев В. В. Практикум по финансовому менеджменту: Конспект лекций с задачами. М., ФиС. 2000г.
38. Ковалев В. В. Финансовый анализ: управление капиталом, выбор инвестиций, анализ отчетности. М., ФиС. 2000г.
39. Ковалев В. В., Патров В. В. Как читать баланс. М., ФиС. 2000г.
40. Ковалев В. В., Волкова О. Н. Анализ хозяйственной деятельности предприятия. М., Проспект. 2001г.
41. Коллас Б. Управление финансовой деятельностью предприятия. Пер. с франц. М., Финансы. ЮНИТИ. 1997г.
42. Количественные методы финансового анализа. Пер.с англ. М., ИНФРА-М, 1996г.
43. Крейнина М. Н. Финансовое состояние предприятия. М., ДиС, 1997г.
44. Кравченко Л. И. Анализ финансового состояния предприятия. Мин., Экаунт. 1994г.

45. Любушин Н. П., Лещева В. Б., Дьякова В. Г. Анализ финансово-экономической деятельности предприятия. М., ЮНИТИ-ДАНА. 2001г.
46. Маркарьян Э. А., Герасименко Г. П. Финансовый анализ. М., Приор. 1997г.
47. Методика экономического анализа промышленного предприятия (объединения). Под. ред. А. И. Бужинского, А. Д. Шеремета. М., ФиС. 1988г.
48. Панков Д.А. Бухгалтерский учет и анализ в зарубежных странах. Мн., Экоперспектива. 1998г.
49. Практикум по финансовому менеджменту: Учебно-деловые ситуации, задачи и решения. Под ред. Стояновой Е. С. М., Перспектива. 1998г.
50. Пястолов С. М. Экономический анализ деятельности предприятий. М., Академический проект. 2003г.
51. Ришар Ж. Аудит и анализ хозяйственной деятельности предприятия. Пер. с франц. М., ЮНИТИ. 1997г.
52. Радионова В. М., Федотова М. А. Финансовая устойчивость в условиях инфляции. М., Перспектива. 1995г.
53. Սարգսյան Ա., Համբարձումյան Ռ., Առաքելյան Կ., Հակոբյան Ա., Կոսի Ժ., Լարրամճ Ս. Կառավարչական հաշվառում: Երևան Տնտեսագիտ, 2000թ.
54. Савицкая Г. В. Анализ хозяйственной деятельности предприятия. Мн., Новое знание, 2001г.
55. Соколов Я. В. Бухгалтерский учет: от истоков до наших дней. М., Аудит, ЮНИТИ. 1996г.
56. Стоун Д., Хитчинг К. Бухгалтерский учет и финансовый анализ. Пер. с англ. СПб., АП, 1994г.
57. Управленческий учет. Под ред. В. Палия и Р. Вандер Вила. М., ИНФРА-М. 1997г.
58. Управленческий учет. Учебное пособие. Под ред. А. Д. Шеремета. М., ФБК-Пресс. 1999г.

59. Фридман П., Хорин А. Н. Учебное пособие. Контроль затрат и финансовых результатов. М., Аудит. ЮНИТИ. 1998г.
60. Финансовый менеджмент: Теория и практика. Учебник. Под ред. Е. С. Стояновой. М., Перспектива. 1999г.
61. Финансовый анализ деятельности фирмы. М., КИ. 1992г.
62. Финансовый менеджмент. Компьютерный практикум. Под ред. проф. В. В. Ковалева, проф. В. А. Ирикова. М., ФиС. 1998г.
63. Хелферт Э. Техника финансового анализа. Пер. с англ. М., Аудит. ЮНИТИ. 1996г.
64. Хеддервик К. Финансовый и экономический анализ деятельности предприятий. М., ФиС. 1996г.
65. Холт. Р. Основы финансового менеджмента. Пер с англ. М., Дело. 1995г.
66. Шеремет А. Д., Сайфулин Р. С. Методика финансового анализа. М., ИНФРА. 1998г.
67. Шеремет А. Д., Сайфулин Р. С., Негашев Е. В. Методика финансового анализа. М., ИНФРА-М. 2001г.
68. Шеремет А. Д., Суйц В. П. Аудит. Учебное пособие. М., ИНФРА-М. 1995г.
69. Экономический анализ: Ситуации, тесты, примеры, задачи, выбор оптимальных решений, финансовое прогнозирование. Под ред. проф. М. И. Баканова и проф. А. Д. Шеремета. М., ФиС. 2000г.
70. Экономический анализ: Базовый курс. Под общей ред. И. Е. Мизиковского. Н. Новгород. НиНо. 2001г.
71. Экономический анализ. Под ред. Л. Т. Гиляровской. М., ЮНИТИ-ДАНА. 2003г.

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՂԱՍԻ ԶԱԼԻՔԵԿԻ
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ ԱՐԾԱԿԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հրատ. խմբագիր՝ Հ. Համբարձումյան
Սրբագրիչ՝ Զ. Հովհաննիսյան
Համակարգչային շարվածքը՝ Ա. Առաքելյան

Պատվեր՝ 433: Զափս՝ 60 x 84 1/16:
24 հեղ. մամ., 24.4 հրատ. մամ., 27,87 տպ. մամ.,
25,91 տպ. պալմ. մամ.:
Տպաքանակ՝ 500:

«Տնտեսագետ» հրատարակչություն

Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության
տպագրական արտադրամատում
Երևան 25, Նալբանդյան, 128